



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4764-  
4766

282

9-19

1868



2010

# ԻՐԱԻԱԽՈՂ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԵՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵՒ  
ԷԶՄԻԱԹՆԱԿԱՆ ԴԱԻԱՆՈՒԹԵԱՆՑ ՄԱԿԱԳՐԵԱԼ  
ԳՐԲԻՆ ՎՐԱՅ ԲՆՆՈՒԹԻՒՆ



## Յ Օ Ր Ի Ն Ե Ն Ց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՐՈՒՍԱՑԻ Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

## Տ Է Ր Ո Յ Ե Ն Ց

---

## ՀԱՏՈՐ Գ.

---

ՏՊԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՏԵՐՈՅ ԵՆՑ



10979

ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ

Յ Ա Ն Կ

Ե Ր Բ Օ Ր Դ ՝ Հ Ա Տ Ո Ր Ո Յ

		Էջ
	Յառաջաբան	1
Գլուխ	2. Սուրբ գրոց կանոնը	8
	Է. Սկզբնական և ներգործական մեղք	18
	Ը. Մկրտութեան պաշտօնէին վրայ	38
	Թ. Գոյափոխութեան ժամանակին վրայ	48
	Հին իւնիւթօրներուն ամբաստանու-	
	թիւնը և ընդունած պատասխանին	46
	Նոր իւնիւթօրներուն առարկու-	
	թիւնը և անոր պատասխանը	49
	Հայոց եկեղեցական գրոց մէջ իւնիւ-	
	թօրներուն մտցուցած քանի մը	
	փոփոխութիւններուն վրայ	69
Ժ.	Այաշխարհութեան	102
ԺԱ.	Կարգ կամ ձեռնագրութեան	120
ԺԲ.	Մինչեւ քանի անգամ ամուսնանալու	
	հրաման կայ	149
ԺԳ.	Պատուիրանք	160
ԺԴ.	Խաչի և պատկերներու պաշտօն	177
ԺԵ.	Չատիկ և ծնունդ	188
ԺԶ.	Հռովմայ հայրապետին և աթոռոյն	
	վրայ	217
ԺԷ.	Արձանակերպ պատկերներ	272
	Վերջաբան	280


ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ

ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ

ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ

ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ

ՀՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ



1337-2010







նկատմամբ ալ կը տեսնուի դաւանութեան կատարեալ համաձայնութիւն, իսկ արարողութեան մասին ազատութիւն, ինչպէս որ Հոռովմայ եկեղեցին ալ կուզէ: Ա՛նչքերնին անանկ ալ գտանք՝ զոր Հոռովմայ եկեղեցին ուրիշ կերպ ըսած է, եւ մեր հեղինակը իր ընթերցողներուն ուրիշ կերպ հասկըցուցած է. այն ալ ծանրակշիռ նկատեց մը վրայ. ուստի համար հոռովմէական աստուածաբաններն ըսին թէ տնօրինմամբ, եւ ՚ի պահանջել հարկի առանց տնօրինման ալ կըրուայ Հոռովմայ եկեղեցւոյն ստօրականին հակառակ արարողութիւնն ՚ի գործ դրուիլ: Իսկ մեր խոհական հեղինակն ըսաւ որ՝ Հոռովմայ պայքը աղէկ զհանայ ալ որ այն բանին տնօրինում ընելով բոլոր Հայոց ազգն իրեն ժողովորդ կըլլայ՝ այս ակնկալութենէս կանցնի. եւ տնօրինումը չընի:

Այսպէս տարածայնութիւններով թեթեւցած եւ փոքրկացած խնդիրներն որ մեծերու կարգ դրաւ նէ՛ ինքնին կը հասկըցուէր որ իրեն մասն առնուանածներն որքան սնտի՛ եւ պատասխանեց տնտեսական բաներ են. ինչպէս որ անոր ալ կողմէն՝ գրելու անալիս էին: Բայց մերք՝ որ մէջ բերած ամէն խնդիրները հետք մէկ տեղ բընելու յանձնառու եղած եմք, մեր խոստումը կը կատարեմք:

Այս խնդիրներս ճանաչուանելուն վրայ մէկը կըլայ ասոր ըսել, որ թէ որ յիրաւի մասն են նէ՛ Հոռովմայ եւ Հայաստանեայց եւ

էկեղեցւոյ դաւանութեանց մէջ հիմնական տարբերութիւն մը չեն կացուցաներ. ուստի ասոնք գրել եւ գրելի քանակութիւնն աւելցընել պէտք չէր: Ընկայ քիչ մը ուշկէկ՝ եւ գիրքը տպուելէն ետքը հեղինակին յիտքն եկեր է. կամ գուցէ ուրիշ մը միտքը բերեր է. ուստի գրքին վերջը յաւելուածոյն մէջ սա՛ կը կտրաւք: « Վեցերորդ գլխոյն վերաբերեալ էջերուն վրայ ճանր ինդիքս դրուած է. չէ՛ թէ անոր համար որ նոյն գլխոյն մէջ ինդիքսները թեթեւբաներ եղած ըլլան: հապա մինակ անոր համար որ լքջմիածնական եկեղեցին դեռ անոնց վրայ հանդիսական կերպով պնդած չէ (եք. 515):

Բայց դարձեալ նոյն խօսքը՝ եւ առաւելագոյն իրաւամբ կըրնայ զրուցուիլ: Թէ որ անոնց վրայ Հայոց եկեղեցին տակաւին պնդած չէ նէ՛ կարելի է որ ետքը Հոռովմայ եկեղեցւոյն համաձայն ելլէ պնդածը. եւ ինչ որ ըլլայ ալ նէ, առ այժմ ըստ իւր ասելոյն՝ տարտամ զբուցուածք մը կըլլան այս խնդիրներուս վրայ ըսածները՝ եւ ոչ թէ դաւանութիւնն. որուն բնական հանգամանացը հետ բնաւ չմիաբանի տարտամութիւնը. ուստի այսպէս ալ հասկընալով դարձեալ այս խնդիրներս այս գրքիս մէջ չէին վայլեր:



# ԻՐԱԻԱԿՈՅ

ՄԱՍՆ ԵՐՐՈՂԻ

## ՔՆՆՈՂԱԿԱՆ

ՄԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԳԼՈՒԽ Զ\*.

ՍՈՒՐԲ զՐՐՈՅ ԿԱՆՈՆՆԸ .



ՄԱՆԻ խնդիրներուն առաջինն է՝ սուրբ  
զրոյ կանոնը : Կախ եւ առաջ վերապատուելի  
Տեղինակը սուրբ զրոյ կանոնին պարունակած  
գրքերը կը համրէ՝ ըստ վարդապետութեան Գլ-  
բիտենդեան ժողովոյ . եւ նոյն ժողովոյն նզով-  
քը կը գնէ . որ է այս . « ո՛վ որ այս գրքերս  
» ամբողջ՝ ամէն իրենց մասերովը , ինչպէս որ  
» կաթոռդիկէ եկեղեցւոյ մէջ սովորութիւն է

\* Հինախնայ Կարթեոս-Թեոնի գրքին ընթացքը անփո-  
փոխ պահել ուղղելով անոր գլխակարգութեանց  
Թիւր նոյն ուղեմբ պահեցինք :



կարգացնելու, սուրբ եւ կանոնական գրք-  
 քերու տեղ չզննեք նպովեալ եղիցի ։ Յայտ-  
 նի է որ բողոքականները սուրբ գրքէն քանի  
 մի ամբողջ գիրք չեն ը՛րուեա՞ծ, եւ ընդու-  
 շած ներսուն մէջէն ալ խոշոր ու մանր կտորներ  
 դուրս ձգած են ։ Ժողովքին կանոնն ու նշով-  
 քը անոնց է ։ Մեր վերապատուելի հեղինակը  
 կաշխատի թէ ի՞նչպէս ըլլայ որ Հայոց եկեղե-  
 ցին ալ նոյն նշովքին մասնակից բնէ . որպէս  
 զի մէկ կողմէն հոսովմէական հայերն զլուսա-  
 տորչականները՝ արեւմտեան փիեղբական ժո-  
 ղովքի մը նշովքին տակն ինկած տեսնեն եւ ա-  
 նոնցմէ խորշին, մէկ կողմէն ալ բողոքականը  
 հոսովմայ եկեղեցիէն այսպիսի կարծեցեալ տար-  
 բերութիւններն առիթ բռնելով՝ ճամարիտ տար-  
 բերութիւններ մտցունելու յաջողին ։ Եւ մի-  
 քաւի ։ Երբ որ սուրբ գրոց մէջէն բողոքական-  
 ներն իրենց չընդունեա՞ծ գրքերն ընդունել չը-  
 տալու ձեռք գարե՞նն նէ՞ կըրնան վերապատուե-  
 լուոյն այս խօսքս առիթ բռնելով ըսել թէ  
 Հայք առաջուց այս գրքերս իրենց կանոնին մէջ  
 չէին ընդունեա՞ծ . Գրիտեղեան ժողովքն ըն-  
 դունեց . եւ հայերն ալ անոնցմէ առին ։ Մերք  
 անոնց այս ծոռն դատումը անանձին գրքով  
 մերժած ենք . ցուցնելով մեր Քրիստոնէական կո-  
 նակ սուրբ գրոց գրքին մէջ ( որ տակաւին ձեռա-  
 գիր է ), որ բողոքականներուն չընդունեա՞ծ գրք-  
 քերն ու հատուածները նախնի գարե՞րուն մէջ  
 քրիստոնէական եկեղեցին ընդունեա՞ծ է ։ Մեր

իմաստուն հեղինակն այս տեղս միայն Գրիտեղե-  
 ան ժողովքին անունը տալով, եւ նախնեաց  
 արդէն ընդունեա՞ծ ըլլալուն նշանախնցին անգամ  
 ակնարկութիւն չընելով այնպէս կարծել կու-  
 տայ անհմուտ կարգացողներուն, որ այն գրք-  
 քերն ու հատուածներն սուրբ գրոց մէջ աննե-  
 լու մասին առաջինն եղաւ Գրիտեղեան ժո-  
 ղովքը ։  
 Իրեն այնպէս երեւցեր է՝ որ Հայոց մէջ  
 այս գրքերս ամէնն ալ իբրեւ աստուածաշունչ  
 ընդունուեա՞ծ չեն . եւ այսպէս իր ժողովրդեան  
 գ՛Հայս նշովքի տակ ինկած ցուցնելու առիթ  
 մը գտեր է . Մոսկուա տպուած Հրահանգ գրքու-  
 գոնկան հաստատ գիրքը, որուն 113—115 է-  
 րեսներն աստուածաշունչին պարունակած բոլոր  
 գրքերը կան եղեր, յայց՝ Ա. եւ միի գիրքը չկայ  
 եղեր ։ Արեւար մէկն ըսել թէ մոռցած չըլլար  
 արդեօք ։ Մտր առաջըր կանոնէ բսելով . « թէ  
 ,, որ Այարտաւայ ժողովոյն կանոնին մէջ այս  
 ,, գիրքս տեսնէինք, կրնայինք կարծել թէ մո-  
 ,, ռացմամբ է որ դուրս ձգուեա՞ծ է ,, ( էր . 291 ) .  
 Այարտաւայ ժողովքին գանցառութիւնը որ Գրի-  
 տեղեան ժողովքէն գրեթէ 800 տարի առաջ  
 է, անկէց ետքը այս գիրքս սուրբ գրոց կալքը  
 մոռացմամբ չդրուիլն անհնար կընէ կոր . եւ ը-  
 սել կուղէ իմաստուն հեղինակը թէ որովհետեւ  
 Այարտաւայ ժողովքը՝ Ա. եւ միայ գիրքը սուրբ  
 գրոց կարգէն յարտէլ դիմումք գուրս ձգած է,  
 ուստի ո՞վ որ անկէց ետքը նոյնը գուրս ձգէ  
 նէ՞ մոռացմամբ ձգած չկրնար ըլլալ ։ Մայիսի



ձեռնարկութիւն մը մեր գիտցած տեսակներէն չէ եւ չեմք քնդուիր . ուզողն ազատ է իր խելքին գատումը մէկ զի ձգելով ասիկայ ընդունելու :

Մեր քիստոնէականներուն քննիչն ըսել կուզէ թէ Պարտաւայ ժողովքը այս գիրքս դուրս ձգելովը յանցաւոր եղած չէ . վասն զի անոր ատենը տակաւին Ղարտանդեան ժողովքը վերոյգեալ վճիռն ու նզովքը դրած չէր . բայց երբ աստիճան հասարոց հրահանգին հեղինակը յանցաւոր է . որովհետեւ նոյն ժողովքէն ետքն է : Այսպիսի նոր տեսակ յանցանքներուն նոր անուն տալու է . եւ կըլլայ ասիկայ՝ թէ որ ըրածը ընդդէմ հաւատոյ հերետիկոսութիւն սեպուի նէ՝ ինչպէս որ մեր իմաստուն հեղինակը սեպել տալ կուզէ , ժամանակագրական հերետիկոսութիւն . աղանդ մը՝ որ տակաւին աղանդոց վրայ գրող մատենագրաց գրքերուն մէջն անցած չէ : Տեսակ մը մեղք կըլլայ ասիկայ՝ որուն նմանը չեմք կըրնար տեսնել ուրիշ մեղքերուն վրայ : Հրահանգին հեղինակն այս յանցանքս՝ Պարտաւայ ժողովոյն հետեւողութեամբ գործեր է . բայց Պարտաւայ ժողովոյն ըրածը մեղք չէ եղբր . որովհետեւ նոյն ժողովը Ղարտանդեան ժողովքէն առաջ էր . ասորը՝ մեղք է՝ նոյն ժողովքէն ետքն ըլլալով : Պարտաւայ ժողովքը յանցաւոր չըլլալէն զատ՝ հրաշագործ ժողովք մ'ալ եղած կըլլայ . որովհետեւ իրմէ ետքը ո՛վ որ սուրբ գրոց ցանկ շինելու ձեռք զարնէ նէ՝ անոր յի-

շողութիւնը կըսրէ . եւ անոր համար անհնար կընէ մոռնալը , որ մարդկային մտքին մէկ տըկարութիւն մ'է : Բայց այն չգիտեմք թէ նոյն ժողովքը այն զօրութիւնն ալ կը հաղորդէ՝ մի իրմէ ետքն եկողներուն , որով բնաւ չգիտցած մէկ բանը որ տեղ մը լսած կամ կարգացած չէ՝ ներհեղեալ գիտութեամբ սորվի . որպէս զի անկէց տարբեր բան մը խօսելու ըլլայ նէ՝ գիտնալով անոր հակառակ խօսած ըլլայ : Ասիկայ յայտոնի չէ՝ ըսած վերապատուելի հեղինակը . միայն մոռնալը անհնար ցուցուցեր է . սակայն կըրնայ ալ ըլլալ՝ որ միայն Պարտաւայ ժողովքին կանոնը գիտնալով՝ Վրահանգին հրահանգին հեղինակը , եւ գիտնալով որ ասիկայ Հայոց ազգային ժողով մ'է , եւ Ղարտանդեան ժողով մը գուժարուիլը գիտէր ալ նէ՝ անոր կանոններուն եւ վճիռներուն մանրամասն տեղեկութիւն չունենալով՝ որ հայերէն թարգմանուած եւ հրատարակուած չըլլալուն համար կըրնար չգիտնալ , ազգային ժողովոյն կանոնին հետեւեր է :

Բայց մենք կըսեմք որ յիշեալ քրիստոնէականին կարծեցեալ զանցաւորութիւնը ո՛չ մոռացումն է . ո՛չ տգիտութիւն . եւ ո՛չ ալ յանցանք . վասն զի զանցաւորութիւնն ալ չէ . եւ թողութիւն կը խնդրեմք մեր վերապատուելի հեղինակէն ըսելու որ Պարտաւայ ժողովն ալ Վեհմայ գիրքը յիշելու զանցաւորութիւն չէ ըրած . ուրիշ անունով յիշած է . զոր մեր իմաստուն քննիչը չէ հասկըցած : Այլ ասիկայ հասկըցընելու համար



Տոս կը գնեմք Պարտաւայ ժողովքին խօսքը . որուն քսան եւ չորսերորդ կանոնն է այս :

« Եղիցի ձեզ ամենեցունց եկեղեցականաց  
« եւ աշխարհականաց պաշտելի զիրք սուրբը հին  
« եւ նոր կտակարանացն . Մովսէսի գիրք Ծնըն-  
« դոց , Ելից , Պեւտականն , Թիւք , Եւ-  
« բորդ օրէնք , Յետեւ Կաւեայ , Գատաւորք  
« եւ Հուսթայն , Թագաւորութեանց չորք ,  
« Սնացորդացն աւուրք երկու , Եզրի երկու  
« ըսնք , Գիրք Յովբայ , Սաղմոսաց գիրք մի ,  
« Սողմոնի երեք գիրք , ԺԲ Մարգարէկոյն ,  
« Եսայի , Երեմիա , Եզրեկիէլ , Գանիէլ , եւ  
« արտաքուստ պատգամաւորեացի առ Ի ուսու-  
« ցանել զմանկունն ձեր ուսուցմարազումն Սի-  
« բաբայ իմաստութիւնն , : Կայ ասոր՝ եւ Գրի-  
« տանդեան ժողովոյն աւանդած կանոնին մէջ  
« տարաձայնութիւն . բայց մենք գլխաւորապէս  
« առայժմ մեզի նպատակ ունենալով՝ « Եեկմեայ  
« գիրքին կարծեցեալ զանցառութիւնը , միւս տար-  
« բերութեանց վրայ՝ որոց համար մեր քրիստոնէ-  
« ականաց իմաստուն քննիչը չէ խօսած , հարկ  
« չեմք տեսներ խօսելու :

Յիշուի Պարտաւայ ժողովոյն մեզի աւան-  
դած գրոց մէջ՝ Եեկմեայ գիրք գրուած չըլլա-  
լուն համար . Բիւրոյնեական հասարոյ հրահանգին  
հեղինակն ալ չէ յիշած . բայց Պարտաւայ ժո-  
ղովքը կըսէ . Եւրե երկու բանն . եւ Հրահանգ  
+ բիւրոյնեական հասարոյ գրքին մէջ 114 երեսը  
կը գտնեմք . 2 . Եւրոյ , Գրիտանդեան ժողովոյն

ալ 1546 Թուին ապրիլի 8 ին տուած վճռոյն  
մէջ , որ է աստուածաշունչ սուրբ գրոց կանոնա-  
կան ցանկը , այսպէս կը գտնեմք . « առաջին

« Եզրայ , եւ երկրորդն՝ որ կըսուի՝ Եեկմիաս , :  
« Ուրեմն՝ Եզրի երկու գիրք անուանողները՝ Եե-  
« կմին ալ սուրբ գրոց մէջ առած կըլլան . վասն  
« զի Գրիտանդեան ժողովը յատկապէս մեզի կի-  
« մացընէ որ երբեք Եւրոս ըսածը ուրիշները  
« Եեկմիաս կըսեն եղեր : Իւր այս տեղս սա՛ ալ զի-  
« տանու արժանի կըսեպեմ որ Գրիտանդեան ժո-  
« ղովը ուրիշներուն Եեկմիաս ըսածին համար ին-  
« քըն երկրորդ Եւրոս ըսելն ընտրեր է . Իրեւ-  
« րոնեական հասարոյ հրահանգին հեղինակն ալ նոյն-  
« պէս ըրեր է . ուստի հիմնական դարբերութեանց վե-  
« րայպատուելի հեղինակին կարծած տարբերու-  
« թիւնը չկենալէն զատ՝ կատարեալ համաձայնու-  
« թիւն ալ կը նշմարուի մէջերմին : Եւ մեր հեղի-  
« նակը ինչէն գուշակած կըլլայ՝ որ երկու Եւ-  
« բայ ըսածներուն մէկը՝ Եեկմիաս չէ :

Ուրիշ քրիստոնէական մը ասկէց ծանր զան-  
ցառութիւն մ'ըրած է եղեր . եւ այս է կրօնա-  
կան ժողովոյն հաւանութեամբը 1858 ին կոս-  
տանդնուպօլիս տպուածը , որ սուրբ գրոց ամբողջ  
ցանկը գնելով՝ Սեբասթայ գիրքն անոնց մէջ չէ  
գրեր . ըսել է որ ասոր սուրբ գիրք ըլլալուն ին-  
քըն ալ չհաւատար եղեր՝ կրօնական ժողովն ալ .  
հետեւաբար՝ Իջմիածնական եկեղեցին ալ . այս-  
ինքն՝ այն եկեղեցին՝ որ Հրահանգ + բիւրոյնեական  
հասարոյ գիրքը տպուած ատենը , 1850 ին կը



Հաւատարմ եկեղեցի մը՝ որուն մի եւ նոյն անդամները ութը տարուան մէջ ամէնը մէկէն Հաւատքին փոխեր են . վասն զի Լջջմիածնական եկեղեցւոյ դաւանութեանց կարգն ասանկ բաներ որ վերապատուելի հեղինակը կը դընէ նէ՝ տակէն ելլելիք ճիշդ հետեւութիւնն ասկէց զառ չկրնար ըլլալ :

Բայց կարծեմք վերապատուելի հեղինակը ճանչնալու է 1858 ին քրիստոնէականը գրողը՝ որ իր անունը ծածկաւ ալ չէ՝ զի բողոքովին չը դնելով՝ եւ ոչ՝ անուան ու մականուանը մինակ առաջին գրերը գնելով : Կոչն անձը նոյն ստորագրութեամբ գիրք մ'ալ յօրինած է Բանաստեղծականով , որ 1860 ին տպուած է եւ շատերու ձեռք կը գտնուի : Ասոր մէջ ( եր . 70 . 71 ) ըստ բառականին խօսած է Արեւմտեայ գրքին աստուածաշունչ սուրբ գրոց կարգն ըլլալուն վրայ : Աստի կրնար զիւրաւ մակարբերել որ Իսթաբուլէականին մէջ մտցած ըլլալու է : Գուցէ ինքն ալ գիտէ այսպէս ըլլալը . բայց Փոսեան վարպետութիւն մը բանեցընելու պատրաստութիւն մ'ընել ուղած է : Ինչպէս որ Փոսա՝ մարդեղութեան խորհրդոյն վրայ Հայոց ուղղափառութիւնը հասկընալէն իրեն պարծանք հանեց՝ Հայերը եւտիքական աղանդէն ուղղափառութեան կ'ս դարձուցի ըսելով , մեր խոհական հեղինակն ալ Արաբայ գրքին աստուածաշունչ ըլլալը Հայերուն եւ հասկըցուցի պիտի ըսէ . եւ իւր ժողովուրդն ալ ասիկայ իրրեւ ճշմարիտ պիտի կըլլէ : Բայ .

Հայոց եկեղեցին շատ ժամանակ է . արդէն Սովսէս Քերդողա՛օր ժամանակէն Արաբայ գիրքն Աստուածաշունչ կը ձանչէ . որ՝ թէ որ հասարակորէն կա բժուածին պէս՝ սուրբ Սովսէս խորենացին է նէ՝ հինգերորդ դարէն է . թէ որ Սովսէս սիւնեցին է նէ՝ ինչպէս ոմանք կը կարծեն , եօթներորդ դարուն է . Ասիկայ Պետոյնց գրքին մէջ պէտք ըստած ճառեր յօրինելու հրահանգներ տալէն ետքը հինգ հասալ օրինակ ունի շինած . եւ ամէն մէկին եօթներորդ համարը՝ բնաբանը հաստատուու համար մէկ մէկ վկայութիւն կը բերէ . եւ ասոնց երկրորդին համար բերած վկայութիւնն է Արաբայ գրքէն , զոր տեղեկատարն կ'անուանէ : ( Կիստեղ . եր . 15 ) : Եւ միւս չորս ճառերուն ալ վկայութիւնը սուրբ գրքէն բերած ըլլալը նախելով կրնանք ամէն վստահութեամբ ըսել որ այս վկայութիւնն ալ Արաբայ գրքէն աննելովը ասիկայ սուրբ գրոց կարգը ձանչցած ըլլալուն նշան կուտայ : Աուր Պրիգոր Արեւկացին ալ՝ որուն վարդապետութիւնը ուղղափառ կը ձանաչէ Հայոց եկեղեցին , եւ զինքը տօնելի սրբոց կարգն անցուցած է . նոյն Արաբայ գիրքը իրրեւ Աստուածաշունչ ընդունելիը հոգեւեց բան ըսելով կը ծանուցանէ ( Կիստեղ . 1 . 3 ) : Եւ Արեւկի լուծման հեղինակն ոչսխօսքիս վրայ ծանօթութիւն տալով կ'ըսէ թէ ասկէց կըրնայ ձեռնարկուիլ որ սուրբ վարդապետը՝ արեւմտեան վարդապետաց համեմատ՝ Արաբայ



գիրքն աստուածաշունչ գրոց կարգը սեպած է :  
 Եւթի ժամանակներս ալ Սոց Խաչատուր կա-  
 թողիկոսը որ 1658 էն մինչեւ 1679 թուա-  
 կանը կաթողիկոսութիւն ըրաւ, սուրբ գրոց  
 ցանկին մէջ զոր բաղմամբիւ եպիսկոպոսներ եւ  
 վարդապետներ եւ քահանայներ ստորագրեցին  
 եւ դադարից տերութեան կողմանէ Հակոբ նըս-  
 տող Հիւպատոսին ձեռք՝ նոյն տէրութեան  
 Կոստանդնուպօլիս նստող Կուանդէլ գետպա-  
 նին խրկեց, այս գիրքը սուրբ գրոց կարգը Դըր-  
 ուած է : Բայց որպէս զի վերապատուելի Հե-  
 ղինակը չըսէ որ ես Լըմբաձական եւ ոչ Սե-  
 պական եկեղեցոյն Հոռովմէն տարբերութիւնը  
 ցուցնել ուզած եմ. իսկ այս վկայութիւնը Սե-  
 սական եկեղեցիէն է, մենք մէկ հատ մ'ալ ի-  
 րէն Լըմբաձական անուանած եկեղեցիէն բար-  
 ձր աստիճան եկեղեցական մը ցուցնեմք, Յա-  
 կոբ Կալեան՝ Կոստանդնուպօլիս պատրիարքը,  
 որ Սիրաբայ գրքին մեկնութիւն շինեց Ստուա-  
 ծաշունչ գրոց կարգն անցունելով : Թէպէտ Կոս-  
 տանդնուպօլիս յիստորիկական գրքէն յերաւի Սի-  
 րաբայ գիրքն աստուածաշունչ գրոց կարգէն  
 հանած ըլլար, եւ Կոստանդնուպօլիս կրօնական  
 ժողովն անոր համեմատ գտնուէր, այսու ամե-  
 նայնիւ Հայոց եկեղեցին մալորած չէր կրնար  
 սեպուիլ, որովհետեւ Հայոց եկեղեցի ըսելով  
 այն սահմանութիւ անձինքը հասկընալու ոչ որ  
 յանձնատու չըլլար : Բայց շիտակն այն է որ  
 քրիստոնէականին գրիչը նոյն Սիրաբայ գիրքը

սուրբ գրոց կարգը դնելու մտոցած էր, եւ կը-  
 րօնական ժողովն ալ նոյն գրչին ուղղափառու-  
 թեանը կատարելապէս համոզուած ըլլալով՝  
 մէկ գիրքի մը անուն կարգը գրուած չըլլալուն  
 մտադրութիւն չէ ըրեր :

Մտնցմով ըստ բաւականին հասկցուեցաւ  
 որ երկրորդ Եզրասը Կեէմի ալ ըսուելով,  
 եւ հրահանք չիստոնկական հաստոյ գիրքը՝ Եզ-  
 րասայ երկու գիրքը կանոնական ձանձնալով՝  
 վերապատուելի Հեղինակին ասոր վրայ ըրած  
 ամբաստանութիւնն անհիմն է. եւ 1858 ին  
 քրիստոնէականին Սիրաբայ գիրքը կարգի  
 չմիշելն ալ մոռնալով ըլլալուն ապացոյցը  
 առկինք :

Ես մեր վերապատուելի Հեղինակին՝ մէկ  
 հոռովմեական միաբանութիւն մը ցուցնեմ, որ  
 Սիրաբայ գիրքն Ստուածաշունչ գրոց կարգէն  
 բոլորովին դուրս ձգած է. եւ այն ալ մոռնալով  
 չըլլալուն յայտնի նշան կայ : Եւ այն է Վէ-  
 նեսկայ միսթարեան միաբանութիւնը, որ իր  
 1805 թուին տպած Ստուածաշունչին պա-  
 րունակած գրքերուն ամէնուն վերջը եւ յայտ-  
 նութեան գրքէն ալ ետքը գրած է յաւելուած-  
 ներուն կարգը չորրորդ Եզրի՝ եւ սուրբ Յով-  
 հաննու աւետարանչի վախճանման կամ հան-  
 դըստեան պատմութեանը եւ Մանասէի աղօթ-  
 քին եւ Պողոսի առաքելոյն առ Կորնթացիս երկ-  
 րորդ թուղթին՝ եւ Կորնթացիներուն առ Պողոս  
 առաքեալ թուղթին հետ. եւ յաւելուածէն ա-



աջ ալ յայտնութեան գրքէն ետքը գրած է. Լիւթան  
 բողոքող հին եւ նոր կաթարանաց . որկէց կը հաս-  
 կըցուի որ այս գիրքը՝ Սիրաքն ալ հետեւին  
 սուրբ Վրոց հին եւ նոր կաթարանաց կարգէն  
 դուրս հանած էն : Վերապատուելի հեղինակ-  
 կին կը հարցընեմք թէ Վէնէտիկի մխիթար-  
 եաններն ալ Հոովմայ եկեղեցւոյ գաւառութե-  
 նէն հիմնական տարբերութիւն ունի՞ն մի : Մ-  
 սիկայ պիտի չկրնայ ըսել կը կարծեմք . վասն  
 զի 1805 թուականէն ետքը քանի՛ քանի ան-  
 գամ Բորթականտայի աշակերտ հայազգի վար-  
 դադեաները Վէնէտիկի մխիթարեանց դէմ՝  
 ամբաստանութիւն ընելով ուղղափառութիւն-  
 նին կասկածելի ցուցընել ուղեցին՝ եւ սպած  
 գրքերնին ապացոյց բերին նէ՛ գրքերն ամէն  
 ալ քննուեցան , եւ Հոովմ առոնց ուղղափառ  
 ըլլալը հաստատեց : Եւ այս կասկածելի գրոց  
 կարգը բնաւ յիշուած չէ՛ անոնց Լստուածա-  
 շունչին յիշեալ տպագրութիւնը : Ուրեմն այն  
 տոնները , ըսել է մինչեւ հիմայ , Բորթա-  
 կանտայի ժողովը Սիրաքայ գիրքը սուրբ Վրոց  
 կարգէն դուրս մնալուն հաճութիւն սուած է  
 մասնաւոր եւ մեզի անծանօթ բայց անմեղադ-  
 րելի եւ դուրս ձգելն արդարացընող պարա-  
 դաներու նկատմամբ . եւ ի՞նչպէս հիմնական  
 տարբերութեանց հեղինակը՝ 1858 ին տպուած  
 տրիստիկանին հեղինակութեամբ ըլլալը Հայոց  
 եկեղեցին կը բամբասէ թէ Սիրաքայ գրոց Լս-

տուածաշունչ ըլլալը չընդունիր : Հոովմ ա-  
 սոնք չընդունող մխիթարեանց բան չըսելէն՝  
 եւ Բորթականտացոց ասոր համար անոնց դէմ  
 ամբաստանութիւն չընելէն մակարեմք արդ-  
 եօք՝ որ Հոովմայ եկեղեցին Տրիտենդեան ժո-  
 ղովքին տեսնը Սիրաքայ գիրքն աստուածաշունչ  
 կը ճանչնար . եւ 1805 էն ետքը նոյն գիրքը  
 սուրբ Վրոց կարգէն հանեց . եւ հիմայ՝ 1864  
 ին մեր վերապատուելի հեղինակը Հայոց եկե-  
 ղեցին այս կողմէն բամբասելու կերպարանք մը  
 բռնելով Հոովմայ եկեղեցին զգաստացընել  
 կուզէ որ դարձեալ նոյնն ընդունելով Տրի-  
 տենդեան ժողովոյն՝ եւ Ժ.Օ. կրորդ դարու  
 հոովմէական եկեղեցւոյն համաձայնին , Հիմ-  
 նական տարբերութեանց գրքին բոլոր ընթացքը՝  
 այսպիսի անտեղի հետեւութիւն մը օրինաւոր  
 չընէր արդեօք : Եւ ինքը չկրնար ըսել թէ  
 Վէնէտիկի մխիթարեաններն այս գիրքս սուրբ  
 Վրոց կարգը դնելու մոռցեր են . բայց վերո-  
 յիշեալ խորհրդածութիւններէն ստիպուած է  
 ըսելու՝ թէ ասոնց նոյն գիրքը յաւելուած  
 ներուն կարգը եւ Լստուածաշունչ չստուած  
 գրոց մէջը դնելու կողմէն փաստ մը չեւեր  
 ըսելու թէ այն գրքին Լստուածաշունչ ըլլալը  
 կուրանան . կամ թէ Վօլէճցիք այս բանին հա-  
 մար դատախազութիւն չեն ըներ նէ՛ այս սուրբ  
 Վրքին կանոնականութեանը վրայ կասկած ու-  
 նին : Իսկ թէ ի՞նչ պատահան պիտի կրնան

1337-2090



տալ մեր ըսածէն ազատելու համար՝ մեր գիտնալու բանը չէ՛ :

ՎՈՒՒ Լ :

Սկզբնական եւ ներգործական մեղք :

Կոստանդնուպօլիս 1858 ին տպուած քրիստոնէականն ըսած է սկզբնական մեղաց համար՝ որ Արամայ եւ Աւայի գործած՝ եւ ասոնցմէ անոնց զաւակացն անցած մեղքն է : Կաթողիկէ եկեղեցիէն հիմնապէս տարբեր դաւանութիւններուն մէկն ալ այս է եղեր . վասն զի կիսմական դարբերութեանց հեղինակը կըսէ . « Տայտնի է որ , ճշդիւ խօսելով , ո՛չ Աւայէն , ուղղակի շնորհք պիտի ժառանգէինք : եւ ո՛չ Աւայէն ուղղակի մեղք ժառանգեցինք . վասն զի սկզբնական մեղքն 'ի սկզբան կամ 'ի ծագուման մէկ մեղք էր . այսինքն՝ Արամայ անհրճանազանութիւնը , եւ ամէն մարդիկ Արամայ ( չէ՛ թէ Աւայի ) անհնազանդութեան մէջ , անմեղութիւններն կորսընցուցին : Ինչոր , մարդկային սեռը մէկ նախաճօրէ ( Վարամայ ) , մեղք եւ մահ , ( 'ի Քրիստոսէ ) արգարո՞ւթիւն եւ կեանք ժառանգէ , : ( Եւ . 263 . 264 ) :

Ի՞նչ ճշդութիւն եւ ի՞նչ բարակութիւն . բայց ամեն ալ անտի եւ սթարադ տեղը խարճուած : Մենք ասոնք ամէնն ալ առաջուց , եւ

իմաստուն հեղինակս մեղի սորվեցընելէն առաջ գիտէինք եւ կընդունէինք : Մենք ըսած չունէինք թէ 'ի կարգի որդէծնութեան , մարդկային ազգի նախածնող ըլլալու նկատմամբ Արամ եւ Աւայ զատ զատ նախածնող են . անանկ որ Արամ մարդկային ազգին մէկ ճիւղին նախաճայր եղաւ , Աւայ ալ մէկ ուրիշ ցեղին նախամայր եղաւ , երկուքն ալ իրարմէ անկախ մնալու կերպով : եւ ասոնցմէ ծնած անձը , զոր օրինակ Կայէն , երկու անձն էր , մէկն Արամէն եւ միւսն Աւայէն ծնած . եւ Արամէն ծնածն սկզբնական մեղքէն ազատ մնաց , միայն Աւայէն ծնածին վրայ գնաց այդ մեղքը : Թէ որ իմաստուն հեղինակը այսպէս արտառոց կարծիքի տէր մարդ կը ճանաչէ նէ՛ այս գլխոյս մէջ դրածներս անոր թող ուղղէ : Իմաստուն վարդապետս այս բացատրութիւնս տալով՝ թէ « Սկզբնական մեղքն 'ի սկզբան կամ 'ի ծագուման մէկ մեղք էր , , այնպէս կը ցուցընէ թէ երկու մեղք են ըսողներ կան կարծած է , եւ անոնց դէմ կը խօսի : Քրիստոնէականը կըսէ . այո՛ . մէկ մեղք էր . բայց Արամէն եւ Աւայէն ծնածն ալ մէկ մարդ էր . եւ ինչպէս որ Արամ ըստ բնական կարգի առանց Աւայի դաւակ չէր կրնար ունենալ , սկզբնական մեղքն ալ միւսակ իրմէ ժառանգող մարդ չէր ըլլար :

Թէ որ մեղուցելոց երկու ըլլալէն մեղքն ալ երկու ըլլալ հեռեւիլ կը կարծէ նէ՛ ըսել



կըլլայ թէ Արամայ մեղքը մէկ էր . կայէն ծը-  
նաւ նէ՛ այն ալ սկզբնական մեղքը ծնաւ, եղաւ  
երկու մեղք : Արեւին ծնանելոյն երեք՝ եւ  
Սէթով չորս եղաւ . եւ այլն : Ասիկայ Տեղէն ու  
Տեղաւորացիք, ժամանակներն ու ժամանակներն յը-  
փուք, այսինքն ժամանակին հայրն ու մայրը ի-  
րարու հետ խառնելով մէկ սեպելէ . եւ այս-  
պէս, ուրիշին աչքին մէջ մանր շիւղ մը նշմա-  
րողին իր աչքին մէջ շատ անգամ գերան մը կը  
դանուի, դոր՝ իր աչքին մէջն ըլլալուն համար  
չկրնար տեսնել :

Բոլոր մարդկային սեռը մէկ նախահորմէ  
մեղք եւ մահ, եւ մէկալէն արդարութիւն եւ  
կեանք կ'ժառանգէ ըսելն ալ՝ նոյն խորհրդածու-  
թեաք կերեւի որ քրիստոնէականին ըսածին պէս  
խօսիլ չէ : մէզի արգարութիւն եւ կեանք ժա-  
ռանգել տուողը յիրաւի՝ մէկ էր առանց օգնա-  
կանի . բայց խնդիրն անոր վրայ է, թէ մեզի  
մեղք եւ մահ ժառանգել տուողն ալ անոր պէս  
էր, առանց գործակցի էր : Մարդիկ ծնանելու  
համար հայր ալ կուենան՝ մայր ալ . մարդկայ-  
ին ցեղը նախահայր ունէր նէ՛ նախամայր ալ  
ունէր : Հոգւոյ վերածնութիւնը երկու ծնողի  
կարօտ չէ, բայց ըստ մարմնոյ ծնունդը մէկ  
ծընողով չըլլար . հօրմէ դատ մայր մ'ալ ունե-  
նալու է : Արդ՝ երկուքը մէկէն մէկ մարմնա-  
ւոր ծննդեան մը ծնողակից ըլլալով՝ իրենցմէ  
ծնածին սկզբնական մեղք ժառանգելուն ալ իր-  
րեւ մէկ անձն գործակից եղա՛հ են ըսելը հե-

րետիկոսութեան ո՞ր տեսակէն է . եւ Հոովմայ  
եկեղեցին կըսէ՞ արդեօք թէ մարդիկ սկզբնական  
մեղք ժառանգելու համար մինակ հօրմէ կը ծը-  
նանին . կամ գոնէ Սէթ՝ որկէց հիմակուան  
մարդկային ազգը յառաջ եկած է, միայն Արա-  
մէն ծնաւ . եւ Աւա ասոր մայր չէրաւ :

Սուրբ Պողոս առաքեալն ըսածէ . 'ի միօջէ  
մահ եւ 'ի միօջէ կեանք . բայց ասիկայ ճարտա-  
սանական հակադրութեան ձեւ մ'է . առն եւ կնաջ  
բարոյական՝ կամ սսպէս ըսենք՝ հեղինակական  
միութիւնը Տեառն մերոյ պօրղ միութեանը հակա-  
կշիռ դընելով՝ երկու կողմէն ալ միութիւն ցու-  
ցընելու բաւական կը սեպէ . միութեանց տար-  
րութեանը շնայիր . ուստի հիմնական սորբերո-  
թեանց հեղինակը սուրբ առաքելոյն իօսքին  
քով փարէնթաղիքի մէջ՝ չէ թէ Ասայ՝ բառերը  
կը դընենէ՛ առաքելական խօսքէն խտորումն է :  
Սուրբ առաքեալը զԱւա սկզբնական մեղաց ա-  
ծանցիչ ըլլալէն դուրս չձգէր . վասն զի ուրիշ  
անգամ երբ խօսքը կը պահանջէ . յայտնի կը-  
սէ . « Արամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրե-  
ցաւ եւ յանցեաւ » ( Բ . Տէմ . Բ . 14 ) :  
Հոս խաբուիլը՝ որ անհնազանդութեան բուն  
պատճառն էր, որով եւ մեղքն ալ անկէց կը-  
ծագէր՝ մինակ Աւայի կուտայ . Արամ չի խաբ-  
ուեցաւ կրօնէ : Սեղանչելն ալ մինակ Աւայի  
տուածի պէս կրխօսի . որկէց սա ալ կը հասկը-  
նամք՝ որ սկզբնական մեղքին սկզբաւոր կամ ծագ-  
մանը մէկ մեղք ըլլալը խոստովանելն ետքը



մեր իմաստուն բնաբանին նոյն մէկ մեղքն  
 Արամայ վրայ մինակ ձգելը, ճշշ Խոսեւով սուրբ  
 սաքեւելոյն այս անգոս ըսածին հետ շատ աղէկ  
 չմտաբանիր: Այոյն սուրբ առաքեալը նոյն սկզբ-  
 բնական մեղքն՝ Աւայի անուն չտալով՝ միայն  
 Արամայ վրայ կը ձգէ. վասն զի որդէծնու-  
 թեան կողմէն, որով սկզբնական մեղքը Արամայ  
 ծննդոցը կանցնի, երկոքին մէկ են, եղիցին  
 երկուք ՚ի մարմին մի կըսէ արարիչը: Իսկ այն  
 մէկին անունը տալ պէտք ըլլայ նէ, Արամայ  
 անունը կտրուի. վասն զի այր է գլուխ կնոջ.  
 Ուստի իմաստուն հեղինակին փարէնթաղիղի մէջ  
 կրկին եւ կրկին զԱւա դուրս ձգելը բողո-  
 քովին անտեղի է:

Այս ըսածներս այսպէս կը հաւատամ,  
 մինչեւ որ վերապատուելի հեղինակը զիս հա-  
 մոզէ որ հերետիկոսութիւն է այս. բայց այժ-  
 մէն սա դաշինքը կառաջարկեմ իրեն, որ Սիրաբայ  
 գրքէն ալ, որուն աստուածաշունչ ըլլալուն  
 կը հաւտայ, եւ անոր յայտնի դէմ խօսելն իրրեւ  
 Աստուծոյ խօսքին դէմ խօսիլ կը սեպէ, աող մը  
 բան ջնջէ. որ է այս խօսքը՝ « ՚ի կնոջէ սկիզբն  
 մեղաց », (Խ. 33). վասն զի այս ալ՝ սկզբ-  
 բնական մեղքը ՚ի սկզբան կամ ՚ի ծագման  
 մէկ մեղք սեպելով մինակ Արամայ վրայ ձգե-  
 լուն հետ չմտաբանիր. որովհետեւ ասիկայ՝  
 մեղաց սկիզբը մինակ Աւայի տուած է, եւ մեղի  
 թող հաւատացընէ հեղինակը, որ Սիրաբայ  
 գրքին մէջ գտնուած այս խօսքը ետքի ժամա-

նակնգրը իրէն բնագաւաած բրիստոնէականին  
 գրչին նման հերետիկոս մը գրեր է, հիմայ այս  
 ալ բանի մը հեղինակաց սովորական հնարքն է.  
 որ երբ ուրըս գրոց կամ եկեղեցւոյ ընդ-  
 ունելի եղող սուրբ հայրապետաց խօսքը յայտ-  
 նի կերպով իրենց ըսածին դէմ գալու ըլլայ նէ  
 այն խօսքը ետքէն մտած է ըսելով անոր պա-  
 տասխանելէն ալ, իրենց մասնաւոր կարծիքը  
 փոխելէն ալ կաղատին: Իայց սա ալ կը յիշե-  
 ցընեմ, որ Պօղոսէ՝ Պաղղիացի մեծանուն  
 աստուածաբանը, Սիրաբայ այս խօսքին վրայ ան-  
 հարազատութեան նշան մը չտեսներ, եւ տակն  
 ալ, երբեւ անոր ըսածին ապացոյց, քննարկ գրքին  
 Պ գլուխը կնշանակէ. որ Աւայի օձէն խաբուե-  
 լուն՝ եւ զԱրամայ համոզելով երկուքին մէկէն  
 մեղանչելուն պատմութիւնը կպարունակէ: Էթ-  
 նական արքեպիսկոպոսոս հեղինակին մեղադրած բը-  
 րիստոնէականը վկայութիւն մը Սիրաքէն ունի,  
 զոր չընդունիլ կը կարծէ հեղինակս, բայց ինքն  
 անոր հակառակ խօսող դտնուեցաւ: Վկայու-  
 թիւն մը սուրբ Պօղոս առաքեալէն ունի՝ որ  
 նոյն իսկ սկզբնական մեղաց գոյութիւնը ասկէց  
 սորված եմք. եւ անիկայ ըսաւ որ՝ չէ թէ Ա-  
 դամ՝ այլ Աւա խաբուեցաւ ու մեղանչեց: Ար-  
 րորդ վկայութիւն մ'ալ հսովմէական եկեղեցւոյ  
 հռչակաւոր աստուածաբանէ մը ունի՝ եւ ինքն  
 ասոնց վկայութեանը վստահելով կըստասէ որ  
 այդ հսովմէական հեղինակը ալ մէկ հայրապետէ



կամ ժողովքէ մը վճիռ մէջ բերէ , որ ըսած ըլլայ  
 թէ Ադամ մեղացը մասնակից չունեցաւ զԵւա .  
 այլ միայն ինքն էր մեղանշողը . կամ Եւա՝ Ա-  
 դամայ սերընդոցը ծնողակից չէր՝ որով սկզբը-  
 նական մեղքը մարդկային ազգին մէջ ընդհա-  
 նուր տարածուեցաւ . եւ այսպէս ըսողները  
 իբրեւ Հերետիկոս նորոված ըլլայ : Այս որ չը  
 կայնէ , սկզբնական մեղքն Ադամէն է . կամ  
 Եւայէն է , կամ երկուքէն մէկէն է ըսելը մի-  
 եւնոյն նիւթոց վրայ այլ եւ այլ կարծիք բա-  
 ցատրող խօսքեր են . աստուած արաններուն Հե-  
 տադոտութեան նիւթ . բայց եւ ոչ մէկը հաւա-  
 տալեաց յօդուած , որով անոր հակառակ կար-  
 ծիքը պաշտպանողը կաթողիկէ եկեղեցւոյ դա-  
 ւանութենէն հիմնապէս տարբեր դաւանութիւն  
 ունեցած ըլլայ . ուստի ասոր վրայ վերապատ-  
 ուելի հեղինակին գրածն ալ իր գրքին ձակատը  
 գրած նպատակէն դուրս , եւ միայն Հայոց ե-  
 կեղեցւոյ վրայ մոլորութիւն մ'ալ աւելի ցուցը-  
 նելու նպատակին համեմատ է :

Այն կրօնական ժողովոյ վաւերացուցմամբ  
 1853ին տպուած քրիստոնէականն սկզբնական  
 մեղաց վրայ ուրիշ մոլորութիւն մ'ալ ունի ե-  
 ղեր . վասն զի ըսեր է . «Սկզբնական մեղքով  
 ,, բանականութիւնը կամ խելքը՝ որով մարդս  
 ,, անասուններէն կը տարբերի , բունութեան տակ  
 ,, ինկաւ , որով մարդս Աստուծոյ կամքին համա-  
 ,, ձայն կեանք վարելու կարողութիւնը կոր-  
 ,, սընցուց » :

Ասոր մէջ դաւանութեան հիմնական տար-  
 բերութիւն գտնու է . զոր սա խօսքերով կը բա-  
 ցատրէ . «Սկզբնական մեղքով մարդկային հո-  
 ,, գին (ըստ կաթողիկէ վարդապետութեան եւ  
 ,, ըստ արեւելեան ժողովոց ) ոչ այնչափ կրից  
 ,, բունութեան տակ ընկաւ կամ այնչափ խան-  
 ,, դարեցաւ , որ ասով Աստուծոյ կամացը համա-  
 ,, ձայն կեանք վարելու կարողութիւնը կորսըն-  
 ,, ցուց : Ինչ է Աստուծոյ կամքին համաձայն կեանք  
 ,, վարելը . բայց եթէ հաւատալու պատուիրանք-  
 ,, ները պահել : Աւրեմն այս քրիստոնէականին  
 ,, խօսքերուն համեմատ՝ մարդկային միտքն ու  
 ,, կամքը միայն ասով՝ որ կրից բունութեան տակ  
 ,, ինկան , հաւատալու , յուսալու ու սիրելու  
 ,, կարողութիւնը կորսնցուցին : Իսկ կաթողիկէ  
 ,, վարդապետութեան համեմատ՝ մարդկային  
 ,, միտքն ու կամքը ասով որ կրից բունութեան  
 ,, տակ ինկան , տկարացան վիրաւորեցան . ու-  
 ,, ժերնին կորսնցուցին . բայց կարողութեան  
 ,, կորուստ չեղաւ » : (Եր . 294 . 295) :

Իմաստուն հեղինակն այս խօսքիս կարգը կա-  
 րելու որ բան մը մոռցեր է , որուն վրայ կը ցաւիմք ,  
 վասնզի ասով մեր չգիտցած մէկ բանը սորվե-  
 լէն զուրկ կգտնուինք : Եւ այս է քրիստոնէա-  
 կանին . կարողութիւնը կորսնցուց ըսելուն , եւ  
 իրեն՝ ուժերնին կորսնցուցին ըսելուն մէջ եղած  
 տարբերութիւնը նշանակելը . որով իմաստային ք-  
 թէ ինչ հրաշքով քրիստոնէականին ըսածը  
 մոլորութիւն , իսկ վերապատուելիին ըսածը ,  
 ԻՐԱՒԱ . Գ .



զոր ըստ կաթողիկէ վարդապետութեան եւ ըստ տիեզերական ժողովոց խօսելը կիմացընէ , ուղղափառութիւն կըլլայ : Սենք կը կարճէինք որ՝ ա՛ժը կորսնցոց եւ կարողութիւնը կորսնցոց՝ մէկ բան ըսել են . բայց վերապատուելիին ըսածին նայելով այս երկուքս իրարմէ այնքան մեծ տարբերութիւն ունեցած կըլլան՝ որ առաջինն ըսողը կաթողիկէ վարդապետութեան եւ տիեզերական ժողովոց համաձայն խօսելով ուղղափառ կըլլայ . իսկ երկրորդը խօսողը՝ կաթողիկէ եկեղեցւոյ դաւանութենէն հիմնապէս տարբեր բան մը խօսած , այսինքն հերետիկոս կըլլայ : Գիշէ է ըրեր որ այդ երկու գրուցուածքին իրարմէ գատուելու ճիշտ նշանակութիւնը չէ հասկըցուցեր . եւ այն ալ չէ ըսեր թէ՛ կարողութիւնը կորսնցոց ըսողը այս տարբերութիւնս չըզիտնալով՝ ա՛ժը կորսնցոց ըսելուն տեղն այսպէս խօսեր է նէ , անոր ազիտութիւնը հերետիկոսութեանը թեթեւացուցիչ պարագայ չըզինար սեղուիլ : Կօսքին կարգին եւ բացարձակ գրուցուածքին նայինք նէ՛ այս նոր տեսակ հերետիկոսութիւնը այդպիսի թեթեւացուցիչ պարագայներու ընդունակ չէ :

Պէտք եղած զանազանութիւնը նշանակելուն տեղն ուրիշ բան կը խօսի . « Խնդիրը բոլորովին » տարբեր կերպբանք կառնուելու կըսէ , եթէ վերայ յայնչեալ քրիստոնէական ըսէր թէ՛ մարդն , սկզբնական մեղքք սկզբնական շնորհքէ զրկուելով , սակարող եղաւ այն կամացը համաձայն

« կեանք վարելու » , ( ԼԵ . 290 ) : Սենք հերետիկոսութիւնն ուղղափառութենէ դատող վէտը՝ այժ եւ կարողութիւն բաւերուն նշանակութեան մէջ կը ընտելինք , որ հասկընանք թէ ի՞նչպէս կըլլայ որ ա՛ժը կորսնցոց ըսելն ուղղափառական , եւ կարողութիւնը կորսնցոց ըսելը՝ հերետիկոսական կըլլայ : Եւս տեղս՝ անկարող եղաւ ըսելը վաւերացընելով , բանը գործնալ անստուգութեան մէջ ձգեց . զի ման զի՛ վերցընելու ժգածին տեղը գընելու յարմար դատած ըստն ալ ճիշտ վերցընելու ժգածն է ըստ քերականական կազմութեան : Քերականութիւն կարողացողները կըզիտնան որ մէկ բառի մը վրայ առ մասնիկը դրուի նէ՛ այն բանին նշանակած որպիսութիւնը չունեցողը կը ցուցընէ . թէ՛ սկիզբէն չունեցած ըլլայ , եւ եթէ առաջուց ունեցած՝ եւ ետքը կորսնցուցած ըլլայ . եւ ըստ այսմ անկարող ըսելը ի՛նչն կարողութիւնը չունեցող կամ առաջաբնն ունեցած կարողութիւնը կորսնցոցած ըսել կըլլայ : Եւ ըստ որում մարդս սկզբնական շնորհքէ զրկուելովն է որ անկարող եղաւ , ըսել կըլլայ որ առաջուց կարողութիւն ունէր . եւ այն բանն որ մէկն առաջուց ունէր եւ ետքը չունի նէ՛ նոյնը կորսնցոց ըսելուն տակէն հերետիկոսութիւն՝ ելլելը խելքս չկորեր : Եւ ըստ այսմ պիտի ըսեմ . թէ որ կարողութիւնը կորսնցուց ըսելով քրիստոնէականը հերետիկոս եղաւ նէ՛ անկարող եղաւ ըսելով ալ հերետիկոս կըլլայ . սա տարբերութեամբ որ՝ այս վերջին՝ դէպքին



մէջ՝ հռովմէական ուղղափառութեան վրայ պարծող աստուածաբան մը կը լլայ անոր հերետիկոսութեան վարժապետը : Բայց մենք քաւ լիցի որ այդպիսի չնչին բաները հերետիկոսութիւն անուանեմք : Աւրիշ բան մը կայ քրիստոնէականաց քննիչ հեղինակին խօսածնեւրուն մէջ քննելու :

Մարդս Աստուծոյ կամացը համաձայն կեանք վարելու կարողութիւնը բոլորովին կորսնցուց ըսելուն տակէն՝ ազատ անձնիշխանութիւնն ուրանալ կելլէ : Եւ այս ուրացութիւնը մենք հին Մանիքեցիներուն՝ եւ յետին ժամանակաւ Առթերի եւ անոր հաւատացողներուն ձգած եմք : Վերապատուելի հեղինակին համար ալ ասկէց առաջ քանի մի անգամ ցուցուցած եմք որ Հայոց սուրբ եկեղեցին՝ Առթերի քարոզած բողոքականութեան մէկ ճիւղը կարծել տալու մեծ փափաք ունի : Ինքը կըսէ թէ մարդըս կարող է հաւատալու եւ յուսալու եւ սիրելու : Եւ արդեօք ասոր տակէն Պեղագեան աղանդոյ մօտութիւն մը չի՞ գուշակուիր, որ ճիշդ Պեղագեան չըլլայ ալ նէ՝ կիսապեղագեանին հետ գրեթէ կընոյնանայ : Այս երկու հերետիկոսութիւններէս միակերպ հեռանալու համար հարկ կը լլայ ըսել թէ մարդոյս կարողութիւնը՝ այս առաքինութիւններս ինքնին ընելու համար չբաւելու աստիճան ինկաւ : Այս միտքս յայտնելու համար, կարողութիւնը կորսնցուցայ, ուժը կորսնցուցայ, պիտրացայ, անկարող եղաւ

ըսելը միակերպ կը ծառայեն . ուղղափառ սուրբ հաւատքը կը սորվեցընէ՝ որ աստուածահաճոյ բարի գործք մը չէ թէ միայն ընելու : այլ եւ մտաց մէջ որոշում մը ընելու անգամ՝ աստուածային շնորհաց օգնութեանը կը կարօտիմք : ըսել է որ այն կարողութիւնը չունիմք . սկզբնական մեղքէ ազատ ծնած ըլլայինք նէ՝ ունեցածնիս կամ մեր անմեղ ծնողներէն ժառանգութեամբ ստացածնիս պիտի մնար քովերնիս : Բայց սկզբնական մեղք ծնած ըլլալով նոյնը կորուսած եմք : Այս վարդապետութեանս հիմնէ սրբոյն Պողոսի խօսքը . « Աստուած է որ , , յաջողէ 'ի ձեզ զկամիլն եւ զառնելն , , : (Քիւլեոս . Բ . 13 ) : Թէ որ վերապատուելի հեղինակը՝ քրիստոնէականին ըսածն օրինաւոր չըտեսնելէն ետքը պիտրացայ եւ անկարող եղաւ բաները չթելադրէր նէ՝ զինքը կիսապեղագեան պիտի կարծէինք, որուն շատկէկ կը մօտենայ այնպէս ցուցընելով թէ պէտք չէր քրիստոնէականին ըսել թէ մարդս Աստուծոյ կամքին համաձայն կեանք վարելու կարողութիւնը կորսնցուց, որ հաւատալու եւ պատուիրանքները պահելու կարողութիւնը կորսնցուց ըսել է : Բայց ինքը չկորսնցուց ըսելէն կը զգուշանայ . եւ միայն իր պարունակած քրիստոնէականին մտացն համաձայն խօսելովն է որ կիսապեղագեան աղանդէն հեռու կը խօսի :

Քրիստոնէականներուն ներգործական մեղաց վրայ խօսածին կուգայ կարգը : 1846 ին՝



Տիրիս եւ կալիզա տպուած քրիստոնէականը  
 այս մեղքերու տեսչաւ եւ ներքին՝ սովորական  
 բաժանումը դնելէն նսրը՝ ներքին աւելի են  
 կրակ: Գործում ըստ սոցիալական, ըստ տա-  
 լիստական թեան, կամ անմտաբար յանկար-  
 թական դիմումով եւիք զանց զօրինակն այս-  
 ներքին: Մահացու ներքին համար յոյ բնէ  
 է: Գործում արիւնդէս եղանակով օրինաց՝ ոչ  
 միայն եղեայ յանդիմանութեան խղճի մտաց՝  
 կամար յօժարութեանը գործելը զարկու:

Քրիստոնէականաց բնիչ մեղք Տեղիական  
 ասոր մեղք փասնի տեսեր է երբեք պատճառաւ  
 նախ՝ որ շատ մը ներքին մեղք նոյն մեղաց  
 սահմանը ներ ըլլալուն համար գործ կը մը-  
 նան՝ որ թէ որ անոնց մեղք ըլլալը չճանչ-  
 նալ հետեւի նէ փասնաւոր է յիրաւի: Բայց  
 ներքին մահացու ներքին կարգը նետել ըլլայ  
 նէ սխալ կրնայ ըսուել: Բայց հոգւոյ վտանգ  
 մը չեմք տեսնել: Երբ որ ներքին երուն կե-  
 սը մահացու ներքին կարգը կը մտնէ երբ  
 լոկէց ինչ կը հետեւի: Ընապէս այն՝ որ մարդ  
 ասունը մահացու կարծելով աւելի կը զգուշա-  
 նայ. եւ ասիկայ վտանգաւոր չըլլալէն զատ  
 օգտակար սխալ մ'ալ է:

Այս քրիստոնէականին համար կըսէ Գի-  
 յանան տարբերութեանց հեղինակը. « Բողոքովին  
 մտնալով օրինաց նիւթը՝ որն որ կրնայ ընտ  
 քնքեան թիթեւ ըլլալ, եւ ասանով այն օ-  
 ռինաց զէմ գործողը կրնայ տիրապէս նոյն օ-

« րինաց տեղեակ ըլլալ, կրնայ եր խղճին յան-  
 « դիմանումեանը զէմ դնել, կրնայ լիութի յո-  
 « ժարութեամբ շարիք գործել. ՚ի վերայ այս  
 « ամենայնի այս շարիքը, այս օրինադանցու-  
 « թիւնն ըստ ինքեան իրեն նիւթէն աւելի  
 « ծանր չըլլար: (Եւ. 298): Թէ որ այս  
 ճշմարիտ է նէ՝ մահացու մեղաց համար ալ ը-  
 սելու կըլլայ՝ որ մէկն անոր մեղք ըլլալը չը-  
 դիմալով, կամ խղճին կողմէն նեղութեան մը  
 կրելով, կամ թէ ներքին թէ արտաքին բը-  
 նութեան մը ստիպելով՝ եւ ոչ լիութի յօժարու-  
 թեամբ գործած ըլլայ նէ՝ ասկաւին մահացու  
 մեղք գործած պիտի ըլլայ. որովհետեւ նիւ-  
 թոյն հանդամանքը մահացուին է:

Արարատուի հեղինակին այս առիւ-  
 մեղի դաս տուած բարոյականը չեմք հասկը-  
 նար: Տէրն մեր մեղաց ծանրութիւնը մեղան-  
 չողին գիտնալուն կապած է, եւ ոչ թէ մեղաց  
 նիւթոյն. « Ծառայ՝ որ ներքին շատ օրինակ  
 ուրիշ, եւ ոչ պատրաստեցի ըստ կամաց նո-  
 ռա, արքեպիսկոսոս, եւ ոչ ուն քրիստոնէ  
 « արժանի դաշի ինչ գործիցէ՝ արքեպիսկոսոս  
 « կա: » (Ղ. 1. Ժ. 47, 48): Արար-  
 պատուի հեղինակին տուած դասն ասոր հա-  
 կատակն է արդեօք՝ թէ բացատրութիւնը, չեմ  
 հասկընար: Մարդկային օրէնքն ինչպէս կը  
 բացատրէ, որ այս տեղանական խօսքիս վրայ  
 հիմնելով, քրեական յանցանաց՝ եւ լմինչեւ  
 անգամ մարդասպանութեան մեղ թիւթեւացու-



ցիչ պարագայներ կը ճանչնայ : Այլ թէ որ հե-  
ղինակիս մէկ սպասուորը ծանրագին մէկ անօթ  
մը ակամայ՝ եւ ձախորդ դէպքով մը կտորէ ,  
կամ յատուկ դիմամբ՝ եւ կամ լոկ ծուլու-  
թեանը համար թաշկինակը լուացած չըլլայ , ո՞ր  
յանցանքը մեծ պիտի սեպէ : Լոկ նիւթոյն նայե-  
լով՝ կոտորուած անօթը թաշկինակէն շատ սուղ  
է . եւ անոր կոտորածը չմիանար . միանայ ալ նէ՝  
տգեղ բան մը կըլլայ . եւ յարգը կորսուելով՝  
մարդու առջը ելլելու բան չըլլար : Թաշկի-  
նակն աժան բան մ'է . եւ ծառայն այն ան-  
դամին լուալու ծուլացաւ նէ՝ կրնայ առանց  
շատ ժամանակ անցընելու լուացուիլ եւ առա-  
ջին մարդութիւնն ստանալ , եւ որքան յարգ  
ունէր նէ՝ անկէց բան մ'ալ չկորսնցունէր :  
Արեւմտ ըստ իմաստուն հեղինակին , ձախորդ  
եւ ակամայ՝ այն մեծագին անօթը կոտորողը  
սաստիկ պատժուելու է . իսկ իր ծուլութեանը  
համար՝ եւ իր կամքը իր մեծին կամքէն աւելի  
պաշտելուն համար տիրոջը թաշկինակը չլուա-  
ցողը անպատիժ ձգելու է : Այդպիսի բարոյ  
կանի իմ խելքս չհասնիր . խղճմտանքի տէր ըն-  
թերցողք թող դատեն :

Օգրմանալին այն է՝ որ վերապատուելի  
հեղինակն ալ այս դատաւորանս մեր ուզածին  
պէս կորած է վերոյիշեալ խօսքերէն ետքը .  
եւ կըսէ . « Մեր ամենուս բանական դա-  
ստատանը կրնայ կաթուղիկէ բարոյականու-  
թեանը վկայել որ՝ եթէ մարդ ինքեւ կամ

« ծանր կերպով մեղանշելու տարակոյտին կամ  
« վախին մէջ մնալով գործելու ըլլայ , նոյն  
« համեմատութեամբ ինքեւ կամ ծանր կը  
« մեղանշէ . որովհետեւ ինքզինք առ-  
« ջի դէպքին մէջ թեթեւ , երկրորդ դէպքին  
« մէջ ծանր կերպով զՆստուած վշտացընելու  
« վտանգին մէջ դրաւ : Աստի տարակուսելով  
« օրինաց դէմ գործելը՝ միշտ ներելի մեղք  
« չէ » : Այլերը՝ մեղաց ծանրութիւնն ու թե-  
« թեւութիւնը նիւթոյն վրայ դրաւ . քրիստոնէա-  
« կանին դիմախօսելու համար . այս տեղ տարա-  
« կուսելով՝ ուստի եւ խղճին թեւադրութեանը  
« դէմ գործելուն վրայ դնելով գրեթէ կը նոյ-  
« նանայ իր հերքածին հետ . եւ տարբերութիւն  
« մը կայ ալ նէ՝ մենք չեմք կրնար նշմարել . ի-  
« բրեն կը մնայ նոյնը բացայայտ խօսքերով մեզի  
« հասկըցընելը : Ասկէց կերեւի որ այս նիւթոյս  
« վրայ ալ չէ թէ մտքի եւ դաւանութեան՝ այլ  
« դրուցելու եղանակի տարբերութիւն կըլլայ  
« դէմերնիս ելլողը :

Իսկ թէ որո՞նք են ըստ նիւթոյն ներելի  
կամ մահացու մեղքերը , թէպէտ ընդհանուր  
կերպով խօսելով գիտեմք թե աստուածային  
յայտնի հրամանին դէմ՝ որ է տանաբանեայ պատ-  
ուիրանաց եւ հետոն մերոյ վարդապետութեանց  
դէմ գործուածները մահացու մեղք են , բայց  
որովհետեւ բարոյագէտ աստուածաբաններուն  
մէջ ընդունուած են ընդհանրապէս այնպիսի  
պարագայներ՝ որ մահացու մեղքերը ներելի ե-



բուն կարգը կանցընեն, ինչպէս են տղիտու-  
 թիւնը եւ սխալանքը եւ ակամայութիւնը եւ  
 անմատչութիւնը. նոյնպէս անանկ պարագայ-  
 ներ կան՝ որ ըստ նիւթոյն ներելի մեղքը վե-  
 րայգրեալներուն հակառակ արամադրութիւնով  
 մահացու կընեն. ուստի քրիստոնէականներուն  
 համար աւելի դիւրին՝ եւ աւելի ապահով կը  
 կարծեմք՝ եօթն մահացու մեղքերը՝ մի ըստ միօ-  
 ջէ իրենց հակառակ անարեւութիւններովը նը-  
 շանակելէն մտքը այն որոշումը գնել՝ զոր  
 Տիրիտու եւ Ասկադայի քրիստոնէականները  
 դրին, եւ քրիստոնէականաց վերապատուելի  
 քննչն ալ՝ երկու խօսքով անոնք պարտաւելու  
 համար յանձնառու եղած պարտքը կատարելէն  
 ետքը ընդունեց:

Արդիշիշխալէն զատ՝ մահացու մեղքց լիա-  
 կատար այնպէս ցանկ մը չունիմք՝ որով դիտա-  
 նաւք որ այս ինչ եւ այն ինչ բաներն ինչ պա-  
 րագայի մէջ որ գործելու ըլլան՝ մահացու կամ  
 ներելի են. Այս բանիս վրայ ցուցակներ կան  
 ալ նէ՝ անկատար եւ պահասուոր եւ տարտամ  
 են. Օրինակի համար. եօթն մահացու մեղք  
 համրուած են սովորաբար. բայց ասոնց մա-  
 տուէն ալ մեղոյ կարգ մտած են. եւ այս մա-  
 սերն որոնք ըլլալը յատուկ նշանակուած ըլլա-  
 լով՝ որոշումը իւրաքանչիւր մարդոց խղճմը-  
 տանքին դատմանը ձգուած կերելի. Աւ առկէց  
 զատ՝ նախնի հարց եւ այժմու երեւելի լատին  
 աստուածաբանից դրուածոց մէջ ալ մահացու մեղք

ներս համար ձիշդ եւ որոշ ցանկ մը կենալը  
 չեմք յիշեր: Աւ ասով շատ շիտթ գաղափար-  
 ներ կընանք ունենալ այս նիւթոյս վրայ. Առ-  
 զէինք այդ շիտթութենէն աղաթիլ՝ դասակարգ-  
 եալ ցանկ մ'ունենալով. եւ կընայ՝ արդեօք  
 իմաստուն հեղինակը մեզի մէկ այդպիսի վա-  
 ւերական ցանկ մը տալու: Հատ յոյս չունիմ  
 երբ կը տեսնեմ որ այս նիւթոյս վրայօք հաս-  
 տատ որոշում մը չէաց որ հին եւ ոչ նոր հեղի-  
 նակաց մէջ: Մուրն կիսարիանոս, ինչպէս որ  
 կը պատմէ Մակեդոնոսի ինչեցական պար-  
 պարտոյն (բար. է. ք. 6), իր դրուածոց մէջ  
 քանի մի տեղ ըսած կըլլայ որ միայն ուղղակի  
 Աստուծոյ դէմ գործուած մեղքերը ծանր են.  
 իսկ այն մեղքերն որ ուղղակի ընդդէմ Աստու-  
 ծոյ չեն՝ թեթեւ են: Երանք ըսածը մահա-  
 ցու՝ եւ թեթեւ ըսածը ներելի նշանակելը  
 ծանուցանել հարկ չէ. Աւ ըստ այժմ՝ գողու-  
 թիւնը, շնութիւնը, մարդասպանութիւնը,  
 մարդ զոպարտելը, սուտ վկայութիւնը, եւ այլն,  
 որ Աստուծոյ պատուիրանին դէմ ալ են նէ՝  
 ուղղակի մարդոց դէմ, եւ Աստուծոյ դէմ ըլ-  
 լալին անուղղակի ըլլալով ծանր մեղք սնու-  
 ուելու չեն. Եւ մանապէս ծուլութիւնը որկրա-  
 մալութիւնը՝ որով մարդ իր անձին դէմ կը  
 մեղանչէ, թեթեւ մեղք ըլլալու են. Չըզի-  
 տեմ թէ ո՞վ կայ այդպէս ըսող: Ասոր հեղի-  
 նականներէն ալ Պերթիէ՝ որ բազմաձևուտ եւ յար-  
 գի աստուածաբան մէկ, ինչպէս չէ՝ կըսէ:



,, ամէն տոնն դատելը թէ մեղք մը մահացո՞ւ  
 ,, է արդեօք՝ թէ միայն ներելի: Աւշարիւր ըլլալ  
 ,, պէտք է աւրուած եւ զանց առնուած՝ օրէնքին  
 ,, կարեւորութեանը (ասիկայ Բոլայ նիւն ը-  
 ,, սուածն է) քիչ կամ շատ սաստիկ փորձու-  
 ,, թեանը, մեղք գործողին քիչ կամ շատ մեծ  
 ,, տկարութեանը, կամ մտաւորին, կամ ընկե-  
 ,, րութեան վրայ ըլլալիք գայթակղութեան  
 ,, կամ վնասուն, եւայլն: Սովորաբար մենք  
 ,, մեր յանցանքներուն վրայ գատաստան ընե-  
 ,, լու անկարող եմք, թող թէ ուրիշներուն  
 ,, վրայ, : Ասոնց մէջ գիտնալով կամ չգիտնա-  
 ,, լով մեղանչել յիշուած չէ. բայց ասիկայ յայտ-  
 ,, նապէս խօսքերուն վերջը գրուած եւայլնին  
 ,, ասկը կը պարունակի: Այս աստուածաբանիս  
 ,, խօսքովը՝ մահացու եւ ներելի մեղաց որոշմանը  
 ,, մէջ եղած վրիպակներն անմեղադրելի կըլլան  
 ,, ալ նէ՛ սա ալ մտքէ հանելու չէ որ քրիստո-  
 ,, նէականներն աստուածաբանութիւն չեն, որ  
 ,, ամէն մանրամասն խնդիրներու լուծում ասան  
 ,, նորուս եւ մանր տղայոց մտացն ընդունակու-  
 ,, թեանը յարմար բաներ միայն կը գրուին մե-  
 ,, ջը: Գիտնալով կամ չգիտնալով ընելն ի՞նչ ըլ-  
 ,, լալը տղան շատ աղէկ կը հասկընայ. բայց մե-  
 ,, ջաց նիւթն ինչ ըլլալը չկրնար հասկընալ:

Աւրիշ բան մը կայ քրիստոնէականաց գի-  
 մաթօսին ըսածներուն մէջ՝ գիտողութեան ար-  
 ժանի: Մեղք մը երեք բանով մահացու կըլ-  
 լայ կըսէ. նախ՝ նիւթոյն ծանրութեամբը

երկրորդ՝ մտածութեամբ կամ մտադրութեամբ  
 գործուած ըլլալովը. երրորդ՝ հաւանութեամբ:  
**Մէկ** ուրիշ բան մ'ալ կ'ոյ՛ որ Տէրն մեր ըսեր  
 էր. մեղք ըլլալը գիտնալով գործելն ալ՝ նե-  
 րելի մեղքը, որ քիչ պատժոյ արժանի է, մահա-  
 ցու՝ եւ գան քաղած ըմպելու արժանի կընէ: Թէ  
 որ ասիկայ՝ քոտակն Երազմանի քործուած-  
 ներուն տակը պարունակուած է նէ՛ մութ է.  
 կրնայ մարդ մեղք ըլլալը շատ աղէկ դիտցած  
 մէկ բան մը՝ առանց մտադրութեան գործել.  
 Գործիմակ, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը  
 միս ուտելուն մեղք ըլլալը շատ աղէկ գիտ-  
 նալով ալ՝ նոյն օրն առաջը դրուած մեղքէն էն  
 ուտելը առանց մտադիր ըլլալու թէ օրն ի՞նչ  
 օր է: Այլ ասիկայ՝ մեղքը թեթեւցընող, եւ  
 գրեթէ ոչնչացընող պատճառ մ'է: **Մտադրու-**  
**թեամբ** գործելը՝ խելքը գլուխն ըլլալով եւ  
 ըրածը գիտնալով գործել կը նշանակէ աւելի՛  
 քան թէ օրինադրին կամացը հակառակ ըլլալը  
 չգիտնալով գործել: Խոհական հեղինակը թէ  
 որ մեղաց հանգամանքը փոխող պարագայնե-  
 րուն մէջ ասիկայ յատուկ, գիտմամբ ետ ձը-  
 գեց, որպէս զի մէկը քրիստոնէականները ա-  
 նոր ամբաստանութեանցը դէմ պաշտպանելու  
 ելլէ նէ՛ անոր ըսած խօսքերէն իր ըսելիքնե-  
 րուն ուժ չառնէ, սնտօր մտածութեամբ պա-  
 կաս տեղեկութիւն տուած կըլլայ:



Մկրտութեան պաշտօնէին վրայ :

Խորհրդոյ կարգաւորեալ եւ սովորական պաշտօնեայն՝ քահանայն է . քրիստոնէական վարդապետութիւնն ալ միայն ասիկայ տղայոց սորվեցընելու պարտական է . ուստի՝ քրիստոնէականներու մէջ՝ պէտք եղած ուրիշ բաներու պահասութիւններ ալ տեսնուած են , որոց հեղինակներուն համար ամբաստանութիւն եղած է : Հռովմայ իննովկենտիս Պ. հայրապետին նուիրակը՝ որ ետքը Հռովմայ հայրապետ ալ եղաւ Ուրբանոս Պ. անունով , 1249 ին Յիսուսի տէրութեան մէջ գտնուած նորահաւատներուն համար տուած հրահանգին յերորդ յօդուածին մէջ կըսէ . « Տղայ մը նոր ծնած »  
 « ատենն անմիջապէս , կամ առ առաւել ութն »  
 « օրն ջանցուցած՝ եկեղեցին խրկեն , եւ քահանային մկրտել տան երեք անգամ ջուրը խօթելով » : (Վշիտ . պատմ . Երեսնայ . հատ . Ի . 625 . առ Ռոբրտիբէ . քննարկ . պատմ . Կաթող . եկեղ . հատ . ԺԴ . եր . 635) : Թե որ մեր քրիստոնէականին տուածէն աւելի հրահանգ մը տալը քրիստոնէականներուն քննիչին ցուցընել ուղղմին չափ կարեւորութիւն ունէրնէ՝ պէտք էր որ Հռովմայ եկեղեցւոյ կարգինալ մը՝ որ հայրապետութեան ալ արժանացաւ , Յիսուսի մի նորահաւատներուն տուած հրահանգին մէջ

գրէր : Ուստի երբ մեր վերապատուելի քննիչը այս զանցաւութեանս համար մեր քրիստոնէականները կը դատապարտէ , ինքն հռովմէական ըլլալով Հռովմայ եկեղեցւոյ կարգինալ եւ հայրապետ մ'ալ դատապարտած կ'ըլլայ . եւ ինչպէս հաւատաւոր ոմանց նոյն քննիչին համար ըսելուն թէ Հռովմայ եկեղեցւոյն բերանը եւ անոր դաւանութեանը թարգմանն է , եւ նոյն եկեղեցւոյն եւ Հայոց եկեղեցւոյ մէջ դաւանութեանց հիմնական տարբերութիւնը ճիշդ գտնուէ :

Նոյն զանցաւութիւնը կը գտնուի նա եւ հռովմէական աստուածաբաններուն ՚ի պէտս դպրոցաց յօրինած քրիստոնէական վարդապետութեան գրքերուն մէջ : Սեծանուն Պօսիւէի Սօ քաղաքի դպրատուններուն համար գրած քրիստոնէականին մէջ՝ մկրտութեան վրայ միայն սա գիտելիքները կան : Խորհրդոյն էական բանը , յանուն սուրբ երրորդութեան մկրտելու յայտարարութիւն մ է : Մկրտութեան սահմանը , որ է այս . « Խորհուրդ՝ որով քրիստոնէայ եւ Մտուածոյ որդի կ'ըլլանք » , առանց ըսելու թէ սկզբնական մեղքէ կազատիմք , որ խորհրդոյս գլխաւոր արդիւնքն է , եւ այս մեղքէս ազատելով է որ Մտուածոյ որդի կամ որդեգիր կ'ըլլամք , ինչպէս որ մեր Մաշտոցը կ'ըսէ էական բանին մէջ . « Մը »  
 « կ'ըրտի ծառայս ( կամ աղաթինս ) Քրիստոսի »  
 « յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ »



արևելալ արեամբն Վրբխոսի Ի Զարայա-խենե Ժողոց՝  
 (որ է սկզբնական մեղքը), Ընդունել շորթեթը-  
 , բռնակն Էորն երկնաստորի, : Այս արդիւնքը  
 տղայն տակաւին չկրնար հասկընալ : Նոյն հե-  
 ղինակը շիրշեր մկրտութեան խորհրդոյն ան-  
 կրկնելի ըլլալը, զոր տղայն կրնայ հասկընալ :  
 եւ Ի վիճակի մեղաց՝ կամ մեղաւոր մարդոց ալ  
 արուելու ըլլալը, եւ մկրտութեան զօրու-  
 թեամբ անոնց սկզբնական մեղաց հետ ներգոր-  
 ծական մեղացն ալ ջնջուիլը : Այն քրիստո-  
 նէականին մէջ սկզբնական մեղացն անունն ան-  
 դամ այս առիթով նշանակուած չըլլալն անով  
 աւելի նշանաւոր է, որ այս տեսակ մեղք մը  
 գտնուիլը՝ այն քրիստոնէականով վարժուած  
 տղուն բոլորովին անծանօթ չէ : եւ ինչ ըլլալն  
 ալ գիտէ : որովհետեւ չորրորդ մասին չորրորդ  
 դասատուութեան մէջն ըսած է : «Սկզբնական  
 » մեղքն այն է՝ որ մեր սկիզբէն, այսինքն ծը-  
 » նած օրերնէս կը բերկմբն : Իսկ մկրտութեան  
 վրայ հինգերորդ մասին երկրորդ դասատուու-  
 թեանը մէջ կը խօսի : Սկրտութեան պաշտօ-  
 նէին վրայ ալ լսան չխօսիր :

Արդ՝ ասոր այսպիսի զանցառութիւնները Ի  
 շնորհս անկատար եւ խաչ հատկըցադութեան  
 տղայոց օրինաւոր սեպուելէն ետքը՝ մեր քրիս-  
 տոնէականներուն այնպէս խնդիրմը զանց ընե-  
 իլը՝ որ անոնց նկատմամբ շատ մեծ կարեւորու-  
 թիւն չունի, ճ գիտնալներէն անպատեհ բա-  
 ներ ալ կրնայ պատահիլ, բոլորովին անմեղադը-

ընելի է : Վիտնալներնէն անպատեհ բաներ աբ  
 կրնան պատահիլ ըի : Բանդի նոր ուսանող  
 տղայն՝ որ դատում չկրնար ունենալ, նախ կը  
 սորվի որ մարդոց հոգին անմահ է : եւ մեռ-  
 նելէն ետքը կրնայ դժօխք կամ արքայութիւն  
 երթալ : արքայութիւն կերթան միայն մկրտեալ-  
 ները : եւ մկրտութեան աբ կրնայ ամէն մարդ  
 պաշտօնեայ ըլլալ : միայն թէ հարկաւոր եղած  
 եական բանն անսխալ՝ եւ եկեղեցւոյ դիտաւո-  
 րութեամբը խօսի մկրտած ատենը : Արդ՝  
 այսպիսի բաներ գիտցող, բայց դատում չունեցող  
 եւ անոր շատ մը յարակից՝ եւ միայն աստուա-  
 ծարանութենէ սորվուելու բաները չգիտցող  
 մէկ տղայ մը՝ տղայսկան խորհրդով՝ եւ եղ-  
 րայրսիրութենէ շարժեալ, կրնայ ըլլալ որ քը-  
 րիստոնեայ չեղող ծնողաց զուակ տղայ մը մը-  
 կըրտէ : որպէս զի քրիստոնեայ ըլլալով՝ վերե  
 մահուան արքայութիւն երթալ : Վրիստոնէա-  
 կանաց քննիչ իմաստուն հեղինակը՝ այս կեր-  
 պով արուած մկրտութիւնը վաւերական կը  
 ճանչնայ : եւ մկրտուածը նորէն չմկրտեր : բայց  
 այդպէս մկրտելը պատշաճաւոր ալ կը ճանա-  
 չէ, երբ այն մկրտուած տղայն մկրտութեան  
 խորհրդոյն իր վրայ դրած պարտականութիւն-  
 նէրէն բան մ'ալ չգիտէ, եւ քանի որ իր ծը-  
 նողացը քովն է՝ չկրնար սորվիլ : եւ չգիտեր  
 ալ որ ասոնք գիտնալը իրեն ամենահարկաւոր  
 բան է : Ասով մկրտութիւնը կըլլայ ապարդիւն :  
 եւ մկրտեալ տղայն մեծցած ատենը կրնայ մէկ



կողմէն քրիստոնեայ՝ մկրտուած ըլլալուն համար . եւ մէկ կողմէն ալ ոչ քրիստոնեայ , քրիստոնէից հետ հաղորդ չըլլալուն եւ քրիստոնէութեան կարեւոր բաները չգիտնալուն համար : Աւտի՛ քրիստոնէականներուն մէջ՝ մկրտութեան խորհրդոյն կարգաւորեալ եւ սովորական պաշտօնէէն զատ պաշտօնէի խօսք չըլլալը խոհեմութիւն՝ եւ գովելի զանցառութիւն մ'է , եւ ոչ թէ կաթուղիկէ եկեղեցւոյ դաւանութենէն հիմնապէս տարբեր դաւանութիւն . զանցառութիւնը դատարարութիւն ըսել չէ . երկուքին մէջ շատ մեծ տարբերութիւն կայ : Անոնց որքէրութեանց հեղինակը այն ատենն այսպէս տարբերութիւն մը կը գտնէր . երբ քրիստոնէականներուն մէջ գրուած գտնէր թէ մկրտութեան պաշտօնեայն , ինչ եւ իցէ պարագայի եւ կարեւորութեան մէջ միայն քահանայն է . եւ քահանայէն զատ մէկ ուրիշ մը մէկը մկրտելու ըլլայ նէ՛ այն մկրտութիւնը անվաւեր է . եւ այնպէս մկրտուած տղան վերստին քահանայի մը մկրտել տալու է : Քանի որ այսպէս բան մը քրիստոնէականներու մէջ չէ գտած , խօսածը զբարձրութիւն է . եւ դաւանութեան տարբերութիւն ըսածը մտացածին եւ իրեն հեղինակածն է :

Մէկ ուրիշ կողմէ ալ մտածելով , քրիստոնէականաց մէջ՝ ի կարեւորութեան ո եւ իցէ մարդ մկրտութեան պաշտօնեայ կրնալ ըլլալը չխօսիլ՝ եւ ասիկայ միայն աստուածաբանութեանց

մէջ ձգելը՝ տղան ծնանելէն ետքը ոչինչ պատճառներով անոր մկրտութիւնն ուշացնողներուն համար աւելի աղէկ է՝ որ կանուխ մկրտել տան . եւ այս մկրտութիւն ուշացընելը յաճախ կը տեսնուի . մանաւանդ այս մօտ ժամանակներս : Եկեղեցիները , մանաւանդ քաղաքներու մէջ , քահանայ պակաս չըլլար . եւ ամէն ատեն դիւրին է զանոնք կանչելը եւ հիւանդ կամ վտանգի մէջ գտնուած տղայն մը կը բերել տալը : Եւ արդեօք Ատիս եկեղեցւոյ մէջ՝ որոց քահանայները մէկիններէն շատ են , այս կողմէն ի՞նչ դժուարութիւն կայ . որ մեր քննչը քահանայէն զատ ո՛ր եւ իցէ մարդ ալ մկրտելու կարող ըլլալը՝ մանր տղոց համար սահմանեալ քրիստոնէականներուն մէջն անգամ սորվեցընելուն վրայ կը պնդէ , ըսյց Ատիս քրիստոնէականներն ալ չեն գրեր :

Ասովմէականներն այսպէս վտանգի կամ հիւանդութեան մէջ եղող տղու մը վրայ ո՛ր եւ է մարդու ձեռք կատարուած մկրտութիւնը վաւերական եւ անկրկնելի կը սեպեն . միայն թէ էական բանին կողմէն պակասութիւն մը չըլլայ . մկրտողը՝ յանուն ամենասուրբ Երրորդութեան մկրտելը յայտնի գրուցէ . որ է ըստ մեր Մաշտոցիս՝ « Մկրտի ծառայս (կամ աղանս) իսինս) Քրիստոսի յանուն Հօր եւ Արդւոյ » եւ Հօգւոյն սրբոյ . « եւ ըստ Ատիս եկեղեցւոյ արարողութեան , « Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր եւ Արդւոյ եւ Հօգւոյն սրբոյ » :



Եւ այս բանիս վրայ վերապատուելի Հեղինակը  
 Հայոց եւ Հռովմայեցւոց մէջ դաստիարակութեան  
 արքեպիսկոպոսի կը տեսնէ : Բայց որ կողմէն նը-  
 կատել պէտք է նէ՝ Հեղինակս զբլի՛ սկիզբէն  
 մինչեւ վերջը՝ այն կողմին բնաւ մօտիկցած չէ :  
 Հռովմայեցւոց մէջ՝ որ այս սովորութիւնս ու-  
 նենալին ամէն մարդ գիտէ , կրնայ ըլլալ որ  
 մէկը աշխարհական է մը մկրտուած ըլլալ՝ ա-  
 սողջութիւնը վտանգի մէջ տեսնուելով , եւ  
 ետքը ասողջանայ , մեծնայ , քահանայ ըլլալ ,  
 եւ մինչեւ Հռովմայ հայրապետութեան աս-  
 տիճանին հասնի : Արդ՝ լսած ունի՞ արդևոր  
 վերապատուելի Հեղինակը՝ որ այդպիսի պատ-  
 ճառով մը Հայոց եկեղեցին անոր ձգարտապէս  
 մկրտուած ըլլալուն վրայ տարակուսի եւ սուտ-  
 դելու ելլէ , եւ ետքը ընդ պայմանաւ մկրտե-  
 լու առաջարկութիւն ընէ : Եւ այս որ չկայ՝ ա-  
 ւելի բան խնդրելու ալ հարկ չկայ . եւ ասի-  
 կայ ծանր բանի մը տեղ դնելով՝ դաստիարակաց  
 հիմնական արքեպիսկոպոսի կարգը դնելն անտեղի է :  
 Համառօտ դիտողութիւն մ'ալ աւելցնե-  
 լով գլուխս վերջացնեմք , Վէնէտիկ տպուած  
 հայերէն Մաշտոցին մէջ , զոր հայազգի հը-  
 ոովմէականաց համար տպել տուաւ անոնց ա-  
 ռաջին նախագահ Տ. Անտոն Աուրիճան արքե-  
 պիսկոպոսը , եւ ընդգէմ ամբաստանութիւննե-  
 րէն արդարանալով հրատարակութեանը հրա-  
 ման տրուելը յայտնի Նշան մ'էր որ ընդգէմ  
 Հռովմայ եկեղեցւոյ դաստիարակութեան բան չկայ

մէջը , այս խօսքս կը գտնեմք երբեւ մկրտու-  
 թեան խորհուրդը մատակարարելու հրահանգ .  
 « Եթէ տղայն հիւանդ լինի կամ յօրք չլինի ,  
 « պարտ է քահանային զայնպիսին շուտով մը-  
 « կըրտել » : ( Եր . 37 ) : Երբ մկրտութեան  
 բուն հրահանգին մէջ տղուն վտանգաւոր վի-  
 ճակն ենթադրելով ալ մկրտութեան պաշտօն-  
 եայ քահանայէն զատ մարդ չնշանակելուն՝  
 Մաշտոցի քննիչները բան չեն ըսեր , եւ Հը-  
 ոովմայ դաստիարակներն ինչ եւ իցէ ասրբերու-  
 թիւն չեն ձանձնար , ինչ կը բնտոէ մեր վե-  
 րապատուելի Հեղինակը , եթէ ոչ՝ Հայոց Լու-  
 սաւորչական եկեղեցւոյն դէմ ամբաստանութիւն  
 մ'ալ աւելցնել , իրաւունք ունենալը կ'ամ-  
 չուենեալը հոգ չընելով :

Պ Լ Ո Ւ Խ Թ

Գոյափոխութեան ժամանակին վրայ :

Խնդրոյս վրայ մենք հսովմէական վարդա-  
 պեաներէն դանդատ ընելնուս տեղը՝ անոնց  
 դաստիարակութեան հիմնական արքեպիսկոպոսի կարգը դը-  
 նելով մեր վրայ յարձակելնին զարմանալի է :  
 Մենք առաջ այս շինթոյս վրայ մեզի դէմ ե-  
 դած հին ամբաստանութիւնը , ետքը նորերուն  
 հանած ասարկութիւնները լուծեմք , եւ վեր-



ըը՝ առանձին յանելուածով մեր գանգառները  
բացատրեմք:

Ը. Հին ասորական ասորականները եւ  
ընդհանուր ասորականները:

Հաշակաւոր ճճի: Գլուխ մտորութեանց  
կարգը՝ զորս ունի դորները մեր ազգին վրայ ձը-  
գած ըլլալին առաջուց յիշած եմք, վաճառուն  
եւ վեցերորդ կը դնեն ասիկայ:

« Եւսկն Հայ հասարակօրէն կըսեն յու կը  
« հաւատան՝ որ Տեառն մերոյ մարմինն եւ ա-  
« ղիւնը չկատարիր իրենց պատարագի կանոնին  
« մէջ գրուած սա խօսքովս, որ քահանայն կը-  
« սէ. « Հացն առնելով գոհացաւ, կտրեց, եւ  
« իրեն այն տեղ նստող ընտրեալ եւ սուրբ ա-  
« շակերտներուն տուաւ ըսելով. առէք, ա-  
« մէնքդ ալ ասկէց կերէք, ասիկայ իմ մարմինս  
« է որ ձեզի եւ շատերուն կը բաշխուի մեղաց  
« թողութեան համար: Եւսոր պէս բաժակն ալ  
« առաւ, օրհնեց, գոհացաւ, խմեց. եւ այն  
« տեղ նստող ընտրեալ եւ սուրբ աշակերտներ-  
« յուն տուաւ ըսելով, առէք, ամէնքդ ալ ասկէց  
« խմեցէք, ասիկայ իմ նոր ուխտի արեւս է որ ձեզի  
« եւ շատերուն համար կը թափուի մեղաց թաղու-  
« թեան համար: Իրենք ալ ասով զայն կատարե-  
« լու դիտաւորութիւն չունին, այլ այդ խօսքերը  
« լոկ պատմութեան կերպով կըսեն. Տեառն  
« մերոյ այս խօսքերը սահմանած ատենն ը-

« րածը պատմելով. Եւ այս խօսքերէս ետքը  
« քահանայն անոնց կանոնին մէջ գրուած շատ  
« մը աղօթքներ կը կարգայ. եւ աղօթքներէն  
« ետքը այն տեղը կուգայ՝ որ կանոնին մէջ  
« այսպէս գրուած է. — Ընկիրպագանեմք եւ  
« աղաչեմք եւ խնդրեմք ի քէն բարերար Եւս-  
« տուած. առաքեալ լմեզ եւ յառաջի եղեալ  
« ընծայս յայս զեակեց քո զսուրբ Հոգիդ, ու  
« ըրով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս  
« արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-  
« սի: « Քահանայն այս խօսքս երեք անգամ  
« կը կրկնէ, եւ ետքը օրհնուած բաժակին ու  
« գինիին համար կըսէ. « Երևն ճշմարտապէս  
« արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-  
« սի: Եւ կը հաւատան որ Տեառն մերոյ  
« մարմինն ու աղիւնն այս խօսքով կը կատար-  
« ուի: Եւ Հայերը պատարագելու կերպ կերպ  
« ծէսեր եւ արարողութիւններ ունին. վասն  
« զի ոմանք սեղանին վրայ երկու բաժակ կը  
« դնեն. որոնց մէջ կը դնեն հացն ու գինին.  
« եւ ոմանք մինակ մէկ հատ մը՝ գինիով. եւ  
« անոնց բաժակները կամ ապակիէ են՝ կամ  
« փայտէ: Ոմանք հասարակ լաթերովին կը պա-  
« տարագեն, ուրիշները սուրբ զգեստներ կը  
« հագնին: Ոմանք ժողովրդեան ներկայութեան  
« նը կը պատարագեն. ոմանք ալ ժողովուրդը  
« դուրս հանելով եւ դռները գոցելով: Պա-  
« տարագիչ քահանայն եկեղեցին մինակ կը  
« մտնէ ու կեւլէ. եւ Տեառն մերոյ մարմինն



,, երբէք ժողովողեան շոյուցընեք : Եւ մինչեւ  
 ,, հիմայ շատ տեղեր ասանկ կընեն . մինչեւ  
 ,, քահանային նայեցէ՛ ըսած ատենը դռները գոց  
 ,, կը պատարագեն . (այսինքն՝ մինչեւ պատիւ-  
 ,, ըսելը) , այսինքն երբ խորհուրդը վեր կը  
 ,, ըսնէ որ ժողովուրդը տեսնէ . եւ այն ատենն  
 ,, եկեղեցւոյ դռները կը բացուին : Ինչպէս որ  
 ,, կը տեսնես՝ հին ունիդօրները ոչինչ բաներն  
 ,, ալ իբրեւ ընդգէմ հաւատոյ մոլորութիւն սե-  
 ,, պելով թուղթ մըտեւելը կը սիրեն եղեր . մենք  
 ,, նորերէն շնորհակալ ըլլալու եմք որ այս ամէն  
 ,, բաները անոնցմէ չեն օրինակած . միայն մէկ եւ  
 ,, երեւելի կտորն առած են , բայց անոր չեմք  
 ,, կրնար շնորհակալ ըլլալ՝ որ այս ամբաստանու-  
 ,, թեանս տրուած պատասխանը բոլորովին ան-  
 ,, տես ընելով միայն ամբաստանողներուն խօսքն  
 ,, առած են :

Եյս ամբաստանութեան՝ Սոյ ժողովքին  
 կողմէն հետեւեալ պատասխանը կուտայ Գո-  
 նիէլ վարդապետը : “ Հայոց խորհրդատարին  
 ,, մէջի պատարալի կանոնն այդ ամբաստանու-  
 ,, թիւնը կը հերքէ . որ կըսէ . հացն ու գինին  
 ,, առնելով եւ օրհնելով՝ Հոգւով սրբով ա-  
 ,, նոնք փոխարկեց եւ Տեսն՝ մերոյ Յիսուսի  
 ,, Քրիստոսի ճշմարիտ մարմին եւ արիւն եղան :  
 ,, Եւկէց յայտնի է որ Հայոց եկեղեցին կը  
 ,, հաւատայ որ հացն ու գինին Հոգւոյն սրբոյ  
 ,, ներգործութեամբ կը սրբագործուին , եւ գո-  
 ,, յութիւններն փոխելով կըլլան Յիսուսի Քր-

,, ըիստոսի ճշմարիտ մարմին եւ արիւն՝ որ սըր-  
 ,, բուհի Մարիամ կոյսէն ծնաւ եւ խաչեցաւ  
 ,, եւ թաղեցաւ եւ յարեաւ եւ երկինք համար-  
 ,, ճաւ , եւ Հօր Ըստուծոյ աջ կողմը նստաւ ,  
 ,, եւ անկէց պիտի գայ դատաստան ընելու :  
 ,, Յիսուս Քրիստոս ինքն ալ այս կըսէ . այս  
 ,, է մարմին իմ . այս է արիւն իմ . որ աւտէ  
 ,, զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ յիս բը-  
 ,, նակեցի եւ ես ՚ի նմա . եւ ով որ Յիսուսի  
 ,, Քրիստոսի ըսածէն տարբեր բան մը կը խօ-  
 ,, սի կամ կը խորհի կամ կը քարոզէ՝ նզովեալ  
 ,, ըլլայ : Եւս է հայաստանեայց սուրբ եկե-  
 ,, ղեցւոյ ամէն ժամանակի դաւանութիւնը . եւ  
 ,, այս բացատրութեանս այն ժամանակի Հոգւմայ  
 ,, հայրապետն ալ՝ յետին ժամանակի աստուածա-  
 ,, բաններն ալ հաճութիւն տուին : Բայց նոր  
 ,, ունիդօրներու թարգմանն եղող վերապատուելի  
 ,, հեղինակն ուրիշ կերպ կը դատէ . կը կարծէ որ  
 ,, Հոգւոյն սրբոյ կողման աղօթքին ատենը կա-  
 ,, տարեալ գոյափոխութիւն կըլլայ ըսելուն տա-  
 ,, կը դասանութեան նիւնական պարթեքսութեան կը պա-  
 ,, րունակի , եւ հերետիկոսական է : Ըրած առար-  
 ,, կութիւնները տեսնէք :

Բ. “Այդ անիդօրներուն աստուածութեանը եւ անոր  
 պատասխանը :

Վոյափոխութեան համար Տեսն՝ մերոյ ը-  
 սած ատէք կէրէք այս է մարմին իմ՝ խօսքը յե-  
 ԹՈՒՆԱՆ՝ Գ.



Թե՛նէ խորհրդոյն հարկաւոր ըլլալը՝ այժմ տնտեսագիրներուն եւ ոչ մէկը մէկ ժամանակ մը ուրացած չէ՝ քայց հայաստանեայց եկեղեցիներէն աւելի ամէն արեւելեան եկեղեցիներուն պէս՝ տէրունական խօսքը յարած աղօթքին շարունակութիւնն ընելով չոր Աստուծոյ կաղաչեալ որ զճողիս սուրբ խրկէ՝ որպէս զի դայ՝ եւ այն հացն ու գինին՝ որ քահանային տուածը դրուած են, եւ վրանին քիչ մը առաջ յեւրոթեանէ խորհրդոյն եղած խօսքերը խօսեցաւ՝ Տեառն մերոյ ճշմարիտ մարմին եւ արիւն ընէ՛ Սուրբն Բարսեղ Կեսարացի՛ աւանդութիւնը բանի տեղ չգնողներուն դէմ ցուցընել ուզելով թէ եկեղեցւոյ մէջ սկիզբէն ՚ի վեր անպիտան աւանդութեամբ ընդունուած բաներ կան, կը վկայէ թէ անոնց մէկնալ կոչման աղօթքն է (ՅԼ. Չոֆ. ուր. ԳԼ. 27)։ Երեւելեան ամէն ազգերուն ալ ասիկայ ունենալը՝ զոր արեւմտեանք ալ ունին՝ միայն տեղը փոխելով, ինչպէս որ խօսքերու կարգովը պիտի իմացուի, նշան է որ ասիկայ առաքելոց ժամանակէն եղած ըլլալու է։

Եւս կոչման աղօթքին՝ էական բանին հետ ինչ յարաբերութիւն ունենալը քննելու համար վերապատուելի հեղինակը մեր քրիստոնէականները ձեռք կառնու. ըստ իւր սովորութեան հայաստանեայց եկեղեցւոյ հաւատքը եւ դաւանութիւնը անոնցմէ սորվիլ կուզէ. մենք ալ անոր ըսածները օրինակեմք։

Եւ մենէն հինը՝ որ է հանդուցեալ Յակոբ

Եւս կալեան պատրիարքին քրիստոնէական անուանով երկու անգամ՝ 1737 ին եւ 1741 ին տըպել տուածն ՚ի Կոստանդնուպօլիս . հաղորդութեան էական բանին վրայօք կըսէ. այս բանս է Տեառն մերոյ այս է մարմին իմ եւ այս է արիւն իմ խօսքերը . եւ ետքը կաւելցընէ եւ կըսէ . « Եւ թէ որ մէկ քահանայ մի հարցանէ ՚, թէ՛ որովհետեւ առէք կերէք այս է մարմին իմ » , առելով մարմին եւ արիւն կուլինի , ապա է՞ր » , է որ կասեմք ՚ի վերջն թէ սրով զհացս զայս » , եւ զգինիս արացես ճշմարտապէս մարմին եւ » , արիւն Տեառն մերոյ յիսուսի Քրիստոսի , ու » , բնմն դեռ եւս չէ եղել . պէտք է դիտել , որ » , կամի ասել թէ չայր Աստուած՝ զճողիդ » , սուրբ առաքեա ՚ի մեզ եւ ՚ի հացս յայս եւ » , գինիս , որ բանիւն քո Որդւոյն միածնի՛ զայս » , հացս եւ գինիս՝ մարմին եւ արիւն Տեառն » , մերոյ Յիսուսի Քրիստոսի կատարէ : Ուրեմն՝ » , այն որ կասէ թէ որով , կամի ասել թէ բա » , նիւն Քրիստոսի քո որդւոյն միածնի , որ ա » , սաց թէ այս է մարմին իմ՝ եւ այս է արիւն » , իմ , այն բանիւն դու զոյս հացս եւ գինիս » , մարմին եւ արիւն քո Որդւոյն միածնի կա » , տարեսցես փոխարկելով ճողովդ սրբով » :

Եւ որ համաձայն գտած է միշտ Էրբապետաբանը , որուն մէջ հետեւեալ հարց պատասխանըս կայ .

« Չ . Եւս փոխարկութիւնս ե՞րբ կըլլայ :

» Գ . Սուրբ պատարագին սրբագործութիւն



1) ըսած մասին մէջ, որ Սուրբ սուրբէն սկսեալ  
 2) մինչեւ Հոգի Աստուծոյ աղօթքը կը տեւէ .  
 3) ուստի եւ էական բան խորհրդոյս կը համա-  
 4) րին, ոմանք՝ հայելով Քրիստոսի քրիստոսեաց բաւ  
 5) ուին, այս խօսքը . որով զհացս օրհնեալ .  
 6) եւայլն . եւ ոմանք ալ՝ առէք կերայք այս է  
 7) մարմին իմ . եւ արբէք ՚ի սմանէ այս է արիւն  
 8) իմ խօսքերը :

9) 10) Սուրբ եկեղեցին, եւ կամ որ նոյնն  
 11) է, ընդհանուր ուրբ ժողովները այս երկու  
 12) կարծեաց զօրն վճուեր եւ ընդունելու է :

13) 14) Սուրբ եկեղեցւոյ կողմանէ վճիռ մը  
 15) չկայ այս բանիս վրայ, միայն աստուածաբանք  
 16) քաջ կը վիճեն, եւ զօրաւոր կը մնան անոնք,  
 17) որք առէք կերայք այս է մարմին իմ, եւ ար-  
 18) բէք ՚ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ,  
 19) խօսքը կը համարին էական մասն խորհրդ-  
 20) ոյսս 11 2

Ասոր ու յակոր Յայեան պատրիարքին ը-  
 սածին մէջ տարբերութիւն միայն այսբան կը  
 տեսնուի՝ որ ասիկայ այս նիւթոյս վրայ աստ-  
 ուածաբաններուն երկու կարծիքի բաժնաւիլը  
 կը պատմէ . իսկ իր բուն մտքը՝ Տեաան սե-  
 քոյ խօսքերուն վրայ ըլլալը յայտնի է . յաղ-  
 թութիւնը՝ էական բանն ասորք են ըսողնե-  
 րուն ընծայելով . վասն զի յաղթող կողմը ձը-  
 քելով յաղթեալ եւ տկար կողման հետեւե-  
 լիքն անհաւանելի է :

Ըստ մեզ աւ կայ՝ որ որ լատին աստուածա-

բաններոն միացուցածը ասիկայ բաժանաբար  
 կանուս : Չկայ լատիններուն մէջ որ ըսէ թէ  
 Քրիստոսի խօսքերն էական բան չեն, միայն  
 կոչման աղօթքն է հարկաւոր՝ հարկաւորութեամբ  
 խորհրդոյ, երկու ըլլալն ասոր վրայ է, որ մէկ  
 կողմը կըսէ թէ՝ տէրունական բանին հետը  
 կոչման աղօթքն ալ հարկաւոր է իբրեւ մասն  
 էական բանին . որիչններն ասոր հակառակը՝  
 միայն տէրունական խօսքը բաւական կըսեն .  
 մեր քրիստոնէականաց քննիչն ալ այս երկ-  
 րորդ կարգէս է :

Արոնական ժողովոյ վաւերացումամբ 1858  
 ին Աոստանդնուպոլիս տպուած քրիստոնէակա-  
 նին ալ խօսքն է այս :

1) 2) 10<sup>o</sup> չգէս կը կատարի Յիսուսի Քրի-  
 3) տոսի մարմնոյ եւ արեան խորհուրդը :

4) 5) Քահանայն հացին վրայ այս է մարմին  
 6) իմ, եւ գինիին վրայ այս է արիւն իմ րսելով  
 7) նոյն հացը եւ գինին ճշմարիտ մարմին եւ  
 8) արիւն ընելը յիշեցնելէն ետքը Հոգին  
 9) սուրբ կը կոչէ . որով իր ձեռքի հացն եւ գի-  
 10) նին ալ Քրիստոսի ճշմարիտ մարմին եւ  
 11) արիւն կըլլան 11 :

Ասոր վրայ հետեւեալ խորհրդածութիւնը  
 կընէ : « Ասիկայ վերոյիշեալ վարդապետանէն  
 2) բաւական տարբեր է . փոխադրութեան ձեւը  
 3) կամ Քրիստոսի խօսքերուն եւ կամ կոչման  
 4) խօսքերուն վրայ կը գնէ վարդապետանը . թէ  
 5) Քրիստոսի խօսքերուն եւ թէ կոչման խօս-



,, քերուէն վրայ կը դնէ Վարդապետարանը . թէ  
 ,, Քրիստոսի խօսքերուն եւ թէ կոչման խօս-  
 ,, քերուն վրայ միանգամայն կը դնէ առաջիկայ  
 ,, Կրօնականները . հարկաւ գոյափոխիչ զօրու-  
 ,, թիւնն ասոր եւ անոր մէջ բաժնեկալ : , ,

Այս խօսքերուս մէջ իմաստուն քննիչը ոչ  
 վարդապետարանին ճիշդ գաղափարը ցուցուցած է  
 եւ ոչ միւս Կրօնականները : Արդարապէս արանին  
 համար տեսանք որ ինքը չէ կամ այնպէս կամ  
 այսպէս ըսելով երկու մտքի վրայ տառապնողը .  
 այլ միայն կը պատմէ թէ երկու մտքի բաժ-  
 նուած են աստուածաբանները . եւ փոքն անոնց  
 մէկ կողմը յաղթող ցուցնելով յայտնի կի-  
 մացընէ որ ինքն ալ այն կողմն է :

Միւս քրիստոնէականին խօսքն ալ Յակոբ  
 պատրիարքին եւ լատին աստուածաբաններուն  
 խօսքին համեմատ է . որ տէրունական խօսքին  
 եւ կոչման աղօթքին մէկէն կուտան այս զօ-  
 րութիւնը . եւ Յակոբ պատրիարքին խօսքին  
 հաւանած է քննիչը , վասն զի լատին աստուա-  
 ծաբաններուն համաձայն է : Քրօնականները  
 պատրիարքին ըսածէն ասով կը տարբերի , որ  
 կոչման աղօթքին որով բառը չէ թէ տէրունա-  
 կան խօսքին՝ այլ Հոգւոյն սրբոյ յարաբերող  
 կը սեպէ . որովհետեւ տէրունական խօսքը շատ  
 հեռուն մնացած է . նախընթաց հատուածին  
 մէջ ասոր խօսքը չկայ : Սօսաւորն է՝ առաք-  
 եա 'ի մեզ եւ յառաջի եզեալ ընծայս յայս  
 քմշանջնաւորակից քո եւ զէակից սուրբ Հո-

զիդ : Իսկ զբոնիան բաժնել ըսածին ամենեւին  
 նշմարանք մը չկայ , եւ այս ամբաստանութիւ-  
 նըս այն կը նմանի որ ոմանք լատիններուն Հո-  
 գին սուրբ 'ի Հօրէ եւ յարգոյ բղիթի ըսելէն  
 կը մակարերեն թէ անոնք կամ երկու Հոգի  
 սուրբ կը դաւանին , մէկն 'ի Հօրէ եւ միւսը  
 յարգոյ բղիթեալ , եւ կամ մի եւ Երջն Հոգ-  
 ւոյն սրբոյ կէսն 'ի Հօրէ եւ կէսն յարգոյ  
 կըսեն : Հարունակեմք հեղինակին քննաբա-  
 նութիւնը :

« Ընծանօթ չէ մեզի՝ կըսէ , թէ ուստի՞  
 ,, յառաջ կուգայ այս երկու քրիստոնէական-  
 ,, ներուն ճիգը : Երջն վերջիշեալ (Փլորենտ-  
 ,, եան) ժողովքին մէջ միայն ասոր համար կը  
 ,, խրտչէին աս նիւթոյս վրայ խօսք բանալու .  
 ,, վասն զի կը կարծէին որ պիտոր ստիպուին ի-  
 ,, ռենց պատարագամատուցին խօսքերը փոխե-  
 ,, յու . բայց ոչ այս ժողովը կամ Եզգինէոս  
 ,, Պան ատենը , եւ ոչ Պիոս Թմեր ատենը՝  
 ,, Եունացմէ անանկ պահանջում ըրաւ , , . ըսել  
 է որ՝ արաքես բառը՝ որ յունականին մէջ ալ  
 մերինին պէս է , արբեր ընելու ստիպում մը  
 եղած չէ անոնցմէ . որով մեր պատարագամա-  
 տուցին մէջ Աւնիգորներուն՝ եւ անոնց Ժա-  
 ոանք Հոովմէական Հայոց մտցուցած եւ մին-  
 չեւ հիմայ պահած փոփոխութիւնը բայց կը  
 մնայ . իրենց վրայ իշխող աթոռոյն այնպէս հը-  
 բաման մը կամ պահանջում մ'ըրած չըլլալը  
 չգիտնալով , կամ մարդահաճութեամբ անոր



քիչ մ'ալ աւելի նմանելու փափաքով հին եւ  
բոլոր արեւելք միակերպ գործածուած խօսքը  
փոխելով :

Քննիչն իր խօսքը շարունակելով կըսէ .  
" Ինչպէս յոյն պատարագամատոյցները , նոյն-  
" պէս հայերէն պատարագամատոյցն ալ՝ որն որ  
" մեծաւ մասամբ անոնցմէ առնուած է , իր ա-  
" մէն պարագայներովը բացոյցոյտ կը ցուցընէ  
" որ Քրիստոսի խօսքերովն արդէն լիակատար  
" գոյափոխութիւնն եղած լինցած է . իսկ կո-  
" չումն ուրիշ բան չկրնար աւելցընել , բայց  
" եթէ արարողական ամբողջութիւն մը , :  
( Հիմ . արքեպ . եր . 313 . 314 ) :

Տէրունական բանիւ գոյափոխութիւնը լը-  
մընցած ըլլալուն նշան կուտայ առէ՛ Կրե՛տէն  
եւ արքե՛տ ք . սմանէն ետքը ա՛նէն ըսուիլը . ու-  
րուն համար լատին աստուածարան մը՝ Ռընօ-  
տօ , կըսէ թէ ուրիշ մտօք ալ կրնայ հասկո-  
ւիլ : այսինքն՝ ըսել թէ՛ չը հաւատամ որ Տէրն  
մեր ձեռքը հաց առաւ , եւ օրհնելէն ետքը ]  
իրեն մարմին ըրաւ . նմանապէս զինին իրեն  
արիւն ըրաւ : ( Հաստատմն արեւելեան պատարագա-  
մատոյցոյ . հոտօր . ա . եր . 213 , ըստ նոր քրդաք .  
Պրաննօքրէ ) : Ասկէց՝ գոյափոխութիւնն եղած  
լինցած ըլլալը հաւատալուն հաստատ Քվկա-  
յութիւն մը չեղեր : Բայց մենք ատոր չնայել ]  
ով ըսեմք թէ յոյն եւ հայ պատարագամա-  
տոյցները քննիչին ըսածին պէս կը ցուցընեն :  
Պրեմն բանը լըմնցած է . Հայոց եւ կաթո-

ղիկէ եկեղեցւոյ մէջ այս կողմէն ալ քատան-  
բէան արքեպեթրօնն չկայ : Հասպ քրիստանէական-  
ներէն ի՞նչ կուզէ . մանաւանդ վերջինէն . եւ  
որկէց հաներ է՝ գոյափոխիչ գորութեան բա-  
ժանում տալը , որ անոր գրչին մտացը խեղա-  
թիւր մեկնութիւն տալ է , երբ այս քատանոս  
բառս անոր գրածին մէջ չկայ , թեւ ըլլար ալ  
նէ՛ կրնար շիտակ մտքով մեկնել . վասն զի  
այս բառս այս նիւթոյս վրայ յայտնապէս գոր-  
ծածեր է Պրօսիւէ մեծանուն աստուածարանը ,  
ինչպէս որ քիչ մը ետքը անոր խօսքերուն մէջ  
պիտի տեսնենք : Եւ ի՞նչ լրբաունք ունինոյն  
քրիստոնէականին այնպէս հեղինակութիւն մը  
տալու , որ բոլոր ազգէն ընդունուած եւ մին-  
չեւ հիմայ գործածուած խորհրդատետրէն , եւ  
Յակոբ Այալեան պատրիարքին , եւ Պիոսի Կարա-  
պետարանի հեղինակինէն վեր , եւ Հայոց եկե-  
ղեցւոյ մտացը եւ դաւանութեանը մէկ հատիկ  
թարգման սեպուի : Ետք ուրիշ պատճառ մը  
չեմք գածներ , բայց եթէ այն որ ասոր մէջ  
այնպիսի բան մը նշմարեր է , գորկարծեր է թէ  
իրեն պիտի յաջողի Հոռովմայ եկեղեցւոյ դա-  
ւանութեանէն հիմնապէս աւարեր ցուցընելու .  
անոր համար այն քրիստոնէականը՝ կրչին չկրնալ  
ընդունելու չափ մեծ հեղինակութեան տէր  
ցուցընել կուզէ , կը հաճի՞ արգեօք՝ որ մէկը  
Հոռովմայ եկեղեցւոյ՝ մարդկութեան եւ  
ոուրբ Երբողութեան խորհրդոյն վրայ օւնե-  
ցած դաւանութիւնը հասկընալու համար իրեն



այն հիմնական սարքերու-նիւնց զիրքը ձեռքն առնէ, եւ 3 եւ 4 երեսներուն մէջ գրուած սախօսքը . « Ինչ որ երրորդութեան մէջ երեք , մարդեղութեան մէջ մէկ է . եւ ինչ որ մարդեղութեան մէջ երեք՝ երրորդութեան մէջ , մէկ է , » , զոր գործոյս առաջին մասին Օգլխոյն մէջ յիշեցինք , իրեն մօքին հակառակ բայց խօսած խօսքերուն իստ համաձայն մեկնութիւն մը տալով ըսէ թէ , Հոովմայ եկեղեցին Սարէլի եւ Պողոս Սամոսացոյ եւ Եւսիբականներուն ստորաշարքը ըսուած աղանդոյն մէջ ինկած է , եւ ասիկայ հաստատուելու համար նոյն եկեղեցոյ պաշտամանց գրքերը եւ հայրապետներուն եւ ժողովքներուն վճիռները մեկդի ձգէ :

Ըստի իբրի էն եւ որքէ է ամեն էն ետքն ըսուած առիւն վրայ քննիչը սա դիւտղութիւնը կընէ , « Չեոքերնիս եղած Լըմիածնական եւ Ս Լ Օ Հայ թուականին տպուած խորհրդա տետրին մէջ սա առիւն չենք գտներ , » (Թէ որ Հայոց եկեղեցին մանկէլը մահացու մեղք սեպոզ նախապաշարեալներուն հաճոյ ըլլալու համար զգուշանալուն տեղը քիչ մը այն տեղ մտնելու յաճախէր , ինչպէս որ սուրբ Երուսաղէմ գտնուած ժամանակը՝ որ հիմնական սարքերու-նիւնցը հրատարակելէն ետքը գնաց , Հայոց պատարագին ալ ներկայ գտնուած է , եւ բուն Լատին քահանայք ալ չեն խղճեր ներկայ դրտնուելու , եւ Ընդրիանուպոլսեցի հանդուցեաց

Սարգիս եպեսկոպոսին՝ նստիկն պատրիարքին Սուչաւ քաղաքը պատարագած ժամանակը երկու կողերիկոս ալ եկեղեցական զգեստովք քովը գտնուելը մեղք չսեպեցին , զոր մեր հայազգի Հոովմեական վարդապետները ծանր մեղք սեպել տուած են իրենց ժողովրդեան , թէ որ կըսեմ , վերապատուելի հեղինակն ասիկայ մեղք սեպողներուն նախապաշարմունքը բանի տեղ չդնելով՝ պատարագի ժամանակ Հայոց եկեղեցին քիչ մը յաճախ մտնէր նէ՝ այդ առիւն բառը դպիրներէն բարձրաձայն եւ եղանակաւոր իսկ հասարակ ժողովրդէն ցած ձայնով դրուցուիլն իր ականջովը կը լըսեր . եւ կը հասկընար որ այդպիսի տպագրութիւններուն եւ հրատարակութիւններուն ինչ յարգ կը մատուցանէ ազգը :

Վերոյգրեալ խօսքին մէջ բառ մ'ալ կայ , որ թէպէտ մեր առարկայէն դուրս է , բայց որովհետեւ քննիչը հաճեր է այս բառս գործածելով իրեն տիրոզ ոգին յայտնելու , մենք ալ նոյնը ցուցընելը եւ պարզելը պատշաճ կը սեպենք : Հայքս Լըմիածնական եկեղեցիէն զատ Լըմիածնական թուական ալ ունինք եղեր : Իմաստուն հեղինակը գիտցած պիտի ըլլայ՝ որ նոյն թուականը Մովսէս Ի Հայոց կաթողիկոսին ժամանակը դրուեցաւ Ղունայ Գ ժողովքին մէջ . ուստի թէ որ թուականին հաստատութիւն գտած տեղոյն անունովը պիտի հասկըցընէր նէ՝ Ղունայ Թուական ըսելու էր . թէ որ



նոյնը հաստատող ժողովքին նախագահին ա-  
նունովն իմացընել կուզէր նէ՝ Սոփիսեան Բուս-  
կան ըսելու էր : Բայց այս անուններէն , եւ  
ոչ ալ թուականը գրուելուն պատճառէն՝ որ էր  
Հայոց տոմարին Եորոգութիւնը , Հայերը  
պարտաւելու բան մը չէր ելլեր . եւ ինքն ալ  
զոնէ այս կողմէն՝ Հայերը զրպարտող յոյնե-  
րուն ձայնակից չէր կրնար ըլլալ . որոց մէջ  
ըսող կայ որ Հայք յոյներէն բաժնուելին  
մշտնջենաւորելու համար փրկչական թուակա-  
նի գործածութիւնը մէջներին խափանելով նոր  
թուական հնարեցին : Եւ որովհետեւ մեր վե-  
րապատուելի հեղինակն զՀայս բամբասելու  
համար Քենիգորներէն զատ երբեմն յունաց  
օգնութեանն ալ կարօտութիւն ունի , Հայոց  
թուականը Լըօթիսեան անուանելով՝ թուա-  
կանի գործածութեան եւ ժամանակաց զիտու-  
թեան մէջ ալ հերետիկոս ցուցընել կուզէ .  
որ ասկէց առաջ յիշուած Համախախտութեան մտա-  
ցածին հերետիկոսութեան մէկ որրիշ տեսակը  
կըլլայ : Իր գիրքն ընթերցողներն ալ դիւրաւ  
այսպէս հերետիկոսութիւն մը ըլլալուն կը հա-  
ւատան . որովհետեւ չգիտեն որ յոյնք այն  
ժողովոյն ատենը՝ այսինքն՝ 551 թուին , փրկչի  
թուական գործածելու սովորութիւն չունէին  
տակաւին . գործածածն կամ Ոլիմպիադն էր  
որ չորս տարուան շրջան մ'էր , կամ Ինդիկտի-  
ոն ըսուածն էր , որ տասն եւ հինգ տարուան  
շրջան մ'էր , եւ ամէն մէկ շրջանը ըմնալուն

տարիները դարձեալ մէկէն կը սկըսէին առանց  
նշանակելու թէ քանիերորդ Ինդիկտիոնն է .  
Փրկչի թուական գործածելը Յոյնք ալ նոյն  
վեցերորդ դարուն մէջ սկսան . եւ երբ մտա-  
ժեռք որ Փրկչին ծննդեան տարին՝ որ փրկչա-  
կան թուականին առաջին տարին պիտի ըլլայ՝  
ճիշդ որոշուած չէ , եւ հիմակուան ժամանակա-  
գիրքը այժմեան գործածական թուականին ու  
Փրկչին ծննդեան տարւոյն մէջ չորս տարուան  
տարբերութիւն գտած են . Պունայ ժողովոյն  
խահական գատումը՝ չեմք կրնար չգովել , որ  
անստոյգ ժամանակ մը ազգային թուականնե-  
րու սկիզբ չդրաւ : Բայց վերապատուելի քըն-  
նիչին ըրածը գովելի բան մը չէ , որ այս թը-  
ւականիս վրայ Լըօթիսեան անուանը գնելով՝  
սուրբ Լուսաւորչական եկեղեցւոյ դէմ ունե-  
ցած հակառակութիւնը անգամ մ'աւելի ցու-  
ցընել ուզեր է :

Հիմայ տեսնելը թէ 1858 ին կոտանդ-  
նուպօլսի քրիստոնէականին պէս ըսող կայ մի  
լատին աստուածաբաններուն մէջ՝ գոյստիտու-  
թեան ժամանակին վրայ : Լըպրեան՝ զոր գոր-  
ծոյս մէջ յիշած եմք , եւ Հայոց ալ շատ բա-  
րեկամ չէ , ումը կամ ինն մոլորութիւն վրա-  
նին գտնուած կարծելուն համար , պարտաքի  
աղջից եւ արարողութեանց Բացարարութեան գրքին  
մէջ կըսէ . « Լուսաւորչակ բան մը կըլլար պըն-  
դելու համարձակիլը՝ թէ սրբագործութիւնը  
առանց Քրիստոսի այս է Իրքն է՝ Լուսին  
ԵՐԱՆ . Գ .



,, կրնայ ըլլալ վասն զի չկրնար մարդ սահոս-  
 ,, տովանելէն հրաժարելու , որ այս խօսքերը  
 ,, (կոչման աղօթքը) խորհրդոյն գործողութեա-  
 ,, նը զուգընթաց են . եւ միանգամայն նշանա-  
 ,, կան ալ են . ուստի Հիսուսի Վրիստոսի այս  
 ,, աստուածային խորհուրդս սահմանած ատենն  
 ,, եղածները մեր սեղաններուն վրայ ալ կա-  
 ,, տարուելուն մեզ ապահովընելու համար  
 ,, հարկաւոր են . Վասն զի առաքեալներուն  
 ,, եւ անոնց յաջորդելու քահանայներուն մի-  
 ,, անգամայն զայս արարէ՛ք ըսելով՝ այն ատենն  
 ,, ուսն ըրածն ամէն ատեն անոնց ձեռքը պի-  
 ,, տի ընէ . եւ իր մարմինը սեղանոյ վրայ մշտ  
 ,, ներկայ գտնուելուն վկայութիւն մը պիտի  
 ,, ըլլայ իր խօսքը . Վսիկայ նկատած ենք Վրի-  
 ,, տանդեան ժողովոյն խօսքերուն մէջ . եւ Վի-  
 ,, տնեօիոս Պարսալիպի (Մարի Եպիսկոպոսը)  
 ,, իր պարագի մէնթեան մէջ այսպէս բացատ-  
 ,, րած է . — Ենկէց ետքը՝ կրսէ , Տեառն մե-  
 ,, յոյ վերնատանը մէջ խորհուրդը կատարած ա-  
 ,, տենն ըսած խօսքը կրսէ (քահանայն) , որ-  
 ,, պէս զի ասով ցուցընէ որ հիմայ ալ՝ որ սե-  
 ,, զանոյ վրայ գրուած տեսակները Հօր հա-  
 ,, ճութեամբ եւ Հօգուոյն Արքայ ներգործու-  
 ,, թեամբ քահանային ձեռքովը՝ որ կը խաչա-  
 ,, կընքէ եւ խօսքերը կարատասանէ , նոյն ինքն  
 ,, Յիսուս է որ կը սրբագործէ , չէ թէ պաշ-  
 ,, տօնը կատարողը՝ այլ խորհրդոյն վրայ կոչուա-  
 ,, ծըն է որ սրբագործութիւնը կընէ . — (Մ.

,, Եստմանէս . Կ. Վ. Եր . 188) . Եւն խօսե-  
 ,, քերը՝ զորս զիանմբ թէ Յիսուս Վրիստոս  
 ,, ըսաւ , քահանայն կը զրուցէ . եւ ուրիշներ  
 ,, ալ կը զրուցէ՝ որոնք Տեառն մերոյ գոհա-  
 ,, ցած եւ հացն օրհնած ատենն ըսածին տեղը  
 ,, կը բռնեն . քահանային սոյն խօսքերն ալ  
 ,, կոչման աղօթքին խօսքերն են , — Վիտնեօիոս  
 ,, Պարսալիպի՝ որ Յիսուսի Վրիստոսի խօսքե-  
 ,, րուն զօրութիւնը վերոյգրեալ խօսքերովն ի-  
 ,, մացուց , կը հարցընէ թէ ինչո՞ւ համար այս  
 ,, մեծ խորհուրդս կատարելու Հօգին սուրբ ալ  
 ,, պէտք է , որ Յիսուսի Վրիստոսի հետն ըլ-  
 ,, լայ . եւ այսպէս կը պատասխանէ . այս տեղս  
 ,, Հօգուոյն սրբոյ կոչման համար խնդրելու է  
 ,, թէ ինչո՞ւ Հօգին սուրբ հացին ու գինիին  
 ,, վրայ իջնայ . վասն զի ահաւասիկ Որդին Աս-  
 ,, տուծոյ կինջնայ , եւ անոնց հետ անձնաւո-  
 ,, ռապէս կը միանայ , Ուրեմն ինչո՞ւ հօգին ալ  
 ,, ինջնայ . Ար պատասխանեմք . անոր Համար՝  
 ,, ինչո՞ւ համար որ . Մարիամու արգանդն ալ  
 ,, իջաւ ըստ բանի հրեշտակին . Հօգին սուրբ  
 ,, եկեցցէ՛ ի քեզ . եւ այլն . եւ կուսէն մարմին  
 ,, առնելով Վրիստոսի մարմին ըրաւ . — (Մ. Կ.  
 ,, 196) . Եւ քիչ մը ետքը կրսէ . — քահա-  
 ,, նայն գլուխը ձեռնով սուրբ Հօգին կոչելէն  
 ,, ետքը կը շտկուի ըսելով . որպէս զի իջեալ է  
 ,, վերայ , եւ այլն . եւ սոյն ատեն ըշխարհն երեք  
 ,, անգամ կը խաչակնքէ , եւ երեք անգամ սկիհը-  
 ,, րպէս զի նշանակէ որ նոյն ինքն բանն Աս-



1) տուած Հօր հաճութեամբ կինջնայ եւ խոր  
 2) հրդոյն վրայ կուգայ . եւ անկիայ Հօգուով  
 3) Սրբով կը կատարէ . հացը՝ որպէս զի իրեն  
 4) մարմին ըլլայ . եւ սկիհին մէջի խառնեալը  
 5) ( ջրախառն գինին ) որպէս զի արիւն ըլ-  
 6) լայ —

1) Ինչպէս որ եկեղեցի մ'ալ չկայ որ հա-  
 2) ղորդութեան սահմանադրութեան խօսքերը  
 3) վերցուցած ըլլայ, նոյնպէս քրիստոնէից ե-  
 4) կեղեցի մ'ալ չկայ որ կոչման աղօթքը վեր-  
 5) ցուցած ըլլայ, Ժ.Օ. դարու ազանդաւորնե-  
 6) ռէն գատ, որոնք պատարագի նուէրը իա-  
 7) փանել ուզելով պատարագամատոյցը իրենց  
 8) ուղածին պէս յօրինեցին, լութեր՝ շէ Գը  
 9) եղեցի մարին եւ արիւն աղօթքը վերցուց իր նոր  
 10) պատճէնին մէջ, 1523 թուին, Լ'նգղիացի-  
 11) ներք Հոովմէն դատուելէն ետքը՝ դեռ 1545  
 12) ին՝ իրենց առաջին խորհրդատետրը կրճատե-  
 13) լու համարձակած չէին . բայց լութե-  
 14) րականներէն եւ կալվիինէն քաջալերուե-  
 15) լով 1553 ին երկրորդ տպագրութեան մէջ  
 16) վերցուցին .

1) Ստոյգ է որ մինչեւ ցայսօր ամբողջ մը-  
 2) նացած եւ ամէն եկեղեցիներու մէջ Ի գոր-  
 3) ծածութեան եղած լութը չի պատարագա-  
 4) մատոյցները կոչման աղօթքն ունին, 1) ( Տ'առ-  
 2) Ժ. Ե. )

Լսորիք ալ կոչման աղօթքն ունին, որուն  
 վրայ Վիտնեսիոս Պարտալիպի Լսիդ քաղաքին

եւ իսկոպոսը երկար բացատրութիւն տուած է .  
 զոր Սընթա՝ արեւելեան պարագամատոյցաց հա-  
 ւասած գրքին երկրորդ հատորին մէջ զնեւէն  
 ետքը՝ ( եր . 91 . ըստ ող . Գրանիֆորդի , ) կըսէ  
 թէ տերուական խօսքին զօրութիւնն Մարի-  
 ներուն գաւանիլն ուրիշ տեղ տեսնը . ( ինչ-  
 պէս որ մեր եկեղեցւոյ վարդապետը ալ նոյնը  
 կը գաւանիլն , եւ չկարծուի որ Պարտալիպիին  
 հոս ըսածին մէջ հակասութիւն կայ , ինչպէս  
 որ նախապաշարեալ անձինք Քեսարիոնի եւ  
 Լրկուգիոսի կշիւքովը կշռելով կը կարծեն .  
 Հօգուոյն սրբոյ կոչման աղօթքին զօրութիւն  
 տալը ոչ Մարուոց գիւտն է եւ ոչ Յունաց ,  
 այլ հին աւանդութիւնով մը իրենց նախնիքնե-  
 րէն առած են : Եւս ըսելէն ետքը արեւմտե-  
 ան եկեղեցիներէն Վոթական եւ կալիքան  
 եւ Սոգարապեան պատարագամատոյցներուն  
 պարունակած կոչման աղօթքէն հատուածներ  
 մէջ կը բերէ . եւ դժուարին է հասկընալը կը-  
 սէ , թէ ինչո՞ւ նոյն խօսքերն արեւելցիներուն  
 յանցանք կը սեպուին : Եւ կը յաւելու թէ՛  
 Հոովմայ ամուրոյն հեղինակութեամբը թու-  
 մասինս կարդինալին այս պատարագամատոյցնե-  
 րը ապելը՝ արեւելեանները այս բանին համար  
 դատապարտողներուն բաւական հերքումն է .

Լսկէց կերեւի թէ ամէն քրիստոնե-  
 անց աղբ իրրեւ պատարագի խորհրդ-  
 ոյն էական բանին ամբողջացուցիչ մէկ  
 մասը սեպած են ասիկայ . չէ թէ անոր



Համար որ Տեառն մերոյ խօսքերը բաւական չէր  
 առաջարկեալ ընծայները սրբադործելու , այլ  
 անոր համար՝ որ Տեառն մերոյ խօսքին Հետ  
 միացած՝ եւ անոր գոհացած ու հացն ու  
 բաժակն օրհնած առնեն ըսածին տեղը բունեն ,  
 զոր սուրբ աւետարանիչները մեզի չեն աւան-  
 դած . եւ ընդհանուր կկեղեցին անոր տեղն ա-  
 սով լեցուցած է :

Իրտեմ որ Լըպրէօնի եւ Ռընօտոյի ըսածը  
 ամէն լատին աստուածաբաններու հաճոյ չե-  
 դան . եւ Յիսուսեան կարգէն Պուժան անուն  
 կրօնաւոր մը դէմ գրեց . բայց Պուժանին դի-  
 մախօսութիւնն անցած է : գրածները գրեթէ  
 մոռցուած են . իսկ Լըպրէօնի եւ Ռընօտոյի  
 գրքերը՝ Տեղինակնին վախճանելէն հա-  
 բեր տարիէն աւելի ետքը նորէն ապուած են .  
 եւ Հոսմ ասոնք չէ արգելած : եւ արգելեալ  
 գրքերուն կարգը մտած չեն :

Բայց որպէս զի այս կողմէս մեր ընթեր-  
 ցողներուն կասկածանաց տեղի բնաւ չթողուեր ,  
 եւ կոչման աղօթքին ալ միտքը չէ թէ մեր խօս-  
 քով՝ որ կրնայ հիշուիլ՝ սրբերո-թեանց վերա-  
 պատուելի Տեղինակին քննութեանցը նոր նիւթ  
 մատակարարել . այլ հոովմէական կկեղեցւոյ  
 մէկ երեւելի եւ մեծանուն պատուածարանի մը  
 խօսքովը բացատրենք . որուն ուղղափառու-  
 թեանը այնքան վստահ է Հոովմայ եկե-  
 ղեցին , որ սրբոց կարգն անգամ անցընե-  
 լու խօսք կղած է անոր համար . եւ ասիկայ

է Պօսիւէ\* որ թէպէտ արտայայտու թեան կերպով  
 վերոյգրեալներէն կը տարբերի , բայց միտքը  
 նոյն , կամ խիստ մօտ է :

Մտկայ իր պատարագէ Բացարո-թեան գրքին  
 մէջ ( Գունաց պատարագամատոյցներուն պարու-  
 նակած կոչման աղօթքին վրայ խօսելով կըսէ .  
 թէ եկեղեցական արարողութեանց մէջ ելլել մն  
 եղածն ըլլալուի պէս ներկայացընել կերելի .  
 եւ օրինակ կը բերէ այն՝ սր քահանային ձեռ-  
 քերն օծելէն եւ սկիհը ձեռքը տալէն եւ ա-  
 նոնց յարակից աղօթքները զրուցելէն ետքը՝  
 որ ասոնցմով քահանայ կղած՝ եւ քահանայի  
 յատկացած ամէն պաշտօնները կատարելու իշ-  
 խանութիւն առած է , գարձեալ կպիսկոպոսն  
 անիկայ առածն կը կանչէ , եւ ձեռքերը վրան  
 կը դնէ ըսելով , առ զՀօգի սուրբ , որոց թո-  
 զուցուս զմեզս՝ թողեալ լիցի նոցա . եւ այլն :  
 Ասոր պէս է կըսէ՝ առե՛ք կեքե՛ք , եւ արքե՛ք՝  
 \* Կանէն ետքը կոչման աղօթքով ննդրելը որ  
 Հօգին սուրբ այն հացն ու գինին Քրիստոսի  
 ճշմարիտ մարմին եւ արիւն ընէ . Եւ այս սո-  
 վորութեանս պատճառը սա խօսքերովս կը բա-  
 ցատրէ : « Այս դէպքերուս մէջ հռչակուած եւ  
 ,, կատարուած բաներն անանկ մեծ են , եւ այն-  
 ,, քան այլեւ այլ արգիւնք եւ յարաբերութիւն-  
 ,, ներ ունին , որ կկեղեցին չկրնալով միայն  
 ,, մէկ տեղ մը ամէնը մէկէն ըսել , եւ ոչ ալ  
 ,, աստուածային խորհրդոյն բոլոր տարածու-

\* Տէս Գարապապուս . հարց . Ը . 557 . Ի Տանթեո-թեան



11 Թիւնը եւ ընդարձակութիւնը բացատրել , իր  
 11 գործը՝ թէ եւ ըստ ինքեան ամենապարզ որ-  
 11 պէս թէ այլ եւ այլ մասերու կը բաժնէ , ա-  
 11 մէն մէկին պատշաճաւոր խօսքերով , որպէս  
 11 զի ամէնը մէկ խորհրդական լեզու մը եւ մէկ  
 11 բարոյական գործողութիւն մը բաղկացընեն :  
 11 Ուրեմն ասոր համար է որ եկեղեցին բանն ա-  
 11ւելի զգալի ընելու մտքով ամէն մէկ անդ  
 11 այնպէս կը խօսի , որպէս թէ բանը նոյն բո-  
 11 պէին կը կատարուի . անոր ալ չնայիր թէ  
 11 արդեօք այն բանն արդէն եղած է թէ տա-  
 11 կաւին ըլլալու է . այլ ամէնը մէկէն ամ-  
 11 բողջին մէջ գտնուելուն , եւ ամէն բանէն  
 11 վերջը խորհրդոյն ամբողջութեանը՝ երեւա-  
 11 կայել կրցածնէս աւելի կատարեալ եւ կեն-  
 11 դանի եւ զգալի բացատրութիւն մը ունենա-  
 11 լուն եվելօք գոհ կըլլայ : ( Մարտիտէ .  
 Պօսիւէի . հրք . 13 . եր . 279 . 280 . որ . Փա-  
 ղէշ . 1836 ) :

Այս տեղո՛ Ուրնօտոյի եւ Ղըպրէօնի ըսած-  
 ներուն՝ Պօսիւէի բացատրութեանը հետ նոյնն  
 ըլլալը ցուցընել պէտք է . աւելի կարեւոր  
 եւ մեր աւանդարկեալ խօսքերուն յարմար է ցու-  
 ցընելը , որ այն բանն որ մեր վերապատուելի  
 հեղինակը կոստանդնուպօլիսի քրիստոնէական  
 նին մէջ իբրեւ սխալ գտերէր , եւ անանկ հաս-  
 կըցեր էր՝ որ գոյափոխիչ զօրութիւնն երկուքի  
 կը բաժնէ . կէսը տէրունական բանին՝ եւ միւս  
 կէսը կողման աղօթքին կուտայ . թէպէտ եւ քր-  
 իստոնէականին գրէ՛ր բաժանել նշանակող բառ

չընելէն զստ՝ միութիւն մը ցուցընելու հա-  
 մար խօսքին կազմութեանն անդամ հոգ տարած  
 էր . ամբողջ խօսքին մէկ դիմաւոր քոյ մը ա-  
 լով , որպէս զի մէկ քրիստոնէական մը նշանա-  
 կուի . մեծն Պօսիւէն նոյնն ըսած է . քաջանել  
 բանն անդամ գործածելով . « Եկեղեցին . . .  
 11 իր գործը թէ եւ ամենապարզ , որպէս թէ  
 11 այլ եւ այլ մասերու կը բաժնէ » . — Տէնշ-  
 օն օքթեմբեր : — Ասով կը տեսնենք որ սիշ-  
 եալ քրիստոնէականին հեղինակը , որ անշուշտ  
 Պօսիւէի գրքերն աչքէ անցուցած էր , մի  
 քննիչին կարծածէն աւելի զգուշութեամբ խօ-  
 սած է , եւ բանը կամեղիկէ եկեղեցւոյ ըսա-  
 ծէն ոչ հիմնական եւ ոչ այլ կերպ քրիստոնէական  
 մը չուրի . եւ թէ որ Հայաստանեայց եկեղե-  
 ցին անոր հեղինակութենէն կախում ունեցած  
 կը ճանաչէ նէ , կրնայ անոր դաւանութեանը  
 վրայ սպասել ըլլալ :

Պ . Հայոց եկեղեցւոյն քոյ մը Սանկտու-  
 բոն Տրոյսցած անի՛ մի քրիստոնէական լրոյ

Վերոյգրեալ խօսքին մէջ Պօսիւէ ըսաւ .  
 « Եկեղեցին բանն աւելի զգալի ընելու մըտ-  
 11 քով ամէն մէկ տեղ այնպէս կը խօսի , որ-  
 11 պէս թէ բանը նոյն բոպէին կը կատարուի ,  
 11 անոր ալ չնայիր թէ արդեօք այն բանն ար-  
 11 դէն եղած է թէ տակաւին ըլլալու է » : Ա



արկայ մեզի ասիթ կուտայ մերս զգի հոնով մե-  
 կան կարգաւորաց հետ նոր հաշիւ մը բանալու-  
 յիշեց ընելով այն՝ որ սլբագործութենէն եւ  
 վերաբերումէն ալ առաջ գլխիւներուն եր-  
 գելով ըսածը , , մարմին տէրունական եւ ար-  
 , իւն յիրկչական կայ առաջի , , Հոսմ տպուած  
 խորհրդատեարը կայցէ ըրած է . Պօսիւէի աստ-  
 ուած արանական խորհրդածութիւններուն խելք  
 հասցընելու անկարող սրբապիշի մը ձեռքով ,  
 որ կարծեր է թէ իր խելքին սահմանէն դուրս  
 բան չկայ . եւ ինչ բան որ ինք չհասկընարնէ  
 սխալ է : Ըսոր մէջ ուրիշ փոփոխութիւն ալ  
 կայ վերոյգրեւոյն նման . Վլխատոս Ի մէջ մեր  
 , , յայտնեցե . որ էնն Մստուած սեռ քայլեցե , ,  
 յայտնեցա , քայլեցա ըսելու տեղ : Ըսոր պէս  
 սրբապրութիւններ , կամ մանաւանդ եղծադ-  
 րութիւններ եղած կը գտնուին 1677 ին Հը-  
 ոսով լոկ հայերէն տպուած խորհրդատեարին  
 մէջ , որուն համաձայնած են Վէնէտկոյ եւ  
 Վիեննայի Միտիմարնաք իրենց թէ հայերէն  
 թէ իտալերէն եւ թէ դաղլիերէն տպած խոր-  
 հրդատեարներուն եւ ժամագրքերուն մէջ :  
 Ինչ ըսել կուզէր այսպիսի կարծեցեալ սրբա-  
 գրութիւններուն հեղինակը եւ առաջարկողը .  
 յայտնապէս անանկ կարծած պիտի ըլլայ որ  
 հայք այս խօսքերովս կիմացընեն որ հացին եւ  
 գինիին մարմին եւ արիւն Վլխատոսի ըլլալը տէ-  
 րունական բանէն եւ Հօղւոյն սրբոյ կոչումէն  
 առաջ եղած ըլլայ : Թէ որ ասանկ է նէ՛ ին-

չո՞ւ կը բամբասեն թէ տէրունական բանիւն  
 գոյափոխութիւն չըլլար կըսեն Հայերը : Խործ-  
 քերն ին ըսածնուն հակառակ չէ՞ մի : Խորհր-  
 դատեարին հոսով մեկական տպագրութեան սըր-  
 բագրիչը թէպէտ աղբաւ Հայ , բայց հայերէն-  
 լեզուին հմուտ մարդ մը չըլլալը ըստ բաւա-  
 կանին ցուցուած է : Վէնէտկոյ Միտիմարնա-  
 նէրն ալ մի չէին գիտեր՝ որ հայերէն գրարար-  
 լեզուին կենդանացընողն ըլլալ կը պարծին .  
 չե՞ն գիտեր որ կայ առաջի խօսքը ո՞՞ մըն է՝ որ-  
 քիչ ժամանակէն պիտի ըլլայ ըսել է . այս ո-  
 ճը՝ հայերէն չղիտցողի մը թելագրութեամբ  
 փոխելու , եւ երգոյն ներդաշնակութիւնն ալ  
 աւրելու զիջանելէն ալ պարմանալի է : Պ. Տիւ-  
 լորիէ , որ աղգաւ Հայ չէ , բայց հայերէն գը-  
 րաբար լեզուի քաջահմուտ է , հայոց արեւելեան  
 եկեղեցայն վարդապետութեանց եւ առանդոսիեանց եւ  
 ապրոսածային պաշտամոնց պարտութեան մակագրեալ  
 գրքին մէջ ( առ . Փարիզ . 1857 , էր . 137 ) ,  
 ասոնցմէ աղէկ հասկըցած է այս խօսքս՝ զոր այսպէս  
 կը թարգմանէ . — Լը Բոք Բոք Բոք Բոք Բոք  
 Եւ Եւ — Տեառն մերոյ մարմինը եւ մեր Փրկ-  
 չին արիւնը մեզի երեւելու պատրաստ են : —  
 Իսկ Վլխատոս Ի մէջ Բոք յայտնեցա — երգոյն մէջ  
 դոյափոխութեան կամ Տեառն մերոյ մարմնոյ եւ  
 արեան ներկայութեան խօսք ամենեւին չկայ , այլ  
 միայն՝ սուրբ եկեղեցւոյ մէջ ներկայ՝ եւ սուրբ  
 սեղանոյն վրայ աներեւութապէս բազմեալ



դանուիրը կը յիշեցընէ հաւատացելոց . եւ սուր ո՞վ չհաւատար, եւ այսպէս ըսելէն ՚ի՛նչ գայթակղութիւն կրնայ ելլել որ յիշեալ հըռովմէական հայերը ասիկա ալ փոխելու յանդգնելով, որով այնպէս կը ցուցընեն, որ դոյափոխութենէն առաջ Տեառն մերոյ սուրբ եկեղեցոյ մէջ յայտնուիրը եւ սուրբ սեղանին վրայ՝ մարդկան փրկութեան պատարսգուելու համար նստած պատրաստական կենալը չեն ընդունիր:

Բայց ըսենք թէ այս պախտարս մեր խորհրդատեարը սրբագրելու յանդգնողին եւ անոր հրահանգին հաւանութիւն տալով նոյն անմիտ սրբագրութիւնն ընդունող Մխիթարեանց պէս հասկընան. ասկէց ալ հայ եւ հռովմէական եկեղեցեաց դաւանութեանց մէջ տարբերութիւն չեւլլեր: Արդեւր ճիշդ հաւատոյ դաւանութիւն ըլլալէն զատ բանաստեղծական ոճ ալ ունին, որով այն բանն որ քիչ ժամանակէն ըլլալիքն անտարակուսելի է ներկայ կը ձեւանայ: Եւս ոճը մարգարեական սուրբ Գրոց համաձայն ալ է. որ հալիւրաւոր տարիներով ետքն ըլլալիք եւ լըմնալիք բաները եղատ լըմնցածի պէս անցեալ ըսյով կը բացատրեն: Եսսոյի մարգարէ կըսէ. «Մանուկ քնսա մեզ, որքէ որսա մեզ. որոյ իշխանութիւն իւր եւ ղեւ ՚ի վերայ ուսոց իւրոց. եւ անուն կոչեցաւ նմա . . . Ըստուած. հզոր՝ իշխան. յայր հանդերձելոյ աշխարհին »: (Եսայ. Թ.

6). Եւս անուններս գունեցող անձը, որ Յիսուս Բրիտանոնէն դատ սրբի մը չկըրնար ըլլալ, որ մարգարէին մահաւանէն գրեթէ 700 տարի ետքը ծնաւ, ասիկայ իր ժամանակն եղածի պէս քնսա, որքէ որսա կըսէ, եւ չեմք անսներ որ Մխիթարեանները որ քանի մի անգամ Ս. գիրքը տղեցին. այս բառերս ապաւնիի փոխաճ, եւ քնցի եւ քայի ըրած ըլլան. ուժերին խորհրդատեարին բաւեր է եւ կայ տառի գրուածը կայցի տառի, եւ յայտեցաւ եւ քաղեցաւ յոյանեացի եւ քաղեցա՞նք ըրեր են: Բայց այս ուժոյ ներգործութիւնին ալ սահմանափակ է. չուովմէական եկեղեցոյ խորհրդատեարին սըրբագրութեանն ալ բաւական չէ եղած. որուն մէջ կը գտնուի որ սրբագործութենէն եւ գոյափոխութենէն առաջ՝ չէ թէ բանաստեղծական ձեւով շինուած երգաց մէջ, այլ աղոթքի մէջ, սըրբագործելի հացն ու գինին սորբեա անտարս ոսկորս էր իլկոսարս — կանուանէ որ միայն Տերուական մարմնոյ եւ արեանը համար կըրնայ քսուիլ:

Չուովմէական այոց՝ մեր աստուածային եկեղեցական պաշտամանց մէջ մտցուցած մէկ փոփոխութիւննին ալ այն է՝ որ ուր որ չուգւոյն սըրբոյ ՚ի չորէ բղխման խօսք մը անսեր են նէ՝ քովը եւ Սրբոյ բառն ալ աւելցուցեր են. եւ ճիշտ անոր ալ չեն նայեր թէ քիսոսմի կամ բըւիեւլ՝ ՚ի չորէ ըսուածը սուրբ երբորդութեան որ անձին կը վերաբերի. վասն զի սորսա լսուայ



երգոյն մէջ ալ՝ ուր առ Որդին<sup>Յ</sup> Աստուած խօսե-  
լով Բարեօժիտն՝ ի հօրե կանուանէ, ինչպէս որ Հ.  
Միքայել Չամչեանն ալ հասկըցած է (ԿԵՆ. ասդ.  
ԽՎ. 1)՝ այս սրբաագրիչները ըստ սովորու-  
թեան եւ յՈրդոյ մ'ալ աւելցընելով Յաղբելիե.  
ղան են: Եւ նկատելու արժանի բանն այն է  
որ այս յաւելուածով Վէնէտիկ տպուած ժա-  
մագիրքն ալ, Չամչեանին Սաղմոսի միջնախնին ալ  
մի եւ նոյն անգ մի եւ նոյն միաբանութեան  
մէջ հրատարակուած են: Եւ հոն հրատարակ-  
ուած գրքերուն՝ բոլոր միաբանութիւնը պա-  
ստօխանաառ ըլլալը՝ Ուիլիսթեանն. ասորք յազո-  
րա գրքին դէմ<sup>Յ</sup> Վէնէտիկ տպուած գրքին աւի-  
թովը յայանած են լրագրոց միջոցաւ: Արեւմտ  
այն իմաստուն վարդապետներն իրենց ժողո-  
վուրդը տգիտութեան եւ նախապաշարման մէջ  
պահելով՝ գիտութիւնը միայն իրենց սեպհա-  
կանած են:

Նոյն Հոգիմեական սրբագրիչը՝ սուրբ Վեր-  
սէս շնորհալի հայրապետին յօրինած մէկ առն  
գեղեցիկ շարականն ալ սրբագրելու ելեր է, որով  
աստուածաբանական գիտութեան ալ անհմուտ  
ըլլալը կիմացընէ: Սուրբն Վերսէս շնորհալի  
հօգեգալստեան հարցի շարականներուն մէկն  
այսպէս կրկնըսի. « որ բոլորից ես պատճառ էից  
,, անպատճառից եւ սրոց պատճառաւ՝ Հայր ան-  
,, ծին եւ անսկիզբն, Որդւոյ պատճառ անժամա-  
,, նակ ծննդեան՝ եւ Հոգւոյ ըղբուման անքննա-  
,, բար ,, Հիմայ անս թէ եկեղեցական գրոց վե-

ոյցարեալ սրբագրիչը տէր Ռարսեղ՝ Խնչպէս կը  
սիտեէ ասիկայ. « որ բոլորից ես պատճառ արա-  
,, բածաց, Հայր անծին եւ անսկիզբն, Որդւոյ  
,, ծնող յաւելանից, եւ Հոգւոյ սրբոյ ըղբող  
,, ընդ Որդւոյ հոնգիաբար: »: Այս սրբագր-  
բութիւնս անսնոզը պիտի կարծէ անշուշտ՝ որ  
շարականին բուն հեղինակը աստուածաբանու-  
թիւն եւ ուղղափառ հաւատոյ սկզբունքն ան-  
գամ չգիտնալով մոլորեր է, եւ հայոց եկեղեցին  
այս շարականս ընդունած եւ երգելու սկսած  
օրէն մինչեւ տէր Ռարսեղին նոյն սրբագրելու  
աստուածաբանութեան մէջ է եղէր ար-  
գիաբար. բայց թէ որ նոյն սրբագրութիւնը  
չընդունի եւ սուրբ շնորհալի հայրապետին շն-  
նածին պէս երգէ նէ՝ նոյն մոլորութեան մէջ  
մնալու յամուելով՝ հերետիկոս կըլլայ:

Բայց մենք կը տեսնեմք որ յիշեալ տէր Ռար-  
սեղը աստուածաբանութեան եւ ուղղափառ դո-  
ւանութեան սկզբանցը հմուտ չէ: Կրկար չեմ  
խօսիր անհնափայ բառին տեղ հանգիստեաց գրելուն  
վրայ. օրկէց գիւրաւ իմացուելու միտքը սա կըլ-  
լայ որ՝ Հօր Աստուծոյ նմանութեամբ Որդին Աս-  
տուած ալ Հօր մը կը ըղբէ. եւ ասիկայ հոգիմե-  
ական եկեղեցւոյ ըսածին դէմ կուգայ, որ երես-  
բղիտի ի Հօրէ եւ Որդւոյ երեսն ի միջէ սկսեալ.  
եւ միութեան մէջ հանգիստեան կամ նմանու-  
թիւն չըլլար. մէկ բանմը՝ մէկ ուրիշ բանի մը  
նման, իսկ իրեն հետ նոյն կըլլայ: Չեմ բար-  
թէ տէր Ռարսեղ ասանկ ըսելով հերետիկոս ե-



դոժ է . սլլ՝ Թէ ըսածեն դիւրաւ իմացուելու  
միտքը մտորակաւ է . եւ իսրր աղէտ է :

Իւր ազգիտութիւնը ուրիշ բանիմք մէջ ալ յայտ-  
նած է . էնց անպատճառէց բառերը ու սրաց պար-  
ծառաս բառերն իրար խառնելով ամէնուն տեղը  
մէկէն արարածաց բառը գրեր է՝ որ շատ անպատեհ  
բան մ'է . որովհետեւ Հօր Աստուծոյ յաստ-  
ուածութեան սուրբ Երրորդութեան երկու ան-  
ձանց հիշք բն կամ պատճառ ըլլալը ծածկեր է . որ-  
պէս Թէ շարեկանին հեղինակը հաւատոյ սյս մասը  
գաւառած . յիշար՝ կամ անպատճառ է ըն ալ՝  
որ եւ Որդին Աստուած եւ Հօգին սուրբ Աստ-  
ուած , այսպիսով հետ խառնելու կամ բոլորո-  
վին վեցուցեր է : Վեհիստիւր բրածը . բայց  
որն որ ըլլայ անտեղի է . եւ անոր համար ա-  
ռանկ բրած է՝ որ հիւսկուտն խտին աստուածա-  
բանները սուրբ Երրորդութեան մէջ յաւաքա-  
գայութեան նկատմամբ պատճառ բառը գործածել  
չեն ուղեր . եւ կրսեն Թէ պատճառը պատճառա-  
վի բնութեամբ տարրեր կրկն . ե . պատճառ-  
եալը պատճառէն կտրու՞մ կուենայ : Բայց  
չեմք գիտեր Թէ տէր Բառն լաթին եկեղեցւոյ  
հին հայրիտուն գրքերուն համար ալ այդպէս  
արարութիւն մ' տաղարկեր է մի . զան զի  
սուրբն Իրարիտս ( յւ . Երբորք . էր . ԺԻ . եւ ԺԷ ) ,  
սուրբն Օգոստինոս ( քիթ ձգ ինքերց . Ժ . Օ ) , Սիկ-  
տարիտս Թիրիկեցի ( Ընդդէմ Ըրիտի . էր . Է ) ,  
Լեոսելոս ( յւ . Բնիման Հոգոյն սրբոյ ) ( եւ Ուի-  
քարտոս վիկտորեան ( յւ . Երբորք . Ե . Կ ) , պատ-

ծառասը Հօր Աստուծոյ վրայ հասկընալով ի  
կարգի աւ Որդին եւ Հոգին սուրբ գործածած են .  
իսկ Յոյն նախնի սուրբ հայրապետաց եւ վար-  
դապետաց ուղորութիւնն է նոյն մտքով նոյն բա-  
ւը գործածելը . եւ մեր սուրբ հայրերն ալ . մա-  
նուանք շնորհալին անոնցմէ աւտծ են . անոր  
համար Թովմա ագուինացիս կրտէ . " Յոյները  
պատճառն անունն աւելի բնգարծակ մտքով կը  
բանեցընեն , միայն ծագածը հասկըցընելու տեղը  
" . Եւ իսկ հանգամանացը նայելով յունա-  
կանին մէջ գրուցուած ամէն բառ լատին լեզուով  
չկրնար ըստ պատշաճի գրուցուիլ " ( յւ . Կար-  
գոսիւն . Ինդէք . Է . պրայ . 10 . առ 8 ) : Քրի-  
ստոսեան ժողովոյն մէջ ալ լատինները յուն-  
աց համաձայնելով պատճառ բառը գործածեցին ,  
մինչեւ անգամ հաւատոյ սահմանին մէջ ալ ըսին .  
" Որդին ալ Հօր պէտ՝ Հոգւոյն սրբոյ անձնաւո-  
րութեան ըստ յունաց պատճառ՝ եւ ըստ լա-  
տինացոց սինքնեւ , այս վկայութիւններս  
ժողոված է Հ . Կարբելի Լեւոնեանն անոնք լատին-  
մանց մէջ ( Բան . 142 . 18 . 23 ) : Սեր եկեղե-  
ցական գրոց սրբագրիչը որ ունիդարներէն մին-  
չեւ ԺԷ կրորդ դարը մնացած մէկն է . ոչ  
Թովմա ագուինացիին ըսածը գիտէ՝ զոր ամէն  
եւրոպացի հոսովմեական աստուածաբան գրէ Թէ  
պարտաւորեալ են զիտնալու , ոչ որոյն Օ-  
գոստինոսի ըսածը՝ զոր նոյնպէս յաճախ աչքէ  
անցընելու էր . եւ ոչ ալ իկորեանեան ժողո-  
վոյն հաւատոյ սահմանը . կէնէ մեր գրքերը սըր-



բագրելու եւ մեր սուրբ եկեղեցիներու հարց գրած  
 ներուստի դատարանէն ըլլալու կը յանդգնի: Ինչ  
 մեր միջոցով արեւմտեան հայրերը թէ Վիեննա թէ Վիէ-  
 նետիկ՝ սրբազրու թեմաքա ժամագիրքը եւ շարա-  
 կան եւ խորհրդատետր կը լսուին. եւ նոյն չ.  
 Կարրիէլ Լեւտիքեան վարդապետն ալ, այն բա-  
 նիքուն մասնագիրքը եւ քաջ աստուածաբանը  
 ինքնաբառս առաքելոյ պէս կը խոնարհի ինչպէս  
 կեզեւորութիւն, խորհրդատետրի իտալերէն  
 թարգմանութիւնը աւեր թարսեղին առաջարկածին  
 նման ընելով: Ի՞նչպէս չ. Կրտսէ Լեզերեան  
 իր գաղափարն Լատինացիներու մէջ՝ քննարկ  
 տալին դէպ ՚ի վերջը կը համարձակի եւ կըսէ՝ ժչ  
 1) էր ճշմարիտ նախանձախուզութիւն հաւատոյ.  
 2) այլ սղիստութիւն վնասակար եւ կաւնկարու-  
 3) թիւն հերձապատճառ՝ գործ անշան ասն տէր  
 4) Թարսեղ կոչեցելոյ, որ յամենայն պաշտամու-  
 5) նքստադրի կամեցաւ անխորհրդաբար մուծանել  
 6) դատող՝ եւ յարգանք. եւ ոյն նաեւ յայնպիսի  
 7) տեղիս որ աստուածաբանօրէն է անբերելի՝.  
 8) Լայն աստուածաբանութեան մինչեւ ցայսօր աստուած  
 չըլլալէն չկարծուի որ Վիեննայի խիթարեանց  
 տէր Թարսեղի համար ունեցած վարկու ձեռն չ.  
 9) Կրտսէնէն տարբեր է. վասն զի սուրբ Վաղար-  
 10) քու վախճան աստուածաբանութիւնս կը սոր-  
 11) վեցընեն աշակերտաց. կամ գոնէ՝ այժմեան  
 12) արքային ժամանակէն առաջ անիկայ դաս կու-  
 13) տային. ինչպէս որ ինչեպիտեան Սարգիս վար-  
 14) դապետը կըսէ. եւ կը խոստովանի որ հոգի-

մեական եւ լուսաւորչական եկեղեցեաց հաւատ  
 աոյ հանգանակներուն մէջ տարբերութիւն չը-  
 կենալն անկէց սորված է. 1) Ի հրահանգս աստ-  
 2) աստուածաբանութեան՝ Ի ներածութեան նորին, որ աշ-  
 3) Խատարակութիւն էր չ. Կրտսէ Լեզերեան,  
 4) ինքամուտ եղէ ես բաղում ինչ ճշմարտու-  
 5) թեան. քունդի յառաջ բերեալ եւ անաչառ  
 6) քննեալ նորա անդ զարտոդու թիւն յայն եւ  
 7) լտաին եկեղեցեաց. հնազոյն եւ անխորհի  
 8) արարողութիւն զայս աստանե ոյց եկեղեցոյ՝  
 9) համարի. իսկ ՚ի հանդանակս հաւատոյ ոչինչ  
 10) զանազանութիւն գտանէ նա. եւ զայս աստ-  
 11) աստուածաբանութեան յաւանդներ մեզ վարժապետ  
 12) մեր հրամանաւ գերապատիւ արքային 13)  
 (պատմութեան Ստորագրեան վարժարանի հասար Լ. եր.  
 131) ասակէց կիմացուի որ միջոցով արեւմտեաները զի-  
 տէին որ հայոց եկեղեցոյ ոչ զառանութեանը  
 եւ ոչ արարողութեանը մէջ փոխելու լան  
 չկայ. բայց ունիդօրներու ճիշահեաւեղներուն  
 զիջանիլ մը օւնէին. սրբոյն Գոգոսի նման մէկը  
 չկար մէջերնին՝ որ Կեփասայ մամուղեւորուն քեր.  
 դուն՝ որ յառանձնութեան իտեղից հայոց ուղ-  
 դափառութիւնը կճանչնաս, ինչպէս որ Կեփաս  
 հեթանոսութենէ գարձողներուն հետ սեղանա-  
 կից ըլլալուն անվնասութիւնը գիտէր, ինչպէս  
 հիմայ ամենուն հոգմայեցի ուղղափառաց նման  
 վարուելու կըստիպես, ինչպէս որ անիկայ հեթա-  
 նոսութենէ հաւատացեալներուն կըստիպէր որ  
 հրեութեան մէջ ծնած եւ սնածի պէս վարուին



Մեկ ուրիշ սրբազրուեիւն մ'ալ ըրած է  
 տէր Նարսեզ, բայց ահիցայ առաջկու ըսածնե-  
 րես ծանր է թէ նիւթոյն եւ թէ անձին կող-  
 մանէ : Կեւթն է հայաստանեայց եկեղեցւոյ  
 հաւատոյ հանգանակը . եւ անձն է՝ նոյն հան-  
 գանակն իր ստորագրութիւնովը վաւերացնելով  
 ազգին աւանդողը սուրբն Գրիգոր Լուսաւորի :  
 Եւն չեմ ուզեր ըսել . որ նոյն հանգանակին  
 մէջ Լուսաւորն սրբոյ բղխմանը վրայ ընաւ խօսք  
 չկեցած ալ՝ տէր Նարսեզին առաջարկութեամբը  
 որ ի Զօրեւոյ վերջոյ թիւն բառերը խօթեցին , որ  
 Լուսաւոր վճիռներուն ալ դեմ էր , որոց Լուսա-  
 դոնի եւ փրորենական ժողովները որ նոյն ե-  
 կեղեցւոյ տիւրերական ժողովոց կարգն են , եւ  
 այժմեան Արիստի հայրապետն ալ չպահանջե-  
 ցին որ արեւելեան եկեղեցեաց հաւատոյ հան-  
 գանակին մէջ այդ բառերը մտնեն : եւ յու-  
 նաց հաւատոյ հանգանակին մէջ՝ որ Արիստի-  
 դնուցօլոսի սուրբ ժողովոյն է , թեպէտ ըսուած  
 է . « հաւատամք ի Լուսաւոր սուրբ իտերն եւ ի  
 « կենդանաբարս սր ի Զօրե բղխի , « կրքնային  
 պահանջել որ ի Զօրե բառին քով եւ վերջոյ  
 բառն ալ գրուի . եւ առաջարկեցին ալ , բայց  
 յուեաց չընդունելուն վրայ ստիպում մը չե-  
 դաւ . սուր վրայ առաջ խօսած ըլլալովնիս հի-  
 մուց չեմք կրկներ :

Նոյն միշտմնիս այն է , որ մեր եկեղեցւոյ  
 ըսած հաւատոյ հանգանակին մէջ « նոյն ինքն  
 ի բնութիւն Զօր » խօսքին մէջէն բառ մը փոխե-

լով համադրոյնն Զօր ըսեր են : Ա՛յնեւեկ տրա-  
 սած մտաւորն մէջ առաջ ի բնութեւն Զօր է  
 եղեր . միտեմարեաննարու ուղղութեամբ թիւնը  
 կասկածելի ընել ուղղութիւնն այս բառիս համար  
 առում ամբաստանութիւն են ըրեր . որպէս թէ  
 հարկ եղած ըլլաւ տէր Նարսեզին խելքի փը-  
 չելով ըրած սրբազրուեիւնն ընդունիլ նա եւ  
 Լուսաւորչին աւանգած հանգանակին մասին ալ :  
 Մտաւորն ապագրիչները թէ եւ իմաստուն՝ եւ  
 եկեղեցական հնութեան եւ լեզուի հմուտ մար-  
 դիկ՝ այս սրբազրուեիւնն յանձնառու եղան .  
 նոյն ինքն համադրոյնն ըրին . եւ այնպէս հրա-  
 տարակեցին :

Յայտի է միտեմարեաց հակապարզութիւնը  
 կրէին թէ համադրոյնն բառը (Վրդոյն) Լուսաւոր  
 Զօր Լուսաւոր զոյգ եւ հաւասար Լուսաւոր ըլ-  
 լալը յայտնելու եւ խօսողանելու համար իր-  
 րեւ ուղղութեամբ նշան դրաւ : կից ժո-  
 ղովը՝ եւ այս բառ չի գործածողները ի հա-  
 ւատս կասկածելի կրկն . բայց չէին մտածեր՝  
 որ սուրբ ժողովոյն հարապետները հայերէն  
 չէին խօսեր , եւ ճիշտին հայերէն չգրեցին :  
 յունարէն ծճո՛ւտն բառն էր անոնց ըսածը .  
 եւ ասոր վրայ ժողովքն ժամանակ մը ետքը  
 վէճ ալ եղաւ . որովհետեւ այս բառն ո՛րք Զօր  
 մի եւ նոյն անց ըսել ալ կը շարձուէր ստի-  
 բարն զօրութեամբը՝ որկէք բարդեալ է ճեմաւն  
 բառը . եւ ասով իրդին Լուսաւոր Զօր Լուսա-  
 ծոյ համադրոյնն ըսելը՝ Զօր Լուսաւոր չեա մէկ



անի՛ ըսել հասկըցող ալ կըլլար, Սարգիսի եւ  
 Պողոս սամոսացոյ աղանդը կը նորոգուէր:  
 Ըսոր համար հարկ եր սոսո՛ւ բառին նշանակու-  
 թիւնը՝ որ անի՛ ալ կը նշանակէ, քնսօթիւն ալ,  
 Կոսթիւն ալ, որոշել: Քրիստոսի համար չօր  
 Ըստուծոյ սոսո՛ւսին կըսուի նէ՛ անձամբ մէկ է  
 թէ բնութեամբ. եւ այս որոշումս յունական  
 լեզուի մէջ չկրնալով ըլլալ՝ երկար վէճերու  
 պատճառ եղաւ: սուրբ Լուսաւորիչ՝ որուն ձեռ-  
 քը նիկիական հանգանակը հասած ատենը այս-  
 պիսի վէճ մը չկար. նախաեսութեամբ յու-  
 նական բառը՝ քնսօթիւն թարգմանեց որ այն-  
 պիսի վէճի մը տեղի չէր ասոր: Համոզոյից բա-  
 ւըն ալ գոյուծիւն բառին արմատովը բարդեալ  
 ըլլալով թեպէս անանց շփոթութեան տեղի  
 չէր ասոր. բայց ուրիշ անակողութիւն ունէր:  
 Քրիստոսի իսաւրացի հայերէնագէտ քահա-  
 նայն՝ Պերրասդէի եկեղեցական դաստիարակ իսա-  
 լէրէն թարգմանութեանը կցած չորրորդ հո-  
 տորին մէջ այսպէս կը բացատրէ: " Հայերէն  
 11 կամ քոյակից բառը՝ որ ուրիշ նշանակութիւն-  
 11 ներուն հետ՝ ճիշտօրէն ունեցող ալ ըսել  
 11 է, երեք բառէ բաղանքեալ է, որոց մէկն է  
 11 համ: որ ըսել է՝ քնսօթիւն, քնսօթիւ. եւ ամէնը եւ  
 11 ընդհանուր. քոյ, որ քոյակիւն ունեցող կամ քո-  
 11 յակիւն եւ Կոսթիւն ըսել է, եւ կից որ կըսուած  
 11 քնսօթիւն էլած ըսել է, իմ.յ կը հարցընամ.  
 11 Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ այս երեք բառերուս  
 11 բաղադրութենէ չօր եւ Որդւոյն Ըստուծոյ

11 մէկ բնութիւն ըլլալուն յատուկ եւ ճիշդ եւ  
 11 ամենեւին երկդիմութիւն չունեցող գաղտնիք  
 11 մ՝ առնուի: Լուսաւորիչն ալ հանգանակին  
 11 թարգմանութեան մէջ կըրնար ասիկայ գոր-  
 11 ծածէլ, բայց չըրար. որպէս զի այսպիսի փա-  
 11 վուկ նիւթոյ մը մէջ երկդիմութեան տեղի  
 11 չասալ: Եւն ալ ըսենք որ հայոց եկեղեցական  
 11 պաշտամանց մէջ շատ տեղ այս բառս արարա-  
 11 ծոց համար կը գրուցուի. եւ մարդկային ազ-  
 11 քը եւ բոլոր արեւոյնքը մէկէն կ'նշանա-  
 11 կէ: Սակայն մաշտոցին ամբաստանող-  
 11 ներուն այնքան մանրակրկիտ հետաքրքր-  
 11 ութեան մէջ, որ բոլոր երեւակոյցեալ մոլոր-  
 11 քութեանէն մաքուր կուգին հաւատոյ հան-  
 11 դանակը, սխալ մը մտած է, որ հայ լեզուն  
 11 ճշմարտապէս խորին հմտութիւն ունեցողնե-  
 11 բուն մտքին մէջ աստուածային դոյուծեան  
 11 միութեանը գաղտնիք չկրնար ապ յունա-  
 11 քէն սոսոսոսին բառին մարտն ու բնդարձա-  
 11 կութեամբը: Եւ նախանձանդիր սըրբազրիչ-  
 11 ներք այս կերպով՝ սուրբ հորց խօսքերէն ե-  
 11 րեւակայեալ դայթակողութիւնները վերցընել  
 11 կուգին որ ասոնք վերցնելէն աւելի օգնել կըլ-  
 11 լար՝ պաշտամանց աստուածային խօսքերուն  
 11 ճշմարիտ իմաստը տգէտ ժողովրդեան սովորե-  
 11 ցընելը: ( հարս. Գ. եր. 700. ) Համո-  
 11 քոյակից բառը բարդութեան ուժովը ուրիշ ի-  
 11 մաստ մ'ալ կըրնայ ալ՝ որկէց զգուշանալ պէտք  
 է ճիշդ գրուցութեան մէջ, ինչպէս է հաւատոյ



դաւանութիւնք: հասարկոյս խնայեալ ըսել  
կըլայ որ առաջուց նոյն գոյութենէն չըլլալ  
կենթադրե. եւ ասով յոյն կիսարիոսեաններուն  
հնարած թիտոյն թառին պէս իմաստ մը կուտայ .  
զոր սուրբ հորք արիասկան խորգախուժիւն սեւ  
պելով մերժեցին: Աստի Մխիթարեանք աեր  
Քարսեպին այս սրբագրութիւնըս ընդունելով  
ցաւցուցեր են՝ որ սուրբ լուսաւորչին յունա-  
րէն ճասի՛ն ըսող 'ի քնասիլէն թարգմանելու  
ասան բանեցուցած խոհեմութեան քիրենք չու-  
նենային զատ ունեցողին ալ չեն հասկըցեր:  
Ի՛նք միտքը՝ բառին նշանակութեան վրայ պըն-  
դել չէ՝. հերետիկոսներուն հնարած բառերն  
ալ կըրնան ուղղափառներուն գործածական ըլ-  
լալ՝ ուղղափառ մտքով հասկընալով: սուրբ  
Լուսաւորչին գործածած բառը այնպէս մար-  
դաւ մը սրբագրելը՝ որ ոչ հայերէն լեզուի տեղ-  
եակ է, ոչ աստուածաբանութեան, եւ ոչ նախ-  
նի հայրապետաց խօսելու կերպին, ասիկայ ան-  
պատեհ կուգայ մեղի. եւ աւելի անպատեհ է՝  
երկու վանքերու իմաստուն Մխիթարեանց՝ անոր  
սրբագրութիւնները ընդունելը: Տէր Քարսե-  
ղին ուրիշ սրբագրութիւնները աւելի աղայա-  
կան կըրնան ըսուիլ. ուստի անոնք թողով .  
կարեւորագոյնը տեսնենք, որ է կոչման աղօթ-  
քին վրայ ըրածը:

Արձան ոչո՛ր էր քանք սրբագործութեան ա-  
ղօթքին այն մասը՝ որ Տեառն մերոյ ըրածը եւ  
ըսածը պատմելէն ետքը՝ որ սրբագործութեան

սկիզբն ու հիմն են, սուրբ Լուսաւորչի գալը կը  
խնդրէ որ առաջագրեալ հացն ու գինին վերս-  
տասի ահառն մերոյ ճշմարիտ մարմին եւ տրուին  
ընէ: Ասոր վրայ Լուսաւորչի սուրբ եկեղեց-  
ւոյ ընդունած քրիստոնէականներուն ըսածը  
Լուսաւորչի եկեղեցւոյ բնածին համեմատ գտածը .  
եւ Լիւնայի տարբերութեանց վերապատուելի հե-  
լուտիւն հասած ասորակոյսներուն լուծմանը  
ծառայելու պէտք եղած խօսքերը խօսեցանք:  
Լիւնայ անոր վրայ պիտի խօսիմք՝ որ հոգմեա-  
լիւնք կոչման աղօթքն ընդդէմ գաւանութեան  
կամեղիկէ եկեղեցւոյ կարծելով՝ իրենց գոր-  
ծածութեանը համար տպած խորհրդատեարին  
մէջ՝ ասարի թեւ լազարութեամբ մէկ բառ մը փո-  
խելով խօսքին անբող իմաստը խանգարեցին:  
Մենք մեր լեզիւրներէն առաջ իրողացի հոգմե-  
մեական խնայուած քահանայի մը այս փոփո-  
խութեանս վրայ ըրած գատողութիւնը այս տե-  
ղը կը դնեմք:

Քարէլէզդի քահանայն՝ զոր գործոյս կար-  
դը քանի մի անգամ յիշելու աւիթ անեցած  
եմք, Պերթասդիլի եկեղեցւոյ տարման իտա-  
լերէն թարգմանութեան հինգերորդ գրքին 55  
համարէն ետքը՝ հոյոց եկեղեցայ սրբառան արար-  
չութեանց վրայ յատուկ ճառ մը կցած է. որուն մէջ՝  
կոչման աղօթքին վրայ այնպէս կը խօսի:

- 1) Արեւիկի Քրիստոսի խօսքերէն անմիջա-
- 2) պէս ետքը զրուցուած՝ եւ նոյն արարողու-
- 3) թեանը հետ մէկ ամբողջ մը կազմելով քա-



,, Հանային արժանանած մեկ աղօթքին վրայ խիստ  
 ,, ժանր դժուարութիւն մը կ'հասնէ հայր կալա-  
 ,, նոս : Աղօթքն է այս . երկիրպագանեմք եւ ա-  
 ,, ղաչեմք եւ ինքրեմք 'ի բէն բարերար Աստ-  
 ,, ուած . աւարեա 'ի մեղ եւ յառաջի եգեալ  
 ,, ընծայս յայս դճանջեանաւորակից քո եւ դեա-  
 ,, կից սուրբ Հոգիդ , որով զհացս օրհնեալ՝ մար-  
 ,, մին ճշմարտապէս արասցես տեառն մերոյ եւ  
 ,, Փրկչին Յիսուսի Քրիստոսի , ,, եւ սուրբ հա-  
 ,, ցին վրայ երեք անգամ կը խաչակնքէ . նոյնն  
 ,, ընելով բաժակին վրայ ալ՝ կըսէ . " եւ զբա-  
 ,, ժակն օրհնեալ՝ արիւն ճշմարտապէս արասցես  
 ,, Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստո-  
 ,, սի , ,, եւ ետքը երկուքին վրայ մէկէն երեք  
 ,, անգամ խաչակնքելով կը յաւելու . " որով ըզ  
 ,, հացս եւ զգինիս օրհնեալ՝ մարմին եւ արիւն  
 ,, ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչ-  
 ,, չին Յիսուսի Քրիստոսի , " եւ նոյն հետայն  
 ,, ծածկոցը սարկաւագին ձեռքէն առնելով սը-  
 ,, կիհըն ու մաղղմայն կը դոցէ՝ որոց մէջ են  
 ,, սուրբ տեսակները , եւ միանգամայն կըսէ .  
 ,, " փոխարկելով Հոգևոյդ քով սրբով , " Եւ-  
 ,, քը բարձր ձայնիւ կըսէ . " որպէս զի եղիցի սա  
 ,, ամենեցուն մեղ մերձեցելոցս յանդասաւար-  
 ,, աութիւն 'ի քառութիւն եւ 'ի թողութիւն  
 ,, մեղաց " : Եւ սարկաւագը կըսէ . " ամէն " : Եւ յ  
 ,, աղօթքին մէջ կալանոս պարտաւելու արժանի  
 ,, կը դասնէ ճշմարտապէս արասցես խօսքը . որպէս թէ  
 ,, հացին եւ գինւոյն գոյութիւնը Յիսուսի

,, Քրիստոսի խօսքովն իրօք վերկէին մաքմեոյ եւ  
 ,, արեանը փոխուած չըլլային : Աւստի հայերը  
 ,, կամբաստանէ թէ՛ հրաշալի գոյափոխութիւնն  
 ,, անոնցմով ըլլալուն չեն հաւատար . ստոր հա-  
 ,, մար կուգէ որ արտօնէն տեղն արարեք գրուի :  
 ,, Ասոր կուսակիցներէն ոմանք այս ամբաստա-  
 ,, նութենէս խարուելով , 1674 թուին Հառմ  
 ,, Բթորականայի սպարանը հայերէն խորհրո-  
 ,, դասերը ապեցին որուն մէջ արասցեալն տեղն  
 ,, արարեք գրուած է : Բայց կալանոսի ամբաս-  
 ,, տանութիւնն անհիմ եւ ցրտարութիւն ըլ-  
 ,, լալը դիւրաւ կը հասկընայ ուրիշ ամէն արեւ  
 ,, շերտն պատարագամասոյցներուն աղօթքնե-  
 ,, րուն եւ արարողութիւններուն եւ նոյն իսկ  
 ,, Հայ խորհրդատեսին տուած հրահանգին ժառ-  
 ,, դիր եզոյղը որ այս հրահանգս կը խրատէ ան-  
 ,, միջապէս " այս է մարմին իմ , այս է արիւն  
 ,, իմ " , ըսելէն ետքը ձեռքերը քահանայն գոր-  
 ,, փուրային վրայ բըւնէ յարգութեան նշան :  
 ,, կալանոսէն առաջ Հոյոց եկեղեցին որբադոր-  
 ,, ծութեան վրայօք ամբաստանող մ'եղած չէ թէ  
 ,, մոլորութեան մէջ է \* : Եւ նոյն ազգին այն-  
 ,, քան եպիսկոպոսները եւ հայրապետները եւ  
 ,, քահանաները՝ զորս Հովմայ եկեղեցին ալ  
 ,, սուրբ սեպած եւ վկայարանութեան գրքին մէջն

\* Քարէլէ դդի սխալած է : Աւրիգ օրն երուն ձժիէ  
 ամբաստանութեանց կը երորդն այս է . զոր  
 քիւսոյս Ա համարոյ . սկիզբը տեսար :







երեւիլ ուզող Հայազգիները . թէպէտ ինչպէս  
ըսաւ Վարդէլէպրի , լատիններուն ոչ Հայրապետ  
մը եւ ոչ ժողով մը այսպիսի փոփոխութիւն մը  
իրենց հաւանութեամբը վաւերացուցած չեն :

Ասոնք մարդահաճութիւններն մինչեւ սյն  
աստիճան կը հասցունեն , որ Հայաստանեայց ե-  
կեղեցին իրբեւ հերետիկոսութեան մէջ ինկած  
բամբասելով անոր դէմ գիրք ալ կը գրեն . եւ  
իրենց գիտցածովը հերետիկոսութիւն գտնելու  
տկարանալով՝ հին դրոշմադրոշներուն կը հարցու-  
նեն . եւ թէ ան չիմն թէ ծուռ հասկըցուած՝ թէ՛  
ամենեւին հաւատոյ նիւթ չեղած բաներուն մէջ  
աարբերութիւն մը տեսածնուն պէս՝ անունը կի՛ծա-  
կան արժեքներուն դնելով կը դիմախօսեն : Այսպի-  
սիներուն առաջինը չէ՛ այս անունովս մօտ ասեն-  
ներս հրատարակուած գրքին վերապատուելի հե-  
ղինակը . եւ կը վրափառեմք , բայց չեմք յուսարոր  
վերջինն ըլլայ : Արածներուն դէմ որքան հղօր  
փաստ գտնեմք ալ նե՛ մարդկային բնութիւնս այն-  
պէս աւրուած է՝ որ խելքը կամքին առաջնորդու-  
թեանը ապին ինկած է . խելքին համոզուած  
բանին հաճելն ալ կամքէն կատու մ ունի . կը հա-  
ւատայ չէ՛ թէ երբ ինքնուրուի այլ երբ օղի : Անոր  
համար մեր գրածներուն նպատակն՝ այսպիսի հե-  
ղինակները փառաով յաղ- թած հարել եւ մօքերնին  
շակել չէ՛ . այլ՝ ընթացողներէն ո՛վ որ նախապա-  
շարու մէ աղաւ է նե՛ անոր միտքը լուսաւորել  
կուզեմք . որ բանին էութիւնը չը գիտնալով ու-  
րիշի ծախելու սուտերուն մուշեակ չըլլան :

Արտօնեալ որոշեի փոխելուն անպատեհու-  
թիւնը՝ որ չեմք գիտեր թէ լատիններէն ին մէջ  
ալի՛նչպէս մտեր է . որ կարտինալ Պօնափն ըսա-  
ծին նայելով՝ տէր Ռարսեղ այնպէս թարգմա-  
նած չէր , հասկըցած է Ռիմօսօ գաղղիացի աստ-  
ուածաբանը՝ որ Հայոց լեզուին հմուտ ալ չէր .  
բայց Ռարսեղ քահանային լատիններէն թարգմա-  
նած եւ սյո փոփոխութեամբը ապած իրերդա-  
ուէրը կարգացրէր . եւ կըսէ . « Առոմ Հայե-  
րէն պատարագամատոյց մը ապեցին լատին  
» թարգմանութիւնովը մէկ տեղ . որկէց զիւ-  
» րին է նշմարելը՝ որ մարտնիներուն խորհրդա-  
» տետրին եղած փոփոխութիւններն ասոր ալ ե-  
» ղեր են . գլխաւորապէս Հիսուսի Վրիստոսի  
» խօսքերուն ձեւոյն վրայ՝ որ լատիններէն կա-  
» նոնին համաձայնեցուցեր են . եւ հարգոյն սըբ-  
» բոյ կոչման աղօթքին վրայ , զոր նոր ձեւի  
» խօթեր են , մարտնիներուն խորհրդատետրին  
» ըրածնուն պէս . թէ եւ Պօղոս Պր ին օրը աղ-  
» ուած Հապէշներուն խորհրդատետրին մէջ ըը-  
» նաւ փոփոխութիւն չկայ : ( Երանանու-թիւն  
հասարայ . հատար . Պր . քր . Պր . ԷԼ . 1 ) : Առով-  
մայ հայրապետներուն այսպիսի փոփոխութեանց  
չհաճելը՝ հապէշներուն խորհրդատետրին առանց  
փոփոխութեան տպուելը եւ Պօղոս Պր , հոով-  
մայ հայրապետին ընդունելի ըլլալը կըցուցնէ .  
Ռայց մինակ հոյերէնի թագմանիչ Ռարսեղ բա-  
հանայն չէ՛ . ուրիշ ազգերու խորհրդատետրերը  
լատիններէն թարգմանողներն ալ այդպէս փո-







,, արի Ասուած՝ որ քու մշանջենաւորակից եւ  
 ,, էակից սուրբ Հոգիդ մեր եւ առաջադրեալ ըն-  
 ,, ծածեքուս վրայ խրկես . որով այս օրհնուած  
 ,, հացը ճշմարտապէս մարմին ընես Տեառն մե-  
 ,, թոյ եւ Փր՛ջին Յիսուսի Վրիստոսի եւ այս  
 ,, օրհնուած գինիս ճշմարտապէս արիւն ընես Տեա-  
 ,, ռն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Վրիստոսի , ( եր .  
 541 ) :

,, Այս հեղինակս անանկ պատճառներու  
 ,, նի իր ձեռքը , որոց զօրութիւնը միայն լա-  
 ,, տին եկեղեցւոյ պատարագամասոյցին՝ ,, զի մեզ  
 ,, լիցի մարմին ,, աղօթքը անմիջապէս սահմա-  
 ,, նադրութեան խօսքերէն առաջ դրուելուն ըրած  
 ,, ապաւորութենէն կախում աւնի . եւ կը պըն-  
 ,, դէ որ այս խօսքերս ըսուելով ամէն բան եղած  
 ,, լըմըցած կըլլայ . եւ անկէջ ետքը հացն ու  
 ,, գինին մարմնոյ եւ արեան փոխարկելու համար  
 ,, զՀոգին սուրբ խնդրելը մօլորութիւն կըլլայ :  
 ,, Ասոր համար հարկ եղաւ իրեն ըսել՝ որ հայե-  
 ,, ընն այս մոլորութենէս ազատ մնալու համար  
 ,, կամ այս աղօթքը Տեառն մերոյ խօսքէն առաջ  
 ,, ըսելու են , կամ իր առաջարկած կերպովը  
 ,, սրբադրելու են , Աւ ըսածն է այս :

,, Արդ՝ որպէս զի ազգաներուն մոլորու-  
 ,, թեան առիթ չարուի , պէտք է որ հայ եկե-  
 ,, ղեցին կամ ուրիշ տեղ մը փոխադրէ այս ա-  
 ,, ղօթքը՝ Տեառն մերոյ փոխարկիչ խօսքերէն ա-  
 ,, ռաջ , կամ՝ թէ որ տեղէն տախտել չուզերնէ  
 ,, սրբադրէ , եւ կ\*թու զիկէ մասց յայտնագոյն

,, ճշմարտութեանը վերածէ . որ շատ աղէկ կըլլ-  
 ,, լայ՝ թէ որ նախընթաց խօսքերուն կարգէն  
 ,, շատ չհեռանալով միայն այս կերպով զրուցէ  
 ,, անիկայ . քեզ կողաչեմք ամենաբարի՛ Աստ-  
 ,, ուած , մեզի եւ առաջադրեալ ընծաներնուս  
 ,, վրայ քու մշանջենաւորակից եւ էակից Սուրբ  
 ,, Հոգիդ խրկէ . եւ այս օրհնու հացը՝ Տեա-  
 ,, ռն մերոյ Յիսուսի Վրիստոսի ճշմարիտ մար-  
 ,, մինը , եւ այս օրհնեալ բաժակը՝ Տեառն մե-  
 ,, թոյ Յիսուսի Վրիստոսի ճշմարիտ արիւնը՝ մե-  
 ,, զի եւ ամէն մօտեցողներուն չէ թէ դատապար-  
 ,, տութիւն , այլ քաւութիւն եւ թողութիւն  
 ,, մեզաց ըրէ \* :

,, Ալաւնոս կուզէ ուրեմն՝ որ այն աղօթքին  
 ,, մէջ Յիսուսի Վրիստոսի մարմինն արդէն սըր-  
 ,, բագործեալ ենթադրուի . եւ Ասուած մէ միայն  
 ,, այն խընդրուի՝ որ մեր փրկութեան օգուտ  
 ,, դարձէ անիկայ եւ ասով՝ ,, փոխարկելով հոգ-  
 ,, ւովդ քով սրբով՝ խօսքը դործածելու մի-

\* Ալաւնոսի այս գիրքը՝ մէկ էջը հայերէնէ մէկ էջը  
 լատիներէն տպուած է , եւ ամէն տեղ հայերէնը լատի-  
 ներէնին թարգմանութիւնը չէ , թէ պէտտայ լեզու նե-  
 րուս մէկը չգիտցողը կը կարծէ թէ երկու լեզուով  
 ալ ըսա ամենայնի միևնոյն բանն է գրածը : Աւստի  
 այս խօսքիս մէջ երկու լեզուաց տարբերութիւնը  
 քիչ և աննշան ալ էնէ՝ Ալաւնոսի հայերէնն ալ  
 հոս կընէմք : Եւ է այս : Ուոյ ազագաւ հարկաւոր  
 ,, համարեմք , զի Հայոց եկեղեցին հրամայեցէ  
 ,, կամ ասել զայն աղօթման մի անգամ յառաջ քան



,, ջոց մը չգտնելով՝ որ գոյատևութիւնը որո-  
 ,, շիչ մէկ զարմանալի յայտարարութիւն մ' է ,  
 ,, այս բառերուս վրայէն ցտկկելու չգտնար ,  
 ,, վասնորի ասոնք իր ըրած սրբագրութեանը շատ  
 ,, չէն յարմարիր \* :

,, զարարեցութիւն անաւոր սուրբ բանիցն Քրիստ-  
 ,, տոսի . ըստ նմանութեան վերայգրեալ Թեանկ  
 ,, աղօթիցն . և կալ ոչ շատ ժեղ զնա 'ի տեղւոյն  
 ,, այլ նորոգել զբանն նորա և անել 'ի յայտագոյն  
 ,, ողջամիտ նանակութիւն : Եւ նորոգումն բանիցն  
 ,, լինէր ըստ այսմ օրինակիս . ինդրեմք 'ի քէն բա-  
 ,, րերաք Ստաւած : առաքնա՞ 'ի մեզ և յառաջի  
 ,, եղեալ ընծայս յայս զմշտնօրէնաւորակցքս և  
 ,, զհակից սուրբ Հոգիդ . և արա՞ . արդէս զի օրե-  
 ,, նեալ հագս այս՝ ճշմարիտ մարմին տեառնդ մերոյ  
 ,, և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի , և օրհնեալ բա-  
 ,, ժակս այս՝ ճշմարիտ մարմին և արիւն տեառնդ  
 ,, մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի . եղիցի աս-  
 ,, մենեցուն և մեզ մերձեցնուցս՝ զ'ի դասապար-  
 ,, տութիւն , այլ 'ի բաւութիւն և 'ի թողութիւն  
 ,, մեզաց՝ ( հատր . Գ . եր . 353 ) : Հայոց պատա-  
 ,, րագամտանոյ սրբագրելու ելլող մ' է այս անձանի  
 ,, քրարարը օ մէնեցնիցի հարք իրենց խորհրդաւարը  
 ,, այս կերպով խանդարած չեն . անանը ուրիշ կերպ  
 ,, է . բայց երանելի Լամբրոնացոյն պատարագի մէ-  
 ,, ճութեան մէջ այս մարտի ծանօթութիւն մը գրած  
 ,, են ( եր 395 ) :

\* Լրարեօն գանց ըրած է այն ալիքերէլու . որ  
 արքայն Յովնանու Ոսկեքերտանի պատարագամա-  
 տոյցին մէջ ալ կոչուան աղօթքին կարգը այս փոխ-

,, կերեւի որ այս անտեղութեանս դարման  
 ,, մատուցանել ուզուեր է կալանսանս սրբա-  
 ,, գրութենէն քախմը աստի ետքը :

Հոս Նարսեղ քահանայն սրբագրութեամբը  
 տպուած խորհրդատեսորին վրայօք վերը պատ-  
 մած անղեկութիւնիս կուտայ . եւ Արափել-  
 լեզղիին պատմածին նայելով՝ ինքն կաշանոս  
 ալ այն սրբագրութեանը մէջ մատուներ , գո-  
 նէ իրրեւ խորհրդատու : Ըսկէց ետքը լրարեօն  
 իր խօսքը շարունակելով կրէ :

,, Բայց Հոովմէական չեղող հայերն այս  
 ,, խորհրդատեսարէս բնաւ գոհ չեն , ինչպէս որ  
 ,, զանազան տեղերէ իմացայ . եւ ի՞նչ և բո-  
 ,, թականապէ՛ տպարանէն հրամանաւ տպուած  
 ,, կերեւի , ըսյց կերպապէս նոյնը արդարացր-  
 ,, նելու եւ վաւերացնելու նշան մը չուրի . եւ  
 ,, նշանակելու ամէնէն կարեւորն այն է՝ որ այս  
 ,, սրբագրութիւնները պատկին կամ Ժողովնե-  
 ,, րուն մշտնօրէն եղած չեն : Եւստի չեմ վախ-  
 ,, նար որ զիս յանդուգն սեպեմ թէ որ ըսեմ  
 ,, թէ կերեւի չք խորհրդատեսորին այսպէս եր-  
 ,, ւելի մէկ կարող փոխելու բնաւ իրաւունք  
 ,, չունիմք . որովհետեւ շատ չիս է . եւ ասով  
 ,, արեւելեան եկեղեցեաց խորհրդատեսորուն  
 ,, համաձայն է . եւ 'ի հասարակ չէ ըսելը թէ  
 ,, հաղորդութեան ձեւը՝ միայն այս է մարմն է-  
 ,, մը , եւ այլն , եղած ըլլայ . եւ ընդ հակառա-

ինչպէս չեմ սքսմ խօսքը բառ առ բառ կը գտնուի  
 վերալուօն քօ՛ բնէ մարտի սոս այլ օ :



1) կըն՝ աստն եւ երկու նախկին դարերուն եկե-  
 2) ղեցական մատենագիրներուն միաձայն վկայու-  
 3) թեան ընայելով՝ դոյափոխութիւնը մինակ սահ-  
 4) մանագրութեան խօսքերուն վրայ չկայանար .  
 5) կոչման աղօթքն ալ կուղէ : ( Բոցարու-Յիւն  
 աղօթից եւ արարողութեանց պարարտք . հար . Վ .  
 եր . 109 ) : Կալանոսի մտացածին սրբագրու-  
 թեան կերպովը կոչման աղօթքը մեկնած են ան-  
 կէց առաջ Բէսարիոն եւ Արկուդիոս . բայց Ռը-  
 նոսո կըսէ թէ ասոնց տուած մեկնութիւնը խա-  
 խուտէ : ( հասար . արեւել . պարարտք . հար . Բ .  
 եր . 92 . բար փո . Պրոնտօրք ) :

Ուրեմն այս խօսքին նայելով՝ որ Պօսիւէի  
 ըսածին ալ համաձայն է , մեր խորհրդատեարին  
 լտաին թարգմանն ալ անոր միտքը չէ հասկը-  
 ցած՝ կղէմէս կալանոս ալ . եւ մէկը սխալ հաս-  
 կըցեր եւ միւսն ալ անոր թելագրութեամբը  
 որպէս թէ շիտակ մաքի հասկցուելու կերպով  
 թարգմաներ) է նէ՝ մերազգի հիմակաւան Հռով-  
 մէական իմաստուններուն համար թնչ ըսենք՝  
 որ ասոնց որպէս թէ սրբագրածը՝ չէ թէ մի-  
 այն հայոց՝ այլ եւ բոլոր արեւելեան աղագ  
 ունեցածէն նախապատել սեպելով անիկոյ գործ-  
 կածեն : Վասնի՝ որ մեր ազգը քրիստոնէութեան  
 հետեւած է եւ եկեղեցիներ ունի՝ եւ նոյն ե-  
 կեղեցիներուն մէջ Աստուածային պաշտօն եւ  
 պատարագ կը մատչի , պատարագի ատեն կոչ-  
 ման աղօթքը արտոյն բառով զրուցուած է . եր-  
 բէք արտիւ բարը գործածուած չէ : Այնեակոյ

1) Ի թարեանց պատուելի վաթաւութիւնը որ  
 2) մեր նախնի հարցի եւ մատենագրաց գրքերը աը-  
 3) պելու աստենին հին օրինակներու կը հետեւին ,  
 4) եւ գրեթէ մէկ գիրն անգամ փոխելու խիղճ կը-  
 5) նեն , ինչո՞ւ համար խորհրդատեարին հին օրի-  
 6) նակներուն չեն համաձայնիր : Հռովմայ գահուն  
 7) դատաքննութեանէն վախալու բան չունին . անց-  
 8) եալ դարու մէջ Ռընոսո եւ Ալպրէօն եւ ներ-  
 9) կայ դարու մէջ Վարբէլէգրի կը վկայեն որ  
 10) այսպիսի փոփոխութիւն մ' անոր ընդունելի չէ .  
 11) ոչ հայրապետ մը եւ ոչ ժողով մ' այդպէս բան  
 12) մ' ընելու հրաման կամ հաւանութիւն տուած  
 13) չեն . Հայք միտքը ծուռ հասկնալով ժողորու-  
 14) թան մէջ կիսան կը կարծեն . այդ կարծիքն  
 15) ալ անտեղիք է . եւ բաւական էր առանց բնագիրը  
 16) փոխելու միտքը բացատրել , ինչպէս որ ըրին  
 17) է Յակոբ Վալեան պատրիարքը եւ Տէր Լաբարտե-  
 18) րանի եւ 1858ին կրօնական ժողովոյ հաւանու-  
 19) թեամբ ապուած քրիստոնէականին հեղինակնե-  
 20) րը . եւ անոնցմէ առաջ մեծն Խոսրով անձեւաց-  
 21) եաց նպիսկոպոսը՝ եւ սուրբն Ներսէս Աբրեւան-  
 22) ցին . որ իրենց պատարագի Կիւսիւն գրքերուն  
 23) մէջ թէպէտ ուրիշ կերպ բացատրութիւններով ,  
 24) բայց միշտ Տեառն մերոյ խօսքին տուածն փո-  
 25) խարկիչ հրաշալի զօրութիւնը : Այս հաւատքս  
 26) 'ի սկզբանէ հետէ՝ այնքան արմատացած է ազգի  
 27) մէջ , որ Աստին եկեղեցոյ ուրիշ բաներուն դէմ  
 28) խօսողները . որ ասոր վրայ ալ խորհրդատեարին  
 29) կոչման աղօթքը փոփոխ րէս բանելով կըրնա-



Վին հաւանակ խօսել, եւ փոխարկել զգորութիւնը միայն կոչման աղօթքին վրայ եւթագրել, եւ ոչ աէրուեսական բանին, այսու ամենայնիւ այդպէս բան մը չեն ընէր : Ըստ յստիսերուն ամէնուն տեղը բաւական թող ըլլայ Գրիգոր Տաթեացիին վկայութիւնը՝ որ հին ունեւորներուն սաստիկ թշնամի էր . եւ շատ տեղ, մանաւանդ հարցմանց գրքին մէջ՝ անոնց դէմ սաստկութեամբ կը խօսի : Եւ սակայն այս նիւթոյս գալով՝ բոլորովին լատին Եօտուածաբաններուն ըսածին համաձայն կը գտնեմք ասիկայ . եւ ահա՛ ասոր խօսքը :

« Հարց . քանի՞ են գոյացականք պատաս-  
 ,, բազին » :

« Գործարանի . ասէմք թէ չորս . զի թէ մի-  
 ,, նքն պակաս լինի՝ խորհուրդն ոչ կատարի :  
 ,, Երազին՝ քահանայն : Երկրորդ՝ տեսակ հա-  
 ,, ցին եւ գինւոյն : Երրորդ՝ գիտաւորութիւն  
 ,, օրհնողին : Չորրորդն, բանն Վրիստոսի որ  
 ,, ասէ . այս է մարմին իմ . այս է արիւն իմ : »  
 ( Կարգմանց . թ . 31 . երես . 597 ) : Եսկէց ա-  
 ,, ւելի ինչ կուզեն :

Աստի ի վերջէ սա կըսեմք . հոգի մէա-  
 կան իմաստուն հայերը եւ վարդապետներն այն  
 խանդարուած խորհրդատեարովը կը վարուին նէ՛  
 ուրիշ խօսք չունին արդարանալու, եթէ ոչ Ի-  
 րենց խօսքերովը կամ Իրենց նախորդներէն լը-  
 սածովնին նախապաշարեալ հայ ժողովրդոց՝ որ  
 այնքան մեծ բազմութիւն մ'ալ չեն . գայթակ-

ղութիւն չտալու համար կընեմք ըսեն : Իրենց  
 կէզներ մտածելը՝ որ ասանց իրաւանց գայթակ-  
 ղելու կողմը կարծեցեալ գայթակղութենէն զերծ  
 պահելու համար իրաւունք է տաւել բազմա-  
 թիւ մասին գայթակղութիւն տալ, երբ իրաւ-  
 ունքն ալ անոնց ձեռքէ է : Չեն կրնար արդ-  
 եօք ոյս բանիս համար ալ նոյնն ընել՝ ինչ որ  
 ուրիշ բաներու համար ըրին : Հայոց կէկեցեայն  
 հին ձեւերուն եւ ասուներնեւորուն դպելու՝ հը-  
 րովմ հրաւան չունի ընելով խորհրդատեարը  
 հին մարդութեանը վերածել : Եստ ասանկ չը-  
 նելով՝ Իրենց ժողովրդեան մէջ գտնուող գի-  
 տունները որ այսդպիս բաները կը տեսնեն, հա-  
 յոց հին հայրապետներուն ասանդութիւնը չեն  
 պահեր մեր կարգաւորները, եւ ուղղախառու-  
 թեան անունով մեզ լատինացիները եւ ազգու-  
 թիւննիս կորսնցունել կուզեն ըսելով կը գայ-  
 թակղին : Եստիսի գայթակղութիւններ կենայն  
 Իրենք ալ գիտեն . բայց բանն տեղ չեն դնէր  
 ոչ Իրենց ժողովրդեան իմաստուն եւ ընտիր մա-  
 սին՝ եւ ոչ ալ իրասարական հայ հասարակու-  
 թեան գայթակղութիւնը :

*[Faint handwritten text at the bottom of the page, likely bleed-through or marginal notes.]*



Այս սուրբ խորհրդոյս վրայ ալ էջմիածնա-  
 կան խնուանած եկեղեցւոյն դաւանութիւնը չը-  
 ուովմէական էն հիմնապէս տարբեր է եղեր . Ի՞նչ-  
 պէս : Այաշխարութիւնը եկեղեցւոյ խորհուրդ  
 չէ՞ կըսեն . ոչ . ասիկայ բողոքականութիւն է .  
 Այաստանեայց եկեղեցիէն շատ հեռու : Երդ-  
 օք սուրբ առաքելոյն՝ « փորձեացէ մտրդ զան-  
 ,, ձըն իւր եւ ապա՛ի հացէ անտի կերիցէ ,, պատ-  
 ուէրին գեմ խորհրդոյս գործադրութեանը զան-  
 ցառութիւն կընեն , եւ իբրեւ պաշտօնեայ կամ  
 իբրեւ հաղորդելի՛ ահաւոր սրբութեան մերձե-  
 ցած ատեննին առանց ապաշխարութեան խորհուր-  
 դըն ընդունելու կը գտնուին . այս ալ չէ . մեր  
 մէջ այդպէս բան մ՛ ամենեւին տեսնուած չէ .  
 եւ այն զիւղերն անգամ՝ որոց բնակիչ հայ ժո-  
 շղովորդը քիչ ըլլալուն համար միայն մէկ հա-  
 տիկ քահանայ կը գտնուի , այն ալ պատարագ  
 մատուցանելէն օր մ՛ առաջ քահանայ գտնուած  
 մտաւոր երկիր մը կերթայ . կը խօստովանի . եւ  
 անկէջ ետքը սուրբ պատարագ կը մատուցանէ .  
 իսկ աշխարհականները երբէք առանց խոստովա-  
 նութեան եւ ապաշխարութեան չեն հաղորդիր :  
 Այնպէս տարբերութեանց նրբազնին հեղինակին  
 գտածը ատենց մէկն ալ չըլլալով՝ դիտնալը հե-  
 տաբրբական բան մ է .

1847ին ապուած քրիստոնէականի մէջ՝  
 որ 1843 տարուածին վրայ շինուած է , սա հարց  
 պատասխանը գրեր է :

« 1 . մեղաւորը միայն այսքանով ( խոս-  
 ,, տովանութեամբ , զղջումով , եւ մեղքէ դու-  
 ,, շանալու յատուկ դիտաւորութեամբ եւ ա-  
 ,, պաշխարութեան գործերը կատարելով ) Աս-  
 ,, տուծոյ հետ կը հաշտուի՞ , եւ արքայութեանը  
 ,, ժառանգ կըլլայ՞ »

« 2 . որովհետեւ մեզօք Քրիստոսի  
 ,, արդարութեանը հաղորդ ըլլալէ զրկուած է .  
 ,, սւտի պէտք է որ ապաշխարելէն ետքը Քրիս-  
 ,, տոսի մարմինն եւ արիւնն առնելով նորէն Քր-  
 ,, իստոսի շնորհացը հաղորդ ըլլայ , եւ առա-  
 ,, ջին սրբութիւնն ստանայ . . . եւ ասոնք ընե-  
 ,, լով եկեղեցւոյ հետ միացեալ կը մնայ ,,  
 ( Եր . 16 ) .

Ասոր վրայ վերապատուելի հեղինակը կը-  
 սէ . « բաւորովին նոր վարդապետութիւն : Աւ-  
 ,, ընմն մեղաւորը զղջալէն աւ խոստովանութեան  
 ,, խորհրդական արձակումէն ետքը Աստուծոյ  
 ,, հետ դեռ կատարելապէս հաշտուած չէ . Քը-  
 ,, իստոսի արդարութեան հաղորդ , շնորհաց ար-  
 ,, ժանի եղած չէ . եւ վերջապէս եկեղեցւոյ կեն-  
 ,, դանի անգամ եղած չէ . առամէն բանը՝ խոր-  
 ,, հրդական արձակումէն ետքը Քրիստոսի մար-  
 ,, մինն ու արիւնն առնելէն ետքը պիտի ըլ-  
 ,, լայ . , , ( էր . 319 ) ,

Քրիստոնէականին հեղինակ էք ըսածին հաս-







Թեանցք ինչ յարգութիւն տալերնին՝ իրենց հոովմէական փախուկ խղճմասնքին ձգելով\* մենք Հոովմայ մէկ ուրիշ եւ աւելի հնազոյն հայրապետի մը ըսածը տեսնենք. որ իրմէ ալ հին՝ եւ հոովմէական եկեղեցւոյ մէջ տօնելի եւ մեր եկեղեցւոյ մէջ ալ յիշատակելի սուրբ վարդապետի մը վարդապետութիւնը կը կրկնէ. Ասկէց 800 տարիի չափառաջ՝ Վրիգոր Է. Հոովմայ հայրապետը Թոսկանայի Մաթիլտէ իշխանուհիին այսպէս կգրէր :

« Տէս ինչ կըսէ սուրբն Մարտիրոս յազգոս ,  
 « Խոյհրոջոց մատնին չորրորդ գրքին մէջ . Տես-  
 « ռն մահը պատմելով՝ մեղաց թողութիւն կը  
 « պատմենք : Ը՛մէն անգամ որ տէրունական ար-  
 « իւնը կը հեղանի՝ մեղաց թողութեան համար  
 « է . միշտ ընդունելու եմք . որպէս զի միշտ  
 « մեղքերնուս թողութիւն ըլլայ : Միշտ մե-  
 « ղանչեղնուս համար դեղն ալ միշտ անելու եմք .  
 « Վոյնս սուրբը նոյն յաղագս խորհրդոյ մատե-  
 « նին հինգերորդ գրքին մէջ կըսէ . Թէ որ հա-  
 « նապազորդեան հաց է նէ ասիկայ՝ ինչու արեւելք  
 « Յունաց սովորութիւն ըրածին պէտարեզլ-  
 « խին կառնու : Ը՛մէն որ հազորդուէ՝ որ ամէն

\* Ըսած եմք , ե մեզի հաւանական կերեւի . բայց ստուգութեան երտշիտուոր չեմք . որպէս թէ բոբջակատոյի աշակերտ հայազգի հոովմէական կարգաւոր մը ըսած ըլլայ իր ժողովքդէն մէկին . Թէ որ ոչ ոք ալ հայոց եկեղեցւոյն համար ուղղափառ է ըսէ նէ չեմք ընդ սուրբ :

« քեզի օգուտ ընէ . այնպէս վարուէ որ ա-  
 « մէն օր հազորդուելու արժանաւորութիւն օւ-  
 « նենաս » ( Գր . Ա . նամակ . 47 ) : Ասորեւլը  
 թէ սուրբ վարդապետը եւ անոր խօսքը կրկնող հայրապետը՝ որ զայն ալ Հոովմայ եկեղեցին սրբոց՝ կարգն անցուցած է , առանց խօստովանելու եւ ապաշխարելու լոկ հազորդութիւն առնելու հրաման կուտան , տնտեղի է . այլ մեղաց թողութիւն ստանալը կատարեալ ընող խորհրդոյն յաճախ մերձենալ ապրսպրբելով՝ ինքնին կիմացուի որ անոր սկզբնաւորութիւնն եղող խոստովանութեան եւ ապաշխարութեան խորհրդոյն ալ յաճախեն . եւ ասոնցմով իրենց մեղացն արձակում առնելէն ետքը սուրբ հազորդութիւնն ընդունին :

Թէ որ քրիստոնէականին ըսածը նոր վարդապետութեան է նէ՝ տակաւին մոլորական կամ անմոլար ըլլալուն վրայ վճիռ մ՝ եղած պիտի չըլլայ \* . եւ ինքն ինչ իրաւամբ մոլորական ըլլալ կը դատէ : Եւ յիշուի հայոց վրայ ձգուած մոլորութիւններուն կարգն այդպէս բան մը տեսնուած չէ . որ յայտնապէս ասիկայ ըսող չը-

\* Նոր վարդապետութիւն մը մոլորական կըլլայ՝ երբ եկեղեցւոյ նախնի աւանդութեանը կերպապէս կամ յայտնե կերպով հակառակ կըլլայ : Այս օր ըլլայ նէ . նոր ըլլալէն հոլորական ըլլալ չը հետեւի : Իմաստուն մեկնիչներն ամեն ասեմ սուրբ գրոց խօսքերուն նոքմե կնուութիւններ կուտան . որ պարտաւ ելի ըլլալէն զատ ընդունելիալ են :



կար ալ նէ՛ որ անհիմն կարծիք մ' է , գործա-  
դրութեան մէջ միշտ տեսնուածն այն էր . եւ  
հայոց բամբաստողներն անոնց սովորութիւններն  
ալ երբիրենց մոլորական երեւէր նէ՛ գրի կառ-  
նէին . Ալ որ աւելի նշանակութեան ար-  
ժանի է , նոյն իսկ հեղինակը՝ որ պէտք չեղած  
տեղերն ալ Փլորենտեան եւ Տրիդենտեան , եւ  
ժողովք չը գտած տեղը Տրուդեան ժողովքէն ան-  
գամ վկայութիւն կը բերէր . քրիստոնէակա-  
նին այս խօսքը մոլորութիւն ըլլալը ցուցնե-  
լու համար այսպիսի բան մը չունի . Տրուդեան  
ժողովն ալ համր եղէր է . եւ անոր օգնութեան  
հասնելու անկարող : Ասիկայ առարկելիքնս գու-  
շակած կերելի խոհական հեղինակը , որ քաւ-  
րովն նոյ վարդապետութիւն կանուանէ . որով  
գիւրին կըլլայ պատասխանելը , թէ նոյ ըլլա-  
լով հին ժողովքները չգիտէին որ բան մ' ալ  
ասոր դէմ ըսէին . նոյով մ' ալ ասոր կարգին :  
Եւ յոյ բանը նորութեան գոյնէ վերը ցուցու-  
ցի . Ի սովորութեան այդ բանը մեր ազգին  
մէջ շատ հին է . եւ նորութեանը շնորհում մը  
ընենք ալ նէ՛ բանը կըմընայ մաշ վարդապե-  
տութիւն ըլլալն ստուգելուն վրայ : Ալ ու-  
րով հետեւ նորութեան ու մոլորութեան ամէն ատեն  
մէկ տեղ չեն ըլլար ինչպէս որ տեսար , եւ հե-  
ղինակին ըսածն ալ մեր ազգին սովորութեան  
նկատմամբ նոր է . ուստի մենք անոր ըսածն ա-  
մենայն իրաւարար իր վրայ կըրնանք դարձնել :  
Թե՛ ո՛ր ինչպէս ինքը կըսէ , ապաշխարողը

Թե՛ որ՝ ինչպէս ինքը կըսէ , ապաշխարողը  
խորհրդական արձակումէն ետքը Առաւօժոյ հետ  
կատարելապէս հաշտուած է , եւ Վրիստոսի ար-  
դարութեան հաղորդ՝ եւ շնորհացն արժանի եւ-  
ղած է , եւ եկեղեցւոյ կենդանի անդամ է , սուրբ  
հաղորդութիւն ընդունելու պէտք մը չը մնար .  
եւ ո՛ր կը մնայ այն ատենը Տեսան մերոյ ըսա-  
ծը . « Եթէ ոչ կերելիք զմարմին որդւոյ մար-  
ոյդն եւ արքջիք զարիւն նորայ՝ ոչ ունիք կեա-  
նըս յանձինս » (Յ՛ն . Չ . 54) : Տէրն մեր  
այդպէս ըսելէն ետքը վերապատուելի հեղինակ-  
ը ինչո՛ւ կը փակել ըսելէն թէ ապաշխարողը  
խորհրդական արձակումն անուէլէն ետքն ալ տե-  
րունական մարմնոյ եւ արեան հաղորդ չըլլայ  
նէ՛ եկեղեցւոյ կենդանի անդամ չըլլար : Իր մէջ  
կեանք չունեցող կենդանի՝ բոլորովն նոր գիււ-  
մ' է . եւ ոչ միայն նոր՝ այլ եւ անանկ բան մը  
որ զինքը ջնջող հակասութիւնն իր մէջ կըկրէ :  
Այս ան զի՛ թէ որ մեղօք մարդս հոգեւորապէս  
կը մեռնի , կամ հոգւոյ ծանր հիւանդութեան  
մէջ կիյնայ , եւ Տէրն մեր՝ իւր մարմինն ու ար-  
իւնը ճաշակողներուն համար՝ կեանքն իրենց մէջ  
պիտի ունենան կըսէ , ուրեմն՝ հոգեւորապէս  
կենդանանալու կամ առողջութիւնը գտնելու  
համար կենդանարար խորհրդոյն ճաշակումը հար-  
կուոր է : Եւ այց ասով չկարծուի թէ մեծոյ այս  
խօսքերովս այս երկու խորհուրդս իւրեւ մէկ  
ցուցնել կուզեմք . զատ զատ խորհուրդ են ա-  
մէնմէկը յիւրում կարգի . ըսյց երկուքն ալ



իրարու պէտք են . ինչպէս մկրտութիւն եւ դրոշմ  
եւ հաղորդութիւն զատ խորհուրդ են . քայց ես  
մկրտուած եմ եւ այնքանը կօզտէ ըսելով միւս  
երկու խորհուրդներէն հրաժարիլ չկընար ըլլալ :

Գարձեալ . քահանայն խորհրդական արձա-  
կումը սա՛ խօսքերովս կուտայ . « ես կարգաւօ քա-  
» հանայական իշխանութեամբ եւ հրամանաւն  
» աստուածային՝ թէ զոր արձակեցէր յերկրի՝ եւ  
» զիցի արձակեալ յերկինս . նովին բանիւն ար-  
» ձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մե-  
» ղաց . ՚ի խորհրդոց ՚ի բանից եւ ՚ի դործոց . եւ  
» դարձեալ դա՛մ գէեղ ՚ի խորհուրդս որո՛ք էիւղեցայ » .  
եւ այլն : Արգ՝ արձակումով եկեղեցոյ խորհուրդ-  
ներն ընդունելու կարող մարդ մը ինչո՞ւ համար  
պիտի չընդունի . եւ առած կարողութեանը կա-  
տարումն այն կարողութիւնը սասանալուն լրու-  
մը եւ կատարումը չէ՞ մի . եւ այս նիւթոյս վրայ  
չառովմէական եկեղեցին ի՞նչ կըսէ որ հայոց ե-  
կեղեցիէն հիմնապէս տարբեր ըլլայ :

Խոստովանող անձիմը՝ եկեղեցւոց խորհուրդ-  
ներն ընդունելու կարողութիւն առնելէն ետքը  
անոնցմէ հրաժարելուն երեք բան կրնան պատ-  
ճառ ըլլալ , կամ նիւթական անհնարութիւն , որ  
զինքը խոստովանցնող քահանայն նիւթոյ կամ  
ուրիշ կերպ պակասութեան համար չկըզնմմպատ-  
տարաբեւ . կամ խոստովանորդի ին խօստովա-  
նչօրը տուած պատուէրներն ու ապաշխարու-  
թեան գործերը կատարեալ տեղը տարած չըլլա-  
լով՝ որով ազաշխարութեան խորհուրդն անկ-

տար կըմնայ , քահանայն չհրամայեր անոր որ հա-  
ղորդի . կամ խոստովանորդին ինքնայօժար կա-  
կամօք հաղորդուելէ կը հրաժարուի : Այն ատե-  
նը քահանայն կը պարտաւորի անոր հրաժարե-  
լուն պատճառը հարցնելու , թէ՛ որ շաբաթը  
կամ տասն եւ հինգ օրն անգամ մը սովորու-  
թիւն ունի խոստովանելու , եւ պառաւական կար-  
ծեօք միտքը դըրած է որ մէկ անգամ մը հա-  
ղորդուելէն քառասուն օր անցնելու է որ մէկ  
մա՛լ հաղորդի . քահանային պարտքն է՝ հին ժա-  
մանակի հաւատացելոց ամէն օր հաղորդուիլը  
օրինակ բերելով՝ այդպիսի խտրութեան եւ օր  
համրելուն սնոտի եւ անտեղի բան ըլլալը հաս-  
կըցնել , եւ անոր միտքը եւ երկչոտ խղճմը՝  
տանքը բժշկել : Ուրիշ ինչ պատճառ ցուցնէ՞  
նէ՛ քահանային առիթ կուտայ անոր խղճմտա-  
նաց խորը թախանցելու . եւ մտքի հիւանդու-  
թիւն կամ տկարութիւն մը ունենալը կըռահէ  
նէ՛ անոր պատշաճ դեղը տալու . եւ այն քա-  
հանանքը՝ որ սուրբ հաղորդութիւնն ապաշխա-  
րութեան լրումն չեն ճաչնար այս կարեւոր ա-  
ռիթս չեն կրնար ունենալ , եւ յօ՞րհանական ըսած  
եկեղեցւոյն քահանայները այս քննութիւնս ը-  
նելու դիւրութիւն կուենան . որով այս մասին  
իլևեց հոգեւոր պարտականութիւնն ըստ պատ-  
շաճի կատարելու՝ մեր վերապատուելոյն կար-  
ծիքն ունեցող քահանայներէն աւելի յարմար  
կըլլան որոնք խոստովանողը սուրբ հաղորդու-  
թեան չհրաւիրելով՝ այդպիսի բաներ չեն կըր-



նար իմ անալ . Ժողովրդին խիղճն ալ Հիւանդ կը-  
 ճայ : Խոստովանողներէն ոմանք ալ գիտնալով  
 որ սուրբ Հաղորդութիւն ընդունողը նոյն սուրբ  
 խորհրդոյն յարգը պահելու համար քանի մի օր  
 արտաքոյ կարդի զգուշութիւններ ընելու է , զորս  
 ազդային եւ տեղական սովորութիւններն իրեն  
 կը սորվեցընեն , այս զգուշութիւններս իրեն  
 ծանր գալով հաղորդուելէն կը հրաժարի , որ-  
 պէս զի այն զգուշութիւններն ընելու չպար-  
 տաւորի . բսել է որ իր կամքն ու յօժարութիւնը  
 սուրբ խորհուրէն աւելի կը յարգէ : Աը հար-  
 ցընեմք , այդպէս պատճառի մի համար հաղոր-  
 դութենէ հրաժարիլն անմեղադիր ձգելու է .  
 եւ ամէն ատեն խոստովանելէն ետքը հաղորդել  
 պէտք է ըսող քրիստոնէականին խօսքը կաթու-  
 ղիկէ եկեղեցւոյ դաւանութենէն տարբեր եւ  
 մոլորական ցուցընելով եւ պատարակելով այդ-  
 պիսիներուն մարմնասիրութեան եւ հեշտասիրու-  
 թեան նպատակն աղակ ըմն է մի : Այնքապէս  
 ասիկայ բարոյական աստուածաբանութեան վե-  
 րաբերեալ խնդիր մ'է : որ դաւանութեան կամ  
 հաւատոյ վարդապետութեան չվերաբերիր , ո-  
 րով յիրաւի մտք եւ ամբաստնք խնդիր մ'ըլլա-  
 լով . զոր միայն պարսաւասիրաց խոշորացոյցը  
 կըրնայ նշմարել , այսքան խօսիլ ալ չեր արժեր :

Արի խնդիր մ'ալ կը յարցունէ քրիստոնէ-  
 ականներու վերապատուելի քննիչը 1858ին տըս-  
 ուած քրիստոնէականին դէմ : Ըստր մէջ սա  
 հարց պատասխանը կայ :

« 1 . Թէ որ ( խոստովանութեան մէջ )  
 ,, մոռցածը գտնուի նէ՛ խոստովանութիւնն ան-  
 ,, կատար կըլլայ ,, :

« 2 . Գ . չէ . անոնց ալ թողութիւն կը գրա-  
 ջ , նէ . բայց այս պայմանով՝ որ ետքը միտքն  
 ,, եկած ատենը խոստովանի . վասն զի այն ա-  
 ,, տենը չը խոստովանի նէ՛ այն մեղքը խոստովա-  
 ,, նածներուն կարգէն ելլելով՝ թողութիւն ալ  
 ,, չը գտնեիր ,, : ( եր . 35 ) :

Ըստր վրայ խնաստուն քննիչը սա գիտողու-  
 թիւնը կընէ : « ոչ երբէք ասանկ պայմանաւ թո-  
 ,, ղութիւն կուտայ Ըստուած , եւ ոչ ալ մէկ  
 ,, անգամ թողուած եւ ընջուած մեղքը հետա-  
 ,, գայ մեղքով նորէն ետ կը դառնայ կամ կը-  
 ,, կենդանանայ Ըստուծոյ անզեղը շնորհացն առ-  
 ,, ջեւ ,, . ( երե . 321 ) :

Ճշգիւ խօսելով՝ այս գիտողութիւնը քը-  
 ռիստոնէականին ըսածին համապատասխանող քան  
 մը չըլլալուն համար կերեւի թէ վերապատուե-  
 լի հեղինակն ասիկայ միայն ամբաստանութեանց  
 համբանքը շատցնելու համար գրած է : Քրիս-  
 տոնէականը չըսէր թէ մէկը խոստովանած մեղ-  
 քերուն թողութիւն գրտնելէն ետքը ստիչ մեղք  
 մը դործէ նէ առաջու գործած մեղքերը ետ կը  
 դառնան կամ կը կենդանանան . թէպէտ այդ-  
 պէս ըսողները սուրբ Յովհաննու աւետարան-  
 չին վախճանին պատմութենէն՝ որ էր ընդ եւ-  
 քուս բառերով կըսկըսի . կըրնան սա խօսքս ի-  
 րենց հաստատութիւն բրննել . « թէ ոչ եւս



,, մեղիցէք զոր յանդիտութեանն գործեցէք՝ թող-  
 ,, ցէ ձեզ Մատուած աղատեալ եւ գիտացեալ զնա ,  
 ,, եւ ՚ի նմանէ ողորմութիւն գտեալ՝ եւ նոյնպէս  
 ,, վարիք . եւ զառաջնսն եւս համարեսցի ձեզ ,, :  
 ( համար . 9 . ) : Մեր քրիստոնէականը կը ըսէ  
 որ՝ մեղք մը մոռցուած ըլլայ նէ՝ քանի որ մո-  
 աացութեան վիճակի մէջ է . որով նոյնը խոստո-  
 վանելու անհնարութիւն կայ՝ թողութիւն կը  
 գտնէ . բայց երբ որ միտքը գայ եւ չխոստովա-  
 նի՝ մոռցուած ըլլալուն վիճակէն ելլելով թո-  
 ղութիւն գտածներուն կարգէն ալ կեկէ, որոց  
 կարգը մոռցունողը՝ միայն մոռցութիւնն է . եւ  
 ձեռնայն մեղքը՝ որ մոռցուած ըլլալով թողու-  
 թիւն գտաւ . մեղուցելոյն միտքը գալով կը կեն-  
 դանանայ . ետ կը դառնայ . եւ մեղուցեալն ա-  
 նիկայ ալ խոստովանելու կը պարտաւորի : Վը-  
 քրիստոնէականին մէջ ոչ նաև մեղքի խօսք կայ այս  
 խօսքերուն կարգը , եւ ոչ սբէշ մեղքի : Աստի  
 մենք քրիստոնէականին խօսքին այս բայտարու-  
 թիւնս տալէն եւ վերապատուելի քննիչին խոր-  
 ջորգածութիւնը բնաւ անոր չը վերաբերիլը ցու-  
 ցընելէն ետքը չէինք պարտաւորիր քրիստոնէա-  
 կանին ըսածն արգարացնելու . բայց որովհետեւ  
 եկեակոս որբէրութեանց հեղինակն ասոր վրայ ամ-  
 բաստանութիւն յարուցած ըլլալով՝ քրիստոնէա-  
 կանին միտքը հասկըցողներն ալ կըրնան կարծել  
 թէ ձանոր մէջ մոլորական իմաստ մը կպարունակի՝  
 զոր վերապատուելի քննիչը չէ կարողացեր բա-  
 ցատրելու այնպիսեաց մտքէն դայթակղութեան

մնացորդը վերցընելու համար հարկ սեպեցինք քը-  
 րիստոնէականին ձիշտ միտքը զոր բայտարեցինք՝  
 պաշտպանել :

Խոստովանութիւնը կատարեալ ըլլալու հա-  
 մար պէտք է որ խոստովանողն իր ամէն մեղքե-  
 րը մէկ մէկ խոստովանի քահանային . ըսենք թէ  
 մեղքերուն մէկը չկըրցաւ խոստովանած ատե-  
 նը յիշել . որով եւ չխոստովանեցաւ . այն խոս-  
 տովանութիւնը թէպէտ քարոյսակէ կատարեալ է .  
 որ միտքն եկածներէն բան չպահց . եւ թէ որ  
 այն մէկ հատը մոռցած չըլլար նէ այն ալ պիտի  
 խոստովանէր , բայց նիւթակէս կըրնայ արդեօք  
 կատարեալ ըսուիլ . այսինքն՝ իր ամէն մեղքերն՝  
 առանց բայտարութեան՝ խոստովանած կըրնայ սե-  
 պուիլ : Մարդ չկըրնար անիկայ նիւթակէս կա-  
 տարեալ սեպել . ապաթէ ոչ՝ հակասութիւն կեկ-  
 լայ եւ ըսել կըլլայ , Ա — 1 = Ա : Այսինքն՝  
 մեղքին մէկը պակաս զրուցելը , ամէն մեղքերն  
 անպակաս եւ մէկ հատ մ'ալ դուս չձգելով զրու-  
 ցելուն հաւատար :

Մոռցուած մեղքերը միտք եկած ատենը խոս-  
 տովանելու պարտականութեան վրայօք Մատին  
 բարոյադեատ աստուածաբաններուն մէջ տարածայ-  
 նութիւն կայ . բայց այն ալ մեր ըսածին չը  
 վերաբերիր : Ասոնց մէջ՝ զատկակտն հաղորդու-  
 թիւնը քրիստոնէական պարտաւորութիւն մ'ալ  
 ըլլով՝ խոստովանութեամբ հաղորդութեան պատ-  
 րաստուելին ալ նոյն պարտաւորութեան մէկ մա-  
 սըն է , եւ ամէն մարդ թէպէտ երբ որ ուզէ նէ



աղատ է խոստովանելու . բայց տարին անգամ  
 մը՝ զատկին մօտերը՝ պարտաւորեալ է ըստ որում  
 քրիստոնեայ : Արդ՝ ենդատրելով որ մէկ մարդ  
 մը որ զատկէն ուրիշ ժամանակ խոստովանելու սո-  
 վորութիւն չունի , խոստովանութեան ատենը  
 մէկ մեղք մը մոռցած ըլլայ . եւ զատկական հա-  
 զորդութիւնն ընելէն ետքը յիշէ նէ՝ կպարտա-  
 ւորի՞ արդեօք միւս գատկին շոսպատելով խոս-  
 տովանելու կամ թէ կըրնայ միպապահովութեամբ  
 խոստովանութիւնը միւս գատկին ձգել : Ամանք  
 կըսեն թէ մեղուցեալը մոռցած մեղքը միտքն ե-  
 կած ժամանակը խոստովանելու է . ուրիշները  
 կըսեն թէ միւս գատկին ձգելու է : Աքարացցա  
 բարոյագէտ աստուածաբանը իրեն խընչի ճոսպ գիտ-  
 տանոց քառարան մակագրեալ գրքին մէջ այս խընդ-  
 րոյս վրայ խօսելով ( Ի քառն , խոստովանութիւն ,  
 Գիտաձ , 11 ) , կըսէ թէ , կան մեծանուն եւ  
 իմաստուն աստուածաբաններ՝ որ մոռցուած մեղ-  
 քերը միտք եկածին պէս խոստովանելու պարտա-  
 ւորութիւն չեն ճանչնար . որովհետեւ զատկէ  
 զատիկ կատարեալ խոստովանելու պատուէրը  
 1) կատարելու համար ամէն պէտք եղածներն ը-  
 2) բաւ . նոյն տարւոյ ընթացքին մէջ գործած մեղ-  
 3) քերը որքան ծիշտ քննութեամբ յիշեց նէ խոս-  
 4) տովանեցաւ . եւ կրնանք հաւանականաբար սե-  
 5) պելու թէ՛ չէ թէ միայն խոստովանած , այլ նա՞  
 6) եւ իր կողմէն յանձանք չըլլալով մոռցած մեղ-  
 7) քերուն ալ թողութիւն եւ արձակում առաւ :  
 8) Աւրեմն թէպէտ ըստ աստուծոյն հրամանի եւ խոս-

1) տովանութեան կատարելութեանը համար այն ալ խոստու-  
 2) վանելու կը պարտաւորի , բայց եկեղեցւոյ հրա-  
 3) մանը կատարելու համար , զոր արդէն ըստ  
 4) բաւականին կատարած է , պարէն լընտէն առա-  
 5) նորէն խոստովանելու հարկ չկայ :

Աքարացցա այս հեղինակներէս ասով կը  
 տարբերի որ աւելի պատշով կսեպէ տարւոյն վեր-  
 ջանալուն եւ միւս տարուան զատկին դալուն չըս-  
 պատելը . եւ միտքն եկած ատենը խոստովանելը :  
 Հարկ չէ՝ որ խոստովանութեան պարտաւորութիւ-  
 նը կատրած զատիկը քանի մի օր կամ ամիս մը կամ  
 աւելի ժամանակ անցած ըլլայ : Արդեւ կողման  
 պաշտպաններն ալ միպպէս կըսեն թէ մոռցուած  
 մեղքը միտքը դալէն ետքը խոստովանելու պար-  
 տականութիւնը յաստուածային օրինաց է . եւ  
 խորհրդոյն ամբողջութիւնն ալ նոյնը կը պահան-  
 ջէ . տարբերութիւնը միայն մոռցուածը միտք  
 դալէն ետքը խոստովանելու ժամանակին վրայ  
 կը մնայ :

Ասոնց քով երբորդ կարծիք մ'ալ կըրնայ սեպ-  
 ուիլ յիշեալ Հայ քրիստոնեականին հակառակ  
 կարծիք . այսինքն . խոստովանութեան ատենը  
 մոռցուած մեղք մը խոստովանելէն ետքը միտքը  
 դայ նէ , անիկայ ոչ զատկին եւ ոչ ուրիշ ժա-  
 մանակ խոստովանելու պարտականութիւն չը-  
 կայ կարծելը . վերապատուելի հեղինակը թէպէտ  
 քրիստոնեականին հակառակ ելած է , բայց ինչ-  
 պէս որ վերն ըսինք , անոր միտքը հասկըցած  
 չէ . սպա թէ ոչ՝ աղէկ գիտեմք որ չէր հակա-



ուսկեր, եւ շեր կըրնար ալ առանց դինքը Հոռով-  
 մէական եկեղեցւոյ դատապարտութեան ներքին  
 ձգելու: Աղէքսանդր: Հոռովայ հայրապետին  
 դատապարտած նախորդսու թիւներուն յԱ՛, եր-  
 րորդն է այս. « խոստովանութեան մէջ պանց առ-  
 », նուած կամ մոռացած մեղքերը՝ կենաց վտանգ  
 », կամ ուրիշ պատճառ ըլլայ ալ նէ՝ անկէց ետ-  
 », քր խոստովանած ժամանակնիս խոստովանելու  
 », չեմք պարտաւորիր: Այս մտորական եւ դա-  
 տապարտեալ նախադասութեան ուղղակի հակա-  
 սակն է մեր քրիստոնէականին ըսածը. ուստի  
 Հոռովմէական աստուածաբանութեան հմուտ մարդ  
 մը՝ ինչպէս ըլլալ կը կարծեմք հիմնական դարձեալ-  
 թեաց վերապատուելի հեղինակը. քրիստոնէակա-  
 նին խօսքին հակառակը պիտի չկրնայ խօսիլ. ուս-  
 տի իր հաճութեամբը՝ այս ալ հիմնական դարձե-  
 ղանանց կարգէն դուրս կը հանեմք:

Ս՛ եր քնթերցողներուն աւելի տեղեկութիւն  
 տալու համար սա՛ ալ աւելցնելը պատշաճ կը-  
 դատեմք, որ լսողը աստուածաբանները կըսեն  
 թէ՛ խոստովանութեամբ մեղքերը կը ջնջուին.  
 թայց արատը կը մնայ. որ ապաշխարութեամբ կը  
 ջնջուի: Արդ՝ սեպեք թէ մոռցուած մեղքը խոս-  
 տովանուածներուն պէս բողոքովին ջնջուցաւ,  
 արատը երբ կը ջնջուի. երբ անոր համապատաս-  
 խանող ապաշխարութեան գործ մը չէ ըրած: Ա-  
 սենք թէ՛ մէկը քանի մի մարդոց մէջ մէկ ուրի-  
 շը քամբասեր էր. եւ ետքը անիկայ թանի տեղ  
 գրած չըլլալով՝ խոստովանութեան ատենը քա-

հանայն ըսելու մոռցեր է. վասն զի սովորաբար  
 բանի տեղ չդրուած մեղքերն են որ կը մոռցուին.  
 Եւ այս մեղքս իրեն յատուկ վճարք կամ ա-  
 պաշխարական գործ ունի՝ զոր հարկաւ ընելու  
 է. որի՛ առաջն որ մէկը բանբասելով անունն աւ-  
 րեց նէ՛՝ դարձեալ անոր կամ անոնց առաջը նոյ-  
 նը շիտկելու եւ պատիւը տեղը բերելու կը պար-  
 տաւորի: Խոստովանած ատենը քահանայն ա-  
 նոր այս պարտականութիւնն պիտի իմացընէր՝ եւ  
 ըստ այսմ պատուէր պիտի տար եւ ապաշխարանք  
 դնէր: Խոստովանողը մոռցաւ եւ խոստովանե-  
 ցաւ. ուստի եւ անանկ պատուէր մ'ալ իրեն  
 տուող չեղաւ. անոր մոռնալովը՝ անունը կոտ-  
 րած քմարդուն համբաւը շիտկուած եւ պատիւը  
 տեղն եկած կըլլայ արդեօք: Ասոր այսպէս ըլ-  
 լալը չէ՛ թէ միայն խոստովանահայր քահանայ-  
 ները, այլ եւ խղճմտանքի տէր հասարակ ժո-  
 դովրդն ալ գիտէ. ուստի խօսքիս վերջ տալով  
 կըսեմք. մոռցուած մեղքերը թողութիւն կը  
 գտնեն. թայց միտք եկած ատենը խոստովանե-  
 լու եւ ապաշխարութեանն ընդունելու պայմա-  
 նով:



Կարգ • կամ ձեռնադրութիւն •

Այս գլխոյն մէջ խօսելիքներէս առաջ՝ նոր  
 տուած մէկ տեղեկութիւննիս հարկ կը սեպեմ  
 մեր յարգի ընդերցողոց ծանուցանել • եւ է  
 այս • հիմնական փոքրօրէնաց զերբը ինչպէս որ  
 վերապատուելի հեղինակին գրչէն ելած է նէ  
 այնպէս տպուած չէ • այլ ինքը ձեռագիրը լը-  
 մընցնելէն ետքը իւր վանքը երգալ պէտք ըլ-  
 լալով՝ գրածը մայրաքաղաքս թողէր է որ տըպ-  
 ուի • եւ հոս քանի մի փոփոխութիւններ կրած  
 է օտար գրչէ • որոց ամէնէն նշանաւորը այս գըլ-  
 խոյս մէջն է • զոր նոյն իսկ հեղինակն ալ՝ զերբը  
 տպուելէն եւ ծախու հասնելէն ետքը տեսնելով՝  
 ձեռքը հասած օրինակներուն մէջ ձեռագրով խօս-  
 քը իր բուն իմաստին դարձուցած է • ըսել է որ  
 ուրիշի մը ըրած սխալը ինքը սրբագրած է • եւ  
 մեր քով երկու օրինակէն ալ կայ • այսինքն՝ նախ-  
 նակին խարդախեալ տպագրութիւնէն ալ՝ հեղի-  
 նակին ձեռագրովը սրբագրածէն ալ • Մենք այս  
 տեղ երկու տեսակ իրարու հակառակ գրուած-  
 ներն գնեմք •

Նախնական տպագրութիւն • « Երբէք չի կըր-  
 նար քոյն-էլան տրամադրութիւնը՝ որն որ երկ-  
 րի մի կամ տէրութեան մը կամ ազգի մը ե-  
 պիսկոպոսները՝ միւսուն օրհնելու գործողու-

« թեւէն կը գրէ • նոյնը երկրին գլխաւոր ե-  
 պիսկոպոսին կամ կաթուղիկոսին վերապահե-  
 լով • տրամադրութիւն մը՝ որն որ ալ եկեղեց-  
 ւոյ մտաց համաձայն է • եւ ալ Հայաստանի  
 « մէջ նախնաբար գտնուած եկեղեցական կար-  
 « գագրութեան համեմատ » ( եր • 326 ) •

Հեղինակին սրբագրութիւնը • « Երբէք չի-  
 « կրնար պարստել ան տրամադրութիւնը՝ որն որ  
 « երկրի մը կամ տէրութեան մը կամ ազգի մը ե-  
 « պիսկոպոսները՝ միւսուն օրհնելու գործողութե-  
 « նէն կը գրէ • նոյնը երկրին գլխաւոր եպիս-  
 « կոպոսին կամ կաթուղիկոսին վերապահելով •  
 « տրամադրութիւն մը՝ որն որ եկեղեցւոյ մտաց  
 « համաձայն է եւ Հայաստանի մէջ նախնաբար  
 « գտնուած եկեղեցական կարգադրութեան հա-  
 « մեմատ » •

Երբէք հիմնական փոքրօրէնաց նախնական  
 տպագրութեան մէջ՝ հեղինակին բնագրէն այս  
 հետաւորութեանս չափով շեղելուրիչ գրքերու մէջ  
 տեսնուած չէ • որ բուն հեղինակին ըսածին բո-  
 լորովին հակառակն ըսել տայ անոր • Անդա-  
 նի հեղինակի մը գործը այսպէս ազաւաղէն նէ՝  
 նոյն իսկ հեղինակն ընդդէմ կը բողոքէ եւ կը  
 շիտկէ • Եւ այս ձեռագիր գիրք մը՝ որուն հեղինա-  
 կը հարիւրաւոր տարի առաջ վախճանած ըլլայ •  
 ուղածնուն պէս փոփոխութեամբ հրատարակեն  
 նէ ինչպէս պիտի իմացուի •

Մենք ըստ այսմ ինչ որ ներկայ գլխոյս մէջ  
 կը խօսիմք այս նիւթոյս վրայ եւ ուրիշներուն  
 ԻՐԱՒԱ • Գ •



վրայ ալ, չէ թէ մասնաւորապէս անոր վերապատուելի հեղինակին դէմ է, այլ անոր դժբաժն արժաւորելու յանդգնողներուն դէմ. եւ այս բաներնու վրայ խօսածնուս ստուգութեանը վկայներուն մէկն ալ՝ հիմնական որբերանիանց բուն հեղինակն : Այս բան ծանուցանելէն ետքը՝ մեր ըսելիքներուն գամբ :

Եսորհրդոյս վրայ գրածը գլխաւորապէս՝ ազգիս Աթուրիկոսներուն ունեցած արտօնութեանցը դէմ է, որով զանոնք պարզ եպիսկոպոսներու հաւասարել կուզէ :

Առտանդնուպօլիս 1858ին տպուած քերտոնէականն ըսած էր. « Աթուրիկոսին գործն է եպիսկոպոս ձեռնադրել, միւսոն օրհնել », եւ այլն : ( եր . 40 ) : Ասոր վրայ հիմնական որբերանիանց մէջ կը կարդամք . « Աթուրիկէ եկեղեցւոյն վարդապետութեանը ծանրը կերպով կը դպչին, երբ որ Աթուրիկոսութիւն ունեցող նուիրապետութեան աստիճան կամ մաս մը դնեն, անոր կարծես թէ աստուածային իրաւամբ յատուկ պաշտօն . րոշելով . եւ Աթուրիկոսի օժումն եւ օրհնութիւնը խորհրդեան նիւթ եւ ձեւ սեպելով . ՚ի Վրիտոսէ, ուստի եւ աստուածային իրաւամբ եպիսկոպոսական կարգին կամ իսանութեան յատուկ եղած քանի մի բան . ենչպէս՝ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը, միւսոն օրհնութիւնը, եւ այլն, կը կարեն, որ-

պէս զի Աթուրիկոսութեան իբրեւ յատուկ պաշտօն տան . Աթուրիկոսութեան, զորն որ ենչպէս ըսինք՝ զատ կարգի աստիճան կը սեպեն », ( եր . 325 . 326 ) :

Թողութիւն կը խնդրեմք վերապատուելիքն իչէն . թէ որ կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութեան անուանածն իր առանձին կարծիքը չէնէ՝ քրիտոնէականին այս խօսքիս մէջ անոր ոչ ծանր եւ ոչ թեթեւ դպչիլ մը չենք տեսներ . այլ միայն՝ հայաստանեայց եկեղեցւոյ հին սովորութեան հետեւողութիւն մը : Վիտեմք որ Արիկական ժողովը մէկ եպիսկոպոս մը ձեռնադրելու համար առ նուազն երեք եպիսկոպոս դրանուի կը կարգադրէ . ուր քահանայ մը ձեռնադրելու համար մէկէն աւելի եպիսկոպոս պէտք ըլլալը չգիտեմք . եւ ասիկայ ըստ բաւականին կը ըցուցնէ որ՝ եպիսկոպոս ձեռնադրելու անձը՝ պարզ եպիսկոպոսական աստիճանէ վերիշխանութիւն մը ունենալու է . եւ ասոր հիմ մը կըրնայ բըռնուել սուրբ Պօղոս առաքելոյն ըսածը . որ Սելբիսեղեկ քահանային Աբրահամաւ զ՝ եւ ի եւ անոր ցեղն օրհնելը մէջ բերելով « նուազն ՚ի լաւէ անտի օրհնեսցի », կըսէ . եւ Սելբիսեղեկի քահանայութեան կարգը Ղեւտականէն վեր ըլլալուն ասիկայ ապացոյց կը բերէ ( երբ . 15 . 7 ) :

Վիտեմք որ եպիսկոպոսներն եպիսկոպոս ձեռնադրելու իշխանութիւն ունին բայց հիմնական որբերանիանց գրքին մէջ չյիշուած պարագայ



մը կայ, եւ է այս, որ ձեռնադրող ո՛ր քաղաքին համար եպիսկոպոս կը ձեռնադրէ նէ՛ անոր վրայ իրաւաբանութիւն ունենալու է. այսինքն իր յատուկ թեմէն դատ ուրիշ եպիսկոպոսական թէմի վրայ ալ իրաւաբանութիւն ունենալու է, եւ սօսնկ են արք եպիսկոպոսները՝ եւ մետրապօլիտները, որոց տակը քանի մի եպիսկոպոսներ կը դառնան եւ պօկայ եպիսկոպոս ձեռնադրած առենը իր վիճակէն քանի մի եպիսկոպոս ալ կուգան եւ ձեռնարութիւնը անոնց գործակցութեամբ կրկայ, եւ այս մետրապօլիտը կամ արքեպիսկոպոսներկայ եւ խորհրդոյն կատարողապետ չըլլալով՝ ձեռնադրողները ո՛րքան բազմաթիւ ըլլային՝ ձեռնադրութիւնը ապօրինաւոր կըլլար. եւ ձեռնադրեալը եպիսկոպոսական պաշտօն չէր կրնար վարել մինչեւ որ վիճակին սրբեպիսկոպոսէն հրաման չառնէր: Մեր ազգին մէջ արքեպիսկոպոսի եւ մետրապօլիտի կոչումը լոկ անուանական է. ուրիշ ազգաց մէջ նոյն անունը կրողներուն թէպէտ պատիւը ունի, բայց պաշտօնը չունի: Ըսեն մը՝ մինչեւ վեցերորդ դարուն վերջերը՝ եպիսկոպոսապետ եւ արքեպիսկոպոս կոչումը կաթողիկոսին յատկացեալ էր մետրապօլիտ յունական կոչումը մեր հին մատենագրաց անձանօթ է: Մեր մէջ եղած սովորութեան պէս էր Ղղերսօսնգրից եկեղեցւոյ սովորութիւնն ալ, անոնց մէջ ալ արքեպիսկոպոս եւ եպիսկոպոսապետ միայն պատրիարքն էր

ինչպէս կըսէ Ռընօտօ. ( Հասարակական պատմութիւն պատրիարքաւորաց. հարսը Ը. էր. 351. որդ. Ֆրանսիացի ):

Մեր ազգին համար ըսածս կըրնայ սուգել Ղղերսի պատմութիւնը մտադրութեամբ կարգացողը: Յայտնի է որ արքեպիսկոպոս կըսուի գաւառի մը մայրաքաղաքին եպիսկոպոսը եւ նոյն գաւառին ուրիշ քաղաքներուն եպիսկոպոսներն անկէց կախում կ'ունենան: Ըստ այսմ՝ գրութեան արքեպիսկոպոս ըսուելու էին Թղնունեաց եւ Տայոց եւ Սիւնեաց եւ Տուրուսերանի եւ ուրիշ ընդարձակ գաւառաց եւ աշխարհաց եպիսկոպոսները. բայց երանելին Եղիշէ Սարգսնոնց պատմութեան մէջ ասոնց ստորագրութիւնը կը դնէ. ( էր. 46. 47. սպ. Սիւնի. 1828 ). ամենուն ալ լոկ եպիսկոպոս կոչմամբ:

Մեր ազգին մէջ արքեպիսկոպոսի եւ մետրապօլիտի անունը առաջին անգամ կը յիշուի վեցերորդ դարուն վերջերը, եւ պատճառն ալ կը պատմուի, որ յոյները մեր մէջ այս որոշումը չըլլալուն համար մեր նուիրապետական կարգաւորութիւնը պակաս կը սեպեն եղեր. եւ Արաշամ Ը. կաթողիկոսին օրը մեր մէջ խորհուրդ եղէր է որ այս անտեղի ամաստանութիւնը լընեցնելու համար քանի մի եպիսկոպոսներու արքեպիսկոպոսութեան եւ մետրապօլիտութեան պատիւ եւ տիրոջ տան, բայց կաթողիկոսին ՚ի սկզբանէ անտի ունեցած ա-



ուան ձևն շնորհակալութեանը չ'դպչելով, որ է եպիս-  
 կոպոս ձեռնադրել եւ մեռօն օրհնել: Ըրբ-  
 չամ կաթուղիկոսը՝ որ Փրկչին 594 էն մին-  
 չեւ 600 թուահանը հայրապետութիւն ըրաւ  
 մարդպետական եպիսկոպոսին որ վասպուրահա-  
 նի Մախճուան քաղաքը կ'նստէր՝ եպիսկոպոսա-  
 պետ եւ մետրապօլիտ անուն տալու հաճեցաւ  
 բայց եպիսկոպոս ձեռնադրելու հրաման չ'տը-  
 լաւ: ( Կաղկանդուացի • Պատմ • Արամանից • քր •  
 ր. գլ. 48: Ստեփաննոս Առպելեան • պատմ, րու-  
 նն Սեպուհեան • գլ. Ի. Օ. ): Սիւնեաց եպիսկոպոսն  
 ալ այս կերպով մետրապօլիտ ըսուեցաւ: Ըստնք  
 թուով քիչ էին, եւ Յովհաննէս կաթուղիկոսի  
 ժամանակը որ Ըրբա համ կաթուղիկոսէն 300  
 տարիէն աւելի ետք էր • երկու արքեպիսկոպոս  
 կային կաթուղիկոսին իշխանութեան տակը Ալը-  
 րաց եւ Աղուանից • եւ կրեք ալ մետրապօլիտ •  
 Յերաստիա եւ Սելիտինէ եւ Սարտիրոսաց քա-  
 ղաքը: Ըստ հայրապետս ասոնց երբ եւ ինչ-  
 պէս հաստատելուն պատմութիւնը չընեք •  
 բայց խօսքէն կերեւի որ չորրորդ դարուն մէջ  
 դնել կուզէ, Կաղկանդուացոյն հակառակ, որ  
 իրմէ առաջ էր, եւ այս կարգադրութեանս պատ-  
 ճառն ալ կը պատմէ ինչպէս որ ըսինք: Բայց  
 Յովհաննէս կաթուղիկոս ալ մինչեւ սուրբ Առ-  
 սաւորչի ժամանակը չ'հասցըներ ասիկայ • վասն  
 զի առաջ եօթն էին կըսէ եւ պատրիարք կան-  
 ուանէ. եւ ետքը կ'պատմէ թէ՛ « այսպէս ապա  
 « նահապետութիւն խորհրդոց եկեղեցոյ իմե-

« րումս աշխարհի լցաւ բովանդակութեամբ, ինն  
 « միանգամայն դասակարգութեամբ պատուեալ,  
 « զգլխաւորս արքեպիսկոպոսացն Ալըրաց եւ Աղ-  
 « ւանից արքեպիսկոպոս ընդ ձեռամբ նորա ( կա-  
 « թուղիկոսին ) կարգեալ • \* : Իսկ ի Սէրաստիա  
 « եւ ի Սելիտինէ եւ ի Սարտիրոսաց քաղաքին  
 « մետրապօլիտս կացուցանէին », Յովհ, Կաթուղի-  
 « պատմ • գլ. Ի. Օ. եր, 93. Կաթուղի, Երուս. 1867:  
 Ատքերը արքեպիսկոպոս ըսուեցան Անի քաղաքի  
 եւ Անիտայ եւ Երուսաղէմի եւ Տարսուի եւ  
 Ադեսիոյ եւ Սիւնեաց եւ Կեսարիոյ Կապադով-  
 կացուց եւ Տիֆլիսու եւ Գուրն քաղաքի եպիս-  
 կոպոսները • որ այս անունովս ստորագրութիւն  
 կուտան Գրեգոր տղայ կաթուղիկոսին ժամա-  
 նակը • 1179 թուին • բայց երբեք ասոնք զե-  
 պիսկոպոս ձեռնադրելու իշխանութիւն ունե-  
 նալ տեսնուած չէ: Աւստի մեր մէջ արքեպիս-  
 կոպոսը վիճակաւոր եպիսկոպոսաց տրուած  
 պատուանուն մի է, առանց ուրիշ եպիսկոպոս-  
 ներէն զատ իշխանութիւն մը ունենալու,

Ըստ բացատրիկ արտօնութիւնը զոր մեր կա-  
 թուղիկոսն ունի, հիմնական արքեպիսկոպոսաց գիրքը  
 իմաստովէ եկեղեցոյն վարդապետութեանը ՆԱՆԲ  
 ԱՆԲՊՈՎ, Երուս. 1867 • որպէս թէ եպիս-  
 կոպոսները իրենց յատուկ եղած մէկ պաշտօ-

\* Սխալ կայ պատմութեանս մէջ • զգլխա-  
 ւորս եպիսկոպոսացն ըսելու տեղը արքեպիսկոպոսացն ըսելու:  
 Արքեպիսկոպոսութեան գլխաւորներն արքեպիսկոպոս կարգ  
 գրելու հասկըցուելու բան մի է:



Յէն զրկել ըլլար: Թէ որ յիրաւի ասանկ է նէ  
 եկեղեցական պատմութիւնը մեզի մէկ Հռով-  
 մայ պապ մ'ալ կը ցուցնէ որ նոյն վարդապե-  
 տութեանը ջանք կերպով զըպշած է: Ահեղես-  
 տինոս, Պ. Հռովմայ հայրապետը՝ Բօլօննա  
 կարդինալն իրեն փոխանորդ կընէ. ամէն հայ-  
 րապետական պաշտօն կատարելու արտօնութիւն  
 կուտայ՝ եպիսկոպոս ձեռնադրելէն զատ: Այս  
 արտօնութեանս տէրն էր Ստափոյի եպիսկոպո-  
 սը. որ ո՛չ պատրիարք էր եւ ոչ արքեպիսկոպոս:  
 (Քրէտօրի. Կրթ. Եր. ՀԵ. 11): Ա-  
 սիկայ կարդինալ եպիսկոպոսի մը այս արտօ-  
 նութիւնը կը ժխտէ պարզ եպիսկոպոսի մը վը-  
 րայ պահելու համար, Հայոց սուրբ եկեղեցին  
 այս արտօնութիւնս եպիսկոպոսներուն վրայ  
 չըձանչէր նէ գոնէ աստիճանաւ անոնցմէ մեծի  
 մը կուտայ: եւ թէ որ ասիկայ եպիսկոպոսնե-  
 րուն յաստուածային իրաւանց ունեցած ար-  
 տօնութեան մը յափշտակութիւն էնէ՝ Հռովմ  
 ալ նոյնը ըրած է. ուստի գոնէ ասիկայ Հա-  
 յոց սուրբ եկեղեցւոյն եւ Հռովմայ մէջ եղած  
 հիմնական տարբերութեանց կարգը գնելու չէր.  
 Թէ որ ասոր տարբերութեան կըսեն նէ՝ համայն-  
 օրէնքէն բառին նշանակութիւնն ի՛նչ ըլլալու է:  
 Այս իրաւունքս եպիսկոպոսները զրկող՝  
 միայն Ահեղեստինոս, Պ. հայրապետն եղած չէ.  
 անկէջ հինն ալ կայ: Օսոսմոս հայրապետը  
 417 թուին Գաղղիայի եպիսկոպոսներուն ուղ-  
 զած շրջաբերականին մէջ միայն Արեւտայ արք

եպիսկոպոսին հրաման կուտայ Ալլորթոզաց եւ  
 Վարբոնա գաւառներուն եպիսկոպոսներ ձեռ-  
 նադրելու: Արքեպիսկոպոսութիւնը առանձին  
 ձեռնադրութեամբ եպիսկոպոսներէն տարբերե-  
 լու բան մը չունի, միայն արքեպիսկոպոս ան-  
 ւանիլը բաւական կըլլայ կոր եպիսկոպոսաց ի-  
 րաւանց յափշտակութիւնն օրինաւոր ընելու.  
 Ըսոյց երբ Հայոց կաթողիկոսը՝ որ առանձին  
 ձեռնադրութեամբ եւ օճմամբ ուրիշ եպիսկո-  
 պոսներէն վեր է. այս արտօնութիւնս ընդու-  
 նի՝ զոր հայոց սուրբ եկեղեցին անոր կուտայ.  
 Իրաւանց յափշտակութեան ըրած կըլլայ: Ազնուի  
 Գառնելու ուրիշ ի՛նչ կերպով կրնայ ըլլալ:  
 Հռովմայ եկեղեցին եպիսկոպոսի ձեռնադ-  
 րութեան մասին ուրիշ որոշում մ'ալ ունի:  
 Այսինքն չունեցող եպիսկոպոսի մը եպիսկոպոս  
 ձեռնադրելու հրաման չըկայ. ասիկայ նոյն ե-  
 կեղեցւոյ հայրապետական ջանքանէն մէջ գըտ-  
 նուած ըլլալուն կ'վկայէ Վասդալ գաղղիացի քա-  
 հանայն. ասորոսմայն պաշտամանց քառասունին մէջ:  
 Միւսոսի օրհնութիւնն ալ ասոր պէս է:  
 մեր մէջ բնաւ մէկ ատեն մը պարզ եպիսկոպոս-  
 ներ միւսոս օրհնելու իշխանութիւն չունէին.  
 եւ երբ Մովսէս կաթողիկոսին օրովը յունաց  
 բաժնին համար առանձին կաթողիկոս արուե-  
 ցաւ. Քրիզի թուականութեան վեցերորդ դա-  
 րուն միջին տարիները.՝ յունակերօն\* Հայոց կա-

\* Յունաբարան չէր: քսեր. վասն զի այնք ալ հա-  
 ւասոյ գաւառնութիւնը մեզի պէս ունին: միայն կրօ-







նոնս աւելի աղեկ պահուած չըլլար արդեօք .  
 չո՞հ հաւանութիւնը կաթուղիկոսին ձգելու  
 տեղը ամբողջ ձեռնադրութիւնը անոր յատկա-  
 ցընելով : Արովհետեւ մեր մէջ Եպիսկոպոսապետ  
 անունով մինչեւ հիմայ կաթուղիկոսէն զատ  
 եկեղեցական աստիճանաւոր ճանչցուած չէ . եւ  
 եպիսկոպոսներն ՚ի հօգեւորս միայն կաթուղի-  
 կոսէն կախում ունին : Եւ ասով կաթուղիկոսը  
 յիշատակութեան ճաշտոցին առաջարկած խնդիրները  
 ձեռնադրելի անձին վրայ անձամբ քննելով  
 հաւանութիւնը չէ՛ թէ ուրիշներուն վկայու-  
 թեանք՝ այլ իրեն անմիջական քննութեամբ վը-  
 րայ հիմնուած կըլլայ : Եւս մտքիս վրայ է Յա-  
 կոբ Այլեան իմաստուն պատրիարքը՝ որ եօթն  
 խորհրդոց գրքին մէջ կըսէ . նոյն սովորու-  
 1) թիւն մնայ յեկեղեցի երիւք եպիսկոպոսը  
 2) ձեռնադրել զմի եպիսկոպոս, սակայն հրա-  
 3) մանաւ ծայրագոյն Հայրապետին : Եւս զի  
 4) աս մեզ բարեկարգութիւնն փութով զսու-  
 5) նայ յանկարգութիւն, եւ մասնաւոր եպիս-  
 6) կոպոսունք յանդգնին յայն գործ . վասն  
 7) այնորիկ բարեւոք դիտաւորութեամբ արդիւն-  
 8) ցեալ է այն սովորութիւն յազգէս մերմէ,  
 9) որպէս զի միայն կաթուղիկոսն ձեռնադրեցէ  
 10) զընտրեալսն : յո՞ . յեռնադրութեան . ինքիք . Գ .  
 11) արեւ . 4 :

Եստեղմէ յայտնի կը տեսնուի մեր պա-  
 տուելի սրբադրելին միւս ըսածին ալ ան-  
 հաստատութիւնը՝ որ կաթուղիկոսն ու եպիս-

կոպոսներն իրարու համապատիւ կը բռնէ, կա-  
 թուղիկոսութիւնն եպիսկոպոսութեանն զատ  
 կարգ մը չէ՛ ըսելով : Աւրիշ քրիստոնեայ ազ-  
 գաց մէջ ալ ՚ի իկիոյ ժողովքին ժամանակը եւ  
 անկէց ետքը մինչեւ հիմայ՝ եպիսկոպոսապետը  
 կամ մետրապօլիտը կարգի աստիճանով եպիսկո-  
 պոսներէն չէր զանազաներ . բայց ՚ի իկիոյ սուրբ  
 ժողովը եպիսկոպոսապետին աւելի մեծ դատու-  
 ղական իշխանութիւն մը կ'ենթարէ, որով  
 եպիսկոպոսներուն առանց եպիսկոպոսապետին  
 կամ մետրապօլիտին հաւանութեան եպիսկոպոս  
 ձեռնադրելն ապօրինաւոր կը ցուցընէ . եւ ե-  
 պիսկոպոսապետին հրաման կուտայ որ այդ կեր-  
 պով ձեռնադրուածն իբրեւ եպիսկոպոս իրեն  
 հազրդութեան չընդունի :

Անր ազգին մէջ եպիսկոպոսի ձեռնադրու-  
 թիւնը հին ժամանակէ ՚ի վեր կաթուղիկոսին  
 կամ եպիսկոպոսապետին յատկացած ըլլալուն  
 վկայութիւն կուտայ ազգային հին պատմու-  
 թիւնը : որկէջ կ'իմանաք որ այս սովորութիւ-  
 նըս մինչեւ սուրբ Եւսուարչին ժամանակը կը-  
 հասնի : Թառներսէ հ կաթուղիկոսը վախճանած  
 ատենը մեծն Արեւիս տակաւին եպիսկոպոս  
 չէր . ազգին մէջ շատ եպիսկոպոս կային բայց  
 ասիկայ եպիսկոպոս ձեռնադրուելու համար կե-  
 սարիա խրկուեցաւ . որուն առ'ի պատիւ ընկե-  
 րացող եպիսկոպոսներուն համարեքը մինչեւ  
 քսան եւ ութը կը համրէ պատմութիւնը, (Արեւի-  
 ցապատմութեան . հատոր . 1 . եր . 25 . 26) :



Սուրբ Տայրապետն այս ձեռնադրութեամբս  
 կաթուղիկոս պիտի չըլլար՝ վասն զի ասկէց քա-  
 նի մի տարի ետքը ազգին Տաճութեամբը կա-  
 թուղիկոս ըլլալը կը պատմուի։ Ասոր յաջորդն  
 ալ՝ Շահակ, նոյն պատճառն Տամար Ահարիա  
 խրկուեցաւ. պատմիչները չեն ըսեր թէ ահի-  
 կայ՝ կաթուղիկոսութեան ընարուած ատենն  
 եպիսկոպոս էր։ Բուզանդ պատմիչն ալ ազգիս  
 այդ Տին սովորութիւնը կը ճանչնայ եւ կ'պատ-  
 մէ որ Ահարիոյ գաւառին եպիսկոպոսաց մէկ  
 ժողովը վճռեց որ Տայոց կաթուղիկոսը ւս մի՝  
 ,, իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոս Տայոց . որ-  
 ,, պէս սովորութիւն էր ՚ի բնէ . (17. 29) \*

Սուրբ Առասարգին եպիսկոպոս ձեռնադրու-

\* Այս ըսած ժողովն իրօք եղած ալ է ՚նէ՝ որ  
 երկբայելու իրաւունք կայ ,, անվաւեր է . վասն զի  
 կըսէ՝ եղև ժողով եպիսկոպոսացն սինհոթոսին նա-  
 ,, հանդին Ահարու առանց Տայրապետին ,, և այս-  
 պէս ժողով մ' ընդունելն չ'կրնար ըլլալ . և չ'կարծուիր  
 որ այն ատենը՝ որ եկեղեցական կանոնաց նախանձա-  
 ինդիր եպիսկոպոսներ շատ կային . առանց արքեպիս-  
 կոպոսին ժողով ընեն . բայց մեզի պէտք եղածը  
 սա՛ է որ պատմիչը կըսէ թէ Տայոց կաթուղիկոսին  
 ՚ի քնէ եպիսկոպոսներն ինք ձեռնադրելը սովորու-  
 թիւն էր . և մենք ասոր բունը հետազոտելու ել-  
 լենք նէ՝ Սուրբ Առասարգինը կը գտնենք . որուն  
 չուովմ էր թալէն և կաթուղիկոսական պատիւը պա-  
 հետով ետ դառնալէն որ եղաւ 319 թուին , մինչև  
 մեծին Ներսէսի կաթողիկոս ընարուելը , 364  
 թուականը . 43 տարի միայն անցած է :

ուելու Տամար Ահարիա երթալը չը յիշեցինք .  
 որովհետեւ ասոր օրովը թէպէտ եպիսկոպոսներ  
 կը գտնուէին Արևեաց երկիրը , բայց ասիկայ  
 շատերուն ծանօթ չըլլալուն Տամար սրբոյն մե-  
 ծին՝ Ներսէսի ձեռնադրութիւնը յիշելն աւե-  
 լի պատշաճ տեսնք։ Աւ ասոր կաթուղիկոս  
 ընտրուելուն միայն Տայոց թագաւորին եւ  
 նախարարաց ընտրութիւնովն ըլլալը կը ցուցնէ  
 որ այն ատենը կաթուղիկոսութիւնը առանձին  
 եկեղեցական կարգ մը սեպուած չէր եպիսկոպո-  
 սութեանն տարբեր , ինչպէս որ քահանայու-  
 թիւնը սարկաւագութեանն տարբեր առանձին  
 մէկ կարգ մը չէ . այլ լոկ գերագոյն իրաւաբա-  
 նութիւն մը . եւ այս իրաւաբանութիւնս տա-  
 լու արարողութիւնն է կաթուղիկոսի օծումն եւ  
 օրհնութիւնը եւ ոչ թէ առանձին եւ զատ խոր-  
 Տրդեան նիւթ եւ ձեւ սեպած է Տայոց եկե-  
 ղեցին . ինչպէս որ կարծեր է վերապատուելի  
 քրքագրիչը , այս օժմամբս եւ օրհնութեամբս  
 այն անձը որ եպիսկոպոս էր , Տայոց եկեղեցոյ  
 նուիրապետութեանը գլուխ եւ գերագահ աս-  
 տիճանաւորը կըլլայ :

Աւ ասոր Տամար սուրբն Ներսէս Ամբրո-  
 նացի կըսէ թէ կաթուղիկոսն , ոչ եթէ յիւր վի-  
 ,, ճակն միայն՝ այլ ընդ ամենայն առդիս ուր  
 ,, ազգն իւր եւ Տամացիքն են , ունի իշխանու-  
 ,, թիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս եւ տալ  
 ,, զմիւսոնն , վասն այնովի անուանի կաթու-  
 ,, ղիկոս , (Բն . պատմ . էր . 83) . Սուր միւսոնի



Համար նշանակածն ալ՝ սրբոցն Աստուծոյ Պարթևիսն վկայութեամբ զիտեմք որ անոր օրհնութիւնը հին ժամանակէ ՚ի վեր եպիսկոպոսապետներուն կամ կաթողիկոսներուն յատուկ էր վասըն զի սուրբ Հայրապետը կրէս « յամենայն տեղեաց մերոց իշխանութեանց յամենայն ամի »  
 « զկնի սըբբայ զատկին զիւղ վկրտութեան Հար-  
 « կաւորութեամբ բերցնն առ մէջ քահանայք,  
 « եւ աստի ՚ի մէջընկալցին զօրհնութիւն իւ-  
 « դոյն, եւ անձամբ մի օրհնեցին ՚ի առնս  
 « իւրեանց, որպէս սովորեցան ոմանք ՚ի տգի-  
 « տութենէ. վասն զի ոչ է իշխանութիւն այդ՝  
 « քահանայից. այլ եպիսկոպոսապետաց, (կանոնք  
 վասն քահանայից. Բ. Գ. 1. Ս. 1. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100.)  
 « Աւր նկատել արժան է սուրբ Հայրապետին կրօնական զգուշաւորութիւնը. որ ուրիշ քրիստոնեայ ազգաց մէջ եպիսկոպոսներուն մեծոն օրհնելու իշխանութիւն ունենալը զիտնալով չըսեր թէ ոչ է իշխանութիւն սյդ՝ էպիսկոպոսաց. այլ՝ թէ քահանայից. սակայն սուրբ Առաւելորէն ՚ի վեր մնացած սովորութիւնն անխախտ պահելու համար կը յաւելու. թէ այդ իշխանութիւնը եպիսկոպոսապետաց է. եւ եպիսկոպոսապետ քսելով կոթողիկոսն իմանալըն ալ յայտնի կընէ. ՚ի մէջընկալցին զօրհնութեան իւրեանց ասելով. որ թէ որ եպիսկոպոսապետ քսելով կաթողիկոսէն վար եւ ուրիշ եպիսկոպոսներէն վեր եկեղեցական իրաւարանութեան տէր եղող անձինք իմացընել ուզէր

նէ ՚ի հարկէ ազգին մէջ սյուպիսինք բանի մի հատ դտնուելու էին. եւ ինքը պատու իրելու էր որ իրենց աւելի մօտ եպիսկոպոսապետին օրհնել տան սուրբ մեղոնը. եւ իրեն բերելու պատուէր տալու չէր: Այս ալ զիտել արժան է. որ թէ որ սուրբ մեղոնը կամ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը կաթողիկոսին սեպակահանելը կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութեան ծանր կերպով զպշելու բան մ՝ ըլլար նէ. սրբոյն Աւելորէն Ամբրոսացւոյ պատգամէն ինչ-նախեան եւ սրբոյն Աստուծոյ Պարթևիսն կանոններուն տպագրիչ Մխիթարեան վերապատուելի հարբ այս խօսքերուն վրայ յատուկ ծանօթութիւն մը կրէնէին. ինչպէս որ սուրբ պատարագին կոչման տղօթիցը վրայ՝ թէպետ եկեղեցւոյ վարդապետութեան զպշելու բան ալ չէր, բացատրութեան կերպով ծանօթութիւն մը գրած էին. զոր վերն իր կարգին յիշեցինք. եւ նոյն Մխիթարեան միաբանութենէն ՚իւր միւզեան տէր Ազուարդ գերապայծառ արքեպիսկոպոսն ալ՝ եպիսկոպոս ձեռնադրելոյ եւ մեծոն օրհնելոյ աբարողութիւնը եպիսկոպոսներուն յատուկ ըլլալը զիտցած պիտի չըլլայ. կամ աւելի ճիշտ խօսելով՝ ասիկայ Հայոց տղգին հայրենաւանդ սովորութիւնն ըլլալուն. եւ կաթողիկէ վարդապետութեան չզպշելուն համարուած պիտի ըլլայ: որ իր պատգամաբանութեան մէջ՝ եսի կոպոսներուն յատկացեալ գործերը համբերով՝ այս երկուքը դուրս



կըձգէ . վասն զի կըսէ . պաշտօն « եպիսկոպոս-  
 » սին է հոգևել ձեռնադրել եւ օծանել . զի  
 » որ ինչ մեռնաւ կատարի եպիսկոպոսաց է  
 » պաշտօն . եւ մկրտել՝ եւ դրոշմել՝ եւ զսկի  
 » եւ զհաղըզմայ՝ զսեզան եւ զեկեղեցի որհ-  
 » նել . եւ հրամանաւ նոցա է՝ զի զոմանս ՚ի  
 » պաշտամանց աստի վարեն քահանայք . մինչեւ  
 » դրոշմել իսկ . եւ զսկի եւ զմաղըզմայ օծա-  
 » նել , որ առ լատինս չէ օրէն » : ( Հո . Ը .  
 էր . 451 ) : Եւ եպիսկոպոսի ձեռնադրութեան  
 համար ալ քիչ մը վարը կըսէ թէ եպիսկո-  
 պոսներէն կըլլայ՝ ըսյց սովորաբար երեք ե-  
 պիսկոպոս պէտք ըլլալն ալ կը յիշեցընէ ( սուր  
 էր . 452 ) : միւռոնի վրայ՝ թէ ով պիտի օրհ-  
 նէ . նշանակելու կարգն ալ եկած էր այս ան-  
 դըս , թէ եպիսկոպոսը պիտի օրհնէ . թէ որ  
 գիտնոր որ ասոր հակառակն ըսելը կաթուղի-  
 կէ եկեղեցւոյ վարդապետութեան ծանր կեր-  
 պով կը դպչի . եւ թէպէտ մեռնով ըլլալու  
 քործերն եպիսկոպոսը կընէ կըսէ . ըսյց նոյն  
 մեռնն եպիսկոպոսը կօրհնէ չըսեր : Եկեղեցւոյ  
 վարդապետութեան դպչող . եւ մանաւանդ շատր  
 կերպով քրպչող բաները Լատինացիստե-  
 թեան քրքի մը մէջ՝ նշանակելը ամենահար-  
 կաւոր է . Ուրեմն այս բանիս վրայ ալ կաթու-  
 ղիկէ եկեղեցւոյ ՚ի հաստատայ վարդապետութիւն  
 չկայ՝ որուն դպչած ըլլայ եզնիճնական անուա-  
 նած եկեղեցին . ալ լոկ ազգային սովորու-  
 թիւն մ'է : Ուրիշ ազգաց մէջ մեռնը ով

կօրհնէ օրհնէ . Հայր բան մը չըսէր . եւ այն  
 մեռնով օծուածը՝ ճշմարիտ օծութեամբ սըր-  
 բազանեալ կը ճանաչէ եւ կը յարգէ : Երեք  
 եպիսկոպոսաց գործակցութեամբ կամ ընթերա-  
 կայութեամբ եպիսկոպոս ձեռնադրուածներն  
 ալ իբրեւ ճշմարիտ եպիսկոպոս , անոնցմէ քա-  
 հանայական ձեռնադրութիւն եւ օծումն առ-  
 նողներն ալ իբրեւ ճշմարիտ քահանայ կընդու-  
 նի : եւ մեր ազգին մէջ ալ ասոր գործադրու-  
 թիւն եղած կը գտնեմք .

Հայոց՝ ( ըստ մեր վերապատուելի հեղինակ-  
 կին՝ Եզնիճնական ) ԸՁԹ թուին , որ է փրկչին  
 1139 . Բրուանից ազգը 25 տարի առանց կա-  
 թուղիկոսի մնալէն ետքը՝ իրենցմէ մէկը Հա-  
 յոց Կրիզոր կաթուղիկոսին խրկեցին որ եպիս-  
 կոպոս ձեռնադրէ . եւ թղթով ալ խնդրեցին որ  
 իր քովիններէն եպիսկոպոս մ'ալ խըրկէ : որ-  
 պէս զի Բրուանից կաթուղիկոս ձեռնադրէ : Ա-  
 բանելի կաթուղիկոսը՝ Կարնոյ Սահակ եպիսկո-  
 պոսը նոր ձեռնադրած եպիսկոպոսին հետ խըր-  
 կեց որոնք գնացին ուրիշ տասն եւ երկու ալ  
 եպիսկոպոս ձեռնադրեցին՝ իրենք լոկ եպիսկոպոս  
 եւ միայն երկու եւ ո'չ երեք հոգի ըլլալով ,  
 եւ այս ձեռնադրութիւնս ըրին ըստ օրէնի հրո-  
 մանայ բնոյ՝ կըսէ պատմիչը . եւ ամէնքը մէկէն  
 Բրուանից կաթուղիկոս մը ձեռնադրեցին , Բյս-  
 պէս կը պատմէ Կիրակոս Պանձակեցի պատմիչը՝  
 ( էր . 101 րպ . Վէնէր ) . ուր ըստ հրամանաց բնոյ  
 ըսածը կամ կաթուղիկոսին նոյն Սահակ եպիս-



կոպոսին ձեռքը առած գիրն է , որով անոր հը-  
րաման կուտար միայն մէկ եպիսկոպոսի մը գոր-  
ծակցութեամբ . եպիսկոպոս ձեռնադրելու՝ որպէս  
զի Մուրանից կաթուղիկոսը եպիսկոպոսաց բազ-  
մութենէ ձեռնադրուի , ինչպէս որ ազգիս մէջ  
սովորութիւն է , կամ Նիկիոյ ժողովոյն վերո-  
յիշեալ կանոնին տէնարկութիւն մ'է : Ընտրին  
հարծիքն աւելի հաւանական կըսեպմք . որով-  
հետեւ ազգին սովորութիւնն այնպէս է որ կա-  
թուղիկոսի մը ձեռնադրութեան համար տասն-  
եւերկու եպիսկոպոս պէտք է . եւ կաթուղիկո-  
սըն իրաւունք ունէր հարծելու՝ որ Մուրանից  
իրեն խրրկած եւ իր ձեռնադրած եպիսկոպոսէն  
զամ՝ կամ որ եւ է կաթուղիկոսի ձեռնադրութեան  
պէտք եղածին չափ եպիսկոպոս չտւնենան . ուս-  
տի Սահակ եպիսկոպոսին ալ հրաման տուած  
կըլլայ՝ որ պէտքին չափ եպիսկոպոս ձեռնադ-  
րէ : Ըսուածներէն հիմացուի որ մեր ազգին մէջ  
եպիսկոպոս ձեռնադրելը եւ մեռոն օրհնելը  
կաթուղիկոսին յատկացած է . բայց անհաղոր-  
դելի արտօնութիւն մը չէ . եպիսկոպոսները կա-  
թուղիկոսէն հրաման չառած ուրիշ մը եպիս-  
կոպոս ձեռնադրեն նէ մեր ազգին մէջ . ապօ-  
րինաւոր գործ մը ըրած կըլլան . եւ որովհե-  
տեւ Նիկիոյ սուրբ ժողովքը կարգադրեր է որ  
եպիսկոպոսապետին հաւանութիւնովը պէտք է ըլ-  
լալ . 'ի պահանջել հարկին՝ մեր կաթուղիկոս-  
ներն ալ պարզ եպիսկոպոսաց հաւանութիւն եւ  
հրաման տուած են եպիսկոպոս ձեռնադրելու :

Ըսոնց մէջ ո՛չ Նիկիական կանոնաց . ոչ կաթու-  
ղիկէ եկեղեցւոյ , եւ ո՛չ Էնովմայ եկեղեցւոյն  
հակառակ բան մը չկայ . ուր մէկը մէկ քաղա-  
քի կամ թէմի մը եպիսկոպոս ընտրուինէ՝ հայ-  
րապետը նոյնը հաստատելէն ետքը եպիսկոպոս  
կը ձեռնադրուի անիկայ . եւ այս հաւանութիւնս  
հայրապետին կողմէն հրաման մը կըլլայ որ ե-  
պիսկոպոսներն այն անձը եպիսկոպոս ձեռնադ-  
րեն , որով՝ ինչպէս որ եպիսկոպոսներուն համար  
ըսաւ ՚ . Եզրուարդ՝ թէ մեռոնով ըլլալու  
գործերն ասոնց յատուկ են , բայց ասոնց հը-  
րամանաւ քահանայք ալ կըլրնան ընել , նմանա-  
պէս կըրնանք ըսել թէ եպիսկոպոսի ձեռնադրու-  
թիւնն ալ եպիսկոպոսապետին կամ կաթուղիկո-  
սին յատուկ է . եւ անոր հաւանութիւնը ուրիշ  
եպիսկոպոսներուն հրաման տալ կը սեպուի որ  
ունիկայ ձեռնադրեն . եւ թէ որ հաւանութիւն  
տալու տեղը հրաման ընէ որ եպիսկոպոսու-  
թեան ընտրեալ անձը իրեն բերեն , որ ինքն  
անձաւք քննէ եւ այնպէս ձեռնադրէ , իրեն յա-  
տուկ իշխանութիւնն 'ի գործ դրած կըլլայ : Մեր  
կաթուղիկոսներուն սովորաբար ըրածն ալ այս  
է . եպիսկոպոս ձեռնադրելու համար եպիսկո-  
պոսաց հրաման ապն իր ձեռքն է : Ըստ կեր-  
պով ասիկայ ալ չէ՝ թէ միայն ազգային աւան-  
դութեանց կարգը մտաւ . սլլ եւ կաթուղիկէ ե-  
կեղեցւոյ ժողովուրդապետին հետ ալ նոյնացաւ .  
ուստի ասիկայ ալ հարկ կըլլայ անհրաժեշտ  
բանեանց կարգէն դուրս հանելու :



Այսպէս աստուծոյ Տեղիակալը նոյն 1858ին  
 ապուած քրիստոնէականին մէջ ուրիշ սեպալ մի  
 ալ գտեր է այն որ ըսեր էր թէ՛ կիսասարկաւա-  
 դու թենէ սկսելով մարշրագոյն կարգ առնող-  
 ները կարգ առնելէն ետքը չէն կրնար ամուս-  
 նանալ . վասն զի կարգ առած առեւնին այդ-  
 ոյէս ուխտ ըրած ըլլալով՝ հակառակը գործել-  
 նին ուխտադանցութիւն մը կը ըլլայ : Ասոր վրայ  
 կը ըսէ . « թէ որ իրաւցընէ Եջմիածնական եկե-  
 », ղեցւոյ վարդապետութիւնն է՝ որ սուրբ ստի-  
 », ճաններ առնելէն ետքը ո՛չ որ կըր-  
 », նայ կարգուիլ . եւ սուրբ աստիճան ըսուած-  
 », ներն ալ ինչպէ՛ս քիչ մը վերջը նոյն քրիստո-  
 », նեականին մէջ տեսանք , չէ թէ մինակ եւ  
 », պիտկոպոսութիւն , քահանայութիւն եւ սար-  
 », կաւագութիւն է . հասկա միանգամայն կիսա-  
 », սարկաւագութիւնը . եւ վերջապէս , թէ որ ի-  
 », ռաւցընէ Եջմիածնական եկեղեցին անանկ կը  
 », սեպէ թէ այս կարգերն (գոնէ այս վերջին  
 », երկրն ) անողնէրը՝ կարգ առած տաննին  
 », Աստուծոյ առաջը ուխտ ըրած են չկարգուե-  
 », լու , ասանկններուն կարգուիլը մինակ ուխ-  
 », տադանցութիւնն է , միակ ծանր մեղք եւ մի-  
 », նակ աստիճաններէն վա՛ր կիլլուան : Աս չորս  
 », կէտերուն նկատմամբ Եջմիածնական քրիստոնէ-  
 », ականներն որոշ գաղափար մը չեն իտա՛ր . թէ-  
 », պէտ եւ իրը՝ ինչպէս յայտնի է , գործուա-  
 », կան հետեւութիւն ալ ունի . . . էրէս 329  
 328 : Ս՛եր քրիստոնէականներուն ասոնց վրայ

յօք որո՛շ գաղափար մը չտալուն պատճառն այն  
 է՛ որ մանր տղայոց եւ քրիստոնէութեան սկզբ-  
 լանց կրթութիւն չունցողներուն համար շին-  
 ուած են , որոց այսպիսի բաներ գիտնալը հարկ  
 չէ՛ , երբ իմաստուն աստուածաբաններ եւ կա-  
 նոնագէտներ անգամ իրարմէ տարբերութիւններ  
 կուենեան , եւ մենք մեր քրիստոնէականներուն  
 մէջ գրուածներուն ալ չգրուածներուն ալ վը-  
 րայօք անոնց տարբերութիւններուն մէկ քանին  
 նշանակած եմք : Ա՛նք այս տեղը տեսնեմք թէ  
 մեր վերապատուելոյն գրածներուն մէջէն ի՛նչ  
 որո՛շ գաղափար կրնամք ստանալ :

Արասարկաւագութեան վրայ տուած գա-  
 ղափարը թէ որ որո՛շ գաղափար մը սեպելու ըլ-  
 լամք նէ՛ հարկ կը ըլլայ ըսել որ թէ՛ արեւելեան  
 եւ թէ՛ արեւմտեան եկեղեցեաց գաղափարին  
 հակառակ է . ըսել է՛ որ կամուղիկէ կամ ընդ-  
 հանուր եկեղեցւոյ գաղափարին համաձայն չէ՛ :  
 Ա՛նք քրիստոնէականին մէջ տեսեր է որ « զի  
 », թէ Գնուկեպիսկոսութիւն , քահանայութիւն եւ  
 », սարկաւագութիւն , հասկա միանգամայն կիսասար-  
 », կաւագութիւնը . . . անողնէրը Աստուծոյ ա-  
 », ռաջը ուխտ ըրած են չկարգուելու . . . եւ ու-  
 ղովհետեւ՝ ինչպէս ինքը երկու տող վերն ը-  
 սած է թէ « էջմիածնական եկեղեցւոյ վարդա-  
 », պետութիւնն է՛ որ սուրբ ստիճաննէն առնելէն  
 », ետքը ոչ որ կըրնայ կարգուիլ . . . ասկէց սօ  
 գաղափարը կառնումք որ ինքը մինակ եպիսկո-  
 պոսութիւնը եւ քահանայութիւնը եւ սարկա-



ւազու թիւնը սուրբ աստիճան կը սեպէ, կիսա-  
սարկաւազու թիւնը ասոնց կարգէն գուրս՝ եւ  
փոքր աստիճաններուն կարգը կը դնէ:

Այլեղեցական աստիճանաց մէջ ուսուցիչ սեպ-  
ուածներն են սուրբ պատարագի մատուցման եւ  
անոր անմիջական սպասուորութեան իշխանու-  
թիւն տուողները, որ ՚ի պատիւ սուրբ խոր-  
հրդոյն ողջախոհութեան ուխտ ընելու կը պար-  
տաւորին. ուստի ասոնք քոթր աստիճաններէն ու-  
րոշելու յայտնի նշան տրուած է ժուժկալու-  
թիւնը, որ է կարգ առնելէն ետքը շամուսնա-  
նալը, եւ այս պայմանովս՝ թէ՛ արեւելեան եւ  
թէ՛ արեւմտեան եկեղեցիները՝ առաջուց շամուս-  
նացեալներուն ալ այս սուրբ աստիճաններս  
կուսան: Արդ՝ Սողոմոնոս յոյն պատմիչը կըսէ  
(պատմ. եկեղ. Ե. 291). 'Արկիոյ ժողովքը ե-  
պոսկոպոսներուն եւ քահանայներուն եւ սար-  
կաւազներուն եւ կիսասարկաւազներուն միա-  
պէս արգելուլ կուզէր կանանց հետ ընկալից  
ըլլալը: Եւ սուրբն Ապիսիան (ընդդէմ աղանդոց.  
ՆՅԻ. 41) կըսէ թէ կանոնները պահուած տե-  
ղերը եպիսկոպոս եւ քահանայ եւ սարկաւազ եւ  
կիսասարկաւազ ըլլալու չէին ընդունուիր եր-  
կու անգամ ամուսնացեալները եւ այրի կին առ-  
նողները: Թողնելու իմեզի այս անգամ հրուդեան  
ժողովքին մէկ կանոնն ալ յիշել, որովհետեւ  
Հոովմէականք երբեմն մեղի դէմ կը հանեն այս  
ժողովք իբրեւ ընդունելութեան արժանի, թէ-  
պէտ ո՛չ տիեզերական է եւ ո՛չ Հոովմէական

եկեղեցիէն ընդունուած: Ինչպէս որ ըսած եմք:  
Արդ՝ այս ժողովոյս վեցերորդ կանոնն է այս  
որ սարկաւազները եւ քահանայները եւ կիսա-  
սարկաւազները կարգ առնելէն ետքը ամուսնա-  
նան նէ կարգէն լուծուին: Ասոնցմէ յայտնի  
է որ արեւելեան եկեղեցին ամէն ատեն կիսա-  
սարկաւազու թիւնը սուրբ աստիճանաց կարգը  
սեպած է. Արեւմտեան եկեղեցին ալ հին ժա-  
մանակէ ՚ի վեր յայնպէս ըրոնած է: Փրկչի 400  
թուին Պոլեատնի առաջին ժողովոյն չորրորդ կա-  
նոնը կըսէ, կիսասարկաւազ մը՝ որ կի ը մեռ-  
նելէն ետքը նորէն ամուսնանայ, իր աստիճանը  
կորսընցընէ, եւ դոնապան կամ ընթերցող ըլ-  
լայ. րոյց առաքելական թուղթեր եւ աւետա-  
բան կարգալու իշխանութիւն չունենայ: Եւ թէ  
որ երկրորդ կինը մեռնելէն ետքն երրորդ ան-  
գամ ամուսնանայ՝ մինչեւ երկու տարի ապաշ-  
խարութեան տակ մնայ առանց հաղորդութեան.  
Եւ արձակում առնելէն ետքն ալ լոկ աշխարհա-  
կաններուն կարգը մնայ: Սուրբն Վրիգոր մեծ՝  
Հոովմայ հայրապետը իր նամակներուն մէկին  
մէջ (հր. Յ. նամակ. 44) եպիսկոպոսներուն  
կը պատուիրէ որ մշտնջենաւոր կուսութեան  
կամ ժուժկալութեան ուխտ չընող մարդը  
կիսասարկաւազ չընեն: Իսիգորոս Հիսաղոցի  
եկեղեցական պատմանց երկրորդ գրքին մէջ եկե-  
ղեցւոյ պաշտօնէից վրայ խօսելու կարգին կը-  
սէ. կիսասարկաւազները որովհետեւ ՚ի պաշտօ-  
նէ սրբաղան անթնները կը շոշափեն, ժուժ-



կալու թեան պարտա որել պէտք է : Կըրնայինք  
 ասոր վրայ ուրիշ վկայութիւններ ալ բերել :  
 որովհետեւ թէ՛ Տրիտենդեան ժողովը եւ թէ՛  
 ամէն աստուածաբան ասիկայ սուրբ աստիճանաց  
 կարգը սեպելու համոճայն են , բայց մենք  
 ըստական կըսեպեմք լատին եկեղեցւոյ երկու  
 տիեզերական ժողովներուն , եւ չորսրորդ հը-  
 ռովմէական աստուածաբանի մը վկայութիւն-  
 ները : Լատերանաւ Ս ժողովը՝ որ իններորդ  
 տիեզերական ժողով սեպուած է , քան եւ մէկ-  
 երորդ կանոնին մէջ քահանայներուն եւ սար-  
 կաւագներուն եւ կիսասարկաւագներուն ամուս-  
 նաւայը կարգելու միտպէս . եւ ամուսնացեալ-  
 ներն ալ իրենց ամուսինէն զատել կը պատուի-  
 րէ , Մ.Ս ժողովը 1122ին եղած է , Մ.որ հետ  
 կը միացունենմք նոյն լատերանեան տաճարը  
 ասկէց 17 տարի ետքը 1139ին եղած ժողովը .  
 որ տասներորդ տիեզերական կը սեպուի : Մտի-  
 կայ ալ վեցերորդ կանոնին մէջ կըսէ : « ով  
 « որ կիսասարկաւագութեան եւ անկէց վեր կար-  
 « զի մէջ գտնուելով ամուսնանայ կամ հարձէք  
 « ունենայ , իրեն պաշտօնէն եւ եկեղեցական  
 « հասոյթէն զրկուի » : Մ.Ս նիւթոյս վրայ  
 մէջ բերել ուղուած միւս արեւմտեան տիեզե-  
 րական ժողովէ հրիտենդեանը որ 1562ին բը-  
 սան եւ հինգերորդ գումարման մեջ հաստատած  
 տասն եւ երեքերորդ կանոնով՝ նախկին ժո-  
 ղովներուն եւ հայրապետներուն ըսածը ուրիշ  
 կերպով կը բացատրէ , միտքը նոյնն ըլլալով :

« կիսասարկաւագ եւ սարկաւագ անանկները  
 « ձեռնադրուին՝ որ Ըստածոյ զօրութեամբ զի-  
 « րենք զպելու յոյս ունին » : Եւ ասոնցմէ կը-  
 հասկըցուի որ կիսասարկաւագներն ալ մշտնջե-  
 նաւոր ժուժկալու թեան օրէնքին տակն են : Ը-  
 սովմէական հայադգի աստուածաբանի վկայու-  
 թիւն ըսածնիս ալ՝ վերոյիշեալ Եդուարդ արք  
 եպիսկոպոսին՝ « կիսասարկաւագութիւն աստի-  
 ճան սուրբ » ըսածն է : ( տեսական աստուածաբա-  
 նասիւն . հատոր . Բ . էր . 442 ) : Զեմք հասկը-  
 նար թէ վերապատուելի հեղինակը արեւելեան  
 եւ արեւմտեան եկեղեցւոյ , կամ որ նոյն է ընդ-  
 հանուր եկեղեցւոյ ըսածէն՝ այսպէս ծանր նիւթի  
 մը վրայ տարբեր գտնուելէն ետքը ինչո՞ւ համար  
 զաստանութեամբ կախողիէ եկեղեցին հեռապէս տար-  
 բերեալ եկեղեցի կը բընտրուէ : Եւ այս մասին  
 այդպէս տարբերութիւն մը՝ իր էջիւնանկան ան-  
 ուսնած շայաստանեայց սուրբ եկեղեցւոյ վրայ  
 տեսերէ նէ՝ ոխալ տեսէր է :

Սէկ ուրիշ անորոշութիւն մ'ալ կայ՝ բը-  
 րիստոնէականին անորոշ թողած կէտերը համ-  
 րելուն մէջ : Մ.Ս կէտերը չորս պիտի ըլլային .  
 բայց մենք երեք հաս միայն կը գտնեմք , որ  
 են 1 . սուրբ աստիճաններն անուելէն ետքն աս-  
 մուսնանալն ուխտադանցութիւն ըլլալը . 2  
 նոյնին ծանր մեղք ըլլալը . 3 . այսպէս կար-  
 գաւոյին կարգէն ինալը . չորրորդը՝ թէ որ կի-  
 սասարկաւագութիւնը սուրբ աստիճանաց կար-  
 դը սեպուիլը կամ չըսեպուիլը չէ նէ՝ ուրիշ



մը չեմք տեսներ, արգեօք Մտուծոյ առաջ ըրած  
 ուխտն՝ աւրելով՝ ամուսնութեանը ոչ ինչեւ լու-  
 ծանելի սեպուի՞ն է . զոր յայտնի չէ գրած .  
 եւ չէ՞ մի որ ասիկայ արդէն ըսուածներուն մէկ  
 հետեւութիւնէ . եւ ո՞վ կրնայ այսպիսի ամուս-  
 նութեան համար ըսել թէ եկեղեցւոյ խորհուրդք  
 պսակին նման անլուծանելիութիւն ունի . Բայց  
 ասոր վրայ ալ տարածայնութիւն կայ . որովհետեւ  
 ան կան անանկ կանոններ՝ որ կարգ առնելէն  
 ետքը ամուսնացեալները չէ՞ թէ դատուելու՝  
 այլ կամ հանոնական ապաշխարութիւն կրելու,  
 կամ իրենց աստիճանէն լցնալու կդատապարտեն,  
 ուրիշներն ամուսիններն իւր ընկալու կը պա-  
 հանջեն, եւ ասանկ բան սը՝ որուն վրայ կարծե-  
 ակաց համաձայնութիւնը կպակսէ . թէ՛ եւ մի-  
 տարանելու ծամբան գտնուի ալ նէ՛ ինչ հարկ  
 իյայ քրիստոնէականի մէջ գրելու :

Ըսոր դործնական հետեւութիւնը՝ որ կարգ  
 առնելէն ետքն եղած ամուսնութիւնը լուծելը  
 կըրնայ ըլլալ, հոգեւոր իշխանութեան յատուկ  
 բան մ'ըլլալով՝ հայ քրիստոնէականն այդ մասն-  
 րամասն՝ եւ ըստ գործադրութեան մասին ամէն  
 եւ իւրաքանչիւր քրիստոնէից շինկած բաներուն  
 տեղեկութիւնը որոշ չխօսելէն եւ դպրատան  
 արդոց չհասկըցընելէն՝ որոց համար շինուած է  
 դաւանութեան մասին հիմնական տարրերութիւն  
 շիններ, ուստի այս ալ անոնց դասակարգէն հա-  
 ընելու է իրրեւ անհիմն բնականութիւն :

Մինչև քանի՞ անգամ ամուսնանալու հրաման կայ :

Վերադառնալով հեղինակին այս անգամ  
 խօսելիքը՝ Մոսկուա տըպուած Լուսինի քրիստոնէ-  
 ական վարդապետութեան գրքին դէմ է . որուն  
 մէջ իր բնութեանը եւ դատողութեանն ենթա-  
 կայ՝ հետեւեալ խօսքը գտերէ .

«Թէ կամիցի որ՝ կարող է ըստ օրինաց ար-  
 ամուսնանալ երկրորդ կամ երրորդ անգամ յետ  
 «մահու ամուսնակցին :

«Չորրորդ կամ հինգերորդ կամ աւելի եւս  
 «ամուսնութիւնը չհամարին օրինաւորք :

«Պ. յ. Ստուածային եւ յառաքելական օրէնս  
 «չիք ինչ որոշակի սահմանեալ վասն բանիդ . բայց  
 «եկեղեցական կամ ժողովական կանոնը անար-  
 «ժան համարեալ զայն արգելուն «(Եր. 53).  
 «ահա այսքանէ յիշեալ գրքին խօսքը . ոչ բաւմ'  
 «աւելի եւ ոչ պակաս :

Լուսինի արքեպիսկոպոս հեղինակը կրտսէ .  
 «պսակի խորհրդոյն համար 1850ին քրիստոնէա-  
 «կան հասարոյ հրահանգը կը հաստատէ թէ եկե-  
 «ղեցական կամ ժողովական օրինօք չորրորդ  
 «կամ հինգերորդ կամ աւելի եւս ամուսնու-  
 «թիւնը չհամարին օրինաւորք «(Եր. 329). Լու-  
 «սինի խօսքը տեսանք . որ ոչ կհաստատէ եւ  
 «ոչ կը հերքէ . այլ միայն կպատմէ : գիտէ որ  
 «թէպէտ կանոնները եւ ժողովները կարգելուն .



ուայց անօրինման ալ տեղի կը թողուն, ինչպէս որ ըիչ մը ետքը նոյն իսկ կանոններուն խօսքերովը պիտի տեսնենք. ուստի շատ զգուշութեամբ եւ խոհեմութեամբ կը խօսի: Իսկ քըննիչը վլորէնտեան ժողովոյն խօսքը մէջ կը բերէ՝ որ անօրինման կարօտ դէպքերը եւ պարագայները հոգեւոր առաջնորդաց ձգելով՝ որովհետեւ ժողովներուն ընելիքը՝ կանոն աւանդել է. եւ ոչ թէ անօրինելի բաներն որոշել. ամէն անամուսին մնացողներուն քանի անգամ ամուսնացած ըլլալն ալ չհարցընելով ամուսնանալուն հրաման տուեր է: Ըստով մեր վերապատուելի հեղինակը այնպէս ցուցընել կուզէ թէ՛ հրահանգը գրողը այնպէս ըսելովը՝ թողոր էջմիածնական եկեղեցին մոլորած եղեր է: Ըստ մեզ՝ քանի որ քրիստոնէականաց իմաստուն քննիչը հաւատոյ նիւթ չեղած բաներուն վրայօք արեւմտեան եկեղեցւոյ ընդհանուր կամ մասնաւոր ժողովներուն ըսածին կը դիմէ՝ ընդդէմ ողջամիտ քննարանութեան կը մեղանչէ. արեւմտեան եկեղեցւոյ սովորութեան վերաբերեալ բան մը արեւելեան եկեղեցւոյ համար ալ ըսուածի պէս ցուցընել ուզելով: որով ծաղրելի ալ կը ընայ ըլլալ: մասնաւոր որ ամուսնութեան կրկնութեանը վրայ նոյն իսկ Հոռովմայ եկեղեցւոյ հայրապետաց զիջմամբ եւ գրեթէ ակամայ հրաման տալը չդիացած կերելի: Գրիգոր Գ Հոռովմայ հայրապետը առ սուրբ Ղանի փակիսս գիր մը

գրած ունի. որը Լաղոէ տպած է Ժապետեան տպարան մէջ (հասար. Ջ. էջ. 1465): Ըստր մէջ կընէ հայրապետը. «Թէ որ ձեռքէդ կուգայ «նէ՛» այդ կողմի ժողովուրդը յորդորէ որ երկու անգամ էր. աւելի չամուսնանան», Սեր վերապատուելի հեղինակն ասիկայ զիտնարնէ՛ արդեօք Գրիգոր Գ հայրապետին համար ինչ կըսէր. որ Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան գրքին հեղինակին լոկ պատմելը թէ՛ եկեղեցական կանոնները չորս անգամ եւ աւելի ամուսնութիւնը կարգելուն. Հոռովմայ եկեղեցւոյ դաւանութեան հիմնական քաթէրութեան կանուանէ: Ըսիկայ նորահաւատ աղգի մը յորդորել հրամայող Հոռովմայ հայրապետ մը գտանք որ յիշեալ քրիստոնէականին հեղինակին համաձայն է: Թէ որ այս հայրապետս ալ ասով Հոռովմայ եկեղեցւոյ դաւանութեան հիմնապէս տարրեր գտնուեցաւ նէ՛ քրիստոնէականաց վերապատուելի քննիչէն հասկընալ կուզեմք թէ Հոռովմայ եկեղեցի ըսելով ինչ կը հասկընայ. որովհետեւ թէ որ մեր հասկըցածին պէս հասկընար նէ՛ վերոյիշեալ քրիստոնէականին պատմած արգելական յորդորը իրօք տուող հոռովմայ հայրապետն իր կառավարած եկեղեցիէն հիմնապէս տարբերեալ ընելու կը ըլլար, ապա թէ ոչ յայտնի հակասութեան մէջ կի յնայ:

Հրահանգին դէմ հիմնական քաթէրութեանց գրածը գրքին թողոր ընթացքին ալ համաձայն չէ. այս տեղս ստատարբութիւնը կը տեսնեմք, որ ը-



սածը քննած գրքին չէ թէ հասարակէն՝ այլ լոկ պարտէն կրճեաեւցընէ, միայն պարտական անունը հասարակի դնելով, զոր Հայ լեզուն շնորհրդ ընդունելու. եւ իր սովորութեանը դէմ որ ամէն ատեն քրիստոնէականներուն մէջէն իրեն մտքին դէմ եկածները բառ առ բառ կօրինակէր, ասոր ըսածը չօրինակելով. չըլլայ թէ կարգացողները հասկընան որ հեղինակին խօսքը հաստատողական չէ. լոկ պատմական է:

Խօսքը մասնաւոր հեղինակի մը ըսածին վրայ չկրնար ըլլալ. հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան այս մասին մէջ հիմնապէս տարբերելուն վրայ պիտի ըլլայ. մենք այս կերպ զրուցուածքին կամ մոլորութեանը՝ թէ որ մոլորութիւն էնէ, Հրահմէն հեղինակին ընկեր կը գանձմք հասկնական հայագրի տաւածաբան մը, որուն թէ՛ շատ ասուածաբանական գրքեր կարդալուն՝ եւ թէ այս գիտութեանս բազմազան ըլլալուն հակառակող չըլլար կարծեմ, մեր քրիստոնէականներուն հակառակողներուն մէջէն. (չեւ ասիկայ է Հ. Գաբրիէլ Լեւաթեան՝ միթիթարեան վարդապետը, որ կրկին ամուսնութիւններուն վրայ խօսած է. եւ մերք անոր խօսածնորն ընթերցողաց դիւրմաց ընելու համար աշխարհաբան թի թարգմանելով այս տեղս կգնեմք երկու անգամ կարգուածներու վրայ խօսածէն սկսելով եւ այս է ըսածը.

« Ինչու մէկ եկեղեցի մը երկրորդ ամուսն»

« Եւ թիւնը անվաւեր ըլլալուն կանոն չաւանդեր. միայն հնար եղածին չափանկէց հըրժարի կ յորդորեն. Կիրեղ Կրուտաղէմացի ( Կոլումբ ընթացաբէան, ԳԼ. Գ. համար. 35 )  
 « կըսէ. մէկ կին առնող երբ թող երկու անգամ ամուսնացողները չբաժնասեն. երկրորդ հարսանիքն ալ անմեղադրելի է. ( Երկր. քերական ( Եր. Գ. Ե. կրկնեայ դասասանութեան )  
 « կըսէ. ո՛չ ես կը համարձակիմ ասանկները այս ամուսնութեան համար մեղադրել, եւ ո՛չ ալ ուրիշներուն հրաման կուտամ դատապարտելու, երբ սուրբառքելոյն մանաւանդ թէ հոգւոյն սրբոյ ուրիշ կերպ երեւցաւ, ուստի ըսի իբրեւս անանկ չը հասկըցուի. որդէս թէ ամուսնացեալները կը պարտաւեմ, վասն զի այն բանն որ կը ընայ տերամբ ըլլալ՝ յանցանք չէ՛. բայց մէկ ամուսնոյ տեղ շատ փեսաներ մտցունելը՝ ցանկութիւն ըսելու չը համարձակիմ ալ նէ՛ կը պիտեմ որ մէկ անգամ ամուսնացեալէն վար է. Եւրրոսիոս ( Գր. Գ. Երեւոյ. ԳԼ. Ժ. Բ. ), երկրորդ անգամ ամուսնաւալու համար բերուած պատճառանքներուն պատասխանը տալէն ետքը կը յարէ. ասիկայ չէ՛ թէ իրրեւ պատուէր կը հրատարակեմք, այլ իրրեւ իրատ կիտսեմք. այրին չէ՛ թէ կը կապեմք, այլ կը քաջալերեմք, վասն զի երկրորդ ամուսնութիւնը չեմք արգելուր. միայն թէ չեմք յորդորեր. Եւստի ըսեմ՝ երկրորդ ամուսնութիւնը չեմք



« արգելէր . բայց չեմք գովեր շատ անգամ  
 « կրկնուածը . վասն զի ամէն օրինաւոր բանը  
 « օգտակար չըլլար : Հերոնիմոս ( Ռոմլի . ԻԵ .  
 « Կաթ . Սարգիս ) կըսէ . մենք երկրորդ պատկը ա-  
 « լելի կշնորհեմք , բան թէ կուզեմք որ ըլլայ :  
 « Եւ դարձեալ նոյնը ( Ռոմլի . ՃԻԳ . Կաթ .  
 « Պերոս կիս համար . 71 ) կըսէ . հապա ինչ , եր-  
 « կու անգամ ամուսնանալը կդատապարտեմք  
 « արգեօք . ո՛չ բնաւ . այլ առաջինը կգովեմք :  
 « Արգեօք երկու անգամ կարգուողներն եկե-  
 « ղեցիէն դուրս կը ձգեմք , քա՛ւ լիցի . այլ  
 « մէկ անգամ կարգուածները ժուժկալութեան  
 « կյուրդորեմք :

« Ամէն եկեղեցիներ վարդապետներուն  
 « հասարակաց միտքն այս էր . բայց շատ ան-  
 « գամ երկրորդ ամուսնութեան գրդիչ՝ անժուժ-  
 « կալ հեշտութիւնն է . եւ շատ դեշուժիւն-  
 « ներ ալ ասկէց կը ծագին : Կուստի կանոնական  
 « օրէնքները բողոքովին ազատ ձգել չուզեցին  
 « անոր համար եկեղեցիներու ընդհանուր կա-  
 « նոնները սահմանեցին որ երկու անգամ կար-  
 « գուողներն եկեղեցական աստիճաններու ան-  
 « ընդունակ ըլլան : Արեւելեան եկեղեցոյ մէջ  
 « Աեոփէսարոյ ժողովի 314 թուին երրորդ  
 « կանոնին մէջ երկու անգամ կարգուողներուն  
 « ապաշխարութիւն կսահմանէ . եօթներորդին  
 « մէջ ալ քահանաներուն կպատուիրէ որ երկ-  
 « րորդ ամուսնութեան հացկենոյթին չգտնու-  
 « ին : Ամանացպէս Վաղարշապատի ժողովի ալ 368-

« րն՝ տողին կանոնին մէջ կուանդէ որ եր-  
 « կու անգամ կարգուողներն աղօթք ընելէն  
 « եւ պահք պահելէն ետքը միայն ներողու-  
 « թեամբ հրաման առնու չադորդութեան :  
 « Ենձն Ռարսեղ ալ նոյնը կուանդէ ( Ռոմլի .  
 « Ծը . Կաթ . Արգեօք . Կանոն 8 ) . ըսելով  
 « թէ երկու անգամ կարգուածներուն հա-  
 « մար տարի մը կամ ըստ սմանց երկու աս-  
 « րի ապաշխարութիւն սահմանուած է : Կո-  
 « կերերան ալ ասոնց ձայնակից ըլլալով կը-  
 « սէ ( Մկն Յովնանու Ռ . 17 . Եր . 702 . Ըստ  
 « Կաթարգի ) . թէպէտ գործը պատժոյ արժանի չէ .  
 « բայց եկեղեցոյ օրէնքով պատժոյ տակ է :  
 « Յոյն յազաթա ոչ կրկնուց զամուսնութեան ճա-  
 « ոնին մէջ որ վերը յիշուեցաւ՝ կըսէ թէ օ-  
 « րէնք ընողներն երկու անգամ կարգուելուն  
 « վնասը տեսնելով հանդէսները վրայէն վեր-  
 « ցուցին , այն գեշերը ոչ փողերը կպայծա-  
 « ւացընեն . ոչ ցնձութիւն . ոչ մեծահանդէս  
 « ուրախութիւններ , ոչ հարսանեաց պսակ .  
 « եւ ոչ ուրիշ բան մը . ցուցընելով որ բա-  
 « նը ներողութեան է միայն . դովելու եւ  
 « խնդալու եւ պսակներու բան չէ :

« Արեւմտեան եկեղեցոյ մէջ երրորդ  
 « պսակին արգելք չկար . մինչեւ անգամ Հե-  
 « րոնիմոս կըսէ ( Ռոմլի . Ծ . Գլ . 7 ) . « ոչ  
 « երկու անգամ կարգուողները կդատապար-  
 « տեմ , ոչ երեք անգամ . եւ ոչ . թէ որ կըր-  
 « նայ ըսուիլ ութն անգամ ամուսնացեալնե-







,, դրաւ եւ հաղորդութենէ արգիլեց : Ըսոր  
 ,, համար ժողով եղաւ 900ին ատենները կոստան-  
 ,, դնուպօլիս՝ ամէն պատրիարքական աթոռներ-  
 ,, րէն . եւ ամուսնութեանը թոյլտուութիւն  
 ,, եղաւ . բայց յաջորդ տարին Նիկողայոս ու-  
 ,, թիշ մետրապօլիտներս վալուբիշ ժողովք ընե-  
 ,, լով Աէոն կայսրը եկեղեցիէն արգիլեց . եւ  
 ,, երկար խռովութիւններէ ետքը աթոռը խա-  
 ,, ղաղքընելու համար 910 թուին ժողով մ՝  
 ,, օլ եղաւ կոստանդնուպօլիս . ուր վճիռ եղաւ  
 ,, որ մէկ մ՝ ալ չորրորդ պատկին հրաման չը-  
 ,, արուի . իսկ երրորդին՝ դժուարաւ :

,, Բաճններէս յայտնի է որ ամուսնանա-  
 ,, լու ազատութիւնը՝ որուն նորահաւատ քրիս-  
 ,, տոնեայներու նկատմամբ կապ մը չդրու ա-  
 ,, ռաբեալն՝ անոնց տկարութեանը զիջանելով՝  
 ,, եկեղեցին կըրնայ իւրաքանչիւր աղգերու մէջ  
 ,, քրիստոնէութիւնը հաստատուած եւ տարա-  
 ,, ծուած ատենները իրաւացի պատճառներու  
 ,, համար կանոններով շարիւտ տակ ձգել : Ըսյս  
 ,, պատճառով մեր աղգին մէջ օրէնքի պէս ըան  
 ,, մըն է այրիին՝ այրիի եւ ո՛չ կուսի մը հեա  
 ,, ամուսնանալը . եւ երիցակիներուն համար  
 ,, 441 թուին Շահապի վանու ժողովը երրորդ  
 ,, կանոնին մէջ կը սահմոնէ որ բահանայն մեա-  
 ,, նի նէ՝ չկըրնար կարգուիլ ,, : ( շ . Գար-  
 ,, լիէլ Ըւեթիբեան . Կիլի . Ը . կարնի Է . 39 ) :

Ինչ որ ներկայ նիւթոյս վրայ կըրնայինք  
 խօսիլ՝ իմաստուն վարդապետը խօսեցաւ . եւ իր

կըսնակից վերապատուելին ալ սորվեցուց վը-  
 կայութիւններով եւ օրինակներով՝ որ առա-  
 քելոյն իր ժամանակին պարագայիցը նկատմամբ  
 զիջողութիւն ըրած ըանին վրայ եկեղեցին կըր-  
 նայ իւրաքանչիւր ազգաց մէջ կանոններ սահ-  
 մանել . մէկը իր հրամանը քիչ մը ընդարձակ  
 բընելով . եւ միւսը ամփոփելով . եւ ասկէց  
 ոչ հերետիկոսութիւն կելլայ եւ ոչ հիժմական դար-  
 քերութիւն : Եւ այս ըսածներուն ապացոյց ահա՝  
 կանոն , ահա՝ հայրապետներ եւ ժողովներ եւ եւ-  
 կեղեցուց սովորութիւն , եւ անոնց առանց պա-  
 խարակելու՝ եւ մանաւանդ պատճառներ ցու-  
 ցընելով՝ ըստ իմիք պաշտպան հռովմէական վար-  
 դապետ մը : Եւրեօք մեր քրիստոնէականնե-  
 բուն բննիչը մօտ օրերո՞ գիրք մը չէնէ գոնէ  
 անտրակ մ՝ ալ կը համէ՞ հիժմական դարքերութիւն  
 Ալեքսանդրի միջնաբերանց եւ հասկնալիս էկեղեցու  
 դատանալիս մէջ վերնագրով : Բանի մի հեղ  
 փորձ փորձեցին ուրիշները . բայց Ալեքսանդրի-  
 ցիք արգարացան եւ իրենք լսելու պատուէր  
 տին Հոսմէն : Աւստի թէ որ ինծի կը հորցը-  
 նէ , այդպէս գիրք կամ տետրակ մը հանելու  
 ըլլայ նէ՝ վերայիշեալ մակագրին մէջէն հասկ-  
 նալիս էկեղեցուց բառերը վերցընէ . եւ շ . Գ .  
 Գ . ին դատանալիս մէջ գնէ : Եւրեօն հրատարա-  
 կած մատեանն ալ զոր կը բննեմք՝ աւելի այս  
 մակագրիս արժանի էր , քան հիմայ ունեցա-  
 ծին . եւ մենք ասոր ստուգութիւնը մինչեւ  
 հիմայ տեսանք . եւ ասկէց ետքն ալ պիտի



տեսնեմք: Ետով ամբաստանութեան այս գը-  
լուխս ալ հիմնական պարզութեանց կարգէն դուրս  
մնալու արժանաւոր կըլլայ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Գրատուիրանք

Ետո վրայ խօսածները նախընթացներէն  
պակաս հետաքրքրական չեն: Քրիստոնէական-  
ները իրարու անհամաձայն գտեր է շատերը:  
Ն Կ մասնաւորի 1858ին կրօնական ժողովոյ  
վաւերացուցմամբ սպուած Քիւսի վարդապետա-  
րանը կըսէ եղբր որ եկեղեցւոյ երրորդ պատ-  
ուիրանը՝ տարին գոնէ Քիւսի անգամ խոստովանել  
եւ հաղորդելն է: Եւոյն ժողովոյն վաւերաց-  
ուցմամբ նոյն թուին կոստանդնուպոլիս տըպ-  
ուած քրիստոնէականը երրորդ պատուիրան՝ տա-  
րին գոնէ երկու անգամ խոստովանելը, եւ չոր-  
րորդ պատուիրան՝ նոյն միջոցին գոնէ երկու ան-  
գամ հաղորդուելն ըսեր է: Իսկ ասոնցմէ ա-  
ռաջ 1826ին սպուած Լապտերհայրայ ըսուած բը-  
քիստոնէականն աւելի խիստ ըլլալով՝ եկեղեց-  
ւոյ երրորդ եւ չորրորդ պատուեր՝ տարին գոնէ  
երեւ անգամ խոստովանելը եւ նոյնչափ անգամ  
հաղորդելն ըլլալը ցուցուցեր է: Ետոնք գրե-  
լեն ետքը կըսէ. « այսպէս հայաստանեայց ե-  
կեղեցւոյ քրիստոնէականներն եկեղեցւոյ պատ-  
ուիրանը եկեղեցւոյ խրատին հետ կըլլիթենն»:

(Հիմնական տարբեր էր. 330 331): Ի՞նչ ծա-  
նըր յանցանք. Ի՞նչ սոսկալի հերետիկոսութիւն:  
եկեղեցւոյ դաւանութիւնն որքա՞ն խոսքով է՝  
եկեղեցւոյ պատուէրն ու խրատն իրար խառնելը:  
Ետով ոչինչ պատճառի մը համար մէկ ազգի  
մը իրարմէ բաժնուած երկու մասին մէջ այս-  
պէս բաներ գրելով եւս առաւել հետաքրքրելը եւ  
ատելութիւնը զայրացընելը եւ իրար նախա-  
անլու եւ թշնամանելու սնտի պատճառներ  
թեւադրելով մեծ դայթակղութիւններու պատ-  
ճառ տալը՝ մեր վերապատուելի հեղինակին շատ  
թեթեւ մեղք երեւցած պիտի ըլլայ. քան թէ  
եկեղեցւոյ պատուէրները եւ խրատներն իրար  
շփոթելը, որ առաջինն ընելու յանձնառու եւ  
զերէ ստուար գիրք մը շինելով եւ ուսմիկ հա-  
սարակութեան մէջ ցրուելով եւ անոնց գայ-  
թակղութիւններ պատճառելով. եւ այս գիրքս  
աւելի մեծցընելու համար՝ այսպիսի սնտի բու-  
ները մեծ բանի տեղ դնելով մէջն առեր եւ ընդ-  
դէմ խօսելու ուղեր է: Արոշելը կը սիրէ. եւ ե-  
րանի՝ թէ միայն պատուէրներն ու խրատներն  
իրարմէ որոշեր. եւ իրարմէ որոշուած ազգայ-  
նոց մէջ միութեան կէտ դանելու միտք յոգ-  
նեցընելով՝ անոնք միաբանելու աշխատեր:

Ի՞նչ բուռն խնդրոյն գալով կըսեմք. արդ-  
եօք եկեղեցւոյ պատուէրն ու խրատը իրարմէ  
չկըրնալ որոշելը՝ եւ խրատն իրարմէ պատուէր  
ցուցընելը շատ մեծ յանցանք է. եւ դաւա-  
նութեան վերաբերեալ մոլորութիւն է: Չկա՞ն



արդեօք նոյն իսկ սուրբ աւետարանիս մէջ այնպէս բաներ որ մէկնիչներէն եւ աստուածաբաններէն ոմանք խրատ եւ ոմանք պատուիրան կը կարծեն : պատուէրն ու խրատն իրարմէ որոշող նշանն ո՞րն է . եւ ասիկայ ո՞ր քրիստոնէականին կամ ո՞ր աստուածաբանութեան գրքին մէջ գըրուած է . ո՞ր ժողովը վճռեր է . ի՞նչ հիման վրայ հաստատուած է . եւ արդեօք այդ նշանն չըճանչնալով , ( զոր կարծեմ ինքն ալ աղէկ մը չճանչնար ) . ասոնք իրարու հետ շփոթողը կը մեղանչէ՞ : Բայց մենք ուրիշ ըսելիք ալ ունիմք :

Հաղորդուելու եւ խոստովանելու ժամանակին վրայ քրիստոնէականները իրարմէ տարբեր կարծիք ունին եղեր . ասիկայ չէ թէ Էֆեսոսի եկեղեցին , այլ իրարմէ Կոստանդնուպոլիսէն է . եւ ասոնց մէջէն ալ միջին վարդապետական զոր կրօնական ժողովը վաւերացուցած ըլլալը նոյն իսկ վերապատուելի հեղինակը կը խոստովանի , իւրաքանչիւր քրիստոնէի գոնէ տարին մէջ անգամ խոստովանելը եւ հաղորդելը եկեղեցւոյ պատուիրանք է ըսելով՝ հռովմէական եկեղեցւոյ համաձայն խօսեր է . եւ Հայաստանեայց եկեղեցին որուն ներկայացուցիչ ընդունած է մեր վերապատուելին զկրօնական ժողովն Առասանդնուպոլիսի . ասոր դէմ չխօսելէն զատ ասիկայ վաւերացացիք ալ է . ուրմն ո՞ւր է այս տեղ հռովմէական եկեղեցիէն հիմնական կամ ինչ եւիցէ տեսակ տարբերութիւն , իւրիշ քրիստոնէականներուն մէջ կայ եղեր որ

երկու անգամ խոստովանիլն ու հաղորդուիլը պատուիրանք սեպեր է , եւ կրօնական ժողովն ասոր ըսածն ալ վաւերացուցեր է . ասկէց ալ Կոստանդնուպոլիսն մը չեւլլեր . ապա թէ ո՞չ հոյոց ազգը քրիստոնեայ եղած եւ եկեղեցի կազմած ժամանակէն՝ սուրբ գիրքն ալ վաւերացուցած է . որուն մէջ կը կարգամք որ չէ՛ թէ տարին մէջ կամ երկու կամ երեք անգամ . այլ հասարակ զոր կանխեալ միաբանութեամբ ՚ի տաճարն եւ ատանին բեկանէին զհացն ( Կորնթ . Բ . 46 ) . եւ վերապատուելի բնիչը աղէկ գիտէ որ այս հացի բեկումը որ տաճարը կըլլար՝ սուրբ հաղորդութեան վրայ կը մեկնուի : Եւրդ՝ հայաստանեայց եկեղեցին ասիկայ ալ վաւերացընելով , եւ հին ժամանակներն՝ ուրիշ քրիստոնեայ ազգաց պէս վարուելով , որ ամէն օր չէ ալ նէ՛ գոնէ շաբաթն անգամ մը , գոնէ ամիսն անգամ մը հաղորդիլ կը պատուիրէին , եւ այնպէս կը գործագրէին , հռովմէական եկեղեցիէն հիմնապէս տարբերած եղան : Վերստոնէականաց իմաստուն քննիչներուն համար չէ ալ նէ՛ մեր ընթերցողաց համար մեր քրիստոնէականներուն մէջ մտած պարբերութեան պատճառն ըսեմք :

Բարեպաշտութիւնը եւ ջերմեանդութիւնն օրէ օր պաղելով սուրբ խորհրդոյն արժանապէս մտաչելու լիախաբն ալ ցրտացած կըտեսնուէր . 1826ին այնքան պաղած չէր . ջերմեանդ եւ կրօնասէր մարդիկ հիմակուանէն ա-



եւ լի կգանուէին : Ասոնց հետ խառն թուլ-  
 կրօն մտորիկ ալ կային , ջերմեռանդները ա-  
 րին գոնէ երեք անգամ խոստովանիլը եւ հա-  
 ղորդիլը իրենց պարտք մը սեպած էին . եւ  
 այն ժամանակի պատրիարքը՝ Տ. Արապետ սըր-  
 բազան արքեպիսկոպոսը ամէն հաւաացելոց  
 մէջ միակերպութիւն տեսնելու փափաքով իրեն  
 յօրինած Լատրէք հոգոյ մակադրեալ բրիտո-  
 նէականին մէջ տարին երեք անգամ խոստովա-  
 նելու եւ հաղորդելու պատուէր կրէն . եւ  
 մինչեւ հիմայ նոյն պատուէրին հետեւող շա-  
 կայ . եւ քարողիչներն ալ թէ Արմենիան թէ  
 Աստիի եւ թէ Արարիտիան տներուն մօտ  
 օրերը ժողովուրդը կը յորդորեն որ խոստ-  
 վանութեամբ ուրբ հաղորդութիւն անելու  
 պատրաստ գանուին :

Անկէք ետքը ազգին մէջ բողոքողաններ  
 մտնելով , եւ արեւմտեան ազգաց մէջ գըտ-  
 նուած անհաւատներուն նմանողութիւնը մէկ  
 բարակութիւն մը սեպելով շատերը խոստովա-  
 նութենէ եւ հաղորդութենէ հեռացան : Այն  
 ժամանակներու բրիտաննէականներն ալ ասոնց  
 հօրկ ըլլալը պղտոց մաացը մէջ տպաւորելու  
 համար կըսորվեցընեն որ բրիտաննէին պարա-  
 կանութիւն է գոնէ տարին երկու կամ մէկ  
 անգամ խոստովանել եւ հաղորդիլ : Եւ մեզի  
 կերելի որ ասոր մէջ դաւանութեան դէմ բռն  
 մը չկայ . որ կըլլար թէ բրիտաննէականները  
 առանց խոստովանութիւն պահանջելու միեակ

հաղորդութեան համար խոսէին : Էսանկ ընող  
 ալ կայ նէ մէկէն ՚ի մէկ շեմք կրնար դատա-  
 պարտել իբրեւ առանց խոստովանութեան եւ  
 իր անձը չփորձելով այն սուրբ եւ խորհրդա-  
 կան հայն ու զիմին տեսնն միայ պատուա-  
 կան մարմինն ու արիւնը ճաշակել խրատող . ո  
 ուղբելական պատուէրին դէմ . այլ կըրնայ ըլ-  
 լալ որ հասարակաց եւ ամենուն զիտցած եւ  
 գործածած սովորութիւնը գիտնալով որ առանց  
 խոստովանութեան չեն հաղորդիլ : հաղորդու-  
 թեան անուան հետ խոստովանութիւն ալ ինք  
 նին հասկըցուելու ապահովութեամբ միայն ա-  
 սոնց մէկը յիշելը բաւական սեպեր է :

Ասոյց այն չեմք գիտեր թէ մեր վերապատ-  
 ուելի բնիչը , որ այս բանիս վրայօք եկեղեց-  
 ւոյ պատուէրն ու խրատը իրար շիտթուած ըլ-  
 լալը կըպարսաւէ եւ կաթուղիկէ եկեղեցւոյ  
 դաւանութենէն տարբեր դաւանութիւն մ'ըլ-  
 լալ կըցուցընէ , ինչո՞ւ համար իր ընթերցող-  
 ներուն յայտնի շտորվեցընէր թէ այս նիւթոյս  
 նկատմամբ պատուէրն օրն է . խրատն օրն է .  
 թստ որում հռովմէական եւ հռովմայ եկեղեց-  
 ւոյ վարդապետութեանց մանր կէտերուն ալ  
 յարեալ , տարին միայն մէկ անգամ մը խոս-  
 տովանիլն ու հաղորդիլն եկեղեցւոյ պատուէր ,  
 իսկ անկէք աւելին խրատ է պիտի ըսէ : բայց  
 ինչո՞ւ համարձակ շըսեր ասիկայ : Ասոր ճշմա-  
 րիտ պատճառը չեմք կըրնար գուշակել կըկար-  
 ծեմք որ այսպէս տարբերութիւն մը չ'ըսուի :



եկեղեցւոյ մէջ ալ կենալուն համար է, 813  
 թուին Տուրոն գումարուած ժողովը յիսուն-  
 ներորդ կանոնովը կը պատուիրէ որ աշխարհա-  
 կանները տարին երեք անգամ հաղորդին: «Նոյն»  
 թուին Սարիլոնի ժողովը 46 եւ 47 կանոն-  
 ներուն մէջ տարին մէկ անգամ մը՝ աւագ հինգ-  
 շաբթի օրը հաղորդուիլը պարտականութիւն կը  
 սեպէ. եւ պարտականութիւն պատճառողը ո՛չ  
 թէ խրատը՝ այլ պատուէրն է. ուրեմն այս ժո-  
 ղովս հաղորդութեան վրայօք ժամանակ որոշե-  
 լը պատուէր սեպած է: Իսկ 1էոն Դ՝ հռովմայ  
 հայրապետը, որուն հայրապետութեան ժամա-  
 նակը 847 էն 855, քահանաներուն կը պատ-  
 ուիրէ որ ժողովուրդը տարին չորս անգամ հա-  
 ղորդուելու յորդորեն. եւ օր ալ կ'յատկացը-  
 նէ. ծննդեան տօնին օրը. աւագ հինգշաբթի  
 օրը. զատկին եւ հոգեգալստին: Ըստնցմէ առաջ  
 506 թուին, Ըգաթեայ ժողովքը 18 ներորդ կա-  
 նոնին մէջ՝ տարին երեք անգամ սուրբ հաղոր-  
 դութիւն չառնողը քրիստոնեայ չսեպեր. եւ  
 հաղորդուելու օր կը յատկացընէ ծնունդը, զա-  
 փկը եւ պնտէկոստէն: Եւ յայտնի է որ  
 մէկ մարդ մը ուղղափառ չսեպուելու կամ հե-  
 րետիկոս սեպուելու համար եկեղեցւոյ կամ հա-  
 ւատքին կամ պատուիրանքին դէմ ըլլալու է:  
 Աւրեմն Ըգաթեայ ժողովքն ալ տարին քանի մի  
 անգամ հաղորդուիլը զոր ինքն երեք անգամի  
 կը լինանգակէ: Եկեղեցւոյ պատուէր կը սեպէ:  
 Եւ այսպէս, թէ պատուէրն ու խրատն իրար

շիտթելու մասին, եւ թէ հաղորդուելու ասոր  
 համար չհամաձայնելու մասին՝ մեր քրիստոնէ-  
 ականներն ալ հռովմական եկեղեցիէն տարբե-  
 րութիւն չունին: Եւ վերապատուելի հեղինա-  
 կին այս նիւթոյս վրայ տեսած տարբերութիւնը  
 իր երեւակայութեան ներկայացուցածն է միայն:  
 Այսքան միայն առ տեղեւս բաւական կը սե-  
 պենք նշանակելը որ այս ամբաստանութիւնս  
 ալ սնտոի բան մ'եկաւ. եւ մեր քրիստոնէա-  
 կաններուն՝ եկեղեցւոյ պատուիրանն ու ուխտն  
 իրարմէ որոշել չգիտնալը հաւատացելոց աւե-  
 լի օգտակարէ, ջերմեռանդութիւննին տածելու  
 գըրդիւ մ' է. սուրբ հաղորդութեան խորհրդոյն  
 որքան անգամ մերձենան նէ՝ անոր բերած հո-  
 գեւոր շնորհքը այնքան աւելի կը վայելէն. ուս-  
 տի այս ալ հիմնական դարձերտութեանց կարգէն հա-  
 նելու է:

Իմաստուն քննիչը՝ մեր քրիստոնէականնե-  
 րուն մէջ՝ հռովմականէն տարբեր ուրիշ բան  
 մը ալ գտեր է: զոր իր ձեռքի ուղղափառ գոր-  
 ծիքովը չափելով ծուռ գտեր է. ուստի շատ  
 վարդապետութիւն կանուանէ: Միջակ փորձա-  
 դեպքանը կըսէ եղեր՝ որ « ծառայութեան գոր-  
 օ՛՛ծերեն որ եւ իցէ աշխատանք կամ ձեռագործ  
 « որով մարգս ապրուստ կը ձարէ », ( էր . 78 )  
 հետեւաբար՝ կիրակի օրերն ալ գործելու ար-  
 դիլուածներն այսպիսի գործերն են: Մանր սա-  
 հունն քրիստոնէական հասարակ մակագրեալ քրիստո-  
 նէականն ալ այս մտքիս վրայ գտեր է ( էր 40 ):



Իմաստուն բնիչն այս պարագայիս մէջ իր ուղղաշարիւր կհասնէ՝ եւ ասոնց ծառութիւնը ցուցընել կուզէ. կըսէ. «գործի մը ծառայութեան » գործք ըլլալն ու չըլլալը անով ապրուստ » ձարուելէն կամ չձարուելէն չորսւշոր, հա- » պա գործքին բնութենէն կըրնայ մէկը կի- » րակի կամ տոն օրով՝ ապրուստ ձարելու կամ » շտհաւոր գործ մ՝ ընել առանց ծառայութեան » գործ մ՝ ըրած ըլլալու այսինքն աղատի եւ » ոչ ծառայի գործ գործելով : Օրինակի ա- » դազաւ պատկեր գծել կամ գծագրութիւն- » ներ ընել, գիրք գրել, Ասոր հակառակ եկե- » ղեցույ պատուիրանին դէմ կընէ, թէ որ նա » եւ ձրի կամ զրօսանքի համար ծառայի գործ » գործէ : Օրինակի աղադաւ հողագործու- » թիւն ընէ կար կարէ. եւ այլն (եր 333) :

Թաղութիւն կը խնդրեմք վերապատուելի հեղինակէն. մենք մինչեւ հիմայ կը կարծէինք երեւելի բարոյագէտ ասուածաբաններուն խօսքէն իտարուելով, թէ բարոյական գործերը՝ ուրոնք միայն են մէկ գործողութիւն օրինաւոր կամ ապօրինաւոր բարի կամ չար ընողը, գործողին գիտաւորութենէն կախում ունին մեծապէս. եւ նիւթական գործողութիւններնայս նկատմամբ ընդհանուր կարեւորութիւնն մը չունին : Իմայ իրմէ սորվեցանք որ կիրակի օրերը գործելն օրինաւոր եղածը գտնելու համար այս կանոնն օգուտ չընէր. իրենց բնութեամբը ծառայական կամ աղատական գործէր կան ծա-

ռայականներն արգելեալ են. միայն աղատակաները կրնան գործուիլ առանց կիրակի պահելու հրամանին դէմ մեղանչելու :

Այս հաշուով ըսինք թէ աղքատ մարդու մը վրան ծածկոյթ առած հանդերձը կիրակի օր մը դիպուածով պատուեցաւ կամ բակուեցաւ եւ անգործածելի եղաւ եւ անիկայ անկէց զատ հագնելիք չուենեալով մերկ պիտի մնայ, ինքը ոչ նորը կրնայ գնել, եւ ոչ բակուածը կարել կամ պատուածը կարկրտել, մէկն այն խեղճը այս վիճակիս մէջ տեսնէ եւ առանց վարձ ուզելու եւ միայն ողորմութեան գործ սեպելով պէտք եղած նորոգութիւնն ընելու ըլլայ նէ կիրակին աւրած եւ մեղք գործած պիտի ըլլայ. իսկ թէ որ թատրոն երթայ դերասանութիւն ընէ. կամ գործարանը բանայ եւ պատկեր գծէ կամ բարի վրայ արձան փորէ՝ կամ տուն շինէ նէ՝ կիրակին աւրած չըլլար. թէ եւ ասոնք ամէնն ալ ստակ վասաբկելու համար կը գործուին : Ահա այս է մեր իմաստուն բնիչին ուղիղն ու ծուռը հասկընալու համար գործածած ուղղաշարիւր : Ի գործադրութեան հոսմէական կարգաւորներն այս կանոնով ըս չեն վարուիր. ինչ բան որ դրամ շահելու համար կըլլայ՝ կարգելու կիրակի օրերը, թէ նկարչութիւն ըլլայ. թէ արձանագործութիւն, թէ ձարտարապետութիւն, թէ ատրոններու համար ալ զանազանութիւններ կը գնեն. մաքուր բարոյական ունեցող թատերա-



դաս խաղերուն հրաման կուտան . որովհետեւ ]  
 ժողովրդեան զուարճալի եւ միանգամայն օգ-  
 տակար զբուսանք են . իսկ այսպիսի չեղողնե-  
 րուն բնաւ երբէք հրաման չին տար ոչ կիրա-  
 րի եւ ոչ ուրիշ օրեր : Կը բոլոր Եւրոպայի  
 մէջ ուր որ կիրակի պահելու օրէնքը հասարա-  
 կօրէն կը բռնուի՝ բանեցընողներուն շահ բե-  
 րելու սահմանուած տեղերն ամէնն ալ կ'ոգո-  
 սին . մինչեւ անգամ արձանագործները եւ նը-  
 կարիչները եւ ազատական ըսուած արուեստ-  
 ները բանողները խանութիւն չեն կրնար բա-  
 նալ : Օտէն արդի մատենագիրը հոռովմէական  
 կանոններէն առնելով կըսէ . «կանոնն աշա-  
 ,, կերտին կըններ տօն օրերը համարը սերտել  
 ,, կամ կարդալ (դաս տալ) . վասն զի թէ որ  
 ,, հասարակաց օգտին համար կամարը նորոգելու  
 ,, շէնքը ներեալ է նէ՝ առաւելագոյն իրաւամբ  
 ,, կըրնայ մարդ Ետտուծոյ արքայութիւնը ա-  
 ,, ռաջ տանելու ուսման մը պարագիւլ (դաս .  
 ,, քրոջ կալիքնի . կարոյ . Ե . եր 32) : Եստ  
 գրողն աշխարհական է : բայց խօսքը հոռովմայ  
 եկեղեցւոյ կանոններէն առած է : Հիմայ հը-  
 առովմէական դպրոցները կիրակի օրերը գոց կըլ-  
 լայ զիչըրթիկներուն մէջ ալ դասատուութիւն  
 չըլար . մեր դպրոցներն ալ այնպէս են բացի  
 կրակնի քոլոցներէն, ուր ուսանողները բանի  
 գործի աէր են . եւ շարթու մէջ իրենց ադ-  
 րուստը ճարելու պարտաւորեալ ըլլալով տնօ-  
 րինում մ'է անոնց համար կիրակի օր դպրոց-

նին բաց ըլլալը : Կիրակի օրերը ոչ բան սոր-  
 վեցընելն արգիլեալ է եւ ոչ սորվելը : Ղըպ-  
 րոցներուն գոց մնալուն պատճառն այն է որ ա-  
 սոնք վարժապետներուն շահու տեղ , եւ որ-  
 պէս թէ խանութ կը սեպուին : Կերակն քոլոց-  
 ները մեր ազգին մէջ բաց են նէ՝ ուսուցիչ-  
 ները ձրի դասատուութեան պարտաւորեալ են :  
 Ճառայական եւ ազատական գործերն ալ  
 իրարմէ ազէկ մը որոշուած չեն . որով կիրակի  
 օրերը բանուելու կամ չբանուելու գործերը  
 չեն զիացուիր : Հոռովմայ եկեղեցւոյն ժողով-  
 ները եւ հայրապետներն երբ կիրակիին սուրբ  
 պահելու կերպին վրայ մանրամասն տեղեկու-  
 թիւններ տալու կելլեն , իրարմէ ասարբր կը-  
 գտնուին : 538 թուին՝ Աւրէլիանայ Պ . ժողովքը  
 Իլ . երորդ կանոնով կարգելու կիրակի օրերն  
 արտերու եւ այգիներու մէջ աշխատիլը , խոս  
 քաղելը , ցորէն հնծելը եւ ծեծելը եւ հոսե-  
 լը . եւ պատճառն ալ կըզնէ . «որպէս զի կըսէ  
 ժամանակին եկեղեցին երթալը զիւրին ըլլայ» :  
 585 թուին Սալոնի ժողովը առաջին կանոն  
 կըզնէ կիրակի օրերը փաստաբանութիւն չընկլ  
 եւ մշակութիւն ընելու համար լուծ չըծել :  
 Փաստաբանութիւնը ազատական արուեստի եւ  
 գիտութեան մ'ալ գործնական կիրառութիւն է .  
 այսինքն՝ ճարտասանութեան եւ տրամաբանու-  
 թեան եւ իրաւագիտութեան , իսկ լուծ լծելը  
 ծառայական է . եւ ժողովն սսոնք երկուքը  
 մէկտեղ բերելով կարգելու նէ՝ վաստակի հա-



մար գործուելիք բան ըլլալէն զատ պատճառ  
 մը չհասկըցուիր : Սուրբն Թէոդորոս կանդու-  
 րիոյ արքեպիսկոպոսը եօթներորդ գարու մա-  
 տենագիր , հրահանգ պատշաճապայայ գրքին մէջ կը-  
 սէ . կիրակի օրերը ձիով կամ կառքով կամ  
 նաւով ճանապարհորդութիւն ընելը միայն ե-  
 կեղեցի երթալու համար ըլլայ նէ ներեալ է .  
 եւ կիրակի օրը հաց եփելն անգամ կարգելու :  
 Սրբոյն Թէոդորոսի ժամանակը , 755 թուին  
 է Սէրնորեան ժողովը , որ յ. 9. երորդ կանոնո-  
 վը հրաման կուտայ կիրակի օրերը ձիով կամ  
 եղնով կամ կառքով որ եւ իցէ ճանապարհոր-  
 դութիւն ընելու , ուսելիք պատրաստելու եւ  
 ինչ որ տանը կամ անձին պէտք եղած էնէ կա-  
 տարելու , միայն արտերը բանելը եւ մշակու-  
 թիւնը կարգելու : Իսկ սուրբ Վրիգոր մեծ՝  
 Հոռովմայ հայրապետը՝ առ հոռովմայեցին գրած  
 նամակի մը մէջ (գր. յ. 9. նամ. 1.) կըսէ թէ  
 կարեւոր գործի մի համար կիրակի օրերը բան  
 բանիլը չեմք արգելուր . եւ ետքը ընդհանուր  
 կանոն կըդնէ՝ որ այս ըսածին հակառակ կե-  
 րեւի . կըսէ . կիրակի օրերը մարմնաւոր աշխա-  
 տութիւններէ ետ կենալու , եւ շարժուան վեց  
 օրուան մէջ եղած գանցաութեան մեղքերը  
 բաւելու համար աղօթքի պարտաւելու է :

Եյս իրարու չմիաբանիլ երեւցած կանոն-  
 ները պատճառ կըլլան՝ որ մեր իմաստուն մա-  
 տենագիրը . հիմաւան արքեպիսկոպիտանց գրքին մէջ  
 գործածած՝ ծուռ ու շիտակ վարդապետութեան

ուղղաչափը ասկէց առաջ ուրիշ տեղ մը իր ձեւ-  
 քովը կոտրած է . հիմաւան արքեպիսկոպիտանց մէջ  
 ծառայական , ուստի եւ կիրակի օրերը չբանուե-  
 լու գործոց կարգը դրած էր հսկայորձոնիւն ը-  
 նելը ինչպէս որ տեսանք . բայց արքեպիսկոպիտան  
 պատճառութեան մէջ (հար. Ի. էր. 250) . կըսէ որ  
 չորրորդ դարուն մէջ , այսինքն՝ հայրապետաց  
 շատութիւնովն ու իմաստութիւնովը աւելի ծաղ-  
 կած՝ եւ ընդհանուր եկեղեցւոյ բարեկարգու-  
 թեան մեծ մասը դրուած եւ հաստատուած  
 դարուն մէջ կիրակի օրերն երկրագործութիւն  
 ընելը ներեալ էր . եւ այն ատենուան հայրա-  
 րապետներէն ասոր դէմ բողոք ըլլալը չպատ-  
 մեր : Մի եւ նոյն ուղղաչափով՝ մի եւ նոյն  
 երկրագործութեան՝ կիրակի օրերը չբանուելու ,  
 միանգամայն եւ բանուելու ըլլալը չգտնուիր .  
 ըսել կըլլայ որ չորրորդ դարու հայրապետաց  
 ձեռքի ուղղաչափը չէ՝ մեր վերապատուելիին  
 ձեռքինը . եւ որովհետեւ անոնց ձեռքինին  
 համար ծուռ էր ըսելու չհամարձակիր կարծեմք ,  
 իր գործածածին ծառութիւնը խոստովանելու կըս-  
 աիպուի :

Եյս ուղղաչափը իբրեւ շիտակ՝ ամուր բըռ-  
 նելով ինչ պատասխան տալու է տեսան մերոյ՝ երբ  
 շարաթ օրերը ծառայական գործն արգիլեալ սե-  
 պելով ձեռքը չորրորդ մարդ մը բժշկած ասանը  
 զինքը պարսառնեցուն պատասխանածին նման  
 բան մը մեզի ըսէ . « ո՞վ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ  
 ՚իցէ ոչխար մի եւ անկանիցի այն ՚ի խորխորաս



« Ի շարաթու . մի թէ ոչ ունիցի եւ յարու  
 « ցանիցէ զնա » . (Մարտի . ԺԻ . 11) : Մեր  
 վերապատուելոյն ցուցուցած կանոնովը կի-  
 բակի բըռնողին ընելիքը յայտնի է . ծառայի  
 գործ պիտի չգործէ . ազատի գործ պիտի գործէ .  
 ուստի ոչխարը փոսէն հանելու անղը , որ ծա-  
 աւորի դարձ է անշուշտ , զիմացը պիտի անցնի  
 եւ խաղ պիտի կանչէ . որ երաժշտութիւն ըլ-  
 լալով ազատի գործ է . ոչխարն առով փոսէն չը  
 կըրցաւ ելլել նէ . յանցանքը իրենն է . որ բա-  
 նի օր մը փոսը չիսկաւ որ զինքն անկէց հա-  
 նէին :

Քրիստոնէականներու դաւանութեանց հոռ-  
 մէականէն ուրիշ տարբերութիւն մը : 1858  
 ին տպուած Արքայական սահմանադրութեան  
 խանը կընէ .

« Լ . Եկեղեցւոյ երկրորդ պատուիրանը ո՞րն է .  
 « Պ . Աիրակի եւ սօն օրերը ժամէ չըպակ-  
 « սիլ » :

« Կայինք սա վեց բառէ բաղկացեալ պատաս-  
 խանւոյն մէջ ի՞նչ հիմնական տարբերութիւն  
 կայ դաւանութեան մասին : Իմաստուն քննիչին  
 խորհրդածութիւնն է այս . « Պատարագէն ան-  
 « շուշտ մէկը կը պակսի երբ որ անոր գոնէ է-  
 « անկան մտտին ներկայ չըլլար : Իւստի սա պատ-  
 « ուէրը հայաստանեայց եղմիածնական եկեղեց-  
 « յոյ պատարագներուն քիչութեանը եւ մի-  
 « անգամայն երկայնութեանը հետ դժուարաւ  
 « կըրնայ միաբանիլ : Ի վերայ այս ամենայնի՞

« վերոյիշեալ հոգեւոր ժողովէն վըկայուած  
 « փորձապետարանը իրրեւ եկեղեցւոյ հանդիսական  
 « պատուէր (այսինքն իրրեւ ծանր կերպով պար-  
 « տաւորիչ ) իրեն ուսանողներուն առջևը կը-  
 « դընէ » (Եր . 333 . 334) : Ըստիկայ որ ա-  
 սանկ ընելով հասմէական եկեղեցւոյ դաւա-  
 նութենէն կը տարբերի եզեր նէ , հայոց եկե-  
 ղեցւոյն յիշեալ համագամանացը հետ պատուիրանը  
 համաձայնեցընելու . եւ ինքն ալ Հոռովմայ եկե-  
 ղեցւոյն համաձայնելու համար կամ այս հարց-  
 պատասխանն ընելու չէր . կամ պատասխան ու-  
 թիշ բան մը գրելու էր , կամ կիրակի եւ սօն  
 օրերը եկեղեցի երթալու պարտաւորութիւն չը-  
 կայ ըսելու էր : Թէ որ այս չէ՛ նէ՛ փորձապե-  
 տարանին վրայէն յանցանքը կըվերնայ . գովու-  
 թեան ալ արժանի կըլլայ . յանցանքը կըմնայ  
 ըսալ Վերապատուելոյն՝ Հայոց եկեղեցւոյն վրայ՝  
 թէ ինչո՞ւ համար ծոյլերուն շնագաստեր պատա-  
 րագները շատցընելով որ ամէն մարդ մինչև  
 կէս օրուան մօտ պատկելէն ետքն ելլէ եւ պա-  
 տարագի համար : Եստգէս յանցանք՝ նոր օրի-

\* Օրը մինակ մեկ անգամ պատարագելը Հայոց  
 եկեղեցւոյն չին սովորութիւն ըլլալուն վկայն է սուրբ  
 Գրեկոր հարեկացիին՝ որ խօսքին մէջ այսպէս ըլլա-  
 լուն պատշաճութիւնն ալ կը յայտնէ . . . ո՛չ երկիցս  
 յաւուր զնոյն ցուցանէ . զի մի անընտրաբարձուիրանն  
 խայտառակեցի . . . Գարեկ . Հն . 11 և 2 . Գարեկէ  
 այս տեղս սուրբ պատարագի համար ըսուած կհատ-  
 կնայ Լուծ . 68 :



նակ մէկ բան մ'է: Բայց ի՞նչ որ էնէ՛ որովհետեւ տարբերութիւնը արդարեւ տարանջնակ է: Եւ հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեան մէջ էր՝ ասոր մէջ մանել չէր իշխարի բն որ քրիստոնէականները հայոց եկեղեցւոյն դաւանութեանը իբրեւ Թարգման բըռնելով՝ ասոնց ըսածին շուրջովմէն տարբերութիւնը պիտի ցուցնէր:

Հայաստանեայց եկեղեցին պատարագներուն քիչութիւնը՝ քիչ մը երկար տեւելովը լեցուցեր է. եւ կիրակի եւ տօն օրերը քիչ մ'ալ տեւելի կերկընցընէ. եւ եկեղեցւոյ մէջ ժողովուրդը քիչ ըլլայ նէ՛ քարոզ ալ տալով ուշ մնացողներուն քիչ մը ժամանակ կը շնորհեն եկեղեցւոյ հովիւները. եւ այս միջոցներովս՝ ուղղները դիւրութիւն ունին մի եւ նոյն պատարագի տեւողութեան ատենը եկեղեցին դռնուիլ. մանաւանդ թէ պատարագէն առաջ՝ աւուր պաշտածի ժամերգութիւն ալ կա՛յ՝ զոր հովմէական հայ քահանայն ամէն պատարագած տեղերը չկատարեր՝ եւ անոնց ներկայ դառնուիլը թէպէտ սուրբ պատարագին ներկայ դառնուելուն տեղը չբռներ, բայց ժողովրդեան պատշաճ ժամանակով եկեղեցի հասնելուն մեծ օգուտ կընէ. եւ պատարագը սւշ մնալուն վրայ աւելի գտնգաս կըլլայ ժողովրդեան մէջ, քան թէ կանուխ տւարաբխան՝ եւ իրենց չկըրնալ հասնելնուն վրայ: Այլ թէպէտ հովմէականաց պատարագը շատ անգամ ալ եւ ալ քահանայներով իրարու ետեւէ կրկնուելով մինչեւ

կէտ օր կըտեսէ. բայց արդեօք բնաւ պատարագի ներկայ չգտնուող մարդ չկայ մի: Անոնք ծոյլ կամ թուլակրօն են նէ՛ մեր մէջ ալ անակներ կան: Ս'եր եկեղեցին անոնց համար զիջմամբ կիրակի օրերը ժամերգութիւն ու պատարագը կերկընցընեն. հոովմէականք բանի մի անգամ կ'պատարագեն. այս ալ ո՛չ դաւանութեան ալ սովորութեանց տարբերութիւն է. այս ալ կարգէն դուրս մնալու է:

ԳԼՈՒԽ ԺԴ

Խաչի և պատկերներու պաշտօն

Այս նիւթոյս վրայ շինական պատկերներու վերապատուելի հեղինակն այսպէս կըլսօսի:  
 « Դտնօթ է՛ կըսէ: որ Հայաստանեայց եկեղեցին խաչերու երկրպագութիւն ու սրբոց պատկերներու պաշտօն, ( ընդհանրապէս խօսելով, ) մինակ ան ատեն կը մատուցանէ,  
 « երբ որ մեռնող օծուին եւ աղօթքով օրհնուին », ( Լճ 334 ), ( Լսել կուզէ որ ուրիշ ժամանակ՝ եւ օծուելէն եւ օրհնուելէն առաջ ո՛չ խաչին կերկրպագեն եւ ո՛չ պատկերները կը յարգեն: »

Յերաւի այդպէս է՞. ասոր ըսելիք չունիմ, բայց ո՛ւր էր այդ հեղինակը՝ երբ հայոց եկեղեցւոյ մաշտոցը բնութեան առնուեցաւ. որուն մէջ գրուած է խաչին համար. « բերն յեկեւ



10 զեցին զխաչն, եւ լուանտն նախ ջրով եւ  
 11 ապա լուանան գինով եւ ջնջեն սուրբ կտա-  
 12 ւովք: եւ ապա առնալ քահանային զուրբ մե-  
Պէնք ամէնք ալ՝ որ եկեղեցւոյ կարգաւորութիւնը եւ նուիրապետութիւնը կը ճանաչենք , կը խոստովանինք որ չէ թէ միայն անօրմայ հայրապետին , այլ եւ ուրիշ ամեն պատրիարքներուն եւ եպիսկոպոսներուն եւ բազանայնորուն աստիճանը՝ եւ ամէն մէկին իր ձեռնադրութեամբն ստացած պաշտօնը եւ զորոճը յաստուածային իրաւանց է . եւ ասոր հետեւ ասուն վկայ ունինք սուրբ Պօղոս աստուածորդի որ Արիստոսի բազանայնորուն խօսած իրատական ճանին մէջ ըսաւ . «զորչ կայեք անձանց եւ անձնայն հօտից , յորում եք պնդուողն անորքի սխալք , հովուել զծողովուրդ ճեան , որոնք արեւցայց արեամբ իւրով » (Իրոց . Ի . 28) : Ինչ չկարծուի որ ասով վերոյնշեալ կարգին մէջ տարբերութիւն չընդունողներէն ենք . ասիկայ Այսերիստուտութիւնն է , որ չորրորդ դարուն մէջ սակաւամիւս մարդիկ հետեւող տեսցաւ . եւ մեր ազգին մէջ ընաւ երեք մաս չգտաւ . այլ ելած տեղը թիւ մ'ասանն ետքը խախտեցաւ . եւ թէ երորդ դարուն մէջ եւ թեցած բողոքական հերետիկոսներուն երկցական ըսուած ճիւղը զայն նորոգեց : Սենք գիտեմք որ եկեղեցական իւրաքանչիւր աստիճանաւոր յիւրում կարգի իր պաշտօնն ու արտօնութիւնը յաստուածային իրաւանց ունի :



այսպէս՝ եպիսկոպոսին իր վիճակի քահանայնե-  
րուն վրայ, արքեպիսկոպոսին իր վիճակի ե-  
պիսկոպոսներուն վրայ, եւ ամէն մէկ պատրի-  
արքներուն իրենց ստորակարգեալ արքեպիսկո-  
պոսներուն վրայ իրաւաբանութիւն ունենալը  
Մատաւաճային իրաւանց է: Հոռովմայ հայրա-  
պետը նախապատիւ պատրիարք է՝ սրբոյն Պետ-  
րոսի առաքելապետին ժառանգ եւ յաջորդ ըլ-  
լալով. եւ ինչպէս որ սրբոյն Պետրոսի՝ առա-  
քելոց մէջն գլխաւորութիւն մ'ունենալը Հա-  
յոց եկեղեցին իր եկեղեցական գրոց մէջ ըն-  
դունած է. «որ գերազոյն ընտրելոց առաքե-  
լոյն դասուց անուանեցեր իննել գերանելին  
«զՊետրոս, գլուխ սուրբ հաւառոյ, հիմն եկե-  
ղեցւոյ, յըսելով, անոր յաջորդներուն վրայ ալ  
նոյնպիսի արտօնութիւն կը ճանչնայ: Եյս  
նիւթոյն վրայօք մեր Օհաւ եւ Մրեալ պար-  
բերականներուն մէջ ընդարձակ խօսուած է,  
եւ մեր այն ժամանակի խօսածներուն թէպէտ  
քանի մը հակառակորդներ գտնուեցան, բայց  
ժամանակին պատրիարքը հոգեւոր ժողովոյն  
հետ խորհրդակցութեամբ 1856մայիսի 17հը-  
րատարակուած կոնդակովը՝ այս խոստովանու-  
թիւնս ուղղափառական գտաւ. եւ իմացուեցաւ  
որ հակառակ կեցողները բանը չհասկընալով՝  
հայաստանեայց սուրբ Լուսաւորչական եկեղեց-  
ւոյ իրաւունքը ոչընչացընել կարծեցին, եւ ի-  
րենք նոյն իրաւանց պաշտպան կենալ ուզեցին,  
որուն մենք ալ պաշտպան եմք եւ ըստ այսմ՝

վերապատուելի հեղինակին հաւանութիւն տուած  
կարծիքը՝ զոր մէկ փոքր մասի մը յատկացընել  
ուզեց, Հայոց Լուսաւորչական սուրբ եկեղեց-  
ցին ալ Կոստանդնուպոլսի պատրիարքին եւ  
անոր կրօնական ժողովոյն վճռական կոնդա-  
կան ընդունած է: Եւ օգուտ չընէր ըսելը  
թէ առիկոյ Լուսաւորչական եկեղեցւոյ ընդ-  
հանրապէս ընդունելուն նշան մը չէ. վասն  
զի նախ եւ յառաջ՝ մեր վերապատուելի հեղի-  
նակը Կոստանդնուպոլսի կրօնական ժողովոյն  
հաւանութեամբը քաղած քրիստոնէականնե-  
րուն պարունակած վարդապետութիւնները իր  
Եջմեթնական անուանած եկեղեցւոյն դաւանու-  
թիւնը կը սեպէ, Երկրորդ՝ վասն զի այն կոն-  
դակին դէմ բողոք մը չըլլալէն զատ՝ ո՛չ Օջ-  
նակն եւ ո՛չ Մրեալ ին գրածներուն դէմ սուրբ  
էջմեթնի աթոռոյն կողմանէ դատախազութիւն  
մը չեղաւ: Արեւմտ Հոռովմայ հայրապետին  
հայրապետական իրաւունքը աստուածային է ը-  
սելը հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնն  
է, եւ ոչ թէ փոքր խումբի մը կարծիք:

Բայտ որում եկեղեցին մէկ է՝ անիկայ կո-  
ուսվարող իշխանութիւնն ալ մէկ ըլլալու է:  
Բայց հոս միտ դնելու բան մը կայ. որ էյիս-  
նաբիւնը մէկ ըլլալու է ըսի՝ էյիսնը մէկ ըլ-  
լալու է չըսի: Քրիստոնէութիւնը բողոք աչ-  
խարհ արածուելու սահմանեալ, եւ սրդէն  
ալ խիստ շատ տեղերը տարածեալ կրօնք մ'է,  
ասոնք ամէնը միայն մէկ մարդ մը չկըրնար



կառավարել . ուստի թեպէտ կառավարելու իշ-  
խանութիւնը մէկ . բայց նոյն մէկը շատ իշխան-  
ներու հաղորդութեամբ է . ուստի ուրիշն կ'արե-  
անու կըսէ . « ըստ որում Բրիտանս աշխարհի  
« մէջ բազում անդամներու բաժնուած եկե-  
« ՛ղեցի մը ըրաւ . ըստ նմին մէկ հասիկ եպիս-  
« կոպոսութիւնը իրարու համաձայն կ'ախկո-  
« պասաց յազմութեան տարածուած է . » ( Ըստ  
« Լ. Օ . առ Երեւելի . ք. Բաւելի . կէս է : 209  
« Ժանեթ . 2 . սոր . քաղ . արդ . » ) : Արքայն Կերդի  
Երուսաղէմայ հայրապետին առաքելներուն ե-  
պիսկոպոսական պաշտօնը մէջ բերած անոնն  
ընելով թէ Կերդի իմաստուն իմաստաբոյնք  
« եւ լուսադոյնք էին առաքելքն , առաջին ե-  
« պիսկոպոսն , եւսի . կիւնցայն էին որ  
« դայա հրաման ետուն , ( կալ ընծայ . էր . 70 . քա  
« Ա . Էն . Եանեց յարդը կ'ախկոպոսներն ալ եկե-  
« ՛ղեցեաց գլուխ ճանչցում կըլլայ . ըստ որում  
« չէ թէ իրբեւ առաքել . այլ իրբեւ կ'ախկո-  
« պոս այս յայտկութիւնս անոնց վրայ կը-  
« ճանչնայ . Եւ նոյն իսկ հոսովեական մասե-  
« նագիրներ կըսեն թէ սորքն Պետրոս առաք-  
« եայ որուն յազորդ են Լուսովայ հայրապետ-  
« ները , երեք անդամա հաստակեց , Լուսով ,  
« Բզէքսանդրիա եւ Բնտիոք : առաջին անմի-  
« ջապեւ իրեն սեպհականց , երկրորդը իւր ա-  
« շակերտին որոյն Եօրկասի աւետարանին  
« տուաւ , եւ երրորդը որոյն Եւորդիոս դ . սը-  
« ղոյն իզնապիս Ըստուածազգեցին յանձնեց ,

եւ եկեղեցւոյն նսխնի ժամանակներէն այս ե-  
րեք ամտոս միապէս պատրիարքական ամտո ըս-  
ուեցան . եւ մի եւ նոյն գերագահ կառավա-  
րիչ իշխանութիւնը այս երեքիս հաղորդեցաւ .  
« Ըստ բաժնուս պէս կըրասի սորքն Գրիգոր  
« մեծ . հոսովայ հայրապետը . որ Բզէքսանդրիոյ  
« Եւորդիոս պատրիարքին գրած նամակին մէջ կը-  
« սէ . « շատ առաքելներ կան , բայց գլխաւ .  
« ըս թեան համար հեղինակութիւն ունեցողը  
« առաքելապետին ամտուն է . եւ այս երեք  
« անդ է . » ( զր . Է . նամակ . 90 ) : Ըսել  
« է որ սորք հայրապետս որոյն Պետրոսի հե-  
« ղինակութիւնը կամ իշխանութիւնը ոչ թէ մե-  
« կին սեպհականած . այլ երեքին բաժնուած պի-  
« տէր .

Ըստ որն էր Յովհաննէս Պահեցող . կու-  
տանդնու պոյսի պատրիարքը , որ առաջին եղա-  
զինքը համալեարհական կամ բնեղերական պատրիարք  
անուանելու . Ինտանիտա . Ըստ բանին հա-  
մար սուրբն Գրիգոր մեծն . սուր հետեւեալը  
կըզրէ . « Ի՞նչ են ընդհանուր եկեղեցւոյ բո-  
« յոր եպիսկոպոսները , եթէ ոչ երկիրքի ասա-  
« ՛ղեր : Աւրեմն անարտաւան բառով մը դուն  
« ընդ անոնցմէ վեր մի դներ եւ մի ըսեց թէ  
« երկինքն ելլեմ , ամտոս առաղերէն վեր դնեմ :  
« Այս յիտեի Պետրոս . առաքելոց առաջինը , սոր  
« եւ ընդհանրական եկեղեցւոյ անդամը , եւ Պո-  
« դոս եւ Բնդրէաս եւ Յովհաննէս Ի՞նչ են ,  
« եթէ ոչ մասնաւոր ազգաց գլուխ , Ըմենը



« մէկ խօսքով ըսեմ . օրենքէն առաջ եւ օրէն-  
 « քէն ժամանակը եւ շնորհաց ժամանակը եւ-  
 « ղող սուրբերը՝ որ ամէնն ալ Տեառն մերոյ  
 « մարմինը կը բազկացընեն , եկեղեցւոյ ան .  
 « դամ են . եւ մէկն ալ զինքը տիեզերական  
 « անուանել չուզեց : Թող ձեր սրբազնու-  
 « թիւնը հասկընայ թէ բնաւ մէկ ճշմարիտ  
 « սուրբի մը ընդունել չուզած անունն իր հա-  
 « մար ընդունիլը եւ ուզելը որքան յանդըդ-  
 « նութիւն է : Չեր եղբայրութիւնը չը գիտեր  
 « արդեօք՝ որ Քաղկեդոնի ժողովքը այս պա-  
 « տիւս տուաւ Հռովմայ եպիսկոպոսներուն ,  
 « զանոնք տիեզերական անուանելով . բայց մե-  
 « կըն ալ անիկայ չընդունեց , վախնալով .  
 « չըլլայ որ համօրէն եպիսկոպոսութիւնը իր  
 « բոլոր եղբայրներէն վերջընելով միայն իրեն  
 « սեպհականել երեւի . . . ( քր . 13 . նամակ 18 ) .  
 « Նոյն սուրբ հայրապետը Աղէքսանդրիոյ վե-  
 « րոյիշեալ Եւզոգիոս պատրիարքին խըրկած մէկ  
 « նամակին մէջ ( քր . 13 . նամակ . 40 ) կըսէ .  
 « ձեր սիրելի սրբազնութիւնը նամակներուն մէջ  
 « յաճախ խօսած է սրբոցն Պետրոսի առաքե-  
 « լի լապեախն աթոռոյն վրայ . . . խօսքերնիդ ին-  
 « ծի հաճոյ են . ասով որ Պետրոսի աթոռոյն վը-  
 « րայ ինծի խոսողն ինքն ալ նոյն աթոռն ունի . . .  
 « Եւ մէկ ուրիշ նամակի մը մէջ որ՝ դարձեալ նոյն  
 « պատրիարքին գրած է , ( քր . 13 . նամակ 30 ) ,  
 « զինքը տիեզերական հոյր անուանելուն վրայ եւ  
 « Ինչպէս որ հրամայեցի՝ ըսելուն վրայ դժուարելով

« կըսէ . . կաղաչեմ , մի ըսեր ինծի թէ՛ Ինչպէս  
 « որ հրամայեցի . գիտեմ . ես ո՞վ եմ , դուն ո՞վ  
 « ես : Ըթոններնուս նայելով՝ իմ եղբայրս ես .  
 « բարուց կողմանէ՛ հայրս ես : Առաքի ես քեզի  
 « բան չհրամայեցի , այլ միայն ինչ որ օգտակար  
 « էր նէ՛ անիկայ թելադրեցի : Ինչոյց կը տեսնեմ  
 « որ ձեր երջանկութիւն անիկայ աղէկ ըմբռնած  
 « չէ : Ես ըսի որ այդպիսի պատուանունն մը ոչ  
 « ինծի տաս եւ ոչ ուրիշի : Եւ ահա գրոյդ ըս-  
 « կեղքը զիս տիեզերական հայր անուաներ ես ,  
 « Շնորհ ըրէ , մէկ մ՛ալ ոչ պէտք բան մի ընել .  
 « վասն զի իրաւանց պահանջածէն աւելի մե-  
 « կին բան մը աւելը՝ դուն քեզ անկէց զրկել  
 « է : Ըսել կուզէ որ : Աղէքսանդրիոյ պատ-  
 « րիարքն զՀռովմայ հայրապետը տիեզերական ը-  
 « սելով Աղէքսանդրիոյ վրայ իր ունեցած հայ-  
 « րապետական իշխանութիւնն ալ անոր տուած  
 « կըլլայ . եւ ասով զինքն իր ունեցած իշխանու-  
 « թենէն կը զրկէ :

« Նոյն հայրապետը իր կողմէն Արստանդը-  
 « նուպոլիս կեցող Փարթիանոս նուիրակին խրկած  
 « գրոյն մէջ՝ այս տիեզերական հոյր կամ համաշխար-  
 « հական պատրիարք հօշու մը հաւատարկաց դպչելու  
 « խնդիր մը կանուանէ ( քր . 13 . նամակ 19 ) . ու-  
 « բուն պատճառը կընշանակէ Ոյորպար եկեղե-  
 « ցական պատմիչը թէ միայն մէկ եպիսկոպոս մը  
 « ճանաչել , եւ միւսները իրրեւ անոր փոխանորդ  
 « ըրանել հաւատքը չնկէր , ( Ընդհանուր պատմ .  
 « Կաթաղ . եկեղ . քր . Ի 13 . հոյր . Թ . էր . 451 ) :



Մէկ պատրիարք մը տիեզերական ճանչնալուն  
 եւ անուանելուն մէկ ուրիշ վնասը կը շնանակէ  
 այն սուրբ Գրիգոր մեծն այսպիսի անուն կրող  
 մէկ մը ընդգրկմ ուղիղ հաւատայ մոլորութեան  
 մէջ իշխայ նէ թոյլ տր եկեղեցին ժայրութեան  
 մէջ ինկած կը ստեպուի կըսէ. (Կր. Լ. 2. 2. 20  
 եւ 43). Եւ միւս անակդութիւն մը այս  
 վերջին նամակին մէջ կը շնանակէ պատրիարքնե-  
 րուն մէկն քնդհանրապէս անուանելը ուրիշ պա-  
 տրիարքներն իրենց ստորձանէն վար անելէ կը-  
 սէ.

Պատրիարքական աթոռները իրարու հա-  
 մաստիճան եւ համապատու սեպելու անմարկու-  
 թիւն մը կը գտնուի Եկեղի ժողովոյն վեցե-  
 րորդ կանոնին մէջ. ուր կըսէ թէ աղէքսան-  
 դրից եւ անտիոքայ պատրիարքները իրենց վե-  
 ճակը գրանուող եպիսկոպոսներուն վրայ եշ-  
 խանութիւն ունենան ինչպէս որ Հռովմայ ա-  
 թոռոյն ալ ստիպութեան է. \* Ե. 10 խորիս

" Կանոն գրքին մեր ձեռքը գտնուած մերայիւս  
 րինակին մէջ այս կանոնը քիչ մը շիւթ է՝ զոր այս բը-  
 նագիրը կը շեռնէ եւ կարգէ. Հայերէնն ըստմն է  
 այս. « անտեւաց ստորութիւն կացի. Եղիպատի.  
 « զի Աղէքսանդրու եպիսկոպոսն անտեւացուն իրենու-  
 « թէ. վան զի Հռովմայեցւոց եպիսկոպոսն այս սո-  
 « սկրուելիւն է. նշխարս եւ անտիոքայեց. եւ այլ  
 « իշխանութեան պահեցի յեկեղեցւոյ. » Եւ Աղէք-  
 սանդրից պատրիարքը անտեւացն իրենց ըսելը խոս-  
 րին միտքը կը փոխէ նոյն պատրիարքը համախարհական  
 կար աեղեղբայան հորեւոր վեճակու մը ըստ ընտելը զոր

մէջ Հռովմայ աթոռոյն մէկալ պատրիարքա-  
 կան աթոռներէն վեր ըլլալու նշան մը չկայ  
 եւ Եկեղից կանոններուն մէջ ալ անկեց զա-  
 տեղ նոյն աթոռոյն վրայ խօսք չկայ. այս ան-  
 ղըս ալ Հռովմայ եպիսկոպոսը կը յիշուի իբրեւ  
 լոկ օլիմակ մը, որուն շմանելու են միւս  
 պատրիարքները. այսինքն, ինչպէս որ Հռով-  
 մայ եպիսկոպոսը իր վեճակին եպիսկոպոսնե-  
 րուն վրայ կը շեռէ, նմանապէս Աղէքսանդրից  
 եւ Անտիոքայ եպիսկոպոսներն ալ իրենց վե-  
 ճակներուն վրայ իշխեն. Չմեք զիտեք թէ  
 այս կանոնս ինչպէս հասկըցած է Միթիար  
 կաթուղիկոսին օրովը 1349 թիւին գումար-  
 ուած Սոյ ժողովը, որ ըսեր է ինչպէս որ  
 Հ. Պօղոս Յովնանեան սոյն կանոնիս տակը

Թեպէտ կը ընայ նախնեաց խօսքը շիւթի, որ կըսէ.  
 « անտեւաց ստորութիւն կացցէ մեղմպոս յորով անտեւացն  
 ըսածը մեկակ եպիսկոպոսն ուրիշ եպիսկոպոսներուն հա-  
 մասը կը ընայ հասկըցուիլ, բայց այսու անմասնիւ պար-  
 զելու կարօտ է. Գեղիէ մատենագիրը ժողովոյ Բաւար-  
 ան Հջ (Հայ. Բ. Էջ 81. ող Միթի. 1847). այս  
 կանոնս այսպէս կը ըսէ. « Եղիպատի եւ իրիպի եւ  
 « Պետրոպոլսի մէջ հաստատուած չին ստիպութիւն-  
 « ները պահուին, անանկոր Աղէքսանդրից եպիսկոպոսը  
 « այս անկն գաւառներուն վրայ իշխանութիւն ունե-  
 « ւեայ, վան իղ Հռովմայ եպիսկոպոսն ալ նոյն անու-  
 « ձերութիւն ունի. Յասնկ ալ Անտիոք եւ ուրիշ գա-  
 « ւառները որ անկն եկեղեցի իր յատկօրինութիւննե-  
 « րն ունենայ. » ասոր յարեւմտն է Հ. Պօղոս Յով-  
 նանեանի պիսկոպոսն ժողովոյ պատմութեան մէջ գրածը (Ե.  
 49). Եւ յուսմբէնին ալ խեղաւոր նոյն է.



քրատ ծանօթութեան մէջ կիմացընէ « Աիկիա-  
 ւ կան հարքն վճիռ ետուն թէ եկեղեցին չը-  
 « ոտվմայ գլուխ է այլոց եկեղեցեաց . եւ հայ-  
 « րապետն Հոռմայ գերագոյն է քան զայլ հայ-  
 « րապետս . Ըստ խօսքը՝ նոյն իսկ ժողովոյն՝  
 վասն զի Հոռմայեցոց եպիսկոպոսին այս  
 « սովորութիւնն է, խօսքին հակառակ կուգայ .  
 Ըսոր համար յիշեալ չ. Պօղոս՝ Հոռվմեական  
 ասուածարաններուն համեմատ սապէս՝ մեկնու-  
 թիւն մը կաւելցունէ նոյն ծանօթութեան  
 « մէջ . իսկ ասելն կանոնիս . վասն զի եւ չը-  
 « ոտմայեցոց եպիսկոպոսին այս սովորութիւն  
 « է . զոյն ինչ յայտ առնէ թէ որպէս քահա-  
 « նայապետն Հոռվմեական բաց յիւր ընդար-  
 « ձակագոյն իշխանութեանէ ՚ի վերայ եկեղեց-  
 « ւոյ՝ ժառանգ է առանձին եւս իրաւանց հայ-  
 « րապետութեան ընդամենայն արեւմուտս .  
 « այսպես եւ հայրապետն Աղեքսանդրիոյ ունի  
 « իշխանութիւնն . եւ այլն . Եւ այս ըսածը հաս-  
 տատելու համար Աիկիոյ ժողովը մէկդի ձգե-  
 լով ուրիշ վկայներու կապաւնի . վասն զի  
 այդպէս զանազանութիւն մը Աիկիոյ ժողովոյն  
 խօսքերէն չեւլեր . եւ կերեւի որ ժողովական  
 հայրերը չգիտէին ալ այդպէս երկպառիկ իշ-  
 խանութիւն մը մի եւ նոյն անձին վրայ . թէ  
 որ զիտնային նէ՛ կանոնը այնպէս չէին դներ  
 ինչպէս որ դրին . այլ կըսէին . Աղեքսանդրիոյ  
 եւ Անաիսթայ պատրիարքները իրենց դաւառին  
 եպիսկոպոսներուն վրայ միայն թող իշխեն . եւ

Հոռմայ հայրապետին չնային որ բոլոր աշխար-  
 հի եպիսկոպոսներուն վրայ կիշխէ . վասն զի  
 « եկեղեցին Հոռմայ գլուխ է այլոց եկեղեց-  
 « եաց, եւ հայրապետն Հոռմայ գերագոյն է քան  
 « զայլ հայրապետս . Ըսանկ զրուցուածքները  
 Աիկիոյ ժողովէն ետքը երեւան ելած են .  
 ուստի որպէս չէ՛ որ այս խնդրոյս մէջ նոյն  
 սուրբ ժողովոյն խօսքը խառնուի . Մեծն Պը-  
 րիգոր սուրբ հայրապետն ալ իր նամակներուն  
 մէջ պատրիարքներուն հաւասարութեանը վը-  
 կայութիւն կուտայ . եւ զինքը անոնցմէ գե-  
 րագոյն ըլլալու խօսք բնաւ չընեն . ինչպէս որ  
 տեսանք .

Ըստ ըսածներուս հաստատութեանը հա-  
 մար ուրիշ շատ վկայութիւններ կըրնար բեր-  
 ուիլ ալ նէ մենք ասոնք բաւական սեպեցինք  
 Հոռվմայ հայրապետի մը խօսք ըլլալուն հա-  
 մար՝ եւ այնպէս հայրապետի մը զոր հայր Յայր  
 ճար 13 եւ Հոռվմայեցիք եւ յոյնք ճար 12  
 միապէս իրրեւ սուրբ կը յարգեն . Եւ ասկէց  
 կերեւի որ Հոռվմայ հայրապետին իբրեւ յա-  
 ջուրդ սրբոյն Պետրոսի ունեցած արտօնութիւնը  
 մինակ իրենը չէր ձանձնար նախնի եկեղեցին  
 այլ երեք պատրիարքաց հասարակաց\* եւ ասկէց

\* Այս ըսածնիս մեր վերապատուելի հեղինակն ալ  
 խոստովանելու է . որովհետեւ անոր կրօնակիցը Հ. Աղեք-  
 սանդր Պարճեան. Արտանայոյն Պարոսի մակարտեայ գըր-  
 քին մէջ կըսէ « սուրբ Պետրոս Հոռվմ . Աղեքսանդրեայ  
 « եւ Մտիոք հաստատեց անձամբ երեք մեղադարտա-



ղաա եպիսկոպոսներն ալ իրենց վիճակին վրայ նոյն իշխանութիւնը ունէին, որ թէ որ մէկը տիրեցերական ըսուէր նէ իբրև մի միայն եպիսկոպոս անանկ որ միւս եպիսկոպոսներն աւոր փոխանորդ սեպուելու էին, եպիսկոպոսական կարգը վերցած կըլլար, ինչպէս ըսաւ Ռօբայախը :

Ետքերը ժամանակ անցնելով Անտիոքայ

ական աթոռները որոնք երեք մեծ պատրիարքութեան մայր եղան : Առաջինը ըսել որ թէպէտ նոր եկեղեցիները որոնք ժամանակին յառաջանալովն ասոնց մէկընանէին և առանց իրենց եպիսկոպոսական ԱՄՈՒԱ ՊԱՐՈՒԹԻՒՆԸ կոչենային, այսու ամենայնիւ յիւրաքանչիւր մէտրապոլիտական եկեղեցի իրնորածինն տեղեկեցուցն վրայ հայրական աղաբարբութեան ու խնայողականութեան իրաւունքը կըպահէր : Վերջին աս ետքեր աթոռներն Աղէքսանդրիոյ ու Անտիոքայ աթոռները Հռոմայ աթոռոյն ստորակարգութեանն էր : Հայոց ազգին Ս. Լուսաւորչի ժամանակէն մնացած աւանդութեանցը նախանձախնդիր և ջերմ պատշաճ ըլլալը գիտցողները խնդրոյն տեսնելը այս վերջին բառէն կըստովին : սուրբ Լուսաւորչին ժամանակէն վերջն եղած բան մը մեր մէջ յարգ գտած չէ : Այն ստորագրութիւն ալ որ Հ. Աղէքսանդր կըսէ, մենք տեսնք որ սրբոյն մեծին Գրիգորի ժամանակը տակաւին չկար : և երբ Աղէքսանդրիոյ Եւղղիոս պատրիարքն ստորակարգուելու պէս խօսքեր կըգրէր, նոյն սուրբ հայրապետը՝ Հ միայն ինքը կըմերժէր, այլ և կըցուցնէր որ Քաղկեդոնի ժողովրէն զՀռոմմայ հայրապետը փեղեբայն անուանելը որ միւս պատրիարքներուն անոր ստորակարգեալ ըլլալու խօսք մը նէր՝ այն ժամանակն մինչև իր օրը Հռոմմայ աթոռը նստող հայրապետները չընդունեցին :

պատրիարքներն ալ աղէքսանդրիացիներն ալ հերեւիկոսութեան մէջ իյնալով եկեղեցւոյ անդամ ըլլալէն կարուեցան զատուեցան, որով եկեղեցւոյ մէջ հեղինակութիւն ալ չէին կըրնար ունենալ : և առ հարկի, որպէս զի բարիստոսական եկեղեցին բոլորովին մոլորեալ չկարծուի, ուղղափառ հաւատքը բըննող եւ պաշտպանող հայրապետը որպէս որ Հռոմմայինը գանուեցաւ, տիրեցերական ըսուեցաւ : 649 թուին Վատերանու առաջին ժողովոյն մէջ Հռուսննայի եպիսկոպոսին փոխանորդները նոյն եպիսկոպոսին բերնէն տուած գրերնուն մէջ Հռոմմայ հայրապետը տիրեցերական բահանալու կանուանեն, որպէս թէ իրեն պաշտօնակից եւ գերագոյն հեղինակութեանը հողորդ մարդ ունեցած չըլլար : և յիշուի ալ այնպէս էր : վասն զի Առասանդնուպոլիսի ալ Աղէքսանդրիոյ ալ պատրիարքները միակամեան հերեւիկոսութեան մէջ ինկած էին : և Այստեղ ուժովը արեւելից երկիրները Առասանդնուպոլիսի պատրիարքին աղղեցութիւնը մեծ ըլլալով կասկած կըրնար ըլլալ որ Անտիոքայ եւ Երուսաղէմի պատրիարքներն ալ նոյն մոլորութեան մէջ իյնան :

Այս վերջին կտորէս ընթերցողը կըրնայ իմանալ որ հին ատենը միոյն երեք պատրիարքութիւն կար Հռոմմայ տերութեան մէջ : Հռոմմ եւ Աղէքսանդրիա եւ Անտիոք : և ետքը երկուք ալ աւելցած գտնուեցան : Առասանդնու-



պօլսիին եւ Երուսաղէմինը : Արքան ասոր վրայ խնդիր յարուցանել թէ՛ պատրիարքութիւնը սուրբ Պետրոս առաքելոյն յաջորդութիւնն է ճէ՛ ասոնք որ նոյն սուրբ առաքելոյն յաջորդ չեն , ի՞նչպէս պատրիարք եղան : Եկեղեցւոյ պատմութիւնը ասոր պատասխանը մեզի կը թելադրէ . այս պատրիարքութեանց ծագման ատենը ծագած խըռովութիւնները եւ երկպառակութիւնները պատմելով . որոցմէ կտրվիմք որ այս երկու ետքէն աւելցուած աթոռներուն պատրիարքական անուանուիլն ընդունելի չեղաւ քրիստոնէութեան մէջ . քանի՛ որ երեք նախնի պատրիարքական աթոռներէն հաճութիւն չառնուեցաւ : Արկուքը , Եղէքսանդրիայինն ու անտիոքինը կանուխ հաճութիւն տուին . վասն զի ասոնք յունաց Ապսեր իշխանութեան տակն էին . եւ Ապսեր կամքն իմանալով՝ որ իր թագաւորական մայրաքաղաքին եպիսկոպոսը Հռովմայ եւ Եղէքսանդրիոյ եւ Ենտիոքայ եպիսկոպոսներէն վար մնալ չուզեր , դիւրին եղաւ ասոնց հաւանութիւն տալը : Աւստի ասոնցը ըստ իմիք մարդահաճութիւն եւ ՚ի շնորհս Ապսեր եղած շիջում մը սեպելով կուզէին միւս պատրիարքին հաճութիւնն ալ առնուլ , որուն վրայ Աոստանդնուպօլսի Ապսրը չէր կըրնար բացարձակ իշխանութիւն բանեցընել , ուստի անորը ազատ կամաց հաճութիւն ըլլալով վաւերական կը սեպուէր . եւ երբ որ Հռովմայ հայրապետն ալ միւս երկու հայրապետաց հետ համաձայնեցաւ՝ բոլոր քրիստոնեայ սեկեղերը այս երկու նոր պատրիարքութիւններն ալ հինքուն հաւասար ճանչցան :

Եւս ըսածնիս պատմական ճշմարտութիւն մը ըլլալը վերոյգրեալներէն դատ եւ անոնցմէ նոր ուրիշ հաւաստիք մ'ալ ունի : Հռովմայ պատրիարքին փէղեբոսկան ըսուիլն արդէն յիշարուն մէջ սովորական եղած էր . Աոստանդնուպօլսի յունաց պատրիարքներն այս կոչումն մեծին Պրիդորի պապին էւ Եովհաննէս Պահեցող Աոստանդնուպօլսի պատրիարքին օրը վրանին ասին ալ նէ՛ ո՛չ միայն Հռովմ , այլ եւ ո՛չ ալ Եղէքսանդրիոյ պատրիարքն ընդունած չէր . ետքը արեւելեան պատրիարքներն ընդունեցին ալ նէ՛ Հռովմէն ալ հաճութիւն ուղուեցաւ . որպէս զի աւելի հաստատուն եւ վաւերական ըլլայ : Եսոր համար 1024 թուին՝ Աոստանդնուպօլսի յունաց Եւստազիոս Բ . պատրիարքը եւ Վասիլ Մակեդոնացի կոյսրը պապին յատուկ դեսպան խրկեցին խնդրելով որ անիկայ ալ զԱոստանդնուպօլսի պատրիարքը փէղեբոսկան անուանէ : Պապը անոր չպատասխանեց թէ այդ փէղեբոսկան կոչումը Հռովմայ հայրապետաց եւ յատուկ անհաղորդելի է , ո՛չ ալ նոյն արանութիւնը Աոստանդնուպօլսի պատրիարքին տուաւ . որովհետեւ այս կոչմանս անկեց աւելի իրաւունք ունէին Եղէքսանդրիոյ եւ Ենտիոքայ պատրիարքները , եւ անոր հաւասարն ալ՝ Երուսաղէմինն ունէր : Ինսպաններուն պատասխան տա-



լըն ալ ուշացուց . մինչեւ որ բանը լեզուէ  
 լեզու տարածելով գողղիոյ եւ ուրիշ տնդերու  
 կեպիսկոսներուն ականջը հասաւ , որ պատրիար-  
 քին խնդրոյն արգելք եղան եւ Կոստանդնու-  
 պոլիսէն եկող դեսպանները պարագ ետ դար-  
 ձան : Ասիկայ կը պատմէ Ալապէր ( Գր . ԳԼ .  
 1 . առ Ռօրպախրի . ընդհան . պատմի կախաւ Եկեղ-  
 ատար . Ժ . Գ . էր . 437 ) .

Հայոց ծայրագոյն պատրիարքութիւնը՝ որ  
 է կաթողիկոսութիւնը , Կոստանդնուպոլսի եւ  
 Երուսաղէմի պատրիարքութեանէն աւելի հին է  
 Կոստանդնուպոլսի շինութենէն ալ առաջ է :  
 Սուրբ Լուսաւորիչ հայրն մեր բազմաչարչար  
 աշխատութեամբ Տրդատ Թագաւորը քրիստոն-  
 եայ ընելով անոր աջակցութեամբը ազգը բո-  
 լոր քրիստոնէութեան ճամբուն խօթելէն քիչ  
 ետքը մեծին Կոստանդիանոսի ալ քրիստոնէու-  
 թիւնն իմանալով՝ Թագաւորին հետ մէկ տեղ  
 անիկայ շնորհաւորելու համար Հռովմ գացին ,  
 եւ Տրդատ մեծին Կոստանդիանոսի հետ , եւ  
 սուրբ Լուսաւորիչ հայրն մեր սրբոյն Աեղբե-  
 ատրոսի հետ բարեկամական դաշնակցութիւն  
 մ'ըքին : Ի հարկէ այս դաշինքս այն ատենը  
 դերի անուեցան . բայց ժամանակը ուրիշ շատ  
 հին յիշատակարանաց պէս ոյս գրութեանս ալ  
 հարազատը կորսընցուց . եւ թէպէտ կայ մեր  
 գրոց մէջ Կոստանդնուքի մը՝ որպէս թէ այն ա-  
 տենը գրուած ըլլայ , բայց մէջը ետքէն ան-  
 հարազատ բաներ մտած ըլլալը՝ կարդացողը թէ

գրուցուածքի ոճէն եւ թէ պարունակած խօս-  
 քերէն դիւրաւ կը հասկընայ ու սակայն անու-  
 բանեյի է՝ որ այս կտորներս իսկական օրինա-  
 կին վրայ կարգըտան են . եւ բաւական չեն  
 բուն իսկ դաշինքը գրի առնուած ըլլալը  
 սուտ հանել :

Տրդատ արդէն Հռովմէական պետութեան  
 դաշնակից էր . որովհետեւ Պիոկղէտիանոս կայս-  
 րըն էր ասիկայ Հայոց Թագաւոր ընողը , որուն  
 հետ քաղաքական դաշինքով կապուած էր . եւ  
 նոյնը մեծին Կոստանդիանոսի հետ նորոգելու  
 առիթ մը չկար . ուստի ասոնց իրարու հետ ը-  
 բոժ դաշինքը քրիստոնէական հաւատոյ պայծա-  
 ութեանը եւ տարածմանը իրարու ձեռնտու  
 ըլլալու վրայ էր անշուշտ . որ երբոր Հայաս-  
 տան աշխարհ Արքայանաց ժամանակը Պարսից  
 կրակապաշտ ազգին եւ տերութեան երեսէն վը-  
 տանգեցաւ , Տրդատայ Հռովմէական տերութեան  
 հետ ըրած դաշինքը յիշեցընելով , եւ քրիս-  
 տոնէական հաւատը պարսիկները Հայոց մէջէն  
 վերցընել եւ ջնջել կուզեն ըսելով՝ փոքր թե-  
 ողոս կայսրէն օգնութիւն ուզեցին . եւ գիրեր-  
 նին երբ Կոստանդնուպոլսի հասաւ կայսեր հը-  
 բամանաւ գիւանները նայուեցաւ եւ այն դաշ-  
 նագիրը գտնուելով սուուգեցին . որով եւ Հա-  
 յոց օգնութիւն ընելու որոշումն եղաւ : Թէ-  
 պէտ քիչ մը ետքը՝ եւ այն տալու օգնութիւն-  
 նին պատրաստելէն առաջ կայսրը մեռաւ , եւ  
 Սարկիանոս որ անոր տեղն անցաւ՝ հանդու-



ցելոյն կամքը կատարելու անհոգացաւ ինչպէս որ կըզբէ երանելին Եղիշէ . (պատմ. Մարտանոց . եր . 123—125 . հոլ . Վէհեր . 1828) Ընտարակուսելիէ որ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ալ սրբոյն Սեղրեստրոսի հետ դաշինք մ'ըրած ըլլան . եւ այս այնքան բնական է որ աստիկոյ ուրացողներուն հարկեղածի պէս է սուրբ Լուսաւորչին Տրդատ Թագաւորին ընկերակցութեամբ Հոովմ երթալն ալ ուրանալ . թէպէտ Եզրթանդեղոս եւ Օհնոս երկուքն ալ ժամանակակից պատմիչ նոյնը կըվկայեն :

Սուրբն Սեղրեստրոս ձեռնհաս շէր կըրնար ըլլալ ըստ պատշաճի կառավարելու հայաստանեայց եկեղեցին , որ Հոովմն ոչ միայն տեղւոյ հեռաւորութեամբ , այլեւ զատ Թագաւորութիւն մ'ըլլալով զատուած էր . բանն այնպէս կըզգահանջէր որ Հոովմէական կայսերութեան երկիրներուն մէջ իր ունեցածին հաւասար սուրբ Լուսաւորչին հոգեւոր իշխանութիւնը ձանձնայ որ հաւաստոյ միութիւնը պահելով կանոնական եւ եկեղեցական կառավարութեան կողմանէ Հոովմէն եւ ուրիշ պատրիարքական աթոռներէն անկախ բռնուի :

Սուրբ Լուսաւորիչ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կեսաիրոյ մետրապօլիսէն առնելով յայտնի էր որ ամբողջ մէկ առանձին ազգի մը հոգեւոր գլուխ պիտի ըլլար եւ անիկայ պիտի կառավարէր . որ բնակութեամբ հեռու՝ եւ լեզուով յոյներէն եւ լատիններէն օտար ըլլա-

լով\* կեսաիրոյ մետրապօլիսն ըստ պատշաճի չէր կրնար հովուել . եւ հայոց եպիսկոպոսական ալ սրբոյն Թադեոսի եւ Քարթուղիմէոսի՝ իրենց ժամանակի հայերուն սորվեցուցած հաւատքը ծաղկեցընելու պաշտօնն ունենալով բնապէս անոնց յաջորդ . եւ ուրիշ առաքելական աթոռոց հայրապետներուն հաւասար իշխանութիւն կուներնար ուրիշներէն անկախ , նոյն իշխանութիւնը վարել սկսու սուրբ Լուսաւորչին ժամանակէն : Եւզրպէս իշխանութիւն մը սուրբ հայրապետին վրայ՝ ապօրինաւոր բռնաբարութիւն մը սեպուէր նէ՛ ինչպէս ըլլալ կըկարծէ վերապատուելի հեղինակը , որուն խօսածը ետքը պիտի տեսնենք , հայոց եպիսկոպոսական պիտի սեպուէր կեսաիրոյ մետրապօլիտը . եւ պատրիարք՝ Ընտիրոյ պատրիարքը . վան զի կեսաիրիա Ընտիրոյ պատրիարքական վիճակին տակը կգտնուի : Բայց ո՛չ կեսաիրոյ մետրապօլիտը եւ ո՛չ իսկ Ընտիրոյ պատրիարքը հայոց կաթողիկոսին ինքնօրինութեանը՝ եւ իրենցմէ

\* Յունարէն լեզուն կը մշակուէր հայոց մէջ այն ատենը , բայց իրեն գիտնական լեզու մը հասարակաց անձանութեւն և գիտցող ալ շատ չկենալուն նշան մեր գրերըը գտնուէին քիչ ետքը երանելի Թարգմանչաց նոյն լեզուն ազգի սորվելու համար Աթէնք երթալին է : Լատիններուն հետ հազորդակցութիւն կար ալ նէ՛ լատիններինը բորոզին անձանութեւն էր . որովհետեւ բուն իսկ Հոովմայեցիները աւելի յունարէն բանթէ Լատիններն խօսելու կը սիրէին ինչպէս Արիւրուն տեղ մը կըանգտուէր :



կախում չունենալուն դեմ բողոք մը ըրած չեն, եւ ո՛չ իսկ հռովմ՝ սուրբ Լուսաւորչին օրէն մինչեւ տասն եւ մեկերորդ դարը՝ հայաստանեայց եկեղեցոյ գործերուն մէջ մտած չէ: Բայ՝ սածնիս ո՛չ կարծիք են եւ ո՛չ ազգային նախապաշարում, այլ պատմութեան վրայ հիմնած են:

Սուրբ Լուսաւորչին շուրջն գարձած օրէն մինչեւ սուրբ Գրիգոր Վկայաւեր հայրապետին օրը՝ որ այն ժամանակը միայն թղթակցութիւն մը կը գտնուէր մեր հայրապետին ու շուրջմայ Գրիգոր Ե. հայրապետին մէջ, այն ալ՝ մեր սուրբ եկեղեցոյն ուղղութեամբութեանը դեմ ազգին թշնամեացը տարածած զրպարութեան համբաւներն ստուգելու եւ ոչ թէ եկեղեցական կառավարութեան միջամտութիւն ընելու համար, շուրջմայ հայրապետէն զատ Աոստանդուպոլսի եպիսկոպոսներն ու Մետիքոյ պատրիարքներն ալ մեր հայրապետին վրայ մէկ գերիշխանութիւն մը կը ծանօնային ուրիշէն անկախ ուրիշ արեւելեան պատրիարքներուն պէս, որոց հետը շուրջմայ հայրապետը լոկ գրաւոր հաղորդակցութիւն մ'ունէր զոր շայոց հայրապետին հետ ունենալու առիթ ալ էր պատահած:

Սուրբ Ներսէս մեծն Վաղէս կայսեր կը խրկուի իրրեւ դեպան շայոց Արշակ թագաւորին կողմէն. եւ հոն յունաց բոլոր սետրապոլիսներէն եւ Աոստանդուպոլսի եպիսկոպոսէն ալ վեր կը նստեցընեն զինքը. որ թէ որ լոկ եպիսկոպոսութենէ զատ մէկ գերագոյն աստի-

ճան մը առած չըլլար նէ՛ Աեսարիոյ մետրապոլիտին իրաւաբանութեան տակը մնացած պիտի ըլլար: Եւ սոսի մետրապոլիտներէն վար, եւ դուցե իր արժանիքը յարգելով ուրիշ եպիսկոպոսներէն վեր տեղ չուցընէին անոր: Կոյն սուրբ հայրապետը մեծին թեոզոսի հրամանովը արտորէն դառնալով Աոստանդուպոլիս եկած ատենը դարձեալ իւր տեղը եպիսկոպոսաց ժողովքի մէջ ուրիշ եպիսկոպոսներէն եւ Աոստանդուպոլսի եպիսկոպոսէն ալ վեր կը գտնուէր. եւ այն ժամանակը Աոստանդուպոլսի եպիսկոպոսը պատրիարքաց կարգը եւ Արեքսանդրիոյ եւ Մետիքոյ պատրիարքներէն վեր ըլլալու պահանջու մը սկսած էր: (Սփէթ հայկական հոգոր. Օ. էր. 53. 62): Եւ այս պատմածնիս մեծ նշանակութիւն ունի: Աոստանդուպոլսի պատրիարքը, որ իրմէ վեր նստելու իրաւունքը միայն շուրջմայ հայրապետին վրայ կ'ընծանար. առանց ծանր եւ հարկեցուցիչ պատճառի մեր սուրբ հայրապետն իրմէ վեր նստեցնելու յանձնառու ըլլար ալ նէ միւս եպիսկոպոսները թող չէին տար: Բնիկայ միայն այն ատենը կը ընար ըլլալ երբ մեր հայրապետին վրայ մէկ գերիշխանութիւն մը ծանցուէր շուրջմայ հայրապետին հաւասար, եւ յայտնի ալ է որ եկեղեցական աստիճանաւորաց իրարմէ վեր վար նըստելը եկեղեցական կանոններով սրոշուած բան մը ըլլալով բաղաբնութեան տկնածութիւն մը չէր կը ընար այն կարգը փոխել տալ:



այոց կաթուղիկոսին այս գերիշխանու-  
 թիւնը ճանչնալու նշան մը նէր որ Անտիոքայ  
 պատրիարքները՝ որ առէն մը Արարոսի արքե-  
 պիսկոպոսին իրենցմէ անկախ ըլլալուն դէմ  
 բողոք ըրին, մեր հայրապետին դէմ բողոք մը  
 չըրին այն ատենները։ Այլ չկարծուի որ այս  
 բողոք չընելս քաղաքական պատճառ մ'ունեցած  
 ըլլայ. որպէս թէ Արարոս յունաց կայսերու-  
 թեան տակն ըլլալով անոր համար ըլլալիք ժո-  
 ղովական որոշումը կը բանէր. իսկ այոց եր-  
 կիրը Այսսերական կառավարութենէն անկախ  
 ինքնիշխան թագաւորութիւն մ'ըլլալով նոյն  
 պիսի որոշում մը այն տեղ չէր գործադրուեր։  
 Այսն զի ժողովոյ իշխանութեանը եկեղեցա-  
 կան իշխանութիւն մ'է. եկեղեցին մէկ է եւ  
 անոր իշխանութիւնը մէկ քրիստոնեայ ազգ մը  
 չկրնար հակառակիլ՝ երբ ժողովական թղթով  
 իրեն ծանուցուի։ Այոն Արարոսի սուրբ ժո-  
 ղովը՝ որուն մէջ բացուեցաւ եւ վճռուեցաւ  
 Արարոսի արքեպիսկոպոսին Անտիոքայ պատրի-  
 արքէն անկախ մնալուն դատը, հաւատոյ սահ-  
 մանին պատճէնն ու կանոնները մեր սուրբ Սա-  
 հակ Պարթեւ հայրապետին իրկեց. կը բնար  
 այն ալ իմացընել անոր թէ եկեղեցական իրա-  
 ւամբք պէտք է որ Անտիոքայ պատրիարքին իրա-  
 ւաբանութեան տակը մտնի, Այսպէս պահան-  
 ջում մը ոչ Անտիոքայ պատրիարքն ըրաւ եւ ոչ  
 Արարոսի սուրբ ժողովը. եւ ասկէց ճիշտ տը-  
 րամաբանութեամբ կը հետեւի որ մեր հայրու-

պետներուն անկախ գեր իշխանութիւնը այն  
 ատենն ընդհանրապէս ճանչցուած էր Յոյն եւ  
 Առովմեական եկեղեցեաց մէջ։

Առովմայ հայրապետները մասնաւորապէս  
 այս անկախութիւնն ճանչցած են։ Սուրբն Մար-  
 տինոս Ա. Առովմայ հայրապետը որուն հայ-  
 րապետութեան ժամանակն է 649 թուականէն  
 մինչեւ 654, իրեն կողմէն մնայուն տեղեկալ-  
 ներ իրկեց Ասորոց եւ Միջագետաց երկիրները.  
 մէկ հատ մըն ալ այոց երկիրն ինչո՞ւ չխըր-  
 կեց. չէ՞ր զիտեր որ այստան ըսուած երկիր  
 մ'ալ կայ. կամ թէ այն տեղի ժողովուրդն  
 ալ քրիստոնեայ են։ Մանաւանդ որ հայաստանի  
 մէկ կողմն ալ Միջագետաց երկիրին, եւ փոքր  
 այստան՝ Ասորոց երկիրն սահմանակից էր։  
 այք այն ժամանակը զատ. թագաւորութիւն  
 ալ չունէին, կրօնից կողմանէ ալ նեղութիւն  
 մը չունէին. երկիրն կառավարողներն էին բուն  
 այք՝ որ Յոյն պատուանունով կիրաւադատ  
 կըսուէին. եւ յիշեալ հայրապետին ամբողջ  
 ժամանակը այս կիրաւադատութեան պաշտօնս  
 սենողն ալ Մմբատ բազրատունին էր. որուն  
 իշխանութիւնն է 644 թուականէն մինչեւ 654.  
 Այս բանիս վրայօք Առովմայ հայրապետը կամ  
 այոց աղգի պէս նշանաւոր ազգի մը համար  
 անհոգութիւն ըրած էր. անանկ ազգի մը՝ ո-  
 րուն վրայ տիրելով զորութիւնին աւելցընելու  
 համար Պարսիկք եւ Յոյնք շատ ժամանակ ի-  
 րարու հետ կռիւ կնէին. կամ թէ որ այնպէս



արթուն եւ արիասիրտ հայրապետի մը համար  
այդպիսի անհոգութիւնը անպատեհ տեսնուի  
նէ՛ Հայոց եկեղեցւոյն եւ հայրապետին իրմէ  
կախում ունենալը ձանձցած ըլլալու էր: Աւշ-  
ղափառ ըլլալին գիտնալով այն տեղ իր կող-  
մէն նուիրակ խրկելը անօգուտ սեպեց ըսելը  
չեմք ընդունիր. վասն զի մինչեւ հիմայ թէ՛  
Ապտնիա, Պաղդիա, թէ՛ ուրիշ թագաւորութեանց  
երկիրներ. թէ՛ եւ ուղղափառ ձանձցուած են, պա-  
պին նուիրակները կրգանուին. ուստի սրբոյն  
Մարտիրոսի Հայաստան փոխանորդ տեղակալ  
մը շխրկելուն պատճառ՝ Հայոց հայրապետին ե-  
կեղեցւոյ կառավարութեան մասին անկախ ինք-  
նիշխանութիւնը ձանձնալէն դատ բան չկրնար  
ըլլալ:

Աւրիշ պատմական դէպք մը՝ ներկայ խնդիրս  
աւելի կպարզէ: Արեքասաներորդ դարուն  
մէջ՝ որ Հռովմայ հայրապետները Հայոց ազգին  
հետ քիչ մը աւելի մտաւոր յարաբերութիւն  
ունեցան խաչակիրներուն արեւելք արշաւելուն  
եւ Արիկիայի սահմանակից Ասորոց երկրին մէջ  
գօրանալուն եւ քանի մի տեղերու ալ տիրել-  
ուն պատճառաւ, Անտիոքայ Ալպերտ անուն  
լատին պատրիարքը իր ամօռոյն իրաւունքը ձեռք  
առնելով կուգէր իրեն իրաւաբանութեանը տակն  
առնել Հայոց կաթուղիկոսն ալ՝ որ Արիկիա  
կնստերայն ատենը. եւ կաթուղիկոսին եւ ազգին  
կողմէն դիմագրութիւն տեսնելով Պրիգոր թի.  
Հռովմայ հայրապետին գանգառ գրեց. որպէս

թէ եկեղեցւոյ սահմանածին դէմ կապասամբին,  
եւ Անտիոքայ պատրիարքին հնազանդիլ չեն ու-  
գեր. Հռովմայ հայրապետը ասոր պատճառը մեր  
Պոստանդին կաթուղիկոսին հարցուց. եւ անկէց  
խմանալով որ սուրբ Առաւորչին օրէն ՚ի վեր  
Հայոց եկեղեցին ուրիշ ո՛ր եւ իցէ պատրիարքէ  
մը կախում չունենալով ինքնագլուխ պատրի-  
արքական ամօռ մ՛է՛ եւ սուրբ Առաւորչին ու  
սրբոյն Անդրեսարոսի մէջ եղած վաւերական գաշ-  
նագրով մը հաստատուած եւ վաւերացած է ա-  
սիկայ, բանն ստուգելէն ետքը ինքն ալ նոյնը  
հաստատեց, եւ Անտիոքայ պատրիարքին պահանջ-  
քը իրաւացի չըլլալն անոր իմացուց, Այս պատ-  
մութիւնս առած վկայութիւննիս ալ մէկ տեղ  
նշանակելով գրած եմք գործոյս առաջին մա-  
սին երրորդ գլխոյն մէջ, Այս առիթովս կը խնդ-  
րեմք մեր յարգի ընթերցողներէն՝ որ նոյն գըլ-  
ուխը մէկ մ՛ալ մտադրութեամբ կարգան՝ վասն  
զի ներկայ խնդրոյս վրայ բաւական տեղեկու-  
թիւններ կը ընան առնուիլ անկէց:

Հռովմայ հայրապետները այս անկասու-  
թեան ազբիւրը ձանձնալով կը յարգէին. եւ ինչ-  
պէս որ վերը յիշեցինք, միայն երբ Հայոց ազ-  
գին ուղղափառութեանը վրայ կասկած ձգող լուր  
առին նէ այն ատենը Հայոց հայրապետին գը-  
րեցին. իսկ եկեղեցական կառավարութեան վը-  
րայօք բոլորովին ազատ եւ անկախ կը ձանա-  
չէին. ուստի երբ այնպիսի բաներ ալ ազգիս  
մէջ կը պատահէին՝ որոնց նմանը Յունաց մէջ



պատահելով լըսելնուն պէս լոկ գիր խրկելն ալ բաւական չսեպելով յատուկ մարդիկ կըտրկէին, ժողովներ կընէին եւ ընել կուտային, և առ յոց ազգին նկատմամբ այդպիսի բան մը բնաւ ըրած չունին: Ասոր օրինակները շատ են: Ասոր եպիսկոպոսարան մը հաստատուելու ատենը և ընդ միջոցով պիտի իմանար, եւ պատշաճութիւն չըտեսներ նէ ընդգէմ կըբողոքէր, եւս առաւել մէկ պատրիարքութիւնը երկուքի բաժնուելուն ըստորովին չէր կըրնար դիմանալ: Իայց ժամանակ եղաւ որ և այսատանի արեւելեան կողմը որ Պարսից ձեռքն էր՝ կաթուղիկոս մը գտնուած ժամանակը, յունաց կայսեր մը գաղաքական նպատակի համար թեւադիր ըլլալով դատ մէկ կաթուղիկոս մ'ալ Յունաց բաժնին ևս սերուն վրայ գրուեցաւ: Ի հարկէ այն ատենուան և ընդ միջոցով հայրապետը՝ որ և այոց կաթուղիկոսին բարձր եւ ինքնօրէն իշխանութիւնը գիտէր, չէր ներէր որ այնպիսի սեծ հեղինակութիւն մը երկու անձանց մէջ բաժնուի: Իայց ըստ որում ասիկայ հաւատոյ ինդիր մը չէր, միայն եկեղեցական կանոնաց կըվերաբերէր, որ այլ եւ այլ ազգաց բարուց եւ սովորութեանցը համեմատ այլ եւ այլութիւն կըվերցընեն, բնաւ չխառնուեցաւ:

Եւր որ Փոռ Եունաց պատրիարք եղաւ, և ընդ միջոցով հայրապետը ասոր պատրիարքութիւնը չընդունեց. մէկ մը՝ որ իրեն նախորդ Իգնատիոս պատրիարքին կենդանութեանը պատրիարք

եղաւ՝ երբ Իգնատիոսը պատրիարքութենէ զընկելու պատճառ մը չկար: Եւ երկրորդ՝ որ աշխարհական կարգէ ընտրուեցաւ, եւ քիչ օրուան մէջ եպիսկոպոսական աստիճանին հասնելով պատրիարք եղաւ: և ընդ միջոցով հայրապետը այս պատճառներով արեւելեան պատրիարքներուն եւ յունաց կայսեր գիրեր գրեց: պատգամաւորներ եւ նուիրակներ խրկեց. այնքան աշխատեցաւ՝ մինչեւ որ Փոռը պատրիարքութենէ հանել եւ Իգնատիոսը դարձեալ նոյն աթոռոյն վրայ դնել տուաւ:

Փոռը չընդունելուն պատճառներուն յար եւ նմանը մեր ազգին մէջ ալ տեսնուած է. բայց և ընդ միջոցով հայրապետը մէջ մտած չէ ոչ անմիջապէս, եւ ոչ ալ արեւելեան պատրիարքներուն մէկին գանգատելով. ոչ մէկի մը այսպիսի բանի մը համար գիր գրած է եւ ոչ նուիրակ խրկած է: Երանելի Գրիգոր Ա կայսեր հայրապետին՝ և ընդ միջոցով Գրիգոր Ե հայրապետին հետ թղթակցութիւն ունենալը վերը քանի մի անգամ յիշեցինք, եւ այս և ընդ միջոցով հայրապետիս պատմութիւնը կարգացողները գիտեն թէ եկեղեցական իրաւանց որքան նախանձախնդիր էր: Եյսպիսի հայրապետի մը որ՝ երանելի Վըկայսէրը ինք կաթուղիկոսական աթոռէն չըրաժարած՝ ետեւէ ետեւ երկու կաթուղիկոս կը դընէ, նախ՝ Գէորգ Լուեցին, եւ անկէց ետքը Սարգիս եպիսկոպոսը. և ընդ միջոցով պապը ասոր ասանկ ըլլալուն պատճառն անգամ գո՛նէ



Հետաքրքրութեան համար չհարցընէր: Պետրոս  
Վետադարձին օրը Պիոսկորոս անուն մէկը հա-  
կառակաթոռ կաթուղիկոս կընստի. պապն ասոր  
ալ չխառնուիր. աղգն ինքնին կմերժէ:

Փոտ պատրիարքին ժամանակը շայոց կա-  
թուղիկոս էր երանելին Օգբարիա. եւ ասիկայ  
ալ Փոտայ նման՝ աշխարհականութենէ առաջ  
եկած եւ քիչ ժամանակի մէջ, այսինքն մէկ օր-  
ուան մէջ. ինչպէս որ պատմիչները կըսեն՝ դըպ-  
րութեան ասորձանէն մինչեւ կաթուղիկոսու-  
թիւն ելած էր: (Եւրոպ. Ռ. 2. Սիբիւս. էր.  
43. Գ. Ա. Էնէր): Հոովմայ հայրապետը  
որ փոտայ համար այնքան բաներ ըրեր էր որ  
վերը պատմեցինք, Օգբարիա կաթուղիկոսին  
համար ամենեւին չխօսեցաւ. Իւ դիտելու ար-  
ժանի բանն այն է՝ որ Փոտ պատրիարքը շայոց  
հետ յարաբերութիւն ունէր. հայոց բազրա-  
տունեաց առաջին թագաւոր Աշոտին եւ նոյն  
իսկ Օգբարիա կաթուղիկոսին հետ թղթակ-  
ցութիւն ունէր. իր կողմէն՝ Արկիոյ Աշահն ե-  
պիսկոպոսն ալ շայաստան խրկած էր կրօնական  
քանի մի խնդրոց համար խօսակցութիւն ընե-  
լու. եւ անհնար էր որ շայոց կաթուղիկոսին  
մէկ օրուան մէջ աշխարհականութենէ մինչեւ  
եկեղեցական կարգի ամենաբարձր տասիձանը հա-  
սած ըլլալը չգիտնայ: Այսու ամենայնիւ երբ  
այդպիսի շուտ ձեռնադրուելուն վրայ զինքն ար-  
դարացնելու համար Հոովմայ հայրապետին գիր  
կըզրէ, միայն Աեքտառիոսի եւ սրբոյն Ամբ-

րոսիոսի եւ Տարասիոսի նոյն օրինակ շուտով  
յառաջանալը մէջ կըբերէ. չըսեր հայրապետին  
որ այդ թերութիւնը միայն իմ վրա՞ս կըտես,  
նես, ահաւասիկ շայոց կաթուղիկոսն ալ յար-  
եւնման ինձի պէս ձեռնադրուած է, եւ դուն  
անոր բան չես ըսեր. բոլոր ուժդ իմ վրաս  
կըփորձես: Կ'ոչ կրնայ ըլլալ այս կարեւոր պա-  
րագայիս մէջ ասոր վրայօք Փոտայ լուելուն  
պատճառը. բայց եթէ այն՝ որ գիտէր թէ Հը-  
ոովմայ հայրապետը եւ թէ՛ ուրիշ ո՛ր եւ իցէ  
պատրիարք՝ սկիզբէն ՚ի վեր շայոց հայրապետին  
անկասութիւնը եւ ինքնօրինութիւնը ճանչցած  
էին. եւ թէ որ այդպիսի բան մը առաջարկէր  
նէ՛ լսելիքը գիտէր, որ ո՛չ ինքը եւ ո՛չ Հը-  
ոովմայ հայրապետը եկեղեցական կարգաւորու-  
թեանց մասին շայոց եկեղեցւոյ գործոյն թառ-  
նուելու իրաւունք չունին:

Այսպիսի բաներու վրայ Հոովմայ եւ ու-  
րիշ պատրիարքներուն լուութիւնը մեծ նշա-  
նակութիւն ունի. եւ հայաստանիայց կաթու-  
ղիկոսական աթոռոյն ինքնօրինութիւնը եւ ան-  
կասութիւնը ճանչցած եւ ընդունած ըլլալէն  
զատ բանով չմեկնուիր: Ուրիշ բան էր երբ  
հաւատոյ խնդիր ելլէր. վասն զի այն ասանը  
եկեղեցւոյ միութիւնը կը քակուէր. եւ հա-  
ւատքն աւրողը եկեղեցւոյ անդամ չէր մնար.  
ուստի նոյն եկեղեցին պաշտպանելու իրաւունք  
կունենային եկեղեցւոյ բարձրաստիձան իշխան-  
ները:



Եկեղեցւոյ մէջ հեղինակութիւնը մէկ քանի վրայ հաւասար իշխանութեամբ բաժնելը բրիտաննէութեան առաջին ժամանակէն երեւցած է : Պողոս առաքեալը կըսէ թէ՛ հեթանոսներուն սուրբ Եւետարան քարոզելն իրեն, իսկ հրեայներուն քարոզելը Պետրոսի յանձնուած էր : (Գալ. Բ. 7) : Եկեղեցական պատմութիւնը մեզի կը սորվեցընէ որ նոյն իսկ առաքելոց ժամանակը Եւտիոք քաղաքը երկու եպիսկոպոս ունէր մի եւ նոյն ժամանակի մէջ . սուրբն Եւտիոս եւ սուրբն Իգնատիոս Եսուածազգեաց\*, մէկը հրէից եւ միւսը օտար ազգի բրիտաննէից համար : Եսոր նման՝ եւ սոր հետեւողութեամբ՝ սուրբն Սեղբեստրոս շնորհալու հայրապետն ալ արեւելեան բրիտաննէից մեծադոյն մասին համար որ շնորհալու կայսերութենէն դուրս ըլլալով շնորհալու հայրապետին հետ ալ յարաբերութիւննին շարունակ եւ կանոնաւոր կերպով չէր կըրնար ըլլալ . ինչպէս են Վրայ եւ Եղուանից եւ ուրիշ Առվ-

\* Սուրբն Յովհան Ոսկեբերան (նորբողի սուրբն Իգնատիոս . սուրբն Մարքիմոս, սուրբն Աթանաս եւ ուրիշները կըսեն թէ սուրբն Պետրոս սուրբ Խնատիոսը Անտիոքայ եպիսկոպոս ձեռնադրեց : Եւ սեբի Դեսարացին պատճ. Եփե. Գ. 22 կըսէ թէ սուրբն Ետիոս Անտիոքայ առաջին եպիսկոպոս եղաւ : Բարսիլոս (Եփե. Գ. 44 45 Բ. 13 14) կըսէ թէ Երկուքը միևնոյն ատեն մէկը հրեայ եւ մէկը հեթանոս հաւատացեալրց եպիսկոպոս ձեռնադրուեցան ըսելն զստ ասոնք միաբանելու ճար չկայ :

կասեան ազգերը , սուրբ Լուսաւորիչը իրեն հաւասար իշխանութեամբ անկախ հայրապետ եւ պատրիարք ճանչցաւ : Եյս ճանչնալը նոյն սուրբ հայրապետը ազգին ընդհանուր եւ անկախ կաթողիկոս ընելու պէս կը բռնեն մեր ազգային մատենադիրներէն պատկառելիանձինք : Եւ երանելին Գրիգոր Տղայ որ սուրբ Կերսես Շնորհալիէն անմիջապէս ետքը շնորհալու կաթողիկոս եղաւ , Տուտեորդիին եւ անոր կուսակիցներուն գրած նամակին մէջ կըսէ .  
 « ո՛չ խոնարհ սրտիւ եւ աներկբայ մտօք ետս  
 « յանձն գնալ 'ի կեսարիա , եւ դարձեալ 'ի  
 « շնորհալու , եւ ասնուր ձեռնագրութիւն 'ի  
 « սրբոյն Սեղբեստրոսէ (ընդհանր. էր. 195.  
 « Գալ. Ե. 1825) . Եւ Գրիգոր Տաթևացին՝  
 որ շնորհալու աթոռոյն վրայ գերագոյն իշխանութիւն մը չէր ուզեր ճանչնալ , կըսէ նոյն սուրբ Լուսաւորիչ հայրապետին համար թէ 'ի կեսարիա եպիսկոպոս եղաւ եւ 'ի շնորհալու  
 « նայ եւ եղեւ հայրապետ եւ պապ » (հարց. « ճանց. Բ. 9) : Եսոնց ըսածին համաձայն կը գրէր անցեալ դարու մէջ՝ Նիկիոս Կաթողիկոս , կուսանդուոյսլի պատրիարքը . « ինքնազլուխ  
 « մեջ միոյ տուեալ իշխանութիւնն 'ի Երբոյն  
 « Սեղբեստրոսէ՝ մերոյն Լուսաւորի , եւ ան-  
 « միջոցաբար ածանցեալ 'ի յաջորդս նորին ,  
 « (Գլխ. Եւրբի. Եր. 914) : (Նոյց մենք կը հաւանիմք ըսելու թէ յիբաւանց աթոռոյ սուրբ Լուսաւորչին ունեց. ձ ինքնազլուխութիւնը



Հաստատեալ էր . եւ մեր վերապատուելի Հեղինակն ալ՝ սուրբ Անդրէասորոս Հայրապետէն մեր սուրբ Առաւորչին այդպիսի իշխանութեւն տըրուած ըլլալը չընդունիր . ինչպէս որ քիչ մը ետքը պիտի տեսնենք :

Եւս ամէնս գիտնալէն ետքը ինչ ըսեմք հիմախոս արքեպիսկոպոս վերապատուելի Հեղինակին , որ մեր Հայրապետաց 'ի նախնեաց հետեւ ունեցած այս արտօնութիւնը մէկէն ջրելու յուսով՝ յափշտակութիւն կանուանէ . եւ կըսէ . " յափշտակութիւնը Հաղարաւոր տարիներէ ետքը դարձեալ յափշտակութիւն է եւ " ոչինչ է " մինչուկ որ (բացայայտ կամ լռելեայն) օրինաւոր ընդունելութիւն կամ Հաստատութիւն 'ի Քրիստոս չգայ (եր. 359) . Սենք պատմածներնուս կարգովը տեսանք որ 'ի Քրիստոս , այսինքն 'ի Հայրապետէն Հոռովմայ՝ ինչպէս որ վերապատուելի Հեղինակը կը հասկընայ , քայտայտ չէ ալ նէ լսելէյն հաւանութիւն աւելու պարտաւորեցաւ որ մինչեւ Վերիդոր Ա՛ պապին օրը՝ եւ անկէց ետքն ալ մինչեւ ունիթոսներուն ծագումը՝ պապերը Հայոց եկեղեցական գործերուն չէին խառնուէր , բայց եթէ երբ որ մէկ կողմէ մը անոնց տեսանը դիմող ըլլար իբրեւ առ դատաւոր . ասոր հաստատութիւն բերած պատմական փաստերնուս վերապատուելի Հեղինակը դեմ խօսելիք չունի . ուստի ո՛չ ասոնք կը յիշէ . եւ ո՛չ իր Ըսածին վկայութիւն մը կուտայ՝ թէ Հայոց

Հայրապետաց անկախութիւնը յափշտակութիւնն է :

Ըսոր փոխարէն այնպէս բան մը կըսէ՝ որ ճշմարիտ է եւ մեր ալ ընդունածն է . եւ մեր առաջարկեալ խնդրոյն հետ ալ բան չունի . կըսէ . Հոռովմայ Հայրապետը չկըրնար իշխանութիւն ունենալ մէկ նոր զատ եկեղեցի մը կազմելու եւ իրմէն անկախ գլուխ մը դնելու անոր . Եկեղեցի կազմել ըսելուն նշանակութիւնը հասկըցողը դիւրաւ կիմանայ որ այդ խօսքը մեր խնդրոյն չվերաբերիր : Եկեղեցին հաւատոյ միութեան վրայ է եւ ոչ կառավարութեան միակերպութեան վրայ . եկեղեցին մէկ հաւաք մը ունենալու է ամէն տեղ եւ ամէն ազգի մէջ . բայց ամէն մէկ ազգին հաւատացեալները թէ եւ հաւատով միաբան՝ բայց բարքով եւ բընաւորութեամբ եւ առանձին սովորութեամբ իրարմէ տարբեր ըլլալով՝ իրենց մասնաւոր հանգամանացը համաձայն կերպով զատ զատ գլուխ եւ կառավարող ունենայնին զատ եկեղեցի կազմել չէ , երբ եկեղեցի բառը ընդհանրապէս հաւատոյ միութեան նշանակութեամբ առնուի . Բայց շատ անգամ այլ եւ այլ տեղեր հաւատացելոյ միութեանը համար ալ կառնուի , ինչպէս որ սուրբ առաքելոց ժամանակն ալ կար . եւ նոյն իսկ հաւատոյ հանգանակին մէջ հասարակութիւնն 'ի մի միայն սուրբ կախարհիկ եւ սաստիկան եկեղեցի յօդուածը դնող առաքելներուն մէջն սուրբն օրոյն շատ ե-



կեղեցիներ կը ճանչնայ : Հռովմայեցիներուն գրեթէ Վիկտորայ եւ Պրիսկիայ համար կըսէ .  
 « զորոց ո՛չ ես միայն գոհանամ, այլ եւ ամենայն եկեղեցիս : (1)Պ. 4) : Եւ կորընթացիներուն դրած առաջին թղթոյն մէջ՝ Վիմոթէոսի համար կըսէ . « յիշեցուցէ ձեզ զճանապարհս իմ որ ՚ի Քրիստոս Յիսուս, որ » պէս եւ ամենայն ուրեք եւ յամենայն եկեղեցիս :  
 « ցիս ուսուցանեմ » (Գ. 17) : Թե՛ որ խօսքը անօգուտ տեղը երկընցընելէն չփսխէ ինքնէ՛ սուրբ գրոց մէջէն ասոնց նման շատ վկայութիւններ կը բնայինք ժողովել . եւ ինչո՞ւ համար Հռովմայ հայրապետ մը այդպէս եկեղեցի մը կազմելու իշխանութիւն պիտի չունենայ . եւ ինչո՞ւ համար՝ կառավարութեան կողմէն իրմէ կախում չունենալու գլուխ մը պիտի չըտայ անոնց :

Գուցէ իրեն հետ այն գլխոյն ունեցած եւ ունենալու հաղորդակցութիւնը կը խրջի, եւ անկէջ կը վախնայ : Բայց այս մասին տլ այնքան վախնալու ըսն չկայ : Թե՛նփանէս յունաց պատրիարքը՝ որ Հռոմական եւ Լատին եկեղեցիներուն իրարմէ զատուելէն առաջ կուտանդնուպոլսի պատրիարք էր . Եւփիմիոս կուտանդնուպոլսի պատրիարքին Հռովմայ հայրապետին հետ հաղորդակցութեան վրայ խօսելով՝ զոր պապը ժամանակ մը իր հաղորդութեան ընդունել չուզեց, կըսէ . երկու կերպ հաղորդակցութիւն կայ հաւատացելոց մէջ : Մէկը

հաւատոյ հաղորդութիւն, եւ միւսը եպիսկոպոսական հաղորդութիւն : Եւս յետինս մէկ մարդ մը իրեւ այս ինչ տեղոյ եպիսկոպոս ճանչնալու վրայ կը կայանայ . իսկ առաջինը յայտնի է որ հաւատոյ միութեան վրայ կը կայանայ : Եպիսկոպոսական հաղորդութիւնը պային կաթուղիկոսական աստիճանին կը վերաբերի . եւ որովհետեւ մեր կաթուղիկոսներն ալ նոյն կաթուղիկոսական աստիճանն ունին եւ իրարու ստորակարգրեալ չեն, ասոնց մէջ հաղորդակցութիւնը մեծի եւ փոքրի մէջ եղածի նման չըլլար . եւ երբեմն առերեւոյթս՝ եւ մարդկային եւ քաղաքական պատճառներով բոլորովին դադրի ալ նե՛ք քանի՛ որ հաւատոյ միութիւնը նոյն է եւ անխախտ՝ այդ դադարումնալ ոչինչ է . եկեղեցւոյ բաժանում չհետեւիր ակէջ : Ետեն մը Հռովմայ հայրապետը զսուրբ Մեկիտոս հայրապետ Լնտիոքայ իրեն հայրապետ չընդունեց . մինչեւ անդամ անոր տեղը ուրիշ մը Լնտիոքայ հայրապետ դրաւ, որ իր կուսակիցները կը հովուէր . ինչպէս որ սուրբ Մեկիտոս որ այս գործովս իր պատրիարքութիւնը չձգեց . իր կողման ժողովուրդը կը հովուէր : Սուրբ Մեկիտոս վախճանելէն ետքը ժողովուրդը Հռովմայ հայրապետին իրկած պատրիարքը չձանձղան եւ չընդունեցին . իրենց աւանմին պատրիարք մ՝ ընտրեցին : Նմանապէս պային իրերկածը վախճանելէն ետքը անոր ժողովուրդը սրբոյն Մեկիտոսի յաջորդը չձանձղան . իրենց



պատրիարքին յաջորդը ընտրեցին . եւ ժամանակ մը Անտիոքայ աթոռը երկու պատրիարք ունեցաւ . որոց մէկը Հոովմայ հայրապետին հաջորդ էր . եւ միւսն չէր . այսու ամենայնիւ երկու կողմն ալ ուղղափառ էին . եւ այս ալ մասնաւոր դիտողութեան արժանի է , որ սուրբն Մելիտոս՝ իր կենդանութեան ժամանակը Հոովմայ հայրապետին հաղորդութեան չէր ընդունուած . վախճանէն ետքը եւ մինչեւ հիմա հոովմայ եկեղեցին նոյնը սուրբ կը ճանաչէ . եւ ամէն տարի փետրուարի 12ին անոր յիշատակը կընէ : Ասկէց կերեւի որ հաւատոյ միութիւնը եւ ուղղութիւնը անարատ ըլլալէն ետքը՝ եպիսկոպոսական ըսուած միութիւնը թէպէտ ըլլայ նէ գէշ չէ՝ , բայց չըլլալովն ալ եկեղեցին պառակտած չըլլար :

Ըսածնիս՝ թէ պապը կըրնայ այս կերպով մէկ զատ եկեղեցի մը կազմել՝ եւ անոր կառավարութեան գլուխ մը առնել՝ որ իրեն ստորակարգեալ հոգեւոր պաշտօնեայիներ ունենայ . մեր վերապատուելի հեղինակն ալ դիտէ . որովհետեւ Ազգոսեան ժողովքէն հետեւեալ խօսեցը մէջ կըբերէ . « Հոովմեական եկեղեցին « աս եկեղեցիներէն շատերը՝ մանաւանդ պատրիարքական եկեղեցիները զանազան արտօնութիւններով պատուեց , բայց միշտ իրեն « անաւելութիւնները թէ՛ փեղեբական ժողովոց մէջ եւ թէ՛ ուրիշ քանի մի բաներու « մէջ պահելով » . ( Լեւոն . Կոթիք . էր . 342

343 ) . Հարեւանցի մը Հոս յիշեցընեմք որ նոյն հեղինակը որ վերը կըսէր թէ պապը զատ եկեղեցի մը կազմելու իշխանութիւն չկրնար ունենալ՝ Հոս եկեղեցիներու զատութիւն կընդունի . ուրեմն եկեղեցի ըսուելուն երկու կերպ նշանակութիւնը որ վերը ցուցուցինք՝ կընդունի ըստ որոյ կըրնայ պապը ըստ եկեղեցական կառավարութեան զատ եկեղեցի կազմել . որովհետեւ Ազգոսեան ժողովքին ըսածին նայելով՝ արդէն կազմուածները կըրնայ ընդունիլ , ինչպէս որ Հայոց եկեղեցին անկախութեանը հետ մէկտեղ ընդունած է . եւ անոնց անանկ արտօնութիւններ ալ առնելով՝ որ առաջուց իրենց կազմուած անանկն չունէին . եւ չկրցած կազմածը՝ ընդհանուր եկեղեցւոյ հաւատքէն զատ նոր հաւատք ունեցող եկեղեցին է . որ երբէք չկըրնար եկեղեցի անուամբ կազմուիլ . վասն զի այս նշանակութեամբ մէկէն աւելի եկեղեցի չըլլար : Վասն որիչ դիտողութեան :

Այկեղեցական պատմութեանց մէջ կըտեսնեմք որ ՚ի սկզբանէ ընտէ տիեզերական ժողովոց նախագահութիւնն ալ՝ զոր պապին անհաղորդելի իրաւունքն ըլլալ կըցուցընէ ժողովը՝ եւ մենք ալ կը ճանչնամք որ պապին իրաւունքն է , ուրիշի հաղորդած ունի պապը , չէ՛ թէ իբրեւ փոխանորդ իր կողմէն լորկելով . որ ամէն ատեն սովորականն եղած է . այլ ինքն այդպէս փոխանորդ մը լորկելէն առաջ ժողովոյն իբրեւ իրեն նախագահ ընտրած անձին նախագահութիւն



ընդունելով : Սուրբ Աղեղեստինոս <sup>Հռոմէայ</sup> հայրապետը՝ զուարթն Աիւրեղ Աշէքսանդրացին Արեւոտի սուրբ ժողովոյն նախագահ չէր դըրած . այլ ժողովը նախագահ ըրած էր իբրեւ Աշէքսանդրիայ պատրիարք . վասն զի՝ ինչպէս որ այս զլիսոյս մեջ սրբոյն Գրիգորի մեծին <sup>Հռոմէայ</sup> հայրապետին խօսքերովը տեսնանք , երևը աթոռոց պատրիարքներն իբրեւ մի եւ նոյն սուրբ Պետրոս առաքելոց յաջորդ՝ կրնային ժողովքի նախագահ ըլլալ : Աւստի սուրբ հայրապետը սրբոյն Աիւրղի նախագահութիւնն ընդունեց եւ հաստատեց : Ասիկայ կը որսածէ Ֆիլէօրի եկեղեցական պատմիչը ( պատմ. էջ 2 . գր . ԻՆ . յօդ . 37 ) եւ կըսէ « սուրբն Աիւրեղ նախագահ » էր իբրեւ սուրբ Աղեղեստինոս պապին տեղը « ըրանած , ինչպէս որ արձանագրութեան մէջ « գրուած է » . եւ կը յաւելու թէ իր աթոռոյն պատուոյն համար ալ կըրնար նախագահ ըլլալ \* : Աւրեմն նախագահութիւնն ալ՝ գոնէ ա-

\* Ֆիլէօրի թեպէտ Հռոմէական է . բայց Հռոմէականաց ալ շատ ընդունելի չըլլալով գուցէ այս բերած վկայութիւնս կատարելի ըլլայ : Աւստի հոս Ռօրպատր եկեղեցական պատմիչին վըկայութիւնը մէջ բերել հարկ է . որ կըսէ թէ Ֆիլէօրիի եկեղեցական պատմութեան միջեւ քսանութեորդ գիւրքը այնքան վտանգաւոր չէ : Մեր հոս բերած վկայութիւնը քրտանընդինդ գրքէն է : ( Ռօրպատր . ընդհանուր պատմութիւն Իսթոնգիլէ Ելեղեյոյ . հր . Ի . Չ . էջ . 190 . պ . փոթիւ . 1859 ) : Այս պատմիչս Ֆիլէօրիի բարեկամներին չըլլալը՝ գրքին նշանակեալ տեղը կարգացողը դիւրաւ կը հասկընայ :

թառոյն պատուոյն համար աւելի կըրնայ հաղորդուիլ : Մենք Աուգրոնեան ժողովոյն ըսածը կանոն մը սեպելով , այս ալ ՚ի պատմութեանց ստուգուած՝ նոյն կանոնին բացառութիւն մը կըսեպեմք : Աւրիչ քանի մի բաներն որ ժողովքը կըսէ , եւ մենք ո՛րն ըլլալը չեմք գիտեր , մեր վերապատուելի հեղինակն ալ մեղնէ աւելի գիտցած չէ , որ չէ՛ բացատրեր . ՚ի հարկէ տիեզերական ժողովոց նախագահութեան չափ կարեւորութիւն պիտի չունենան . եւ թէ որ անոր բացառութիւն եղաւ նէ՛ միւսներուն ալ կըրնայ ըլլալ : Ալ այսպէս՝ կը մնայ միայն՝ զատ եկեղեցի կազմելու արտօնութիւն տալու իշխանութիւն չունենալը : Աւ որովհետեւ այսպէս եւ կեղեցի մը կազմելու՝ այն մտօք զոր վերը բացատրեցինք , պապը ինքն ալ իշխանութիւն չունի , ըսել կըլլայ որ պապը իրեն չունեցած արտօնութիւնը ուրիշներուն : Կըրնար հաղորդել , եւ այս բանիս ճշմարտութիւնը մարդ չըկըրնար ուրանալ :

Իայց վերապատուելի հեղինակը այս փաստերը չսխալելով . դարձեալ իր դրութիւնը պաշտպանելու վրայ թող ըլլայ . եւ նայոց առաջին հայրապետ սուրբ Աուսուարչին այգպիտի անկատարութիւնը սուրբ Աղեղեստրոս հայրապետէն ճանչցուած ըլլալը թող ուրանայ . մենք ալ ըսածին շնորհով կըրնեմք : Սակայն ոչ վերապատուելի հեղինակը՝ եւ ո՛չ որ եւեցեմարդ , աստուած ընաիր սուրբ հայրապետին համար չը-



կըրնար ըսել որ յափշտակութիւն կը ըրածը .  
 որ ինք զինքը եւ իր յաջորդներն ուրիշ եկե-  
 ղեցիներէ անկախ հրատարակեց : Էնդինակը  
 ըսաւ թէ յափշտակութիւն է այդ անկախու-  
 թիւնը . բայց չըսաւ թէ յափշտակողը սուրբ  
 լուսաւորիչն է . եւ մենք ցուցուցինք թէ սուրբ  
 լուսաւորչէն ՚ի վեր կայ այս անկախութիւնը .  
 գոր չէ թէ միայն Էնովմայ հայրապետները, այլ  
 եւ Կոստանդնուպօլսի պատրիարքներն ու մեա-  
 րապօլիտները , եւ Մնտիոքայ պատրիարքներն  
 ալ ճանչցան : Արեմն՝ Էայոց կաթողիկոսնե-  
 րուն անկախ եւ ինքնօրէն իշխանութիւնը Էը-  
 ոովմայ հայրապետէն գերագոյն իշխանութիւն  
 ունեցողէ մը տրուած է մեր սուրբ հայրապե-  
 տին . զոր արեւմտեան եւ արեւելեան հայրա-  
 պետները միապէս ճանչցեր եւ ընդուներ են :  
 Էնդինակը կըսէ՝ որ պապը ասանկ արտօնու-  
 թիւն տալու իշխանութիւն չունի . մենք մեր  
 կաթողիկոսները զանիկայ յիրաւանց աթոռոյ  
 ժառանգած կտեսնեմք . եւ իրեն կձգեմք գու-  
 շակելը թէ ո՞վ էր ոյն առողը . եւ թէ պա-  
 պը իրմէ գերագոյն իշխանութենէ մը տրուած  
 անկախութիւնը՝ գոր իրեն նախորդները իրենք  
 չեն առեր . բայց ճանչցիր եւ ընդուներ են ,  
 կըրնայ ետ առնել :

Եւս հեղինակը ենթադրելով որ հայաս-  
 տանեայց եկեղեցին ՚ի մասն հասարայ ալ զատ  
 [ եկեղեցի կը կազմէ , նոյն եկեղեցւոյ բաճանայ-  
 ներուն հոգեւոր իրաւարանութիւնը եւ ա-

պաշտարութեան խորհրդոյն պաշտօնէութիւնը  
 կուրանայ . հարկ կըսեպէ որ հայաստանեայց՝  
 կամ ըստ իւր՝ էթիօթիակն եկեղեցւոյ ժողովուր-  
 դը՝ Էնովմեական բաճանայից խոստովանի եւ  
 անոնցմէ արձակոււմ առնէ . ապա թէ ո՞չ՝ հոգ-  
 ւոյ վտանգ կըսպանայ . Էսածը հաստատելու  
 համար կըսէ՝ թէ քաճանայն կարգ առնելէն  
 զատ իրաւարանութիւն ալ առած ըլլալու է  
 խոստովանութիւն լսելու եւ արձակում ապու-  
 համար : Եւսինքն՝ առաջնորդէն իրեն յատուկ  
 ժողովուրդ առած ըլլալու է , որ խոստովան-  
 ցընելու իշխանութիւն ունենալուն նշանն է .  
 Եւս իշխանութիւնս ունենալու համար կա-  
 թողիկէ եկեղեցւոյ հետ միացեալ ըլլալու է :  
 Ի բան հաւատոյ միութեան կարեւորու-  
 թեանը վրայ թէպէտ կըրնայինք ըսել որամէն  
 եկեղեցական խորհրդոյ սրբարար շնորհք ալը  
 է Էթիօթ Էթիօթեւոց է եւ ո՞չ է Էթիօթ Էթիօթն .  
 այսինքն քաճանայն ինքը ծանր մեղաց մէջ ալ  
 ըլլայ նէ՝ մատակարարած խորհուրդն ինքին  
 իր զօրութիւնն ունի , զոր բաճանային որպի-  
 սութենէն անկախ՝ կընեն գործէ ընդունողին  
 վրայ . եւ մկրտութեան խորհրդոյն մատակա-  
 րարութեան մասին՝ որով սկզբնական մեղքը  
 քաւութիւն կը գանէ , Էնովմայ եկեղեցւոյ վար-  
 դապետութիւնն է որ՝ չէ թէ միայն աշխարհա-  
 կան քրիստոնէի , այլ եւ բոլորովին եկեղե-  
 ցիէ դուրս եղող հերետիկոսի մը ձեռքոք եղածն  
 անգամ , միայն թէ ընողը եկեղեցւոյ ըրածին



դիտաւորութիւնն ունենայ, և ուղիւնս եկեղեցին  
 վաւերական եւ անկրկնելի կըսեպէ : Քայց  
 այսպիսի բաները մեր առարկայէն օտարաեւու-  
 թիւն մը սեպելով կանցնինք . եւ կըսեմք .  
 թէ որ և ուղիւնս եկեղեցւոյ Հետ չմիացեալ  
 և այ բաճանայ մը արձակում ապու իշխանու-  
 թիւն չունենար նէ՛ նոյն իշխանութիւնն անոր  
 տուող եպիսկոպոսն ալ չունենար : ըսել է որ  
 ո՛չ եպիսկոպոսն եպիսկոպոս է՛ եւ ո՛չ բաճա-  
 նայն քահանայ : Արը Անտիոքայ սուրբ Մե-  
 լիտոս Հայրապետին համար ըսինք թէ և ուղի-  
 մայ եկեղեցւոյ Հետ միաբան , կամ աւելի շիշ  
 խօսելով՝ անոր հաղորդութենէն ընդունուած  
 չէր : Մարդ էր ասիկայ . թէ եւ սուրբ . ՚ի  
 հարկէ քահանայի մը կը խոստովանէր եւ ան-  
 կէց արձակում կառնէր ՚ի հարկէ այն քահա-  
 նայն ալ իր կողմի քահանայներէն էր որ և ու-  
 ուղիւնս Հայրապետէն իրկուած անձը իրեւ  
 Անտիոքայ պատրիարք չէր ընդուներ . ըսել է՛  
 որ և ուղիւնս զատուած էր : Արհաւորընեմ մեր  
 վերապատուելիին . սուրբ Մեֆիտոս Հայրապե-  
 տին այնպիսի քահանայէ մը առած արձակումը  
 ճշմարիտ արձակում էր՝ թէ սուտ եւ անզոր  
 էր : Յիրաւի՛ ասոր ապու պատասխանը , թէ  
 որ ապու յօժարի նէ՛ հեռաբարբաղան բան մը  
 կըլլայ : Քայց մենք բանը ուրիշ կողմէն բըն-  
 րեմք :

Պօսիւն՝ ամէն և ուղիւնս ասուածաբան-  
 ներու հետ կըմիաբանի ըսելու թէ՛ մեզաց թո-

զուժիւն տալը քահանայական կարգէն անբա-  
 ժանելի իշխանութիւն մ'է : Այ կայու թիւն բե-  
 րելով խօսքերնիս չերկընցընեմք : Պօսիւն խօս-  
 քը միայն մեր ընթերցողաց յիշեցընեմք զոր ու-  
 րիշ ասիւթով մը զործոյս յԱ՛ երորդ գլխոյն  
 մէջ յշանակած եմք . եւ այս է բուն խօսքը .  
 Ապիսկոպոսը քահանայն օժեղէն եւ սկիհը  
 ձեռքը տալէն ետքը , որով քահանայեղած կըլ-  
 ւայ հարկաւ . « զարձեալ անիկայ առաջը կը-  
 « կանչէ . եւ ձեռքերը վրան կղնէ ըսելով .  
 « առ զևորդի սուրբ որոց թողուցուս զմեզս  
 « թողեալ լիցի նոցա . եւ այլն : Արքնայ ըսել  
 « մէկը թէ հնար է քահանայ ըլլալ այս իշ-  
 « խանութիւնս չառնելով . երբ ասոնք իրարմէ  
 « անբաճանելի են » : Այսպէս ըլլալով , որով-  
 հետեւ և այ քահանայ մը և ուղիւնս եկեղեց-  
 վայ նէ՛ անիկայ ո՛չ նորէն կը ձեռնադրեն , եւ  
 ո՛չ իրեւ աշխարհական կը պահեն , այլ իրեւ ըզ-  
 քահանայ կընդունին . ուրեմն և այոց ձեռնադ-  
 րութիւնը վաւերական կսեպէ և ուղիւնս եկեղե-  
 ցին . անկէց անբաճանելի եղող իշխանութիւնն  
 ալ՝ զոր ունի արձակում ապու , նմանապէս Աս-  
 ասկէց կը հետեւի որ մեր վերապատուելի հեղի-  
 նակըն այս կետիս վրայ ալ և ուղիւնս վարդա-  
 պետութենէն կտարբերի . եւ տարբերութիւնը  
 հիմակն կըրնանք ըսել . որովհետեւ արձակում  
 ապու իշխանութիւնը քահանայութենէն բաժ-  
 նելով՝ քահանայական կարգին յատկութիւննե-  
 րուն մէկը պակսեցուց :



Այսպէս ընելով, Հասունեան Տ. Անտօն  
 Պերսպոյճառ նախագահ արքեպիսկոպոսին ալ  
 որ հիմայ կաթուղիկոսական պատիւ ալ ունի,  
 հակառակ կը խորհի հիմնական քրքէր-նեանց  
 հեղինակը: Ասան զի յիշեալ արքեպիսկոպոսին  
 ինզրովը Տ. Երուանդ Հիւրմիւզեան արքեպիս-  
 կոպոսը՝ որ Հոռմ կենալով իր կենաց մեծ  
 մասը Հոռովմայ եկեղեցւոյն դաւանութեանը  
 եւ աւանդութեանցը եւ վարդապետութեանցը  
 ամենայն մասամբ աղէկ հմտացած էր, « Եւսպիան  
 սորոս-խաբանս-նեան գիրքը շինեց եւ սպեց Վե-  
 նէտիկ. եւ ասոր մէջ կըսէ. « ամենայն ք-  
 « հանայք է կարգէ Կաթուղիկոսական իշխանութիւն  
 « ունին կապելոյ եւ արձակելոյ ՚ի ներքին Ե-  
 « տեւի « (Կաթուղ. Ա. էր. 221): Թե որ գե-  
 րապայծառ նախագահը՝ որ այն ալ աստուածա-  
 քանութեան քաջահմուտ անձ մի է, այս խօսքս  
 իր զիցածին հակառակ տեսներնէ՝ գրքին հը-  
 րաատարկումը կարգիլէր անշուշտ. կամ այս  
 խօսքը կը սրբագրէր. կամ գոնէ իր անունը  
 դըրքին յաւաքութեանութեանը մէջ դնել չէր  
 տալ:

Հիմնական քրքէր-նեանց հեղինակին եւ ու-  
 րիշ անոր համախոհներուն խաբուելուն պատ-  
 ճառը՝ խոստովանահարց համար Աստին եկեղեց-  
 ւոյ յարգած իրաւարանութիւնն է: Անոնց մէջ  
 ալ քահանայապետներն իրենց յառուկ ծուխ  
 կամ ժողովուրդ ունին՝ ինչպէս որ մեր քահա-  
 նայք ալ ունին. եւ եպիսկոպոսն այն ժողո-

վուրդը անոնց յանձնելով զանոնք խոստովան-  
 ցընելու ալ իշխանութիւն կուտայ. եւ ըստ  
 այսմ մէկ քահանային յանձնուած ծուխը մէկ  
 ուրիշ քահանայ մը խոստովանցընելու իշխանու-  
 թիւն չունի. վասն զի ըստ պատշաճի խոստո-  
 վանցընելու համար իր խոստովանորդւոյն բը-  
 նաւորութիւնը գիտնալու է. ինչպէս որ հի-  
 ւանդի մը նայող բժիշկը անորառողջութեան  
 ժամանակն ունեցած սովորութեանցը եւ բնա-  
 ւորութեանը եւ ակործակին հմուտ ըլլալու է:  
 Արքեմն կըլլայ որ մէկը իր բուն ծխատէր քա-  
 հանային խոստովանելէն ինչ եւ իցէ պատճա-  
 ռով խոյս տալով ուրիշ քահանայի մը կերթայ  
 կ'ոտստովանի: Այն քահանայն կ'պարտաւորի նոյն  
 մարդոյն խոստովանութիւնը մտիկ չընելու եւ  
 իւր սեպհական քահանային խրկելու: Այս ասոր  
 համար է որ Աստերանեան Պ. Ժողովը՝ որ 1215  
 թուին գումարեցաւ. եւ Հոռովմեական եկեղեց-  
 ւոյ փեղեղեական ժողովներուն մէկն է, ըսան  
 եւ մէկերորդ կանոնին մէջ կըսէ. « Թէ որ  
 « մէկը իրաւացի պատճառով մը իր մեղքերն  
 « օտար քահանայի մը խոստովանիլ ուզէ, իր  
 « սեպհական քահանայէն հրաման առնելու է  
 « չէ՛ նէ այն օտարը զինքը ո՛չ կըրնայ կապել  
 « եւ ո՛չ արձակել: » Օրոք քահանայ ըսածը  
 հաւաքով օտար ըսել չըլլալը կը հասկըցուի  
 անկէց որ խոստովանուելու անձը կարող պիտի  
 ըլլայ իր սեպհական քահանայէն հրաման առնե-  
 լով անոր խոստովանելու, որ օտարահաւաք



քահանայի մի համար այսպէս հրաման մը ո՛չ կու-  
զուի եւ ո՛չ կը արուի: Ուստի Քէլքիէ ժողովոյ  
բնասարանն մէջ ( հոտոբ . Ը . էջ . 1063 ) ասի-  
կայ մերձաւոր տեղոյ քահանայի մը կամ մարդ  
խոստովանցընելու հրաման ունեցող քահանայի  
մի համար ըսուած կը հասկընայ . այսինքն այն-  
պէս քահանայի մը՝ որ իրեն սեպհական ժողո-  
վուրդ առած ըլլայ իւր եպիսկոպոսէն: Եւ Տը-  
րիսենդեան ժողովը ( Պատ . Ժ . էջ . 7 ) ը-  
սած է որ մէկ քահանայ մը իրեն իրաւաբա-  
նութեան տակը չեղող, այսինքն իրեն ծուխը  
չեղող մարդու մը արձակում ապունէ՝ այն ար-  
ձակումը ոչինչ սեպհելու է . որովհետեւ հար-  
կաւ իր բնիկ քահանայէն ալ արձակում առնե-  
լու է այն ժողովուրդը: Եւսիկայ նոյն ժողո-  
վոյն նոյն տեղը ուրիշ մէկ ըսածէն կը հաս-  
կընամք: Ասան զի կըսէ որ մահուան վառնգ  
ըլլայ նէ՝ որ եւ է քահանայ կըրնայ հիւան-  
դիին արձակում տալ . թէ ծխատէր եւ խոստո-  
վանահայր եղած ըլլայ եւ թէ ո՛չ . թի՛ որ  
արձակում տալը խոստովանահայր ընտրուած  
եւ ծխատէր եղած ըլլալէն կախում ունի նէ՝  
ո՛ր է՝ եթէ քահանայ պիտի չկըրնայ ո՛ր է՝ եթէ  
պարագայի մէջ ո՛ր է՝ եթէ մարդու արձակում  
տալ . ապա թէ ո՛չ՝ աշխարհական մ'ալ կարող  
պիտի ըլլար ՚ի վառնգ մահու արձակում տալ՝  
քահանայ գտնելն անհնար եղած տեղը, զոր  
մինչեւ հիմայ ըսող եղած չէ:

ձեռնարկի արձակումի հետեւ հեղինակին ըսած:

ներէն ենթադրեալ կերեւի որ խոստովանցընե-  
լու իշխանութիւնը կամ խոստովանահայրու-  
թեան իրաւաբանութիւնը Հոռովմայ հայրապե-  
տը միայն կրնայ տալ: Եւսիկայ ալ Լատին  
ասուածաբանից համաձայն գրուցուածք մը չէ .  
որ կըսեն թէ իւրաքանչիւր եպիսկոպոս կրնայ  
նոյն իշխանութիւնը տալ իրեն հովութեանը  
յանձնեալ եկեղեցեաց քահանայներուն . որով  
այս իշխանութիւնս տալը առ հասարակ ամէն  
եպիսկոպոսներու իրաւունք կը ճանչնան:

Գիտեմք որ հոս յիշեալ հեղինակը զանա-  
զանութիւն մը կըրնայ մտցունել եւ ըսել թէ,  
նոյն իրաւասութիւնը տալու իշխանութիւնը  
Հոռովմայ հայրապետին յատուկ է. եւ երբ ե-  
պիսկոպոսներն այս իշխանութիւնը կը գործադ-  
րեն նոյն հայրապետն է որ զնոյն կը գործադրէ  
միջնորդաբար . որովհետեւ եպիսկոպոսն իր իշ-  
խանութիւնն անկէց ունի: Եւսա ասանկ ըսելը՝  
քահանայից իրաւասութիւն՝ եւ խոստովանցը-  
նելու եւ արձակում տալու իշխանութիւն շը-  
նորհելը՝ եպիսկոպոսական աստիճանին յարակից  
մէկ իշխանութիւն մը ճանչնալ է . եւ ո՛վ որ  
եպիսկոպոս ճանչցուած է՝ նովին իսկ այս իշ-  
խանութիւնս ունեցող ճանչցուած է: Եւ ո-  
րովհետեւ Դուսաւորչական եկեղեցւոյ եպիս-  
կոպոս մը Հոռովմական եկեղեցին մանելու  
ըլլայնէ՝ իբրեւ եպիսկոպոս կընդունուի, ու-  
րեմն այս իշխանութիւնս ունեցող ըլլալը կը  
ճանչցուի . եւ այս ծանուցեալ իշխանութեամբս



է որ քահանայները խոստովանահայր ըրած է՝  
անոնց ժողովուրդ տալով : Եսոր վրայ հետեւ-  
եալ անդեկութիւնը տալ հարկ հհամարիմք :  
Տրեքնորէն խորհրդէն պարտաւիճանք մէջ Տօն Ռիդ-  
բա կրօնաւորը՝ որ հիմայ կարդինալ է. կը պատ-  
մէ թէ, խընդիր եղաւ որ եպիսկոպոսներն ի-  
րենց իրաւասութիւնը որկէց կառնեն : Ղոբ  
քահանայից ալ կը հաղորդեն : Այինեզատուա-  
ծարանը ասոր վրայ ասենախօսութիւն մը ը-  
նելով ըսաւ. «պէտք է վճուել թէ եպիսկո-  
պոսները կարդին կողմէն (կամ եպիսկոպո-  
սութեան կարգը) յասուածային իրաւանց է.  
«իսկ իրաւասութեան մասին՝ որուն վրայօք  
«վարդապետք միարան չեն. բան մը խօսել  
«պէտք չէ. վասն զի ժողովը չէ թէ դպրո-  
«ցական խնդրոյ վրայ վճիռ տալու, այլ հերե-  
«տիկոսները դատապարտելու եւ բարուց վե-  
«րանորոքութեան համար ժողուած է. (Էր. Ի)»  
Քահանայները մարդ խոստովանցընելու իրա-  
ւասութիւնը իրենց ձեռնադրող եպիսկոպոսէն  
կառնեն. եպիսկոպոսներուն նոյն իրաւասու-  
թիւնն անուրանելի է. որովհետեւ քահանայ-  
ներունը զոր եպիսկոպոսներէն կառնուեն, անու-  
րանելի ճանչցած է ժողովը. իսկ եպիսկոպոս-  
ներուն ունեցածին աղբիւրը խնդրոյ տակ ին-  
կած եւ չվճուած ազատ կարծիք մ'է. ուրե-  
մըն վերապատուելի հեղինակը ինչ իրաւամբ  
«յոսպէս խնդիր մը իբրեւ վճուած կըլլեցու-  
նել կուզէ : Եսպիսի ճարտարութեան ուրիշ օ-

բինակներ ալ տեսանք գրոյս մէջ. ուստի ասի-  
կայ ալ անոնց կարգը կընեսեմք :

Հոովմէականք Հոովմայ հայրապետին վը-  
րայ քանի մի իշխանութիւններ միացեալ կը-  
ճանաչեն, որոց գործն ու պաշտօնն իրարմէ  
տարբեր են. ինչպէս որ մենք եպիսկոպոսի մը  
վրայ միացած կըճանաչեմք դպրութեան եւ սար-  
կաւագութեան եւ քահանայութեան իշխանու-  
թիւնները, որոց պաշտօնը եւ գործը իրարու  
հետ չենք կըրնար շփոթել : Եստ այսմ Պէր-  
ժիէ իմաստուն ասուածաբանը կըսէ. «պապը  
«չորս տարբեր յարաբերութեանց նկատմամբ  
«կըրնայ իմացուիլ. իբրեւ հովիւ ընդհանուր  
«եկեղեցւոց. իբրեւ պատրիարք որեւմտից.  
«իբրեւ մասնաւոր եպիսկոպոս Հոովմայ ա-  
«թոռոյն եւ իբրեւ աշխարհական իշխան»  
(Եստիքիտ աստախաբանական. Է Բաւն պոպու-  
թիւն հատոր Գ. էր. 576. Գ. 1 է. 1844) :  
Իրաւաբանութիւնը՝ որուն վրայ է մեր խըն-  
դիրը, նոյն ասուածաբանը պապին կուտայ ո՛չ  
թէ ընդհանուր եկեղեցւոյ հովիւ ըլլալուն  
նկատմամբ, այլ կամ իբրեւ պատրիարք արեւ-  
մըտից, կամ իբրեւ մասնաւոր եպիսկոպոս Հը-  
ոովմայ աթոռոյն, կամ իբրեւ աշխարհական  
իշխան նկատելով. վասն զի վերոգրեալ խօս-  
քին այս խօսքս ալ կը յարէ անմիջապէս. «այս  
«հանդամանաց վերջին երեքն աւելի նրատա-  
«քիտութեան եւ պատմութեան կը վերաբերին  
«քան թէ ասուածաբանութեան » : Եսորնը-



ման ուրիշ շատ վկայութիւններ կըրնայինք  
գտնել Աստին ասուածաբաններուն դրուածոնե-  
րէն՝ թէ որ չգիտնայինք որմեր հակառակորդ-  
ներըն ալ ասիկայ չէն ուրանտար : Այսքանս  
յիշեցինք այն ցուցընելու համար՝ որ հիշուած  
Կարթագոնայի հեղինակն երկիւղած խղճերն ան-  
համարիս ընելու համար իւր գիացածին եւ իւր  
խղճին դէմ գրած է . որովհետեւ չեմք կրնար  
ըսել որ այս ամենայայտնի բաները չգիտեր :

Հայ քահանայից ատուած արձակուամբ ըն-  
դունելի ըլլալուն՝ Հռովմէականներէն առ-  
նուած ուրիշ ապացոյց ալ ունիմք : Միւրեւնիս  
Վիկտորի անուն իտալերէն պարսաւագիրքը  
յայտնի է . որուն հեղինակը հայերէն լեզուի  
հմուտ մէկն ըլլալուն ապացոյցներ կան մէջը .  
բայց ինքը խիստ Հռովմէականներէն է . եւ  
շատերը կարծեցին որ նոյն իսկ գերապայծառ  
նախագահ արքեպիսկոպոսն է : Ասոր մէջ (եր-  
ՅՁ—ՅԷ) Միսիթար արքային կարծեցեալ տասն  
կանոնները կան որոց առաջինն է այս . « ուղ-  
« զափառները մահուան վտանգէ դուրս՝ ուղ-  
« զափառ եւ վկայական ունեցող քահանայ չը-  
« գրտնուած ատեն կըրնան հերձուածողի եւ  
« հերետիկոսի մը խոստովանիլ եւ անկէց հա-  
« ղորդութիւն առնուլ » : Այս կանոնս իբրեւ  
Միսիթար արքային հերետիկոս ըլլալուն նշան  
մը մէջ բերուած է . եւ Եփեսոսի Կրօնի Գործ-  
բաները պարտաւ անղը դրուած չեն . ըսել կու-  
ղէ գրքին հեղինակը որ մահուան վտանգ ըլ-

լայ նէ՝ հերձուածող եւ հերետիկոս քահանայի  
ալ խոստովանիլ կըրնայ ըլլալ : Առասուրջա-  
կան եկեղեցւոյ քահանայները ոչ հերձուածող  
են եւ ոչ հերետիկոս . ինչպէս որ գործոյս ըն-  
թացքին մէջ ցուցուցինք . ուրեմն առաւելագոյն  
իրաւամբ կըրնան խոստովանցընել . եւ անոնց  
խոստովանողին հոգւոյն փրկութիւնը վտանգի  
մէջ չիյնար :

Այլ որպէս զի այս մասին մեր հայազգի Հը-  
ռովմէական եղբարք աւելի վստահութիւն մը  
ունենան , Հռովմէական Հայ քահանայի մը  
վկայութիւնն ալ աւելցընեմք ըսածներնուս վը-  
րայ . « Սաղատեան Ղեկորդ վարդապետին ջերմ  
Հռովմէական ըլլալը՝ առ Պապատացիս գրած  
նամակէն յայտնի է : Այս նամակիս մէջ կըսէ  
« Ի հարկաւոր ժամանակի՝ թէ՛ եւ յայտնի եւ  
« հրատարակեալ եւ յեկեղեցւոյն Վրիտանսի  
« նշովիւք հատեալ քահանայ եւս իցէ՛ կարէ  
« զայստիկ խորհուրդս մատակարարել . այսինքն  
« է՝ զխորհուրդ խոստովանութեան եւ զխոր-  
« հուրդ հաղորդութեան : Արոյ պատճառն է  
« զի նշովել եւ հերքել զոր եկեղեցւոյ սուրբ  
« եկեղեցւոյն յիշխանութենէ է եւ սուրբ ժո-  
« ղովոց . այլ արդ սոքա ատն յայսպիսի ժա-  
« մանակի զիշխանութիւն ո՛ր եւ իցէ քահանա-  
« յի զայստիկ խորհուրդս կտարել . որպէս  
« միաբարբառ ուսուցանեն ամենայն աստուած-  
« բանք եկեղեցւոյ » : Ասած խօսքին իբրեւ  
պատճառ բերածը ճշդութեամբ բացատրուած չէ :



ինչպէս որ մինչեւ այս տեղս ըսուածներէն կը  
 հասկըցուի : Մէկ մարդ մը քանի՛ որ խոստո-  
 վանիլը անհրաժեշտ հարկ ընող պարագայի մէջ  
 չգըտնուի , կամ նոյն պարագայից մէջ ալ իւր  
 սեպհական քահանային խոստովանելու զիւրու-  
 թիւն ունենայ . ուրիշ քահանայի խոստովանե-  
 լու հրաման չկայ . թէ՛ եւ այն քահանայն ուղ-  
 զափառ՝ եւ իւր եպիսեփոսէն խոստովանա՛հայր  
 ըլլալու վըրկայական ալ ունենայ : Իսկ թէ որ  
 հարկ եղած ժամանակը իւր քահանայն կամ ու-  
 րիշ ուղղափառ քահանայ մը չգտնուի նէ՛ ան-  
 րեւտիկոս կամ նոյնքի եւ բանադրանաց տակ ե-  
 ղող քահանայի մ'ալ կըրնայ խոստովանիլ եւ  
 արձակուամ առնուլ . միայն թէ քահանայն ձեռ-  
 նադրուիլը վաւերական եղած ըլլայ : Այս է ա-  
 մէն աստուածարաններուն միաբարբառ սորվե-  
 ցուցածը . զոր Պաղտատեան վարդապետը կիսատ  
 մէջ կըբերէ . յայտնի է որ՝ չգրածը զիւրաւ  
 հասկըցուելուն համար :

Հիմնական որոշեալութեանց վերապատուելի հե-  
 ղինակը իր ըսածները զորս քննութեան առինք՝  
 հաստատելու համար դատաւարական իշխանու-  
 թեան սովորութիւն մը իրեն փաստ կառնու :  
 Դատաւոր մը միայն իր հստատակներուն վրայ  
 իշխանութիւն ունի դատապարտելու եւ արձա-  
 կելու . քահանայն ալ այսպիսի իշխանութիւն  
 մը միայն իրեն յանձնուած ժողովրդոց վրայ  
 կըրնայ ունենալ կըսէ :

Ի պատասխանի՛ ամէն տրամաբանից ըն-

դունած սա՛ կանոնը անոր կը յիշեցընեմք, թէ  
 'նմանութիւնն ո՛չ է փաստ, : Եւ ասոր պատճա-  
 ոըն այն է՝ որ երկու բան որ իրարու կընմանին՝  
 հարկաւ զանազանութեան կէտ մը ունին . ապա  
 թէ ո՛չ՝ չէ՛ թէ նման՝ այլ նոյն կըլլային : Արբ-  
 նայ ըլլալ որ ապացուցանելի բան մը իրարու  
 նման երեւցած բանին ճիշդ զանազանութեան  
 եւ աննմանութեան կէտին վրայ դառնայ : որով  
 ապացոյց կարծուածն անզոր խօսք մը կըլլայ :  
 Քահանային եւ դատաւորին իրարու նմանիլն ալ  
 աննմանութեան կէտ ունի . եւ խնդիրն ալ այն  
 է՝ կէտին վրայ է : Քահանայն արձակում տալու  
 իշխանութիւն առած է եկեղեցւոյ մէջ մատա-  
 կարարելուն համար : Այկեղեցին մէկ է եւ ընդ-  
 հանուր . եւ բոլոր աշխարհի մէջ ո՛րքան ուղ-  
 զափառ հաւատացեալ ժողովուրդ կան նէ՛ ա-  
 մէնն ալ մէկ եկեղեցւոյ անդամ, ըլլալով բա-  
 հանայն ալ իր կարգին զօրութեամբը անոնց  
 խոստովանութիւնը լսելու եւ դատողական իշ-  
 խանութեամբ կապելու կամ արձակելու կարո-  
 ղութիւն ունի : Էյ իրաւի ամէն մէկ քահանայի  
 առանձին ժողովուրդ կըբարուի , բայց ասիկայ  
 անոր իշխանութեան սահմանն ամփոփելու հա-  
 մար չէ՛ . գործադրութիւնը զիւրին ընելու հա-  
 մար է : Աւստի ուղղափառ քահանայ մը ուղ-  
 զափառ ժողովուրդի մը խոստովանութիւնը լը-  
 սէ , ապաշխարութիւն դնէ եւ արձակում տայ  
 նէ՛ գրած ապաշխարութիւնը պարտաւորիչ եւ  
 արձակումը վաւերական ըլլալը չուրացուի :



Եւ թէ որ քահանայիս ուժը կըբաւէ եւ ժաւանակը կընքէ Նէ՛ աշխարհքի բոլոր ուղղափառները խոսովանցընելուն մարդ բան չըսէր։ Իրաւասութիւնն առած ժամանակն եպիսկոպոսը չըսեք անոր թէ բեզի տալու ծուխերուս մեղացն արձակում ասա նէ թողութիւն ըլլայ . այլ ընդհանուր է խօսքը . որի՛ մեղք թողուս նէ թողութիւն ըլլայ կըսէ :

Պատաւորներուն արուած իշխանութիւնը որ իրենց ձեռքի հրովարտակին մէջ նշանակուած է, իրեն սահման ունի նոյն հրովարտակին մէջ գրուած դատաւորական երկերը . իւր իրաւասութիւնը միայն անոր մէջ կիրակուի . եւ այն սահմանէն դուրս երկրի մը մէջ իր դատաւորական պաշտօնն 'ի գործ դնելու համար զատ հրովարտակ կուղէ : Եւ առանց այս հրովարտակիս իր սահմանէն դուրս տեղ մը գտնուի՛ եւ վէճի տակ ինկած խնդրոյ մը վճռական լուծումն ապ նէ՛ իրրեւ վճիռ զօրութիւն չկըրնար ունենալ եւ անգործագրելի է, եւ առ առաւելն՝ այն տեղի դատաւորին առած վճռոյն օրինաւորութեանը իրրեւ դուրսէն վկայութիւն մը կըբնայ սեպուիլ :

**ԻՄԱՍԿԵՐԱՅԻՆ Ժ.**

Արձանակերպ պատկերներ :

Հիմնական արքեպիսկոպոսական վերապատուելի հեղինակը Հայոց վրայ զրպարտութիւն մը պակաս

ըրած կըլլար՝ թէ որ հայերը իրրեւ պատկերաժարա չըուցընէր, բայց ստիկայ ալ անհնար էր . թեպէտ առնն մը բանի մի Յոյն մասենագիրներ Հայոց համար այդպէս բան մը ըսին . եւ հայերուն համար միայն յոյներէն տեղեկութիւն առնելը հերիք սեպող Եւրոպացի մէկ բանի մասենագիրներն անոնց ըսածը կրկնեցին , բայց հայաբնակ եւ Հայոց եկեղեցի գտնուած տեղեր այդ ըսողը ծիծաղելի կըլլար։ Աւստի մեր վերապատուելի հեղինակին ձեռքը այդ զրպարտութիւնը հաստատելու պէս բան մ'անցնելու չպէս՝ հարկ սեպեց անիկայ ալ հիմնական արքեպիսկոպոսական կարգը դնելով ազէաներուն դէմ խրատուիլակ մ'ալ անկել :

Արձանակերպ պատկերներուն վրայօք վէճ մը ծագած էր Օմիւռնիա , հիմնական արքեպիսկոպոսական վերապատուելի հեղինակն ուշիէկ իմանալով՝ գրքին վերջը յաւելուածով ծանուցեր է թէ այս ալ նախապաշարում մ'է՛ որ կաթուղիկէ եկեղեցեւոյ ըմբռնմանն եւ աւանդութեանը ներհակ է ( էր . 514 ) . թիւ որ այս ներհակութիւնը . սրբոցարձանները պատուելու վրայ է նէ ընդհանրապէս , այս մտքով արձանները եկեղեցիէ մերժելը հերեթիկոսութիւն եւ պատկերամարտութիւն է . զոր Հայաստանեայց ո՛չ Լիւթիանական , ո՛չ Անտիոն , ո՛չ Եւֆրատեան եւ ո՛չ ո՛ եւ իցէ եկեղեցի չընդունիր։ Թիւ որ այնպէս հասկըցուի որ Տեառն մերոյ եւ սուրբե-



բուն պատկերներն եկեղեցւոյ մէջ կընդունին եւ կը յարգէ ընդհանրապէս, բայց արձան գործածելու 'ի նախնեաց անտի սովորութիւն չունի, թեպէտ նոյն սովորութիւնն ունեցողներուն ալ բան չըսեր, այն ատենը մեր հեղինակին կաթաղիկէ եկեղեցի անուանածն արեւմտեան կամ Հռովմէական եկեղեցին կիմանամքէրբեւ մասնաւոր ծէսի եւ արարողութեան ունող՝ բայց հաւասար ընդհանուր եւ կաթաղիկէ եկեղեցւոյ բաղկացուցիչ անդամ եւ մաս մը. եւ ոյն ալ հայաստանեայց եկեղեցւոյն նման իր նախադասանն ունի՝ թէ որ այսպիսի բաները նախադասանն կըսուին նէ. կամ որպէս զի վերապատուելի հեղինակին գործածած բաւը իրեն ձգեմք, եւ մենք ճիշդ խօսիմք, իր հին սովորութեանն աւանդապահ է. զիտէ որ տախտակի վրայ նկարեալ պատկերներն ալ արձաններու եւ կտուի եւ թղթոյ վրայ նկարուածներուն հաւասար յարգանաց արժանի են, եւ նիւթէն կախում մը չունին. բայց տախտակի վրայ նրկարուած պատկեր՝ գործուած եկեղեցիներուն մէջ կըսեսնեմք, լատին եկեղեցւոյ մէջ 'ի գործածութեան չէ. Արձանակերպ պատկերներն ալ Հայաստանեայց եկեղեցւոյ նկատմամբ այսպէս են, որ սովորութիւն չունի գործածելու բայց սովորութիւն ունեցողներն ալ չանարգեր:

Սենք ալ ասոր համար քրիստոնէից մասնաւոր եկեղեցեաց իրենց յատուկ սովորութիւնը չեմք պատարակէր. ուստի կը յուսամք որ մեր

Հայաստանեայց լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ մէջ ո՛չ արձան՝ այլ նկարեալ պատկեր միայն ընդունելու սովորութիւնը Հռովմէական իմաստուն եւ բարեպաշտ մատենագրի մը խորհրդածութեամբ արդարացնել ջանալնիս ծուռ մտքի չառնուի. որպէս թէ արձանի սովորութիւն ունեցողներուն վրայ աղաքսելու մը պէս:

( ) Կիւսա Նիքօլա գաղղիացի մատենագիրը իմաստակերպիւմ պարտքսննէ 'ի վերայ քրիստոնէական գրքին մէջ (Հոգոր. Դ. էր. 509. առ. վարդ. 1852). կըսէ. «քրիստոնէական արուեստը Հին արուեստէն տարբեր է՝ որ միայն արտաքին ձեւով կը փայլեր. եւ անոր (այն ձեւոյն) պէս ալ սահմանափակ եւ էպպէս համեմատական եւ ծառայական ճշմարտութիւն մը միայն կպարուանակէր: Քրիստոնէական արուեստն իր գեղեցկութիւնը ներսէն կառնու. այսինքն ճշմարտութեան նոյն իսկ գոյութեանէն. «ա՛ն մենայն փոքր նորա 'ի ներքոյ, ուստի աղէկ նկատէ՝ որ հին արուեստն առաւելապէս արձանագործութեան մէջ կգերազանցէ, որ յատուկապէս ձեւոց արուեստ է. բայց քրիստոնէական արուեստն անկէց շատ կգերազանցէ՝ զաղափարի խորութեամբ, եւ զգածման բարոյական վսեմութեամբ: Ահարը եւ երաժշտութիւնը եւ ճարտարապետութիւնը մասնաւորապէս ասոր թարգմանն է,» ( ) Կիւսա Նիքօլայի խորհրդածութեանցը համեմատ կը խօսի Ա իբրոր Վուզէն անուանի փիլիսոփայն



ալ . որուն հեղինակութիւնը թեպէս իրիւեքրիստոնեայ նկատելով ոչ ինչ է , բայց իբրեւ փիլիսոսիայ բաւական յարգ ստացած է . եւ մենք այս կարգիս այս տեսակ խորհրդածութիւն մէջ բերելով ասիկայ ալ յիշելը պատշաճ անսանք :  
 Այս հեղինակս ընդհանար պարսկական փիլիսոսութեան գրքին մէջ ( եր . 14 . րդ . գործը 1861 ) կրէ . “ քանդակագործութիւնը հին է , վասն “ զի ամէն բանէն առաջ ձեւոյ գեղեցկութեան “ ներկայացուցն է . եւ ձեւոյ գեղեցկութեան “ խնամքն ու երկրպագութիւնը յատկապէս “ կռապաշտութեան կը պատշաճի : Իսկ նկար- “ չութիւնը էսպէս քրիստոնէական է . որ չէ “ թէ միայն արտաքին ձեւոյ , այլ եւ զգաց- “ մանց եւ Հոգւոյ արտայայտութիւն եւ ներ- “ կայացուցն է . ոչ միայն բնական՝ այլ եւ “ բարոյական գեղեցկութեան : Աւրեմն նկար- “ չութիւնը չէր կրնար ծաղկիլ անանկ դարու “ մը մէջ՝ ուր կերելի թէ քրիստոնէութիւնը “ բացակայէր\* ” :

\* Գուզէն արձանագործութիւնը կռապաշտութեան յատուկ ըսելէն ետքը չեմք հասկնաք նկարչութեան ծաղկիլն անկարելի եղած ժամանակը քրիստոնէութեան բացակայ ըլլալը Բրեյթի ըսելով ի՞նչ կիմանայ : Արդեօք միտքը կասկած մը մտած է՝ թէ Աղեղէս և Պարրասիոս և Չեարսիս նկարակիները որ քրիստոնէ շատ առաջ յունաց կռապաշտ աղգին մէջ ծախկած էին . քըրիստոնեայ էին : Այս Բրեյթ բառը երկու բան կը ջուցընէ մեզի . մէկ մը՝ հին պատմութեան աղէկ հրմտութիւն չունենալը . և երկրորդ՝ քրիստոնէութեան և որութեանը վրայ չըփոթ գաղափար ունենալը :

Իսնդրոյս վրայ ուրիշ ողջամիտ փիլիսոսիայ մը աւելի աղէկ կը լսուի : Յովսէփ ալ Մէր Պաւսնի փիլիսոսութեան մենաբնէն մէջ ( էւ Ս . Թ . ) խնդիր դնելով թէ ինչո՞ւ համար նորերը որ պատկերահանութեան մէջ աւելի գերազանցած են , արձանագործութեան մէջ հիներուն չեն հասած , կըսէ . “ պատկերահանութիւնը մեր մէջ “ գաղափար չունենալովը՝ պարզապէս եկեղեց- “ ւոյ մէջ ծնած է\* եւ այս ծնունդը բնական “ ըլլալով ինչ որ կրնար արտադրել նէ ամէնն “ ալ արգադրած է ազատորէն : Ընդհակառակն “ արձանագործութեան մէջ օրինակող եղած “ եմք . եւ օրինակը բնագրէն վար մնալն ընդ- “ հանուր օրէնք մ'է ” : Ըսով կիմանամք մեր հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ հայրենաւանդ սովորութեան պատշաճութիւնը , որ պատմական ներկայացուցման մասին առանց ուրիշ եկեղեցեաց սովորութիւնը պարսակելու այն միայն ընդունէր է՝ որ արձանակա՞ն եկեղեցւոյ մէջ ծնած է :

Եւ որովհետեւ մտաւորական գաղափարն աւելի ի ջերմեռանդութիւն կը շարժէ՝ քան թէ արտաքին ձեւը , ուստի մեր նախնիքն աղէկ խորհած են որ եկեղեցեաց մէջ ոչ քանդակեալ արձան՝ այլ նկարեալ պատկեր դնելը աւելի

\* Կարծեմ ըսել կուզէ թէ պատկերահանութիւնը կրօնական պաշտաման համար գործածելու գաղափար չկար հին կռապաշտութիւնն որ միայն քանդակուած կամ թափօն արձաններու կը պաշտէին :



Ժամար է ժողովուրդն ՚ի բարեպաշտութեան  
 երանգ վաւելու . եւ ստոր համար թէ որ հիմնա-  
 կան գործերս-նեանց հեղինակը փիլիսոփայօրէն,  
 եւ ո՛չ պարսաւադէր մտքով դատելու ըլլար  
 նէ՛ այս բանիս մէջ պահարակելու արժանի կը  
 դառնէր չէ՛ թէ եկեղեցւոյ մէջ արձանակերպ  
 պատկէր խօթելով՝ օտար ազգաց հետեւողու-  
 թեամբ հին եւ գեղեցիկ աւանդութիւն մը  
 վերցընել ու գողները , այլ սյդ նորութիւնը  
 չընդունողները : Լայտասանեաց եկեղեցւոյ  
 դաւակները թէ որ եկեղեցւոյ մէջ նոր բաներ  
 չընդունելու սովորութիւնը չունենային , եւ  
 ստոր նախանձանդիր չըլլային նէ , նիւթական  
 նոր բաներ ընդունելով չէին շատանար . կրթու-  
 նից հայեցողական մասին ալ՝ երօպայի մէջ իւր-  
 բեւ գերագոյն գիտութեան արդիւնք կարծը-  
 ուած եւ շատերուն ընդունած ընդդէմ հաւա-  
 տոյ մոլորութիւններն ալ կընդունէին անխոր-  
 հրդարար . ինչպէս որ նորասերներուն շաք  
 կըտեսնեմք : Եզգային հին ծեսերէ եւ սովո-  
 րութիւններէ չզատուելը , կուզէ վերապատուե-  
 լի հեղինակը նորագոյնացման անձանէ կուզէ  
 ուրիշ անուն տայ , մեր մէջ հաւատոյ անբձու-  
 թեան պահպան են :

Ի վերջէ հարկ կըսեմք այս ալ ըսել՝  
 որ այոց սուրբ եկեղեցւոյ մասնաւոր աւան-  
 դութիւններուն ամենուն համար ալ՝ զորս հիմնա-  
 կան գործերս-նեանց վերապատուելի հեղինակը  
 պահպանեմք ի վերջոյն թեամբ հաստատելով

որ նախնի եկեղեցւոյ սովորութեան համեմատե-  
 զորս միւս եկեղեցիք ետքէն փոխած են . պատ-  
 կերաց եւ ո՛չ արձանաց եկեղեցիներու մէջ  
 կիրառութեան սովորութիւնը հին է : Եւ զայս  
 կգտնեմք Բարոնիօսի Էֆէնդուրի գործերոց նոր  
 ապագրութեան մէջ , ուր Բաճիի գրած յա-  
 ւելուածներն ՚ի միասին տպուած են : 58  
 թուականին յաւելուածոյն 2 թուոյն մէջ  
 այսպէս գրուած կը գտնեմք . « արձանաց  
 « գործածութիւնը քրիստոնէից տաճարներուն  
 « մէջ եօթներորդ օրեկերական ժողովոյն ա-  
 « տենը տակաւին մտած ըլլաւ յայտնի է  
 « նոյն ժողովրէն եօթներորդ արձանագրութե-  
 « նէն » ( որ . տր . Ե . հետ . 1862 . հար-  
 Ե . եր . 519 ) : Եւ քիչ մը վարը նոյն հեղի-  
 նակը կըսէ թէ ժողովոյն հայրապետները կը-  
 րօնական գործածութեան մէջ միայն ներդրվելը  
 կարուած տախտակները ( ըստ սովորութեան  
 յունաց ) եւ պատկերներն ընդունեցին , եւ  
 ո՛չ արձաններունը : Եւ յայտնի է որ այս ժո-  
 ղովը՝ որ է Եփէփոյ կրկրորդ ժողովը , յատ-  
 կապէս պատկերամարտից դէմ գումարուած էր  
 ընեմք գիտեր թէ արեւմտեան եկեղեցւոյ մէջ  
 արձաններու գործածութիւնը երբ մտած է .  
 բայց երբ որ ըլլայ նոր է , եւ անպատեհ բան  
 մըն է Լայոց սուրբ եկեղեցին պատարակելը որ  
 իր հին աւանդութիւնը պահած է , եւ նոր  
 բանի հետեւիլ չուզէր , թէ եւ այն բաները որ ու-  
 ղիշ քրիստոնէոց ընդունած են , չպատարակեր



Թէ որ հաւատոյ եւ կրօնից նկատմամբ կարեւորութիւն մը չունենան :

ՎԵՐՑԱԲՆՆԵՐ

Գործոյս մէջ տեսանք որ հայաստանեայց Լուսաւորչական սուրբ եկեղեցին դաւանութեան կողմանէ Հռովմէականէն եւ Յունականէն եւ ուրիշ ուղղափառ եկեղեցիներէն տարբերութիւն մը չունի . եւ հայազգի Հռովմէական եղբարց մեզնէ տարբերիլը եւ խորշիլը ե զատ կենալը հաստատուն հիման մը վրայ կայացած չէ . Եւ դարուն մէջ երեւցած ունիդօրներուն մէկ շարունակաբար յաջորդութիւն է Եւ այն ատենն տլ ունիդօրներն իրենք կխոստովանէին որ Գրքան հայերը , այսինքն անոնք որ ունիդօրներուն չէին հետեւէր , հայաստանեայց եկեղեցւոյ աւանգապահն էին . այն եկեղեցւոյն՝ գոր սուրբ Լուսաւորիչը եւ անոր մերձաւոր հոգեշնորհ յաջորդները կարգադրեցին . սուրբ Լուսաւորիչն ալ յոյներէն առաւ , որոնք ընդհանուր եկեղեցիէն զատ չէին . եւ այն ատենն ալ սրբութեամբ եւ իմաստութեամբ պայծառացեալ արթուն հովիւներ ունէին . Ըսել կըլլայ՝ որ մեր հայաստանեայց եկեղեցին հաւատոյ դաւանութեան կողմանէ՝ նախնի առաքելական սուրբ եւ ընդհանուր եկեղեցւոյ աւանդապահ է : Եւս վկայութիւնս կուտայ

մեր Լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ համար Մխիթար Լպարանցի ունիդօր վարդապետը . Գրքան պանծալի անունն ալ նոյն եկեղեցիէն չըղատուողներուն յատկացընելով :

Ի՛նչ բանով որ Հռովմէական հարբ զմեզ Հռովմայ եկեղեցիէն տարբերել կը կարծեն՝ Թէպէտա տեն գրի առած էին , բայց ամէնը մէկտեղ բերելով մէկ գործ մ՛ըրած չունէին ժամանակ մը՝ Լուսաւորչական Հայոց կողմէն ձեռքը գրիչ առնող եւ իրենց դէմ գրողներուն պատասխան կը գրէին , որ էր պաշտօնաւորական եւ այսպիսի գրուածներն ալ տպագրութեամբ հրատարակել չէին սիրեր . ձեռագիր կը հըրատարակէին . եւ ասոնց զխաւոր նպատակն էր ցուցընել որ Հռովմայ հաւատոյն եւ դաւանութեանը դէմ խօսողները իրենց Լուսաւորչական եկեղեցւոյն հայրենաւանդ դաւանութեանը դէմ կխօսին : Եւս ընթացքս ունի Հայքն ազրեցալիս ձեռագիր դիրքը , եւ Եւետիքեան Հ. Գարրիէլի Յարգա բի՛ման ձառը , որ շարականին մէկ երկու խօսքերէն առիթ առնելով յօրինուած՝ եւ շարականի քաջադրսլիս վերջը տպուելէն ետքը իտալերէնի ալ թարգմանուած եւ տպուած է : Ինքնին կերեւի որ ասոնք իրենց գրուածովը ցուցընել կուզէին՝ ինչպէս որ է իրօք , Թէ Հայոց եկեղեցին ուղղափառ է , եւ մոլար կարծիքներ կան ալ նէ՝ մասնաւորաց են :

Վերջին տարիներս Հ. Յ. Գ. Վ. յարձա-



կողական ընթացք մը բըռնեց . խել մը Նիւթերու վրայ գիրք մը յօրինեց . որպէս թէ նայոց չէ թէ մասնաւոր անձինք՝ այլ նոյն իսկ եկեղեցին զոր ինքն Լուսաւորչիան անուանելուն տեղը՝ ինչպէս որ մինչեւ Հիմայ կոչուած եւ Ճանչցուած է, Լուսաւորչիան նորահասարակաց կանուանէ, ՚ի բանի հաւատոյ Լուսաւորչիան եկեղեցիէն հիմաւան տարբերութիւններ ունի :

Սոսնք գրոցս ընթացքովը տեսանք որ այդ տարբերութիւն ըսածին մէջ մէկ հատ մ'ալ չըկայ՝ որ իրենց մեզնէ բաժնուելուն օրինաւոր պատճառ մ'ըլլայ : Գաւանութեանց մէջ տարբերութիւն անուանածները չէ թէ մտքի՝ այլ զրուցուածքի տարբերութիւն ըլլալը տեսանք . տեսնել տարբերութիւններ զորս Լուսաւորչիան օտարազգի իմաստունք ալ արգարացուցած են, մեր զրուցուածքներուն մէջ մոլորութիւն չեն տեսած . եւ սոսնք ալ իւրաքանչիւրն իրենց տեղը նշանակեցինք : Խել մը ուրիշ տարբերութիւններ ալ գտած էր վերապատուելի հեղինակը, որ ոչ թէ գաւանութեան այլ ծիսից եւ արարողութեանց տարբերութիւն ըլլալով՝ Լուսաւորչիան Լայոց եկեղեցոյ պատանաւորաց հիմնական տարբերութիւններս վրայ գրելու սահմանեալ գրքի մը մէջ չէին վայլէր : Քանի մի ալ բըծախնդրութեան պէս բաներ գտանք նոյն դըրքին մէջ՝ ապախարութեան եւ ձեռնադրութեան խորհրդոց վրայ եւ ուրիշ տեղեր, որով

հայաստանեայց սուրբ եկեղեցոյ վրայ աւելի մոլորութիւն ցուցնելով իր ժողովուրդը նոյն սուրբ եկեղեցոյ ժողովուրդէն եւս առաւել հեռացընելու եւ պաղեցընելու փափաքովը շատ բանի մէջ նոյն իսկ Լուսաւորչիան եկեղեցոյն որուն պաշտպանութիւնը ձեռք առած էր, հայրապետներուն եւ ժողովներուն վճարոյն եւ ասուածաբաններուն վարդապետութեան ընդդիմախօս կգտնուի : Սոսնք ամէն ալ ներկայ գրոցս մէջ մի ըսա միտք տեսանք .

Րօսածներէս տոխթ առնելով կըրնան ոմանք հարցընել, թէ որ մեր եւ Լուսաւորչիանց մէջ գաւանութեանց տարբերութիւն չկայ նէ՞ մեր համազգի Լուսաւորչիան վարդապետները չեն միտքի տեղ, որոց մէջ իմաստուն անձինք շատ կան . եւ այն շատերուն մէկն ալ հիմնական տարբերութեանց վերապատուելի հեղինակն է : Սոսնք Լայոց եկեղեցական գրքերն ալ կը կարդան՝ լատիններուն ալ . եւ ինչո՞ւ համար այդպիսի ոչ ինչ բաները՝ որոնք տարբերութիւն ըսուիլ չեն արժեք, մեծ բանի մը տեղ կը դընեն . եւ ասով իրենց ջերմեռանդ եւ պարզամիտ ժողովուրդը մեզնէ կը պաղեցընեն :

Սորի ես չեմ պատասխաներ . Գերմանացի Լուսաւորչիան իմաստունի մը խօսածը մէջ կը բերեմ : Տասն եւ եօթն եւ ասան եւ ութը դարերուն մէջ Լայաստան եւ հայաբնակ երկիրներ Լատին քարոզիչներ կելծային որպէս թէ Լայերը զորս ունիգորներուն զրպարտութենէն



Համոզուելով եւ խալուելով անսակ տեսակ մո-  
 լորութեանց մէջ ինկած կըկարծէին այն մոլորու-  
 թիւններէն հեռացընեն . եւ թէպէտ մէջէքնին  
 մտնելով եւ հետեւնին խօսելով կը հասկընա-  
 յին որ այդպիսի մոլորութիւնները չայոց  
 խելքէն եւ մաքէն հեռու են , այսու ամենայ-  
 նիւ իրենց քարոզութիւնը կը շարունակէին .  
 եւ ուղղափառութիւնը անոնց մէջ արմատացած  
 գտնելով՝ ծէսերու վրայ կը դարձընէին խօս-  
 քերնին , ծնունդը դեկտեմբեր , 25ին չընելը  
 մոլորութիւն . սուրբ պատարագը անջուր գի-  
 նիով ընելը մոլորութիւն . եւ ուրիշ այսպէս  
 բաներ մոլորութիւն անուանելով . եւ այսմո-  
 լորութիւններս ունեցողներուն եկեղեցին ոտք  
 կոխելն անգամ մահացու մեղք անուանելով՝ եւ  
 անոնց բահանայներուն արձակում տալը մեղաց  
 թողութեան անբաւական , եւ այդ կարծեցեալ  
 մոլորութիւններն ունեցող եկեղեցիին հաղոր-  
 դութեանը մէջ մեռնողները յաւիտենական  
 կորստեան դատապարտեալ ըլլալուն համար ա-  
 նոնց հոգւոյն փրկութեանը աղօթելն անօգուտ  
 բարոզելով մեծ խնդրութեանց պատճառ կըլ-  
 լային . եւ ետքը այս խնդրութիւնները իրենց  
 դէմ հալածում անուանելով կը պարծէին որ  
 հայերը հերետիկոսութենէ ուղղափառութեան  
 դարձընել ուզելովն իս՝ խտապարտոց , եւ իր  
 հերետիկոսութեան մէջ յամբուեալ ազգը մեղ  
 կը հալածէ :

Այդպիսի բարոզութեան պաշտօն չունեցող

անձինք այդ ընթացքէն իրենց ո՛չ վառք եւ ո՛չ  
 շահ յուսալով անաշու քննութեամբ իմանա-  
 յու ետեւէ կըլլային թէ ինչ են եղեր չայոց  
 եկեղեցւոյն հերետիկոսութիւնները որոց այն-  
 չափ յարեալ են . եւ բան մը չէին կըրնար  
 գտնել հերետիկոսութիւն ըսուելու արժանի-  
 ինչպէս որ գործոյս պատմական մասին մէջ ան-  
 ղըն ՚ի տեղը ցուցուցինք : եւ այս չգըտնելէն  
 ետքը այն հասկընալու ետեւէ կըլլային թէ  
 ինչ կըրնան ըլլալ ուրեմն՝ Վատն բարոզիչնե-  
 րուն չայոց եկեղեցին դրպարտելուն պատճառը .  
 եւ առիկայ դտնելու շատ դժուարութիւն չէր  
 ադէր . Այս տեղս բերենք վերոյիշեալ գեր-  
 մանացի Առովմէական իմաստունին՝ Պուկաս  
 չօլոտէնիսին խոսքը , սուրբ Արուստղէմ՝ Տըր-  
 ատարակուած Սէն ամատատարին 1867 յուլի-  
 սի թերթին մէջ գրուածին պէս , որ համոզուցեալ  
 Միզայեանտեր Յովհանն Օմիււնիոյ քահանա-  
 յին մէկ գրուածէն առնուած է : « Պուկաս  
 « ներհուն աստուածաբան՝ գլխաւոր պահա-  
 « ս պանն գրքատան պապին , ՚ի գիրս իւր որ տը-  
 « պեցու հրամանաւ Քրիստոսիկոս Պարպէրի-  
 « Նոս կարգինային , ասէ զայս օրինակ : —  
 « Պատճառ ողբալի բաժանման արեւելեան եւ  
 « արեւմտեան եկեղեցեացն՝ մեր եւրոպէական  
 « վարդապետն են . բան զի ոչինչ բնալին  
 « հոգան նորա վասն ճշմարտութեան եւ սիրոյ՝  
 « զոր ունիլ պարտ է առ եղբարս . այլ միայն  
 « յաղթել խնդրեն այլոց եւ հրամայել Գրայ



« Կոր ինչ ախորժէն , եւ այսպէս բորբոքեալ  
« սատանայական ցանկութեամբն , հակաճառել  
« եւ յաղթեց այլոց՝ առաւել վառեն ՚ի մեջ  
« եկեղեցւոյ զհօւր բաժանմանն , ( էբ . 112 ) :

Ծանր է մեզի՝ Հռովմէական հայազգի ե-  
կեղեցականաց համար այդպէս բան մը խօսիլ .  
բայց իրենց ընթացքն է այս կարծիքս իրենց  
վրայ հաստատողը : Ինչպէս որ գործոյս պատ-  
մական մասին մէջ ըսինք՝ եւրոպացի իմաստուն  
անձինք Մանսի, Մարդէնէ, եւ այլք՝ որոց ա-  
նունք նշանակած ենք իրենց զրքին մակագրովը  
մէկ տեղ , Հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը  
կը ճանաչեն . Հռովմէական եկեղեցականք լու-  
սաւորչական հայոց եկեղեցին կըմանեն եւ ասա-  
ուածային պաշտամանց ալ ներկայ կըբանուին .  
մեր համազգիք նոյն եկեղեցին հիմնապէս Հը-  
սովմէականեն ՚ի բանի գաւանութեան հաւա-  
տոյ տարբերեալ , ուստի եւ հերետիկոս եղած  
կըբարդեն , եւ Հայոց չէ՛ թէ լոկ եկեղեցական  
պաշտամանց ատենը , այլ եւ ո՛ր եւ իցէ ժա-  
մանակ եկեղեցիներն մտնելը մեզք է կըսեն\* :

\* Ասոր վրայ ոմէն Հռովմէական հայ վարդապետաց  
գործիքը մէկ չէ : Պաղատանն Հ , Գեորգ վարդա-  
պետը՝ որ քարոզչութեան էրաման առած է Հռովմէն  
1734 Վեկա . 17 թուականով առ Գաղատացիս գրած  
նամակին մէջ կըսէ . « ո՛չ իմն սիւն հողոս եղեալ  
ոէ մասնաւորապէս վասն ազգին մերոյ . ուրմն ո՛չ է  
ազգն մեր հրատարակեալ հերետիկոս . եւ այդպէս  
ասեկեղեցիս նորա մտնողն ո՛չ են անողք թիր գոր-  
ածաց , զի ծագլոն դայթակղութիւն » : Եւ չկարծուի

Այսպիսի ընթացքի մը պատճառ բընորո՞ւ-  
ղը ուրիշ կարծիքի չկրնար երթալ , բայց եթէ  
փառասիրութեան եւ շահասիրութեան : Եւսմա-  
նակով Յոյն եկեղեցական մը՝ Հայոց ազգէն  
յունաց եկեղեցին մտնողը մկրտելինն արդա-  
րացնելու շափ բաւական փաստ մը չէ գտեր , կը  
բունդատուելով բուն պատճառը գրուցելու՝  
ըսեր է թէ , թէ որ մենք Հայոց մկրտութիւնը  
մերինն համաղոր՝ եւ Հայերն ալ մեզի պէս  
ուղղափառ քրիստոնեայ ընդունէինք նե՛ս այս-  
պէս ծովեզերեայ փառաւոր եւ դարդարուն տան  
մէջ չէի կըրնար նստել : Ասիկայ անձնական  
չաճու համար ժողովուրդը խարել է : Եզե-  
կիէլ մարգարէին լեբնովն Աստուած ըսած է .  
« վայ այնոցիկ որ կարեն կարկատեն դարձ-  
« կենարդ ՚ի ներքոյ ամենայն արմկան ձեռին ,  
« եւ անեն գըլխաղիրս գլխոյ ամենայն հա-

որ այս վարդապետս Միսիթարեան միարանութենէն լը-  
բալով Հայոց կողմը միտեալ էր . վասն զի նոյն նամակին  
մէջ և նոյն խօսքէն բիչ մը վեր Հայոց եկեղեցւոյն հա-  
մար այնպէս բան մը ըսեր է՝ զոր նոյն խկ հիմալան  
տարբերութեան հեղինակը ( էբ . 266 ) կըսէր թէ ո՛չ կու-  
զեմք եւ ոչ կըրնամք հաստատել խկ Գեորգ վարդա-  
պետը հաստատողական կերպով իբրեւ անտաշակուտի  
բան մը խօսելու պէս կըսէ . « ՚ի բաժակի պատարա-  
« գին ջուր ո՛չ դնեն . և այս ես է նշանակ դաւա-  
« անութեան միջ բնութեան » : Երբ Հռովմէական քարո-  
զիչներէն ոմանք այսպէս խօսին , և ոմանք Հայոց եկե-  
ղեցին մանելը մեզք է ըսեն նե՛ս հիմալան տարբերութե-  
նը նորաւորին իրենց մէջ գտնուած կըլլայ :



« սակայն թիւրեւ զանձինս, զի թիւրեցան ան-  
 « ձինք ժողովրդեան իմոյ, եւ ապշեցուցանե-  
 « ին զանձինս. եւ բամբասէին զիս առաջի ժո-  
 « ղովրդեան իմոյ վասն ամոյ միոյ գարւոյ եւ  
 « կոտորոյ միոյ հացի, սպանանել զանձինս որ  
 « ոչ էին մահապարտք » (ԺՊ. 18. 19) : Այս  
 զանգատս սուրբ Լուսաւորչական եկեղեցին կըր-  
 նայ ընել անոնց դէմ, որ զինքը մոլորեալ  
 կարծող սարգամիտներն արթընցընելը՝ եւ անոր  
 անմոլոր ըլլալն իմացընելը հոյժալիցնէն ան-  
 ուանելով՝ անոր արմուէկին եւ գլխոյն տակը  
 կակուղ բարձեր կըրնեն որ խորունկ մը քընա-  
 նայ. եւ ափ մը գարիի եւ պատառ մը հացի  
 համար շայոց եկեղեցին անոր ժողովրդեան ա-  
 աջը կըբամբասեն. եւ այն մարդիկը որ մա-  
 հապարտութեան յանցանք մը եւ քրեական  
 մեղք մը չունին, իրօք չեն սպաններ ալ նե  
 յաշխանական, կորոսեան դատապարտուած կը-  
 բարողն :

Իայց անովմէտկան եւրոպացիք այդպէս  
 չեն. եւ ասոր ապացոյց ուրիշներէն զառ հե-  
 տեւեալը այս տեղս պատմելը պատշաճ կըսե-  
 պեմք յայտնի է սր այժմեան անովմոյ Հայ-  
 բապեալը Պիոս Կ. Եր Պէրիէրի արքեպիսկոպոսը  
 կոտորուողիս զեսպան իրկեցի Քանի  
 մի անգամ մեր սրբազան պատրիարքին կողմանէ  
 քովը դացած գտնուելով՝ մեր սուրբ եկեղեց-  
 ոյ հաւատոց վրայ ուղած տեղեկութիւններուն  
 եւ անովմոյ եւ մեր մէջ կեցածի պէս կարծու-

ած ասրբերութիւններուն վրայ գրքին մէջ  
 բացատրուած իմաստովը խօսեցանք, միշտ բո-  
 վերնիս մեր ազգէն գրոց հմուտ անձ մ'ալ կը-  
 գտնուէր, որ մեր խօսակցած իտալական լե-  
 զուն ալ աղէկ կըհասկընար. « Եւ այն խնդիրները  
 եւ պատասխանները կրկնուեցան ՚ի ներկայու-  
 թեան բաղմաթիւ յարգի անձանց, երբ յիշեալ  
 դեսպանը 1847 ապրիլ 1ին Ա Ստեֆանօզ գիւղը  
 կոչուեցի հրահրուեցաւ : Տ. Պէրիէրի՝ ընդու-  
 նած պատասխաններովը մեր սուրբ եկեղեցւոյն  
 ուղղափառութեանը կատարեալ համոզուեցաւ,  
 եւ ըսաւ թէ բանը Պապին հետ թղթակցու-  
 թիւն մը ըլլալու մնացած է : Պատասխան արը-  
 ուեցաւ թէ այդ թղթակցութիւնը մեզնէ սկը-  
 սելու՝ աշխարհարահականի վերաբերեալ մասն-  
 մունքներ կան որ չեն ներեր : Ասոր վրայ ինք  
 [ խոստացաւ որ Պապէն առ մեր սրբազան Պատ-  
 րիարքը նամակ մը խրկել տայ : որ նա ալ անոր  
 պատասխան խրկելով թղթակցութեան սկսի .  
 բայց այս խորհուրդը ՚ի գործ դնելը խափանող-  
 ներ ըլլալը լսեցինք :

Ասան մը Լուսաւորչական շայոց ուրիշ  
 քանի մի սովորութիւններն ալ իբրեւ մոլորու-  
 թիւն սեպել կուտային ժողովուրդին, ինչպէս  
 են ասորք Եսպասած երգին մէջ Խաչեղար Գան Ժը  
 ըսուելը. « Ծնունդի եւ Օտակի ճրագալուցին »  
 իրկուը նաւակատիք ընելով պահքերնիս լու-  
 ծելը, եւ ուրիշ բաներ : Ինչպէս ասորքերու-  
 Թեանց գիրքը Լեւոնիան անուանած եկեղեց-



ւոյն Հոռովմէական դաւանութենէն իրբն  
 տարբերութիւնն նշանակելու շարժած բաներն  
 ալ որ գրեր ենէ այդ բաներուդ վրայ ինչո՞ւ  
 բան չէ գրեր : Ասել է որ այսոնց մէջ մոլո-  
 թութեան փոքր նշոյլ մ'անգամ չէ տեսեր .  
 կիրակի բռնելու կերպին վրայօք գտած տար-  
 բերութեանը չափ ալ բան չէ գտեր : Այս  
 այսպէս ըլլալով Հոռովմէական հայք իրենց  
 եկեղեցեացը մէջ սուրբ սոգոստոսք խաչարար էր-  
 գելու սկսեր են մի . որ նոր Պատրիարք եւ ե-  
 կեղեցի խնդրած ատենին Հոռովմայ աթոռոյն  
 խօսք տուած էին Հայաստանեայց նախնի եկե-  
 ղեցւոյ այն ամէն բաներն ընդունիլ եւ պահել  
 որոնք հաւատքի եւ դաւանութեան շին դաշիբ  
 Հայոց եկեղեցին՝ Տին ժամանակի ընդհանուր  
 եկեղեցւոյ հետեւողութեամբ՝ ինչ բան որ  
 մինչեւ հիմայ ունի , եւ իրենք ալ անոնց մէջ  
 հերետիկոսութիւն մը եւ աղանդ մը չեն նըշ-  
 մարած նէ՛ անոնք ամէնն ալ նոյնութեամբ  
 կընեն մի . ո՛չ : Այսպէս կարծել կուտան թէ  
 մտքերնին դրած են որ ուղղափառութիւնը լա-  
 փին եկեղեցւոյ ծէսերուն հետեւելուն վրայ  
 կը կայանայ . որով ամէն քրիստոնեայ ազգ՝  
 լատին եկեղեցւոյ արարողութիւնով վարուի  
 նէ ուղղափառ կըլլայ . ապա թէ ո՛չ հերետի-  
 կոս է : Հիմնական դոգմաբանաց գիրքը ծայրէ  
 'ի ծայր՝ այդ կարծիքը կարգաբարձրէ . բայց Հը-  
 սովմ երբէք արեւելեան եկեղեցիները արա-  
 րողութեամբ իրեն նմանցընելու գրութիւն

ընդունած չէ՛, ինչպէս որ գրոյս պատմական  
 մասին : Գլուխը ցուցուցինք . եւ ասիկայ ե-  
 կեղեցւոյ ընդհանրականութեան գաղափարն ալ  
 կարէ : Ամէն մարդ մտքը այնպէս դրած է  
 հաստատութեամբ՝ որ եկեղեցւոյ միութիւնը եւ  
 ընդհանրութիւնը հաւատքի վրայ է . եւ այլ  
 եւ այլ եւ իրարմէ արարողութեամբ եւ լեզուով  
 եւ սովորութեամբ տարբեր ազգերուն մէջ մի-  
 արան ընդունուած եւ դաւանուած ինչ հա-  
 տաք եւ խոստովանութիւն գտնէ նէ՛ անիկայ  
 ընդհանրական անձնելով նոյնը ընդունողներն  
 եկեղեցւոյ անդամ սեպուելու են կրտս : Թէ  
 որ ծէսերու եւ արարողութեանց եւ ազգային  
 սովորութեանց կապուած ըլլար եկեղեցւոյ  
 ընդհանրութիւնը՝ ընդհանրական եկեղեցին որն  
 ըլլալը յաւիտեան գտնուելիք չունէր . առա-  
 քելոյ ժամանակէն յաջորդաբար հասած ըլլալն  
 ալ ըսական չէր . վասն զի՛ ինչպէս որ իմաս-  
 տուն հնադէպը կըսեն , ամէն մէկ առաքեալ  
 իր բարոզած տեղը ժողովրդեան բարուցը եւ  
 բնաւորութեանցը եւ ազգային սովորութեանցը  
 համեմատ մէկ մէկ կերպ արարողութիւն սոր-  
 վեցուցին . եւ ետքերը նոյն իսկ Հոռովմայ եկե-  
 ղեցւոյ հայրապետներն ալ նոյնն ըրին :

Թէ որ Հոռովմէական մերազգի հարք՝ կամ  
 ով որ ըլլայ, եկեղեցւոյ միութիւնը անկեղծու-  
 թեամբ կուզեն նէ՛ որ մեր փափաքածն ալ է ,  
 միայն մէկ ամբայ մը կայ , որ է այս : Ազգա-  
 յին եկեղեցեաց արարողութիւններուն եւ ծէ-  
 սերուն խօսքը ամենեւին չընել . դաւանու-



Թեանց մէջ ալ զրուցուածքի օտարբերութիւնը մէկդի ձգելով մաքի համաձայնութիւնը նայիլ եւ թէ որ մտաց մէջ օտարբերութիւն կայ նե՛ անիկայ շխկելով աշխատիլ: Եւն պաննը հաստատանայց Լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ նկատմամբ միայն մէկ բան մը կը մնայ. շուտ մայ հայրապետին գլխաւորութեան խնդիրը. բայց այս ալ հայաստանայց եկեղեցիին ընդունած ըլլալը մեր եկեղեցական եւ հայրապետական գրքքերէն արդէն ցուցուցած է. Սահփաննոս Եւլիկեան՝ Մխիթարեան միաբանութեան վարդապետը, վկայութիւնները լատիններէնի թարգմանելով եւ հայերէնին հետ մէկ անդ տպելով Ալէէտիկ, ինչպէս որ պատմական մասին մէջ ըսած եմք: Ի բանի հաւատոյ ասանք այս պէս ընելով շայոց կաթողիկոսին սուրբ Լուսաւորչի օրէն ՚ի վեր շայոց եկեղեցւոյ կառավարութեան մասին ինքնօրէն՝ եւ ո՛ր եւ իցէ օտարաղջի հայրապետէ մ՛ անկախ ըլլալը ճանաչելու է, զոր ժամանակ ժամանակ նոյն իսկ շուտ մայ հայրապետներուն ճանաչելն ու ընդունիլը՝ գործոյս քննողական մասին Ժ.Չերրորդ գլխոյն մէջ պատմական ապացոյցներով հաստատեցինք:

Գրուածոյս պատճառը մի եւ նոյն ազգի երկու բաժանեալ մասանց մէջէն սիրոյ պակասութեան օտարապարտ պատճառները վերցընել՝ եւ սիրով միաբանել է: Հրատանալուն պատճառ հաւատոյ օտարբերութիւնը զնոյններուն իրենց

խիղճն ալ վկայելով որ ատիկայ մինակ զրուցուածքի եւ ո՛չ մաքի օտարբերութիւն ըլլալով ոչ ինչ է, քիչ մը աւելի ցրտացընելու համար արարողական ճեփերն ալ իբրեւ հաւատոյ մասն ցուցընել ուղեր էին, զոր իրենց պաշտպանած շուտ մայ եկեղեցին ալ իբրեւ այնպիսի չբռնէր, ինչպէս որ ասանք գործոյս կարգը:

Լսանկ պատճառներով սիրոյ ցրտանալու եւ ասելութեան փոխուելուն եւ նոյնը ՚ի մշտնջենաւորս շարունակուելուն միջնորդ եղողները չգիտեմք թէ ինչ կերպով պիտի արդարացունեն զինքեանս առաջի Լստուծոյ՝ որ իրեն աշակերտ ըլլալու նշան սէրը դրաւ: Չեն կրնար ըսել թէ սիրոյ աշակերտ սուրբ Յովհաննես աւետարանչին պատուէրը կը բռնեն՝ որ ըսած է. ո՛վ որ ձեզի գայ եւ այս վարդապետութիւնը չունենայ՝ անիկայ ասանքնիդ մի՛ առնէք եւ անոր ողջոյն մի՛ տաք. վասն զի դիմացիննին՝ որկէց բաժնուած են, առաքելական թէ՛ գրով եւ թէ անգիր աւանդած վարդապետութիւնը չընդունող չեն: Կոյնպէս չեն կրնար օրգարանալ սուրբ Պողոս առաքելոյն խօսքովը՝ որ ըսած է. հերձուածող մարդը մէկ երկու անգամ խրատելէդ ետքը անկէց հեռու կեցիր: Ղիմայիննին հերձուածող կամ զտուած եւ բաժնուած ալ չէ՛. եւ որկէց բաժնուած պիտի ըլլայ՝ երբ իրեն քրիստոնէական հաւաք սորվեցընող նախահօրը՝ սուրբ Լուսաւորչին. եւ անոր օրինակոյ յաջորդացը հետ անբաժանելի կերպով



միացեալ է մինչև ւայնքան որ բաժանեալներու  
ուն պատմիչներուն մէկը դանտն ք ունի դորնի-  
րու հեանելով ազգային եկեղեցիէն զատուող-  
ներէն որոշելու համար միաբան ըսելէն զատ  
տարբերիչ բաւ մը չէ գտեր։ Եւ չին կրնար մեզ  
Հոռովայ եկեղեցւոյ իրաւաբանութիւնը մեր  
վրայ չընդունելնու համար զատուած սեպել  
Հաւատով անոր կառավարած եկեղեցւոյ հեա  
մէկ եմք։ Եւ այս միութիւնը կենալէն ետքը  
կառավարութեան միութիւնն ապառուց ի վեր  
նոյն իսկ Հոռովայ առաջնալ կարեւորութիւն  
չունենալը ցուցուցինք դործոյս մէջ։ Եւ առա-  
ջուց այս կողմէն սուրբ Դուսուորէն ի վեր  
միանալ եղած չէր որ զատուիլ ըլլայ։ Յերաւի  
եղան յԳ. եւ յԿ. դարուն մէջ՝ որ միայն Քրիս-  
տոսաւանդակներն ամբողջ պահելու համար խո-  
նարհութեամբ միաբանութիւն մը յանձն առին,  
բայց առանց մեր հայաստանեայց եկեղեցիէն  
բաժնուելու։ Բայց ազգային եկեղեցւոյ դը-  
լուխէն զատուելով Լափն եկեղեցւոյ հայրա-  
պետն իրենց ալ գլուխ ընդունելու՝ ազգովին  
հաճութիւն եղած չէ։ Եւ Ռուսիներանց վերջին  
կես լափն թագաւորներուն օրը մէկ երկու հայ-  
րապետի համար ասոր հաճեցան ըսուի ալ նէ՝  
աշխարհալարական պատճառներ կային ասոնց մէջ։  
Եւ այսպէս պատճառներ չունեցող արեւելեան  
եւ հիւսիսային վարդապետներն ասոր չհաճեցան  
մասնաւորապէս անոր համար՝ որ արարողութեանց  
փոփոխութիւն ալ ուղեցին լափնք այն ատենը։

Եւ այս փոփոխութիւնն ազգութեան կը դաչեր։  
Ըստ ամէնս կը ցուցնեն որ ազգին մէջ  
սէրը վերցընելու եւ բաժանում ձգելու եւ  
տանելութիւն արծարծելու օրինաւոր պատճառ  
մը չեմք տեսներ։ որկէց մեր մէկ բաժինը  
միւսմէն աւելի քրիստոնեայ ընէ ուղիով  
քրիստոնեայ ըլլալնուն նշանը բոլորովին ձգել  
կելլէ տակէն։ Եւ տակեց ալ ինչ հեանելին  
ընթերցողը եւ ասանկ ճամբայ բընողը եւ աս-  
նոր հեանուողը թող մտածէ։ Խօսքս՝ այս պատ-  
ճառով սէրը ձգողներուն համար է, ո՛ր կողմէն  
կըլլայ նէ ըլլայ։ Բայց գլխաւոր գրգռողին  
պատասխանատուութիւնը աւելի ծանր ըլլալը  
յայտնի է։ սակայն՝ ասոնք մեզ կատեն մենք  
ալ անոնք տանելու եմք ըսողներն ալ չեն ար-  
դարանար։ Թէ որ անոնց տանելուն փոխարէն  
զանոնք տանլը վրէժխնդրութիւն մըն է, եւ  
տանլը դէշ բան էնէ՝ ինչպէս որ է։ Ըստուած  
վրէժխնդիր ըլլալն իրեն յաակացուց։ Եւ չարի  
չար հատուցանելն արգիլեց։

վերջ





(1782)

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

1782

13-50




2013

4607

608

609

« Ազգային գրադարան



NL0031966

4607



